



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>









# ԹԵՍԱԿԻՐՈՍԻ ԲԱՐՈՎԱԿԻՕՆՈՒԹԻՒՆ

ՀԵՄԵՐՈՅԵ

ԽՈՐԴՆ ԵՊԻՍԿՈՊՈՅ ՄԴԱՅԹԱՐԵՍՆ



ԶՄԻՒԽՈՆԻԱ

ՑՊԱՏՐՈՒԹԻՒՆ ԳՂԻԱՐԾ 18.12.1877

1877

# ԳՐԱԴԱՎՈՅՑ

## ՏԵՇԵՍԻՆ ՑԳԱՐԱՆԻ

	Տրամադրություն
Ազան.	Թարգմանեց 8. 6. Ցեսենան.....
Ազնէս.	» Օրերդ Լիսի Ս. Պալատանեան .....
Ակամայ բժիշկ.	» 8. 6. Ցեսենան.....
Աղրատ երիտասարդի մը վէպը. Թրդ. Գ. Մաներեան .....	1. 75
Աղօթազիրը. Հասարակ կազմ .....	1. 25
» Կիռակաշի .....	1. 60
» Ասկեղծ .....	3. 50
» » և թաւազառ .....	5.
» Արձաբթազծեալ և ոսկեզօծեալ շրջնակօք .....	8. 75
» Փղակեռոյ .....	23.
Ամուրիի մը երազները. Թրդ. Մ. Մամուրեան .....	1. 40
Ամօրի.	» » » .....
Այրբեննարան, Դեւրուսոյց ոճով. Է. ախա. Յօրինեց 8. 6. Ցեսենան .....	25
Այրբեննարան—ընթերցարան Գաղղիարէն .....	25
Այտու.	Թրդ. Գ. Գ. Շերիանեան .....
Անիծեալն, և հոտոք. » Մ. Մամուրեան .....	8. 25
Անգեղա Գամիլովի.	» 8. 6. Ցեսենան .....
Անթօնին.	» Օր. Մարիամ 6. Շերմակեան .....
Անժելո.	» Ա. Թագուրեան .....
Անուշավան, Պատկերազրդ. Գրեաց Գ. Պատկենեան .....	1. 40
Աշխարհի ցշամն ութսոմ օրուան մէջ. Թրդ. Մ. Մամուրեան .....	2. 75
Արեւելեան Մամուլ. Հանդէս. Խմբողիր Մ. Մամուրեան. 8-րէին. 15. 75	15. 75
Արեւելեան Մամուլ. 6 տրուռան 1871—1876 .....	100.
Արինալի Մարիկոնչին, և հոտոք. Թրդ. Խ. Ե. Գուրիսըշեան .....	4.
Արփի Արարատեան, Հանդէս. Ելուառութեան ութողի լուց հետո. Աշխատասիրութեամբ Եղբարց Ցեսենան .....	4.
Բամելայի առաքինութիւնը. Թրդ. Գ. Գ. Պալդազարեան .....	1. 25
Բօյն.	» Գ. Մաներեան .....
Գաղտնիր Բարիզի, 8 հոտոք. » Մ. Մամուրեան .....	20. 75
Գաղտնիր Բարիզու Աւովին թարբերգութիւնը. Թրդ. Հ. 6. Ցեսենան 1. 60	1. 60
Գէորգ Ռաւշնզին.	» Փ. Վարդանեան .....
Գատասէրք.	» Մ. Նուպարեան .....
Գարուս մէկ զաւակին խոստովանանը, 2 հոտոք. » Գ. Զելինկիրեան 3. 50	3. 50
Գրախտահարմն. Գրեաց 6. Ազգանեան .....	50
Երեք հրացանակիրը, 3 հոտոք. Թրդ. Մ. Մամուրեան .....	7. 75
Եղիշէի պատմութիւն Արքանանց .....	1. 40
Երկասիրութիւնը երկուց ընկերակցաց, Բ. Ք. Պարտիզանեան և Ն. Ի. Մերգաբեան .....	1.
Զաւան և Փառնակ Ա. Գրեաց Գ. Պատկենեան .....	1. 50
Ընդհ. պատմութիւն համառօտ. Յօրինեց Մ. Մամուրեան. Մառ. Ա. 1. 20	1. 20
» » » » » » » » » » » Բ. 2. 50	2. 50
Ընթերցարան, Պատկերազրդ, Բ. ախա. Աշխատասիրեաց 8. 6. Ցեսենան 1. 40	1. 40
Թշուառներ, 10 հոտոք.	Թրդ. Գ. Զելինկիրեան .....
Ժէնըլիկվ. Գ. ախա.	» 8. 6. Ցեսենան .....
Ժօղէֆ Պալսամօ, 8 հոտոք.	» Կ. Եղանձնեան .....
Խվանօէ, 3 հոտոք.	» Մ. Մամուրեան .....
Լէօ Խ- Ասփիօն ծխողի մը սէրը.	» Գ. Գ. Ցիլդերեան .....
	1. 40

ԹԵՍԱՐՈՍԻ

# ԲԱՐՁՎԱԿԻՕՍՈՒԹԻՒՆ

Պատմութեան առաջնական գործութիւններ

ՀԱՐԱՊԵՏԱՑ

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ. ՄԻԼԻՔԱՐԵԱՆ

ՅԱՐ ԵՒ ՀՐԱՎՐԱԿԱՑ

ՅԻԳՐԱՆ ԸՆՐՈՒԹԻՒՆ ՏԵՇԵԱՆ



ԶՄԻՒՐԱԿԻՒ

ՑՊԵՐԱԿԱՐԱԿԻՆ ՏԵՇԵԱՆ

1877

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Digitized by Google

6 P.M.

To DEN

3.1.2

1000

GRAD  
EREN  
387  
02/20/98

## ԹԵՍԱՐԱԿՈՒԹՅԻՆ

ԹԵՍԱՐԱԿՈՒՄ մեծ կոմի բարոյախօսութիւնը, որ խոր վսեմ մոքակումքն եւ կատարելութեամբ յարգի է առն ազգաց մէջ. տարակուսեցի է թէ ինչն մեր, եւ մեր դպրոցներուն մէջ նոյն բնորմեցութիւնը գուած չէ ցարդ :

Ի՞ւ թճա կը թռար թէ, նիդի վսեւնութիւնը, եւ թարգմանչին նայկարանական բարձր ունը, առջիթ տուած ևն մեր դպրոցներուն եւ երկրորդական կարգի ուսանողաց, որ սոյն ամենապիտանի եւ կարեւոր ուսմունք (որ մարդկութեան եղանակութեան արքը եւ արքը է) եւս մնացած է մեր մուաց շնորհեցութեածներնեւնեւ :

Մեր ազգի այս ուսման անհրաժեշտ պէտքն, զիս ստիպեց զայն առեջի համառօտ, եւ հասկանալի չեղուու: յերեւան բերել, բայ մուաց ԹԵՍԱՐԱԿՈՒՄ, եւ, բայ սահմանացն ԱՐՄԵՆԻԱՆ:

Յոյս մեծ ունիւմ, թէ գռնէ, այս ազնիւ. եւ ամենապիտանի ԹԵՍԱՐԱԿՈՒՄ մուաք կը գռնէ մեր ամեն կարգի դպրոցներու. եւ ընկերութեանց մէջ, յօդուու մեր խոկ անձին:

Աւելորդ չեմ համարձիք բաելու թէ, չանացած եմ համառօտութեան հետ, միին խմառները եւս պարզել, այնպէս որ խեղանաները, առանց առաջնորդի աչ կարող են օգուու քաղաք:

Ես պարուք մը կատարեցի, գրելով: Կը խնդրեմ իմ սիրելի ազգայիններէն, որ իրենք աչ իրենց պարուք կատարեն. չնիերցմանք, յօդուու քրեաց եւ. ՚ի փառու Աստուծոյ:

—\*\*\*—

## ԾԱՌԱՋԱԲԱՆ

Պատիս եւ, չնի, մարդու համար, առևելն ցանկայի եւ պիտանի պէտքն է:

Պասն զի, շահն, զմեզ հանգիստ եւ ապահով կը պահէ, պատիսն, յարգի եւ մեծարեցի կը ներկայացունէ զմեզ մարդկանց եւ Աստուծոյ առջեւց:

Եւ. Ասուուած այնչափ սիրեց պատուառոր անբիծոմարդիկ, որ մշոնչենաւորութեան մէջ զանոնք իրեն թագաւորութեան բաժանորդ ընեցու խոռուուն ըրաւ:

Պէտքերը, մեզ կ'ուսուցանեն շահը ձեռք բերելու. միջոցները:

Մրժանապատութիւնք, մեզ կ'ուսուցանէ, պատիս ձեռք բերելու միջոցները:

Սոյն միջոցները, հիմնական եւ կատարեալ կերպով ուսանող շտեմարանք, դպրոցն ըցացք ապացուցուած է:

Եւ. անոր համար է, որ 'մեր մատազ համակեն սկսեազ երկար ժամանակ այն սրբավայր կը դիմեմք, թէ զատոնք եւ թէ մեր այս աշխարհի մէջ ամեն պէտք եղածներք ուսանեցու, ի հարկին կանոնաւորապէս ՚ի գործ դնեցու համար:

Սակայն ցաւ է ինձ յայսնել թէ, մեր ցաւ մը ուսմանց հետ, ինչո՞ւ դոյթ չեմք ուսմիր ուսանիչ վերյիշուած առևնապիտանի պէտքերը:

Այս, կ'ուսանիմք ինչ որ սրբավայրն է, սակայն գանց կ'առնումք ուսանիչց, ինչ որ ներքին է, և մեր անձին կը վերաբերի:

Այս սրահի մէջ, կ'ուսանիմք, երկինք եւ նորս աստեղները քննել եւ իմանայ, սակայն չենք ուսանիր մեր անձին սեպհական կիրքերը քննել եւ իմանայ եւ նոցա չափազանցու-

թեան վճարոյն սո.աշն առնելու դարմանները ուսանիլը և. ՚ի գրք դնելը:

Կ'ուսանիմք ամբողջ երկրագունոտ իւր ամեն տեսարաններով մեր աչքի ներկայութեան բերեց. զգիտեմ թէ, ինչն չեմք ուսանիր, մեր փոքր ճանապարհորդութեան մէջ տեղի ունեցած խոչն եւ. իւո.թց տեսնելը եւ. վերցումնելը :

Մեր աչք յերկինս բարձրացուցած, եթելք կը քննեմք, բայց մեր անձի վրայ գունուած բիծերը չեմք քններ եւ. չեմք տեսներ :

Մենք կ'ուսանիմք չափ ՚ի ձեռ.իճ երկրագունոտ չափել, բայց զանց կ'առ.նումք մեր, եւ. մեր ընկերոց հետ ունեցած յարաքերութեան սահմանց չափել, նոցա հետ ունեցած պայմաննիս գիտնալը, մեր գործողութեան եղանակը կշռ.ել եւ. իմանալը :

Մենք կ'ուսանիմք, զԱստուած եւ. նորա ստորոգելիները եւ. նորա նախախանսական գործերը ու. տնօրէնութիւնները, բայց ինչո՞ն. չենք ուսանիր անոր մերձենալու. միակ միջոցը՝ այն է առ.արքմութիւնները, մոլութեանց վնասները, զանոնք մերժելու. միջոցը եւ. եղանակը :

Կ'ուսանիմք անհունութիւնք չափել, չենք ուսանիր մեր կիրքերը չափաւորելը :

Մենք կ'ուսանիմք անհուն հաշիւները ուսանիլ, սակայն մեր կենաց օրերու գործողութեանց, ու.ովոյ հաշիւները կարգադրելու. եղանակը չեմք ուսանիր :

Ոյս պէտքերն են որք խիստ զգալի է մեր դպրոցաց մէջ հիւնական կերպով ուսուցանել ամեն կարգի աշակերտեաց անձանց, վասն զի երբ մարդ մէ խնջոյնքը չճանաչեր, ան կէ յուսալի չէ, որ ուրիշ բաները կարողանայ ըստ արծան. ոյն ճանաչելը :

Ըստ մեր դատմանք այս ամէն անհրաժեշտ պէտքերը ուսանելու. նպաստող եւ. առ.աջնորդողը, Թեսաւրում մէջ իմաստասէր կումսի գործը ԲԱՐՈՅԵԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ կո-

չուած զիրքն է որ իւր կատարելութեան մասին շատ յուսաւորեալ ազգաց յարգանքն ստացած է, նորա գործոյն համառօտութիւնը աշխարհիկ լեզու, ՚ի շոյս ածեզ կու տամ հայազգիք դպրոցներուն եւ ամեն ատոհանի անձանց, վերոյիշեայ պետքերը լեցունեցու ցողիս, եթէ ոչ լիովին, գոնէ շատ կարելոյն. ապագային թողով նորա կատարելութիւնն :

Սոյն գործը՝ զւտահ եմ թէ մեծապէս կը նպաստէ մեզ առաջինութեան շատայ մէջ մաներս, մոյսթեան ծայրերէն խորշեցու, կիրքերը չափաւորեցու, եւ զմեզ բարի մարդ եւ բարի քաղաքացի ընելցու :

Վասն զի յոյժ բնական կերպով խօսած է եւ. սքանչեցի օրինակներով հաստատած է իւր ամեն առարկաները :

Սա, ճախ կը խօսէ հոգուոյն եւ. նորա մասունքներուն, եւ. նորա ներգործութեանց վրայ. կը խօսէ երեք բարեաց եւ. նոցա արծանեաց եւ. օգտին վրայ: կը խօսէ մարդուս երջանկութեան եւ. անոր միջոցներուն վրայ: կը խօսէ բարոյական առաջինութեանց եւ. նոցա մոլեկան երկու ծայրերու. վրայ: Վերջապէս մարդուս կատարեալ երջանիկ եւ. բարի մարդը ու. զնկերական աշխարհին օգտակար ընելցու ամեն միջոցներու. վրայ սքանչելապէս կը խօսէ :

Ուրեմն մեզ կը մնայ յորդորել, թէ այս է քաղաքական հօրիցօնի վրայ բարի մարդ եւ. բարի քաղաքացի ցոյց տալու ներկայացուցիչը, ասոր միջոցու. կրնամք առարկնութեան տաճարը մոնելու. եւ. դառ այնմ մարդիկ խաղաղ եւ. հանգիստ ու. բարիապէս վարուիչը, ոչ ոքէ զվաճառիչը, եւ ոչ զրք չվճառելու. հայրծնեաց երկրին բարիք քնելու, եւ. բարիապէս այս աշխարհէն՝ երթալի:

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՒԹԸՐԵԸՆ:

# ԹԵՍԱԿՐՈՍԻ ԲԱՐԱՑԱՓՈՍՈՒԹԻՒՆ

ԴԱՍ Ա.

ՏԱՐԴԱԼԻ ՄԱՐՄԻՆ ԵՒ ՆՐԱ ՆԵՐԳԱՐԺԱՒԹԻՒՆՆԵՐԸ

ԲԱՐԴԻԹԵԱԾԿ ՀԵղինակն, երբ իւր արարչական գորութեամբն ամեն արարածները ստեղծագործեց, անսոց մէջէն, մարդին ամենէն կատարեալ ըրտ, աձելու և բաղմանալու յաջորդական շարունակ կոթինը, իւր բացարձակ հրամանաւը հասպատեց :

Մենք կը տեսնեմք որ մարդն, արարչական ներզործիչ հրամանաւն, իւր էութիւնը, զոյտթիւնը, և կենդանութիւնը, իւր ծնողւներէն և նոցա արինէն կ'առնու, հետզննուենոյն արինէն, իննամսեայ շրջանէ մէջ, ճիւը, մորթը, անթիւ ոսկորները յարզանդիմօր կազմակերպելով մարդ կերպարանեալ յաշխարհ կը ծնի :

Կը աեսնեմք յետ այնորիկ, ծնած զաւակն մօր կաթով միունք առնելով կ'աճի և կը զօրանայ, և կատարելութեան համանելով, կը խօսի, կը խորհի, և գործել կ'սկսէ ինչ որ պէտք է իւր սկառայ յից համար :

Բացառութիւնը մէջ չբերելով, մարդուս այս ընթացք կը տեսէ ոթսունէն մինչև հարիւր տարի :

Եթե այնորիկ հետզհետէ կ'սկսի արիմը տառիլ և պազիլը, ջիղերը կը թուլանան, զօրութիւնը կը տկարանայ, և կը դողդոչէ, այլ և այլ ցաւոց ենթակայ կը լինի, և օր մ'ալ կը մեռանի՞ հող կը թաղուի և՝ ի հող կը լուծուի տուանց մարդու մը նշան ձգելու :

Սակայն զարմանացի է նորա մռած ժամանակը, երբ դուն անոր մօտենաս, կրտենես որ, աչք բաց է, բայց շտեներ, ականջ ժամասուած չէ, բայց չլսեր, բերան առողջ սակայն չճաշակեր, քիմք անմնաս՝ բայց չժառատեր :

Այսպէս ալ ձեռք, ոտք և մարմայ միւս մասունքները բոլորն ալ կան և կը ման, սակայն չեն զործեր և չեն շարժիր :

Ասոնց վրայ երբ հաստն խորհրդածութիւն մը ընեմք, վերահաստ լինիմք թէ, սոյն մարմայ մէջ այլ իմն զօրութիւն կը քնակէր, և այն էր, որ զայս կը վարէր, կը շարժէր և գործել կուտար :

Այն զօրութիւնն է, որ կամ պակասուած, և կամ հեռացած է մարմինէն, անոր համար մարմինն ալ անշարժութեան մատնուած և մահուան ու լրուծման գաաապարաւած է :

Այս ապացուցական խորհրդածութիւնը, մեզ իմաստափրել կուտայ թէ, մարդուս մարմայ էութիւնը ու զոյութիւնը, որուն նիւթը հողէ, արարշապետի ձեռամբ ձարտարապետեալ մարդ կազմակերպուած է այն, ըմբռնելու, խորհելու, մտածելու, գատելու, իմաստափրելու, յիշելու, երեակայելու, երացելու կարողութիւնը չունի, ինքն իրմէ, ապա, ուրիշ էութենական զօրութիւն մը կայ մարդու մէջ հաստատուած վերնտինամ տեսչութենէն, այն զօրութիւնն է որ կը ներգործէ, մեր մարմայ միջոցաւ :

Սորա յայմնի ապացոյց կը տեսնեմք, մեր մարմայ քնացած ժամանակը, երբ ուրիշ մը մեր մարմայ քով արթուն կեցած կը դիտէ և կը տեսնէ որ մեր մարմինը այն անզզայ և թմրեալ քնացած վլաճակի մէջ, տարօրինակ եղանակաւ մը զարմանալի ներգործութիւնները կ'ընէ և գործողութիւնները կը կտասը :

Կը տեմնէ որ քնացած անզգայ մարմինը, բան մը կ'զգայ, կը սի, առանց գիտնալու և զգալու, կը խնդայ առանց ուրիշ մը ժեսնելու, և երբեմ կ'ելնէ անկողինեն և քալել կ'սկսէ, կը չ'ջի, կ'երգէ, և այլն գործողութիւնները կը կատարէ:

Խակ երբ նա այն մեռեալ վիճակին կ'սթափի, և իրեն ըրտածներուն վրայօք բացարութիւնը կ'ուզուի, նա, իւր գործերէն իսպառ անանեղեակ, կ'սկսի ապշիլ իւր վրայ պատմուածներուն մասին:

Երբեմ մենք մեղէն կ'զգանք նոյն մարմնոյ մեռեալ վիճակի մէջ, մեր երազելը, երևակայուելը, խորհել, դատելը, կ'ուսանիմք, կիմաստափերեմք, ամենէն հեռաւոր տեղը, քիչ միջոցի մէջ կը գնամք և կը հասնիմք, մեր բարեկամները կը տեսնեմք և նոյա հետ կը խօսիմք, մեր թշնամինները տեսնելով, անկէ կը խորշիմք, կը գործեմք և այլն և այլն:

Այս ամն գործողութիւնները մենք կը կատարեմք, այն ժամանակը, երբ մեր մարմինը խսպառ անզգայ է և մեռելութենէն բնաւ տարրերութիւն չանի.

Միթէ այս գործողութիւնները բաւական չեն հաստատելու թէ մեր մարմնոյ մէջ Աստուած այնպիսի է ութիւն մը կամ զոյտթիւն մը հաստատած է, որ սքանչելի ներգործութեամբ մը կը շարժէ մեր մարմինը, գործել կու տայ:

Նոյն մարմնոյ զգայարանաց միջոցաւ, ինք՝ հոգին կ'ըմբռնէ, կ'երեակայէ. կ'զգայ, կը կամի, կը դատէ, կը խորհի, և ամեն զործողութիւնները կը կատարէ:

Մեր մարմին քնացած ժամանակը հոգին, ինք իւր մէջ գործողութիւնները կը կատարէ, մարմնոյ արթուն ժամանակը, մարմնոյ զգայարանաց միջնորդութեամբն կը կատարէ, իւր ամեն գործողութիւնները:

Ի վերջ ամենայնի, մարմինը առանց հոգւոյ, անշառք հողի կոյտ մի է, եթէ չես հաւասար զնա զերեզմաննոցները և քրքրէ հին մեռեալներու կերեզմանները, և ահա ըսածէս աւելի ուրիշ բան չես դաներ :

Մարմնոյ վրայ այսշափ խփիլ բաւական համարելով, զառնամք

Խոսել հոգւոյն և անոր մասունքներու ու անոր ներդործութեանց վրայ յաջորդ դլիսվ.

### ԴԱՍ Բ

## ՄԱՐԴԱՒ ՀՈԳԻՆ ԵՒ ՆԱՐԱ ԿԱՐԱՂԱՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՒ ՆԵՐԴՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր հոգին, որ ամենակարողին Առաւոծոյ մէկ ներդործաբան զօրութիւնը և էութիւնն է, մեր մարմոյն մէջ հաստատուած մնք ոչ կը տեսնեմք և ոչ նորա ձեւ կարող ենք ըսմբռնել, ուստի նորա ներդործութիւններն կը հետեւցունեմք ըստ իմաստասիրաց թէ «Հոգին է մի, և անբաժանելի պարզ կաթիւնը կամ զոյութիւնը, երեք եղանակաւ ենթակայացեալ»:

Ես կամ թէ այսպէս ըսեմք «Հոգին երեք կարողութենէ բաղկացեալ, էութիւնը կամ զոյութիւնը մի է»:

Հոգուոյ երեք կարողութիւնները, զատ զատ անուններ ունին, ինչպէս որ նոցա ներդործութիւններն ալ այլ և այլ են, զորս պիտի յիշեմք՝ ի կարգին, սակայն մի է հոգին:

Հոգուոյն կարողութեանց միոյն՝ Զիադուն կ'ըսեմք. երկրորդին՝ Կամ. երրորդին՝ Միոյն կամ Դարձում:

## ՄԱՐԴԱՎԱՆՑ ՀՈԳԻՆՈՅՆ ՆԵՐԴՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յառաջաղոյն ըսինք թէ, մեր մարմինը, առանց հոգւոյ՝ ոչ կ'ըսը դայ, ոչ կը դործէ, ոչ կ'ըմբռնէ, ոչ կը կափ, և ոչ կը դատէ.

այլ հոգին է որ սցի պաշտօնները, մարմայն կատարել կու տայ, իւր յատուկ ներդործութեամբն :

Թէպէտ մնկք մեր տեսութենէն համոզուած կը կարծեմք թէ մը մարմայ աշքն է որ կը տեսնէ, այսպէս և ականջ կը լսէ, հուտուելիք կը հոտուտէ, քիմք կը ճաշակէ, ձեռք կը շօշափէ, մարմնը կ'զգայ, ուտք՝ կը գնայ : Ասոր համար կրնամք ըսել թէ սոյն գործողութիւնները մարմայն է, զի մարմնը կը կատարէ մեր աշքի ներկայութեան :

Սակայն երբ մեր մարմայ քնացած և կամ մեռած ժամանակը կը տեսնեմք որ այս գործողութիւնները մեր մարմայ միջոցաւ այլ ևս չեն կատարուիր, կ'ստիպուիմք ըսելու թէ այս ներդործութիւնները մեր հոգւոյն է, որ կատարել կու տայ մեր մարմայ զդայարանացած միջնարդութեամբն :

Ըստ է որ, մեր մարմայ զդայարանքները, դուրսի առարկաներու և մեր հոգւոյն մաստնքներու մէջակը, միջնարդական պաշտօն մը կը կատարեն :

Ինչ որ դուրսի առարկաները կ'ազգեն, և երեան կը բերեն մեր զգայարանացը, այսինքն՝ աշաց, ականջացը, հոտառելեացը, ճաշակելեացը, ջշափելեացը . մեր զգայարանքներն ալ անմիջապէս զննոնք առնելով կը հաղորդեն մեր հոգւոյ կարողութեանց, որոց հետ սերտ կապով մը կապուած առնչութիւն ունին միմանց հետ :

Ըստնք թէ, հոգին՝ երեք կարողութիւն ունի, և դուրսի առարկաները ընդունելու մասին, առաջին տեղն ունի զդացածն . զի ամն առարկայ, իւր առաջին ներդործութիւնն զդացմանն կ'ազգէ . և զդացումն, իւր բնդունած առարկաները թէ բարի լինին թէ շար, թէ գեղեցիկ թէ ազեղ, թէ աղէկ լինի և թէ գէշ, թէ ախորժելի լինի, թէ անախորժ, զննոնք ամենքն ալ անխտիր կերպով կամց հաւանութեան կը յանձնէ :

ԿԱՄՔ՝ որ բարւոյն և չարին ընտրութեան մէջ սուր ներդործութիւն մը չունի, (վառն զի կիրքերը նորա վրայ յատուկ աղ-

դեցութիւն կը բանեցունեն), ուստի աւելի հաճոյական բաղմանքներուն հետեւլով, զդացումն իրեն յանձնուած առարկաները փոխանակ իւր հանձարաւոր ընկեր խորհրդեան յանձնելու և անոր հաճութեան կամ հաճութեան վճիռն առնելու, առանց նորա զիտակցութեան ինքնին կը տնօրինէ և կը գործադրէ, որոց հետեւութիւնը շատ անդամ ֆեսակար կը լինի:

Որպէս զի մեր հոգւոյն գործողութիւնները ուղիղ լինին, պէտք է գուրսի առարկաները մեր զդացմանց միջոցաւ մեր հոգւոյն զդայական մասին հաղորդած ժամանակը, նա ալ կամաց հաւանութեան յանձնելէն զինի, կամքն ևս գատումն խորհրդեան հրամիրելու պաշտօնը կատարէ:

ԴԱՏՈՒՄՆ, երբ տղղութեան աթոռ նստած, ամեն բանը պայծառ և պարզ կը տեսնէ, կը խորհի, կը քննէ, հապա՞ օգտակարին, բարիին, գեղեցկին, և աղէկին, առնելու և կատարելու վճիռ կու տայ, նոցա հակառակ ֆեսակարներէն ալ հրամարելու հրահանգ կու տայ, միայն՝ բարի լինելն, միւսոյն՝ չար լինելն ապացուցանելով։

Որովհետեւ, դատումն միայն կրնայ որոշել թէ որոնք են հեղինակի սահմանած օրինաց համաձայն, և որոնք են նորա օրինաց դէմ հակառակողները։

Նա, կ'ընդունէ այն ամեն առարկաները և 'ի գործ դնել կը հրամայէ, որոնք որ խղճի օրինաց և ուղիղ բանաւորութեան համաձայն են։

Եյսպէս ալ կը մերժէ զանոնք, որք հակառակ են խղճի օրինաց, աստուածային կամաց, բանաւոր տղղութեանց։

Ահա այս է մեր հոգին և նորա կարողութիւնները ու նոցաներս գործութիւնները, որք եթէ համամայնութեամբ և խորհրդով կատարուին, լաւ են և մեզ համար խիստ բարի և ապահով, խակ եթէ կամք ինքնին իւր հաճոյից համաձայն գործէ առանց խորհրդին, մանաւանդ երբ մեր կիրքերն ալ խուված բուռն ներդործութիւնը կը բանեցունեն կամաց վրայ և բռնի գործել կու տան,

այն ժամանակը մարդն որ ամին կենդանիներէն կտտարեալ և երանիիկ ստեղծած էր, կը տեմիես որ ամինէն ապերջանիկ, թշուառ և անկատար ու անկանոն հրէշ խաղալիք մը կը դառնայ կրից, յուզմանց և կամաց աննպատակ հրամանաց մէջ աեղը:

### ԴԱՍ Գ

#### ՄԵՐ ԿԻՔԵՆՔ ԵՒ ԱՆԱՆՑ ՆԵՐԳԱՐԾԱՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԵՐ մարմոյ մէջ, մեր բանական հոգիէն՝ի զատ, Արարշապետն Աստուած, նաև բնական կիրքերը ևս հաստատած է՝ի մեզ, որոնք որ ոչ սակաւ պիտանութիւն ունին մեր կենաց ապահովութեան համար :

Սակայն նոցա շափաղանց կիրառութիւնն ալ դժնդակ ֆեասները և չարիքները առաջ կը բերեն, 'ի ֆեաս մը և ուրիշներու անձին և բարեաց ու կենացը:

Բնական կիրքերը, ինչպէս են՝ սէրը, ատելութիւնը, սրամառմիւնը, եայլն երբ զանոնք բարիապէս և շափառրապէս՝ի գործ դնեմք, բարի են և օգտակար : Եւ առաքինութեանց դասէն կը համարուին՝ երբ սիրելին սիրես և ատելին ատես :

Միւնցին կիրքերը մոլի կը համարուին, երբ սիրոյ արժանի առարկան կ'ատես և ատելի առարկան կը սիրես :

Վասն զի այս հակառակ գործ ողութեան մէջ, դատման ուղղութիւնը կը խանդարուի, ճշմարտութիւնը կը քողարկուի, արդարութիւն՝ ոտնակոխ կը լինի, հետևաբար բարին շարի կը փախուի, ուստի կիրքերը մոլութեան պաշտօն կը կատարեն այս տեսակ գործողութեանց մէջ :

Ոմանք, այս անկանոնութիւնը տեսնելով, արտօւնջ ըրբն թէ քնութեան ամենատես հեղինակը, ինչու այս ֆաստրեր կիրքերը չաստատեց մեր մէջ, երբ օգտակարէն աւելի ֆաստակարն կը ներգործեն :

Անտեղի կը համարուի նոցա արտունջը, երբ վերահասու լինի թէ, կիրքերը մեր մէջ մծամեծ բարիքները և օգտակարութիւնները առաջ բերելու համար սահմանուած են. այլ ինդիք է որ մարդիկ իրենց անձնիշխան և ազատ կամօք, զայնս՝ ՚ի շաբն կը գործածեն, հակառակ հեղինակի սահմանին. զի բարկութեան կիրքը մեր արիութիւնը կը քաջալերէ, և կը զրայունէ ցանկութիւնը. զմեզ ուրիշներու հետ սերտ մտերմութեամբ կապելով, փոխադարձ բարիքները և օգուտները առաջ կը բերեմք :

Երկիւղն՝ զմեզ զգոյշ և քանին հպատակելու սահմանին մէջ կը պահէ, և խոչեմութեան կ'առաջնորդէ :

Փառասիրութիւնը՝ իրրե աղջու խթան, զմեզ մծաղործութեան կը հրաւիրէ :

Ցան՝ զմեզ բարեխառն վիճակի մէջ կը պահէ, և չժողովուր որ շափէն առելի ֆասուիմք :

Սրամութիւնը՝ զմեզ վրէմինդիր կը կացուցանէ, չարերը արգարապէս պատմելու :

Վերջապէս կիրքերը, պէտք են մեզ և յոյժ օգտակար են, եթէ մեր ողիղ բանաւորութեան իշխանութեան տակը պահելով գործածեմք, իսկ եթէ նոցա ապստամբութեան տեղի տամբ, ողիղ բանին հակառակելով գործին շար կը լինի և աղետալի հեանքներ կը բերէ, ՚ի ֆաս մեզ և ընկերական աշխարհին :

Կրից տեսակները շատ են, և նոցա կեղրուատեղին, մեր տիրտնէ, նոքա մեր հոգոյ զգայական մասին հետ սերտ կապակցութիւն առնին, և միմանց հետ միշտ յարաբերութեան մէջ են :

Երբ մեր ըմբոնողական կարողութենէն, թէ բարի և թէ չար, ախորժելի կամ անախորժ առարկաները տպաւորութիւն կ'ընեն մեր կրից վրայ, նոքա անմիջապէս կը յուզուին, և մեր զգայական բաղձանքները կը շարժեն. որով մարդուս միրտը կիրքերու տեսակէն առելի փոփոխութեանց ենթակայ կը լինի :

Սիրա . Եթէ իրեն ներկայացուած առարկան սիրելի է , հաճութեամբ կը մօտենայ , և կ'ընդունի , կ'ուրախանայ , կը բերկրի , զուարթ և պայծառ դէմք ցոյց կու տայ :

Խոհ եթէ առարկան առնելի է և տշաճ , անկէ զգուելով , կ'սկսի խոռովիլ և կծկիլ :

Սիրաղ բարկութեան ժամանակ կ'եռայ , և արիւնը դուրս կու տայ . Երկխղի մէջ , արիւնը կը ստոի , և բոլոր մարդինը կ'սկսի գողալ :

Կիրքերը՝ մը պրտի և բոլոր մարմայ վրայ պատկերացունել կու տան , ախորժելի առարկաներուն՝ ուրախութիւնը , ցնծութիւնը , զուարթութիւնը , հաճոյք , բերկրանք , ծիծաղը , եայլն :

Խոհ անախորժ առարկաներուն , ահշանութիւնը . զզու անք , խորշում . սրտի խոռովութիւնը , մարմայ դողումն , տառամանց կրծանը , երկիւղը , խորշումն , երեսաց այլայլութիւնը , ապղնասպ՝ ներքին և արտաքին , խռովեալ շարժութեալը :

Այս յուղեալ միջոցին , մարդս այլ յայլմէ նղած , այնոքէ որ առանց բան մը խօսելու , կը յայտնուի թէ կիրքերու մէջ կը յուղուի :

Երբեմն մարդն իւր հասարակշութիւնը կորանցունելով . արատաքն ցոյցեր ալ կ'ընէ , ինչպէս , աղաղակ կը բառնայ , ձայն կ'արձակէ , որոտումն և սպառնալիք կ'ընէ , աչքերէն բոց կը ցատքէ , ռանզերէն ծուխ կը շնչէ , կը հարուածէ , կը հալածէ , մահ կ'ըստ պառեայ :

Արից այս թափ մղումն , երբեմն զմեղ անասնոց կարգին կ'իջեցունէ , եթէ բանականութեան հրաշալի խորհուրդը վրայ չհանի , (ուրիէ զուրկ են միւս ամեն կենդանինքը) :

Արից ներգործութիւնները զմեղ աւելի կը նեղն այն ժամանակ կը , երբ աստուածային սէրը զմեղ առ ինքն կը քաշէ , երկրաւոր սիրոյ բաղձանքը , առ ինքն հազորանել կը շգնի . մին քաղցր սիրով , միւսն զգալի ախորժակով . մարդն այս ալեկոծաթեան մէջ , իրը հողմակոծեալ կը տարակուսի և շիմար որոշումն տալ թէ նոր կողմն ընտրէ :

Մարգկանց այս խոռվեալ վիճակը, Աստուծոյ առաքեալն, հանապազօրեայ մարտ կ'անուանէ :

Կիրքերը շափազանցած ժամանակն, երբեմ այնշափ սաստիկ կը ներդորձեն, որ կը տարտկուսիս թէ արդեօք այս, այն եղբայրն է զոր զիտեմ, թէ այս ալ արիշէ է, զի բօլորովին այլափոխեալ է, թէ 'ի գէմս և թէ 'ի դործս :

Այս վիճակի մէջ զանուեցաւ երբեմն Աղէքսանդր Մակեդոնացին, որուն դէմ իրաւամբ զանդատեցաւ զրկեալն, ըսելով թէ «Յողեալ Աղէքսանդրի համար առ լուրջ Աղէքսանդրն կը բռղպեմ» առ այս սիմագեցաւ Աղէքսանդրն և իրաւանք առաւ զրկելոյն :

Այս հիւանդութեամբ հիւանդացաւ Մեախայ, Յասովի կինը, զոր մերժեց Յասովի իւր կիութենէն, կինը այս անպատճառթենէն յուղեալ, Յասովի զաւակները, որք իրմէ ծնած էին, կ'ուզէր մահացունել :

Այս կինը, երկար ժամանակ կը ծփար սիրոյ և բարկութեան կիրքերու ալէ կոծոթեանց մէջ, կը սիրեր այն զաւակները, վասն ինք ծնած էր և իւրն էին : Կ'աւեր զանոնք և մոռցանել կ'ուզէր, վասն զի զինք նախատող Յասովի զաւակներն էին, թէև իրմէն ծնած էին :

Այս եզանակաւ, աեր և բարկութիւն կը մրցէին միմանց հետ, և զիրար յաղթանակել կ'ուզէին :

Մէկ կողմէն սիրոյ բոցը, միւս կողմէն բարկութեան բոցը, բոցն զրոց շիջուցանել կ'ուզէր, որդւոց մայր, սոյն բացերու մէջ կ'այրեր և կը տաչորէր :

Ահա այս վիճակի մէջ նախանձաւորութիւնը սիրոյ հետ կը միանար, իսկ ատելութիւնը՝ բարկութեան հետ . երկիւղը՝ համարձակութիւնը՝ յուսահատութեան գէմ, յուսահատութիւնն ալ երկիւղի դէմ կը զինէր :

Սիրոզ, և թշնամի, ահարեկ և իրոխա, աղէզորով և անզորով, վերջապէս բարկութիւնը յաղթեց սիրոյն, մայրն մոռցաւ իւր մայրութիւնը և կենազրաւ ըրաւ Յասովի որդիները, զորս ինքն նած էր և իւրն էին :

Յասովիկ Վրեմը, իւր զատակաց կիանքով լուծեց, թէև այս այլանգակ ներդորձութեան վրայ սթափեցաւ, կիւքերը հանգարակեաւ լէն վերջ զշաց, սակայն ժաման անցած էր, կորուսան մեղարմաւ նելի մատց :

Նիրքերը կը յաւզուին, սխալ տեղեկութիւններէ, տղիառութեանէ, առարկայի անմիշա տպաւորութենէն, ուրիշչ մը մեզ ուզընալ զրգուիչ խօսքերէն, ուրիշի մը մեր վրայ շրամ ազդեցութենէն : Աչա ասանք են որ իրենց գէշ ազդեցութեամբն, և ներդորձութեամբն, անուղղութեան և մխալման մէջ ձելով, կը յուզն և կը բորբոքեն, որ յետ այնորիկ անկարելի կը լինի այլ ևս ուղիղ բայ նին անառը :

Աչա այս եղանակաւ մարդուս հօքնյն և մարմայն սամբողջ մաս սունքերը բանավանութեան վիճակէն հնանլով անամոց և զազանաց վիճակին մէջ կը դնեն, ուրիշ առաջ կու զայ մնմիւ շարիքները և անմարդավայել գործերը 'ի ֆաս և յանպատութիւն գործողին և ուրիշներուն :

Կրից վրայ այսշափ խօսելէն վերջ, պէտք է նիցա շափառութեան դարձաններուն վրայ խօսիլ ։ ասկայն զիսնութւ է նախ թէ որոնք են կրից գործերը, որք շաբ կ'անուանուին, և որոնք են առաքինութեանց գործերը, որք բարի կ'անուանուին :

— 28 —

### ԴԱՍ Դ

ԶԵՐ ԳՈՐԾԵՐԸ ԵՒ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐԸ ԵՒ ԳՈՐԾՑՂԱՑ ՎԱԽԱՆԸ

Մարդիկներէն գործուած այն գործերը, որք ուրիշներուն, և նոյն իսկ գործողի անձին ֆասակար են, և վասնդ կը բերեն, այն գործերը՝ առհասարակ չար կը համարուին :

Այն գործերը, որք ուրիշներուն և կամ գործողի աշքին յոռի և աղեղ կ'երեխն և ահաճութիւն կը պատճառեն այլոց, թէն գործողին համայք մը առթեն, այն գործերը դարձեալ չար կը համարուին :

Այն գործերը, զօրս գործաղն առանց խորհրդեան, և առանց շրջահայեցութեան կը գործէ միմայն իւր փառաց և կամ շահոյն համար, որք այլոց ևս ֆնան կը պատճառեն, այն գործերը ևս չար կը համարուին :

Իսկ այն գործերը, որք թէ գործաղին հանելի է և թէ ուրիշ ամեն աեսողներուն և լուղներուն, և այն գործերը՝ որք թէ գործողին օգտակար են և թէ ուրիշներուն, այն գործերը, որք թէն քիչ մը ֆնասակար գործաղին, բայց հասարակութեան յօյժ օգտակար, այս տեսակ գործերը միշտ բարի են, և առաքինական :

Այն մարդիկ որ չար կը գործեն, նորա, Աստուծոյ և ընկերութեան ուղեղ գատաստանի առաջը՝ ապերջանիկ, գէշ, և պատճապարա կը նկատուին :

Իսկ անոնք որ բարի կը գործեն, յԱստուծոյ և մարդիկներէն կը փառաւորուին, հանգիստ և երջանիկ կ'ապրին։ Ինչպէս որ Աստուծորդին այս երկու գործոց վերջին նպատակը կը գծէ հետեւեալ եղանակառը «Շրոց բարիս գործեալք իցէ ՚ի յարութիւն կենաց, և որոց զշար արարեալ իցէ, ՚ի յարութիւն գատաստանաց»։

Կամ թէ այս երկու կարգի մարդկանց, իրենց գործերը թուելով, բարեգործներուն կ'ըսէ «Եկայք օրհնեալք հօր իմոյ» և շարագործներուն կ'ըսէ «Երթայք յինէն անիծեալք և այլն»։

Այս սկզբամբ, բարեգործներուն վախճանն է՝ երջանկութիւնը, իսկ շարագործներու վախճանն է՝ ապերջանկութիւնը։

Ուրեմն երջանկութիւն վնատուել, գտնել և վայելել պէտք է մարդուս համար, թէն գժուարին։

## ԴԱՍ Ե

## ԵՐԱՌԵՎԱԿԱՒԹԵԱՆ ՀԵՑԱՀԵՍՏԱԿԱՎԻԼԵՆ

Մարդիկ երբ խորհելով վերահասու եղան թէ , մարգուս համար չարչարտելին և տանջուելին առելի , հանգիստ պէտք է , այսպէս ալ արհամարհուելին աւելի փառաւորուիլը հարկաւոր է , ձեռնարկիցին հանգստառութեան և փառաւորութեան միջոցները վճառելու :

Սակայն մարդուս գէմ երեք հանապարհ բացուեցաւ , և երեքն ևս զմարդիկ իրենց գէմ եղեալ նպատակին հասցունելու երեսյթն աւնէին :

Բայց սայոյդ խօսելով անոնց մէջէն մէկ , միջին հանապարհ պայյն կրնայ զմարդիկն ուղիղ առանցնորդել իրենց նպատակին հասնելու :

Յառաջաջոյն ըսկնք թէ բարիքն են որք զմարդն երջանիկ կ'ընեն . արդ այժմ երեք բարեաց պատկերները կը ներկայանան մը աշքին , որք են , արտաքին բարիք այսինքն Ճախոսնին և պարի . մարմայ բարիք , այսինքն՝ ծրագրեալու և չեղեցիունիւնը . հոգւոյ բարիք , այսինքն՝ Առագինական ժորժեց :

Այս երեք տեսակ գործերը մարդկանց միտքը շփոթելով . ոմանք կը կարծէին թէ , երջանկութիւնը մարմայ բարեաց մէջն է , ու մանք կը պնդէին թէ արտաքին բարեաց մէջն է , և ողջամփառ մանք ընդ օրս և բարոյականութեան վարդապետն Արիստոտել , ապացուցին թէ Ճշմարիա երջանկութիւնը հոգւոյ բարեաց մէջն է :

Մենք ևս ըստ մասաց Արիստոտելի ըստ կարի պիտի ցաւցընելք թէ խսկական երջանկութիւնը հոգւոյ առաքինութեան պառուղն է :

Երբ մը ուշադրութիւնը արտաքին բարեաց կողման կը դարձունեմք , այս , կը տեսնեմք որ արտաքին բարիք , այսինքն՝ Ճոխու-

թիւնը և պատիւ , թէպէտ մարդոյս մարմոյն փառաց և պահպանութեան օգտակար միջոցներ են . բայց երերուն լինելուն համար , մարդս մշտառն երջանկութեան մէջ պահելու երաշխաւորութիւնը շտար , և ասոր առած երջանկութիւնը կեղծ բերկրութիւն մ'է և ոչ իսկական երջանկութիւն :

Եւ ի՞նչպէս կընամք այն բանին ըսել մերն է , երբ մեր մէջ հաստատուած չէ :

Պատիւը չէ թէ պատուոյ արժանի մարդոյն քովն է , այլ պատուողին քովն է , այսօր կը պատուէ եւ վաղը չպատուեր , եթէ չուզէ :

Այսպէս ալ հարստութիւնը , հարուստի հետ սերտ կապ մը չունի , անհաստատութեան մէջ հաստատուած է :

Նախնիք ըստած են հարստութեան համար թէ՝ կոյր բաղդի մը տուրքն է , այսօր կու տայ , վաղը ետ կ'առնու :

Ուրեմն , արտաքին բարիք այսինքն՝ Պատիւ և հարստութիւնը երաշնիութիւն չեն համարսւիր , այլ , միայն զմել երջանկութեան առաջնորդելու միջոցներ են , եթէ մենք զանոնք բարիապէս 'ի զործ գնեմք :

Կարծեցին ոմանք թէ երջանկութիւնը իշխանութեան մէջն է , սակայն յյոժ սխալեցան նորա , իշխանները երբ իշխանական զահոյն վրայ բարձրացան , նորա աղէտը քաղցրութենէն մեծ տեսան , այն բարձրութեան վրայ փոխանակ երջանիկ լինելու , ապերջանկութեան ծայր հասան :

Ինչ են գովեստներու հռչակը , եթէ ոչ ու ամիկներու բերանի ծխային շունչը , որք նախաճածու իսածատողութեան հետ գոյզ կ'ընթանան , զի մին կը գովէ միւսն կը նախատէ անսահման եղանակաւ , և բաղում այն է որ առանց բնարդութեան և առանց ձանաշման իրարմէ լսելով և համոզուելով մին գովեստ և միւսն նախատինք և արհամարհանք կը շռայլեն :

Այսպիսի պարագաներու մէջ այն իշխան և դպասաւորը , որ իւր պաշտօնին կանչուած օրը թերեւս ինքդինք երջանկութեան հասած կարծէր , ահա կը սիսնէ որ իսպառ . հեռացած է նորա նպատա-

կէն, վասն զի տեսաւ որ ինքը կախուած է յողդողդ բաղդէն և կը տարութերի զովեատներու և արհամարհանաց, պաշտպանութեան և վտանգներու, յուսոյ և երկիրդի մէջտեղը:

Փորձերը զինք կը համոզն որ երջանկութենէն աւելի թշուառութիւնն ընարած է իւր վիճակը:

Կարդ մը մարդիկ այնպէս յուսացին թէ երջանկութիւնը մարմար բարեաց մէջն է. երբ մէ կը մրութիւնը, առաջութիւնը, մարմար հաջողն ունենայ, նա երջանիկ կը համարուի:

Սակայն այնպէս չէ, զի ինչպէս որ արտաքին բարիք մարդկանց երեակայութիւնը կը խարեն, այսպէս և մարմար բարիք, մէր զցայ յութիւնները կը խարեն:

Եթէ մնք հեշտութիւնը, երջանկութիւն կ'ուզեմք անուանել, նա, աւրիշ բան մը չէ, բայց մայն անուեականացը լութիւն մ'է, մնչ երջանկութիւնը մշտառ է:

Այսպէս և առաղջութիւնը, չըս տարերաց բարեկառն վիճակն է, եթէ անոնցմէ մէին առաւելու կամ նուազի, մէր առաջաման վիճակն կը խանգարի, և մեր կարծեցեալ երջանկութիւնը, թշուառթեան, ու քաղցրութեան կը փոխաի:

Մեր կեանք վայրկեաններու յաջորդական հոսում է, որ իւրհետ կը բերէ, մէկին ծնունդը, միւսին մահը: Մնարդն՝ ծնած օրը մահաւան մէկողն պիտի համարէ. զի մեր մարմինը, շարժուն հիւանդանուցի մը կը նմանի, որ ամբողջացուցիչ յօդուածներէն աւելի փառեցոցիչ և ապականարար ախտերով լի է:

Եւ մնք, ինչպէս կրնամք երջանկութիւն մինու ել այն բարիքներու մէջ, որք մարդուս սեպհական չեն, զի մին բաղդինն է, կուտայ և կ'առնու, միւսը՝ բնութեանն է, ինքը կու ապյ, դէպք և պատահար կ'առնէ և կը խանգարէ:

Զգայական հեշտութիւնները, հասարակ են մարդոց և անասնոց և անոնք որ հեշտութեան առարկաններով զբաղելով իրենք զիրենք երջանիկ կը կարծէին, անոնցմէ շատերը ասկերջանկութեան խորխորատները զլորեցան:

Ճանձ մեղրի վրայ կը նստի ռատելու և հեշտանալու համար, սակայն մեղր իւր մածուցիկ զօրութեամբն, թակարդ կը դառնայ ճանձին, և խղճալոյն հեշտութիւնը դառնութեան կը փոխուի:

Ուրեմն ճշարիտ երջանկութիւնը, որ արտաքին բարեաց և ոչ մարմայ բարեաց մէջ հետազոտելու է, այլ միայն հոգւոյ համաս բարեաց մէջ որոնելու է, վասն զի հոգւոյ բարիք միայն են մարդոյս անրոնաբարելի սեպահականութիւնները, որով մարդս ինքն իւր ազատ անձնութիւննութեամբն կ'ստանայ, և մէկը չկրնար զայն, նորա ձեռքէն յափշտակել, վասն զի հոգւոյն հետ անբաժանելի կապուած է:

Դմաստամիրին մէկը կ'ըսէ, հոգւոյ բարիք, աշխարհի ամեն բարիքներէն գերազանց է, վասն զի անցաւորի, և մշտն ջենաւորի մէջ տեղը, անսահման տարրերութիւն կայ:

Սասց է որ երջանկութիւնը մարդկանց ցանկութեան վերջին լրումն և բովանդակութիւնն է, սակայն զայն գտնելը շատ դժուար է, մանաւանդ գտնելէն վերջ զայն պահպանել ամնտղժուարին է:

Երջանկառիթ զործերը գիտնալ և ճանաչելը, կամ մեր մէջ զանոնք անսակացունելը, բաւական չէ զենզ երջանկացունելու, այլ երբ մենք զանոնք համաս եղանակաւ մը յարդիւնս կը բերեմք այն ժամանակ երջանիկ կը համարուիք:

Արհեստառորն քնացած ժամանակ իւր արհեստի ունակութիւն շկորսնցուներ, այսաէս ևս առաքինին՝ քնացած ժամանակը, առաքինութեան ունակութիւնը շկորսնցուներ:

Սակայն երկուքն ալ իրենց ունակութիւններէն բերկրութիւն մը չեն զգար: Պատկերահանը երբ պատկերահանութեան բոլոր օրէնքները մտաց մէջ պատրաստ, և ներկի աեսակները պնակիք վրայ դասակարգեալ անգործ կը մնան բնաւ բերկրութիւն մը չզգար:

Խսկ երբ, մնոեալ դաստառակի վրայ գործով պատկերը կը կենդանակերպէ, անհամեմատ բերկրութիւն մը կ'զգայ:

Այսպէս ևս առաքինական ունակութիւնը ունեցողները այն ժամանակը բերկրութիւնը կ'զգան, երբ առաքինական զործերը իրեն մասունքները երջանկութիւն, ՚ի զործ գնելով, այն ոքանչելի երջանկութիւնը կը կազմն:

Արտաքին բարիք և մարմոյ բարիք , կրնան մեծ դպրութեան արժանանալ , սակայն չեն կրնար մեծ պատուոյ համնիլ , վասն զի պառախւը , մայն բարոյական առաքինութեան սեփհականութիւնն է :

Իսկ դպրութիւնը , զցյդ լնդ պատուոյն կրնայ ընծայուիլ առաքինոյն , սակայն երկուքն՝ ի միասին չեն ընծայուիր , արտաքին և մարմոյ բարիք ունեցողին , և ոչ ալ նոցա գործերուն :

## ԴԱՍ Զ

**ԱՏՁՅՒԿԵԱՆՑ ԿԱՐԺԻՔԸ ԵՒ ՆԱՅԼ ՑՐՈՒՄՆ ԵՒ ԿԱՐԺԵՑԵԱԼ**

**ԵՐՉԱՆԿԱՌԻԹԻՒՆԸ**

Սայդիկեանք բոլորովին չար կը համարէին , արտաքին և մարմնոյ բարիքները մը երջանկութեան համար :

Սակայն յօյժ սխալեցան , վասն զի մէկը , ուրիշի մը օգնելու համար՝ որ բարոյական առաքինութիւնն է և երջանկութեան մասն , անպատճառ արտաքին բարիք պէտք է , ինչպէս որ ակար և անկարողի մը ձեռնառութիւն ընելու համար ալ , մարմոյ բարիք այսինքն՝ ուժը պէտք է :

Երջանիկ լինելու համար , մարմոյ և արտաքին բարիքները պիտանի են և օգտակար , մինակ թէ իրենք իրենց մէջ բացարձակ երաշանկութիւն չեն համարուիր , ապա , երջանիկ լինելոյ կը նպաստեն :

Այս . կրնան վերոյիշեալ բարիքները ֆնասակար լինիլ , երբ առշարն գործածուին :

Այս բարիքները , զէնք մի են զինուորի ձեռք , որք կրնան թշշ-

նամեղին դէմալ դործածել, կրնան իրենց իսկ անձի դէմալ դործածել:

Աւրեմ այն բարեաց, բարի կամ չար լինելն, զօրծածելու եւ զանակին մէջն է, և ոչ թէ նիւթոյն, զորս բարի տոնշած է բարութեան հեղինակն:

Կ'ըսէ թեսարաս թէ «Ճշխութիւն՝ի ձեռս առաքինոյն է, օդտակար բարիք, իսկ 'ի ձեռս մոլեկանին՝ է վնասակար»:

**Մէկը** եթէ հարսառութիւն չունենայ, ինչպէս կրնայ առառած ձեռնութիւն ընել, եթէ զօրութիւն չունենայ, ինչպէս կրնայ արիութիւն 'ի գործ դնել:

Աւրեմ այս բարիք, ոչ թէ ըստ ստոյիկեանց, չունենալն է օդտակար, այլ, ըստ Արիստոտէլի ունենալն է օդտակար:

Մարմինը՝ հոգւոյն գործարանն է, եթէ գործարանը խանգարուած լինի, հոգին չկրնար իւր գործերը կանոնաւոր կերպով առաջ տանել, զի գործողութեան խանգարած ժամանակը, եր ջանկութիւնն ալ անկատար կը մնայ:

Այն համստ բարիները, որք մեր առաքինական ունակութենէն կը ծնին, նոքա միայն երջանկութիւն կը համարուին, վասն զի անոնք միայն են մեր ցանկութեան լրաւմն, և բերկութեան առարկան, բայց այն բերկութիւնց, որք պատույ արժանի են ու չեթէ նախանձու նշաւակ:

Միրակուսայի բռնաւորը՝ որ խորափիներով լի սեղաններու գլուխ բազմած; ամեն կերպով յղփացեալ էր, և չափազանց գրդանաց ու մեծաշուք պատիւներու մէջ երջանիկ կը կարծուէր. սակայն ամենէն թշրուան էր նա, երբ անհանգիստ զիշեր և ցորեկ կը խորհիւէր, այն զիւրափով ատղանիէն կախուած սրոյն վրայ, որ իւր զիլիոյն վրայ կախուած անիրառութեան՝ պատիմները կը յիշեցունէր. Աւտանդի երևակայութիւնը, այն ճշմարիտ քաղցրութիւնները կը դառնացունէր, և անուշահամ օշարակները թշյն կը թուէ ին նմանակար:

Թէպէտ կարելի էր որ բաղդի հաւատարմութիւնը և մասց վստահութիւնը այն երկիւղը հեռացունէ ին անկէ, սակայն քանի քանի նախորդութիւններ ևս պիտի վրայ համնէին, որոցմէ բնաւ կասկած:

Այս տեռակ երջանկոթիւն կարծաւածները, կրնամք ուրախութիւն անուանել, և ոչ թէ երջանկութիւն, վասն զի ասիկա մեր սրաին կրնայ կայտումն տալ, բայց չկրնար յարաձգեալ յաջողուած մը տալ, որ է երջանկութիւնը:

Մին ներկայ առարկաներով կը շափուի, միւսն՝ մայուն ու նակոթեամբ. մին՝ սկզբամբ, միւսն՝ վախճանաւ:

Այս նաւարկութիւնը յաջողակ չէ կարելի վճռել, երբ յաջողակ հողմութ առազասաները բացած կը գնայ, այլ այն է յաջողակ որ իւր դէմ եղեալ նաւահանդիսան անվտանգ կը հասնի. ի՞նչ աղէտալի է այն նաւարեկութիւնը, երբ յաջողակ նաւազնացութեան ժամանակը յանկարծակի աղէտալի խորտակումը վրայ կը հասնի:

Վերջին զիծն է որ երկրաշափական ձևերուն անունը կը դնէ: Վերջին օրն է որ կը յայտնէ թէ Կրասոս և Կրեսոս երջանիկ են թէ թշուառ:

Սոլոն իմաստասկին ըստ Կրեսոսին «Կայ, մայ վախճանի, զի զգործ վախճանն, և զախ՝ երէկոյն առնէ գովելի»:

Երբեմն մարդիկ իրենց բաղձանաց և համոյքներու մէկ քանին կատարուած տեսնելով, պահ մը այնպէս կը հաւատան թէ կատարեալ երջանիկ են, սակայն երբ այն ուրախութեան՝ տրտմութիւնը կամ ցաւը յաջորդէ, կ'զգան թէ իրենց ունեցածը կատարեալ երջանկութիւն չէ եղեր, զի քանի քանի անձնինք որք փառաւոր սպալասներու մէջ երջանիկ համարեցին զիրենք, բայց ապերջանիկութեան մէջ գտան իրենց հաստատութիւնը:

Մի խաբուիք նոցա երևոյթէն, զի նոքա դեռ շատ կրելիքներ ունին, դէպքերը և պատահարները զանոնք տակաւին շատ մը ձաւխորդ պարագաներու պիտի մատնեն, և նոցա վախճանը տակաւին ստուգուած չէ:

«Սախանձը և բռնութիւնը լաւ զիաեն նոցա ձեռքէն յափշտակել այն շլացուցիչ բարիքները, և զայն յետին չքաւորութեան և աղքատութեան հասցունել»:

Ենթադրեմք թէ այն բարիքները վայելէ մինչ ցգերեզման, սառ  
4

կայն գարձեալ (առանց մայսան հաժառ բարիաց) երջանիկ չե, վասն զի մարմոյ բարիք կ'եղծուի և կ'ապականոի, արտաքին բարիք հետ չեն երթար հոն, հոգւոյ բարիք պէտք է զինք երջանկացունելու համար :

Այս փարթամ երիտասարդն ինչպէս կրնաս դռ երջանիկ համարել, քանի որ անթիւ հաճոյքները, կրից բոնոթիւնները, ձախորդ պատահարները, թշնամաց յայտնի և դաշտնի որոգայթները մէկ մէկ անպարտելի սովիներ են իրեն համար և անփորձ մարդ մը ինչպէս պիտի յաղթէ այս մեքենաներուն, և ինքովնք կարողնայ երջանկացունել :



## ԴԱՍ Է

### ԱՅՀԵՆ ԳԺԱՆԱՒԹԵԱՆ ԾԽ ՄԱՐԴ ԻՆՉԳԻ՛ ԿՐՆԵՑ ԵՐՋԱՆԿՑԻԹԻՒՆ ԳՅՆԵԼ

Բաղդ, և բնութիւնը մարդկանց մեծամեծ բարիքներ կրնան տալ, սակայն իրենց տուածներուն մշտատե մաւոյն երաշխառորութիւնը չեն կրնար ընծայել :

Ասոր համար քիչերը կրնան առաքինութեան ետևէն դնալ, և զայն ձեռք բերել ու վայելել :

Վասն զի, եթէ մեծամեծ առաքինութեանց համար մեծ ձոխութիւն, զօրութիւն և աւագութիւն պէտք է, և այս բարիքներն ալ ժամէ ժամ փոփոխական են և անհաստատ, ինչպէս կարելի է այս անհաստատ բարեաց վրայ երջանկութեան հաստատուն հիմ դնելը :

Եւ ահա քեզ օրինակ Օգոստոս կոյսր :

Նա իւր կատարեալ հասակի մէջ ամէն բարիքներով լի էր , իւր մեծ իմաստութեան հետ՝ մեծ առաքինութիւն ալ ունէր , իւր փափկակեաց վայելքներու հետ՝ մեծ շափառութիւն ալ ունէր , մեծ գործերու հետ՝ մեծ արիութիւն ևս ունէր : Մեծամեծ զանձերու հետ , մեծ ապահովութիւն ալ ունէր : Բարձր ինքնակալութեան հետ , խաղաղութիւն ևս ունէր :

Նաև ունէր , կնոջ հաւատարմութիւնը , բարեկամաց , բարեկամութիւնը , ժողովրդեան սէրը : Եւ այս ամէն ոչ թէ բաղդի պարգևներն էին , այլ իւր առաքինութեան ձիբերն էին :

Սակայն և այնպէս այս ամէն մեծամեծ բարիքներու մէջ սպրդեցին մուսք գտան անհնարին վշտերը և ցաները :

Բայց սակայն , միթէ այս գծուարութեանց պատճառաւ . թողմաք որ անհետանայ այն մեծ սկզբունքն , ոչ պէտք է որ աշխատիմք և ամէն գծուարութեանց հետահետէ յաղթելով առաջ երթանք , այն որ կարող չէ ստանալ իւր ցանկալին , թող ցանկայ փստանալ այն , ուրան կարող է հասնիլ :

Այն որ կը ցանկայ մեծամեծ առաքինութիւնները ձեռք բերել , և չկրնար համիլ , թող փոքր առաքինութիւնները ձեռք բերէ , որոց կարող է հասնիլ :

Եթէ բաղդի բարիք պիտոյքէն քիչ են , թող բաւականցուի քնութեան բարիքներով , եթէ ասոնք ալ իւր ցանկութենէն փոքր են թող վայելէ իւր անկերպարան առաքինութիւնները :

Բարոյական իմաստասիրութիւնը մազ երկո . բան կը սորվեցընէ , մին՝ բարիք ձեռք բերել , միւսն՝ շարեաց համբերել , յաջողութեան ժամանակը , շափառոք վայելել , ձախորդութեանց մէջ արիաբար տու կալ և տանել :

Իբրև մարդ , այս տանջանաց մէջ թող աղաղակ բառնայ , հագոց հանէ , բայց իբրև առաքինի պէտք է որ միիթարուի իւր ան մեղութեամբն և առաքինութեամբն , կարելի է որ անմեղութեամբն մեռնի իսկ անիբառութիւնէն , բայց զիտնալու է որ իւր անմեղութիւնը մէշտ կնողանի պիտի մնայ այս աշխարհիս վրայ :

Մոլիներուն ևս կը պատահի այս ճանապարհէն անցնիլը , սակայն նոքա , առաքինւոյն այս վերջի միիթարութիւնը չեն կրնար ունենալ : Մեծ զիտութիւն է , երբ թշուառը կարողանայ ճանաչել թէ ինքը թշուառ է :

### ԴԱՍ Ը

#### Թէ Ի՞նչ է ԲԻՐԱՑԵՎԱՆ ԼԻԵՋԻՆԱՒԹԻՒՆը

Ամէն սաեղծեալ գոյութիւն՝, իւր սեփհական դործողութիւն ունի և ամէն գործողական կարողութիւն՝ զօրութիւն կ'ըսուի , այս ինքն գործելու ուժը :

Այս զօրութիւններէն ոմանք ընդարոյս են և հարկաւոր , ոմանք կամաւոր են և ստացական :

Տկայ քար , տունկ կամ Ճճի մը , որ իւր բնութեան մէջ զաղունի զօրութիւն մը չունենայ , որ զարմանալի գործ մը յայտնապէս երեան չըերէ , կամիւր պահսկանութեան և կամ մարդկային ազգին օդտին համար :

Ենթուր խոտը , նապէւ խոտի թոյնը թափելու զօրութիւն ունի : Ակմահէց բյալ , առանց մուրՃի , քարերը կը Ճեղքէ . մաքնիսն , առանց ձեռաց օգնութեան , երկաթը կը գողնայ : Թամրեալ ձուկն առանց չուանի ձկնորսները կը կապէ :

Բնութիւնը , մարդկանց ալ ըստ տնկոց , աճեցողական զօրութիւն տուաւ , ըստ անամսոց , զզալու զօրութիւնը , ըստ հրեշտակաց , իւ մացական զօրութիւնը , բովանդակ աշխարհի բնական զօրութիւնը , անոր մէջ ամփոփելով :

Անոնցմէ զատ , Հեղիսնէին , աննման գեղեցիութիւն տուաւ , Հերակլէսին , մծ զօրութիւն :

Ուրիշներուն ալ զարմանալի զօրութիւնները , ինչպէս կը պատմն , Աղեքանդրէն հոռ կը բուրէր , Տիպերոս գիշեր ժամանակ կը տեսնէր . Պիւրոս , ախտաւորներուն դպչելով զանոնք կը բժշկէր , Աթենադորաս , իծերու հետ կը խաղար և չէր ֆասուեր :

Ասոնք , զործողական զօրութիւններ են , որ բնական են , և ոչ թէ ստացական : Ուստի թող աւալով այս բնականները , ստացական զօրութիւններն առնումք , որոնք աիրատէս բարոյական առաքինութիւններ են , զորս մարդն կ'ընծայէ իւր անձին :

Մարդս իւր սեփհական գործոց վսեմ զործադրիչ որակութիւնը , երկրաւոր վարժութեամբ իրեն վոյայ կը ապաւորէ , ուրիէ կը ծնանին այն վսեմ բարոյական առաքինութիւնները ,

Այս առաքինութիւնները , առաքինական ունակութիւն , կամ ունակական առաքինութիւն կ'անուանուին , որոնք որ հոգւոյ մծագինք զարդերն են և բնական ամէն զօրութենէն աւելի պատուական : Վասն զի բնականները , բնութեան ձիքերն են , իսկ ասոնք ջանքով և աշխատութեամբ ձեռք կը բերուին :

Այս ստացական առաքինութեանց ոմանք իմացական և ոմանք , բարոյական են :

Իմացականն անոնք են , որք մեր հայեցողական կամ գործնական միտքերը կը պատրաստեն , զիսութիւնները և արհեստները ուսանելու :

Բարոյականներն են անոնք , որք զգայական և բնական բաղձանքները , այսինքն չբրւերը և չամերը՝ կը կանոնաւորեն , բարի բարքերը ունենալու համար :

Իմացականները կանոններով կ'ստացուին , իսկ բարոյականները , աւելի գաստիարակութեամբ և սովորութեամբ ձեռք կը բերուին :

Եթէ ունակութեան ենթակային նայիմք , իմացականները բարույականներն աւելի պատուական են : Իսկ եթէ վախճանին նայինք , իմացականներէն աւելի պատուականագոյն է բարոյականը , զի բարոյականն , իմացականէն աւելի պատուականագոյն է :

Իմացականները, զկործն բարի կ'ընեն, իսկ բարդյականը, զզործողն բարի կ'ընէ :

Պատկերահանութեան արհեստն, պատկերն գեղեցիկ կը կերտէ, բայց պատկերահանը բարի չընէր, վասն զի իմացական բարութիւնը արհեստի կանոններով կը շափուի, իսկ բարդյական բարութիւնը դիտաւորութեան համատութենէն կը շափուի :

Մարդիկներէն մէկը, Յուլիանոսի շափ գիտուն չեղաւ, բայց անէտ աւելի թշուառ մէկը չկայ :

Գիտէր բարւաք խօսիլ, սակայն չէր կամեր բարւաք գործել, նաև իւր դիտութիւն շար գործելու համար ՚ի գործ կը դնէր :

Նորա միաքն, առողջ էր, իսկ կամքը, անառողջ էր :

Կուտառուն մը շինելը, ըստ առարկային, մողեկան է, մոռաք բարեւ պաշտութեան ցոյցով տաճար մը կանգնել, ըստ առարկային բարի է, բայց ըստ դիտաւորութեան մողեկան է :

Ճշմարիտ Ըստուծոյ տաճար կանգնելը, պաշտօն մաստցանելու համար՝ յարիշտահեալ գրամով, ըստ առարկային և ըստ դիտուորութեան բարի է, սակայն ըստ միջոցին շար է :

Միջոցն, այն մձաշէն գործն, շարաշէնի կը փոխէ :

Ուրեմն գործ մը բարդյապէս բարի լինելու համար պէտք է որ ամէն համեստ բարիները ընթացակից լինին այն գործին, եթէ մէկ պարագայ մը պակսի, զործը, մողեկան կը լինի :

Թէպէտ առաքինութիւնը բարդյական իմաստասիրութեան ենթակայ է, սակայն ամէն առաքինութիւնները նորա գրօշակի տակ չեն : Ըստ միայն Ճշմարիտ առաքինութիւն կը համարուի, որուն կը հակառակի մողւթիւնը և Ճշմարիտ մողւթիւնն այն է, որուն հետ տղեղութիւնը լծորդուած է :

Բնաւոր առաքինութիւնները, որք առանց ուսմանելու ՚ի բնէ պատուասաւած են ՚ի մարդն, (և սեփչական զօրութեամբ չեն ստացուիր) կ'որոշուին բարդյական դիտութենէն :

Եւ ինչպէս որ բնական պակասութիւնները մողեկան չեն համարուիր, այսպէս ալ բնական կատարելութիւնները, առաքինաւան չեն համարուիր :

Մեղմն հանձարաւոր է , մը ջիւնը նախատես է , արագիլը գթած է , առիւծը մեծասիրա է , բայց այս ձիրքերէն մէկն ևս բարոյական առաքինութիւն չեն համարուիր , վասն զի կամաւոր չեն :

Այսպէս ևս ոչ ազատական արհեստաներէն 'ի զատ , բարոյական առաքինութեան չեն վերաբերիր նաև մեքենական . իմացական առաքինութիւնները , այսինքն նկորվածիւնը , դարձնածիւնը ևայլն , որք թէպէտ մարդիկ զանոնք կամա . կ'ստանան , բայց գործոյն լաւութեան կը նային , չէ թէ անձին բարութեան :

Արհեստաւոր մը արհեստին մէջ սիսարելով . իւր բարի վարուց մէջ սիսալուծ չհամարուիր , զի թէպէտ կրնայ յառի արհեստաւոր համարուիլ , սակայն մոլի մարդ չհամարուիր :

Մեքենական արհեստաներու գինը , սակալ կը շափակ , իսկ աշխարհի բովանդակ տակինները փոքր առաքինութեան մը շափ արժեք չտնին :

Հողագործի ագէտ լինելն որմօթ չէ , բայց մոլի լինելն մեծ առնօթ է , ամին մարդ զիստն լինելու պարտաւոր չէ , բայց բարի և առաքինի լինելն ամենուն պարոքն է :

Ըստուած իւր թագաւորութեան առանգութիւնը զիտութեանց շխտաւացաւ , այլ առաքինութեան խոռաւացաւ :

Ձեւ թէ զանոնք կը սիրէ որ զիստն , այլ զանոնք որ կ'տանեն :

Մինչեւ ցարդ խօսուածներէն կրնաս վերահանու լինիլ բայ Ասրիստոտէշի տահմանին թէ քրարյական առաքինութիւնը , այն ընարադական ունակութիւնն է , (մը բաղձազական կարողաթեան մէջ) որ զմարդն կը պատրաստէ , համեստօրևն գործել բատ . խոհեմաւթեան թելագրութեան ,

## ԴԱՍ Թ

## ԲԱՐՈՅԵԱԿՈՍԱԻԹԻՒՆ ԱՌԵԳԻՆԱԽԻԹԵԱՆ ՑԱՏԿԱԽԻԹԻՒՆԸ

Բարոյեական առաքինութեան յատկութիւնը, պատուելի լինելն է, ինչպէս որ մոլութեան յատկութիւնն ալ մղադրելի լինելն է: Պատիւն յարգանաց արտաքին մէկնշանն է, զոր մննք մը ներսէն կ'ընծայեմք գերազանցութիւն տանեցող յարգելի անձանց: այնու պէս ևս անարդութիւնը արհամարհանաց մէկ նշանն է, որովհ'արհամարհեմք անարդ մարդիկները:

Ուրիշը իւր գերազանցութեամբ յարգանաց արժանի կը համարուի, և մեր յարգանք որ անոնց կու տալիք, նոցա արժանաւորութեան վարձն է:

Այն յարգանք զոր մննք տալ կ'ուզեմք արժանաւորին, աներեւոյթ է, վասն զի մեր սրտի մշջն է, ուրեմն արտաքին պատիւն է որ անոր վկայ կը լինի, զոր հրապարակու կը մատացանեմք յարգելի անձանց:

Յարգելի անձանց գերազանցութիւնը մեր վրայ զարմացումն կը բերէ, զարմանքն ալ ավանածութիւնը, ակնածութիւնն՝ զերկիւղ պատկառանաց, որոնց բովանդակութիւնը, յարգութիւն կ'անուանուի:

Սոյն յարգութիւնէն կը ծնանին արտաքին նշաններն, գովեստ, խճնարհութիւն, ծափահարութիւն, պսակ, արմաւենի, զօրս իբրև պատիւ կը նուիրեմք արժանաւորներուն:

Սակայն գիտնալու է որ գովութեան և պատույ մէջաեղը զանազանութիւնն կայ. վասն զի պատիւն անձին ներքնյոյն կը հայի, իսկ գովութիւնը, արտաքին գործերուն:

Պատիւն բարոյական գերազանցութիւնը կը յարգէ. իսկ գովութիւնը՝ բնական կատարելութիւնները մեծ կը համարէ. այնպէս ոք

շատ մը բաներ կրնան գովութիւն ստանալ, բայց չեն կրնար պատռոյ արժանանալ:

Գերազանցաւթիւնը, պատուելիին քովնէ, և ոչ թէ պատողին. և պատիւն ալ պատուողին քովնէ, և ոչ թէ պատուելոյն.

Մոլորատար մարդիկ երբեմն ըստ ըղձի կը շուպյեն այս անունները առանց նոցա արժանաւորութիւնը քննելու:

Մէկը մատամբ ցոյց տուաւ զփիլիսոփան, ըսելով և Սա է զերազանց փիլիսոփայ», ծաղրածու մ'ալ միւս կողմէն ուրիշ մը ցոյց տուաւ ըսելով «Եւ աս է զերազանց խոհակիր»:

Ըատերը չէ թէ առաքինութեան մէջ առաջ զնացողները զերազանց կը համարին, ապա օգտամատոցյները և բերկրականները և որ ցաւալին է, յիմարաբար՝ արհամարհն կը պատուեն և պատռելին կ'արհամարհեն:

Բայց ըստ ուղիղ մտաց Արիստոտէլի, առաքինութիւնը պատռոյ է արժանի, իսկ մոլորթիւնը անարգանաց:

Այս բնական ձիրքերը, ուժը, զերեցկութիւնը, կրնան գովութիւն բնութանիլ, բայց պատիւ ոչ: Եւ այս չէ թէ զեղեցիկ և կամ ուժ ունեցող անձինքն են գովութեան արժանի, այլ բնութիւնը, որ այն գովութեան արժանի ձիրքերը պարգեց իրենց:

Իսկ անոնք որ բնութենէն առած այս ձիրքերը բարիսապէս 'ի գործ գնեն, այն ժամանակ ոչ միայն գովութեան, այլև մեծի պատռոյ արժանի կը լինին:

Վասն զի թէպէտ որակութիւնը բնական է և ընդարոյս, բայց գործածութիւնը կամաւոր է և բարոյական:

Ծառայական արհեստները բնական զօրութենէն աւելի, գովութեան արժանի են, վասն զի իմացական առաքինութեանց փոքր առուակներն են և աշխատութեամբ կ'ստացուին:

Այս արհեստները պիտանի են, անոր համար յարդելի, իսկ ոչ պատռելի, զի ճշմարիտ առաքինութիւնն է պատուելի, որ վարձկան չէ. և այն զիսութիւնները և արհեստները որք դէօլ 'ի բարոյական առաքինութիւնը չեն ընթանար, չեն կրնար իրենց դործողը երջանկութեան հասցունել:

ինչ պարծանք է մարդուս ամեն արտաքին և եթերական զիտութիւնները գիտնալ և ձանաշելը, և զանձն շնանաշելը:

Ինչ պատիւ է դիտութեամբ լեցուն լինելը, և թափար մաղառքինութենէն. ինչ է մոլիք գիտունը, եթէ ոչ գրաստ դրարարձը:

Հայեցողական գիտութիւնք դովելի են. բայց պատօւելիք չեն, եթէ բարոյական գիտութիւնները անոնց հետ չլծորդուին:

Բաղձաղականն և իմացականը, սերտ գաշնակից են. երբ սիրտը կիրքերով խորված է, կարելի չէ որ միտքը լուսաւորուի. և մասց լուսաւորութիւնը միայն կրից ամպերը հալածել:

Թէ պէտ իմացական առաքինութեանց մէջ, ավնութ թեան մասին խոհեմութիւնը հայեցողական գիտութիւններէն առելի ստորէ, բատ ենթակային, վասն զի իմաստութիւնն հայեցողական ընդհանուր մասց մէջ կը հանգչի. իսկ խոհեմութիւնն՝ գործնականներու. և մասնաւորներու մէջ. սակայն և այնպէս խոհեմութիւնը առելի պատօւելի է. վասն զի ըստ շափու ուղիղ բանին կամքերը և կիրքերը կանաւորելով, իմացականութեանց մէջ. ինքն միայն է բարոյական արագինութիւնը, և իմացականն աղ բարոյականներու մէջ:

Ուրեմն խոհեմութիւնը գիտութեանց թագուհին է, նաև զիտութիւն թաղաւորաց, իշխանութեամի զօրացեալ, ժողովորդէն ու միայն կը պատօւի այլ և երկրագութիւնն իսկ կ'ընդունի:

Վասն զի հայեցողական գիտութիւնները անգործ նատած, երեխնք զննած ժամանակ, աս՝ օգտակար օրէնքներով տէ րութիւնները կը հաստատէ, և աշխարհին ուղղութիւն կու տայ:

Ասոր համար կը առենեմք շատ անդամ որ իմաստունները պատօւալուն զգեստներով խոհեմութիւններու գոները կը մաւրան:

Մեծն Փաղերէն՝ առօսկանի մէջ վսեմափայ փիքսոփայ մ'էր, որոյ պատոյն համար (տարուանս իւրաքանչիւր առօւր մէկ մէկ արաձաններ կանցնեցին) սակայն նաև այն արձանները փիքսոփայաթիւան պատօվ շընգունեց, այլ խոհեմութեան պատօվ ընդունեց. վասն զի տասն տարի Աթենացւց հասարակապետութիւնը իւր իմաստութեամբն և խոհեմութեամբն կառավարեց, այն կառավարութիւնը՝ որ կործանման մօտ էր երբ իրեն յանձնեցին:

Թէպէտ ամէն գիտութիւնները ազատ են և ազնիւ, և զաղոնի կապով կապուած են միմաց հետ, բայց շլթայի առաջին օդը բարոյական առաքինութեան ձեռքն է:

Ամէն գործնական գիտութիւններ զմեզ գէպ 'ի տեսական գիտութիւններ կ'առաջնորդեն, և ամէն բնական և անսական գիտութիւններ, զմեզ բնականագէտ բնութեան արարշին ճանաչման կ'առաջնորդեն, զայն պաշտելու համար: Եւ այս գերազանծ բարոյական առաքինութիւնն է, իմացական առաքինութեանց վերջին վախճանը, որոնք այս վախճանէն կ'ընդունին իրենց պատիլ:

Բարեկարգ հասարակապետութիւնները իմաստութեամբ և մծ խորհրդով սահմանեցին հրապարակական գովեստ տալ քաջ առանց, և առաքինեաց և հրապարակներու վրայ քարոզել նոցա արիական գործերը:

Եւ այն պատիւնները, առաքինութեան յարգանք և մոլութեան գորովանք էին, այն ձայները, նախանձաւորա թիւնը կը զարթուածէին, և մախանքները կը մեռցունէին:

Այս ալ Ճշնարիտ է որ առաքինութիւնը, գովութեամբ շնանիր և ոչ ալ պատառվ կը փանայ:

Այն զէնք որ յօգուտ իւր և 'ի մնա թշնամոյն սահմանուած էր , շարաշար գործածութեամբ եղաւ 'ի մնա իւր և յօգուտ թշնամոյն :

Այն նիղակը՝ որ Հերակլէսի ձեռք Տրովացւոց մահարար շանթմէր , նոյնն անփորձ Փիլոկատէի ձեռք մահահրաւէր եղաւ , իւր իսկ անձին , վասն զի վրիպելով իւր ութին զարկաւ և վերջին շունչը փչեց :

Ոսկին ալ երկաթի պէս պիտանի նիւթ մ'է ~ այս նիւթը՝ ազա-  
հի ձեռք անպիտան է :

Շռայլի ձեռք վասնգաւոր է , իսկ առատաձեռնի ձեռք թէ ան-  
վասնդ է և թէ պիտանի :

Որովհետեւ նա քաջ գիտէ , անոր գործածելու համստ եղանա-  
կը՝ մէ որի տալու է , ո՞չափ տալու է , ինչու տալու է , և ինչ  
եղանակաւ տալու է :

Պարզեն համեմատելու է պարզեողի և ընդունողի արժանեաց  
հետ :

Կիւնիկեան աղանդէն անուանարկ փիլիսոփայ մը՝ օր մը յան-  
դգնարար Անտիկոնոս թագաւորէն վեց հարիւր դաշեկան ուղեց ,  
պատասխանեց Անտիկոնոսն թէ Կիւնիկեան աղանդաւորի մը համար  
ուղածդ շատ է , և շտուաւ :

Ժամանակէ մը յետոյ կրկին ներկայանալով այս անգամին եր-  
կու դաշեկան ուղեց , պատասխանեց թագաւորը թէ , այդ ալ յաս-  
դաւորի մը կողմէ արուելու սպարզն լինելու համար շատ քիչ է ,  
և զանց ըրաւ :

Առաջնոյն մէ ջ պարզեն ընդունողի արժանիքէն աւելի էր . երկ-  
բորդի մէ ջ տուողի արժանիքէն նուազ էր :

Ասոր հակառակ ալ օր մը սոսկական զինուոր մը , Աղեքսան-  
դրին ներկայանալով , փոքր վարձ մը ուղեց , նա ալ քաղաք մը  
պարզեց , երբ ազդարարեցին իրեն թէ սոսկական զինուորի մը  
քաղաք մը տալը շատ է , պատասխանեց թէ՝ Աղեքսանդրին հա-  
մար ալ փոքր է :

Երկու թագաւորներն ալ , սուտ տրամարանութեամբ առատա-  
ձեռնութիւնը աղաւաղեցին , մին՝ ազահութեամբ , միւս՝ շռայլու-  
թեամբ :

Անտիկոնոսը Կիւնիկեան աղանդաւորի և թաղաւորի մէ ջ խորու-  
թիւն դրաւ , որ չպարզեէ :

Աղեքսանդր՝ զօրքի և թագաւորի մէ ջ տեղը խորութիւն զրաւ  
որպէս զի շատ պարզեէ :

Անտիկոնոսը՝ փոխանակ երկու խնդրու ածներու միջասահմանը

Դանելով առատաձեռնելու, երկու ծայրայեղութիւնը մէջ բերելով, հրաժարեցաւ առատաձեռնութենէն, որ չէր վայելեր թագաւորի մը :

Աղեքսանդրն ալ, փոխանակ թագաւորի և զօրականի միջասահմանը զանելով առատաձեռնելու, բանաւորութեան սահմանն անցնելով շոյլութեալը, արդարութեան սահմանը կոխոտեց, վասն զի արդարութիւնը չէր ներիր որ շատերու արեամբն զնուած քաղաք մը պարզե լինէր մէկ սոսկական զինուորի :

Խնչպէս որ օրէն է մոլիներուն և վատանուններուն շառասահեռնելը, այսպէս ալ օրէն է, անոնցմէ պարզե չընդունելը :

Եռատաձեռն՝ մոլիներէն պարզե չընդունիր, որպէս զի կեղտ անուն չձգե իւր գանձի մէջ. այսպէս ալ մոլիներուն չպարզեեր, որպէս զի կեղտ անուն չձգէ իւր պարզեներու մէջ :

Ռսկին, 'ի ձեռն բարեսց, առաքինութիւնը կ'աւելցնէ, 'ի ձեռս շարեաց մոլութիւնը կ'աւելցնէ, անոր համար առատաձեռն ալ երբ շարերու կը պարզեսէ բարիքները կը նուազեցընէ : Այսու ամենայնիւ ըսել չեմ ովեր թէ թշրւառութեան մէջ դանուող մոլիներուն օգնելու չէ . իրեւ մարդասիրական դթութիւն և բնական պարզե ողորմելու է, վասն զի թէկ դէշ բայց մեր տեսակէն է :

Արիստոպաէլ վատանուն մարդու մը փոքր նուէր մը տուած ժամանակը աշակերտաները հարցացին թէ Այդ մոլիին ինչո՞ւ պարզե տուիր, պատասխանեց փիլիսոփան թէ՝ Ես բարիի մը շերախտաւորեցի, այլ մարդու մը երախտաւորեցի :

Նաև մնձամծ հարսաւութիւն ունեցողներուն առատաձեռնելու չէ, վասն զի առատաձեռնութիւնը սահմանուած է օգնելու այն անձանց՝ որք պէտք ունին և անոլ առաքինութիւն մը առաջ կը քերեն :

Անկարօտին օգնելը կարօտելց զրկողութիւն է, և առատաձեռնութեան առաքինութեան ջնջումն կը նշանակէ :

Եռատաձեռնութիւն չէր այն իմաստափրի ըրած՝ որ երբ իմաստափրութեան սկսեց, իւր բոլոր գանձերը ծով նետեց. այս անձը, իւր իմաստափրութիւնը յիմարութենէն սկսեց :

Սորա յիմաքը ութիւնը Քսերքսէսէն գուելի եղաւ, վասն զի Քսերքսէս կ'ուզէք ոսկիով ծովու իրեն հնազանդեցընել, և ծառայեցընել իսկ այս կ'ուզէք ոսկիով ծովը հարստացընել որ արգէն իրեն աւելի հարուստ էր :

Առա իմաստասէր անուանելէն աւելի առաքինապետաց անուանելի է, անոր համար որ իւր ոսկին փախանակ առաքիներու մէջ արդինաւորելըւ, ծովու ձկանց մէջ զայն խղդել առւաւ :

Բանաստեղծները՝ զովութեամբ կ'ապրին, այն որ զովութեամբ կ'ապրի, օդով կը սնանի, սոքա մեռելներան կեանք կու տան, բայց իրենք սովուն կը մոռնին, եթէ առատաձեռներու ոսկին շանձրեւ նուցա վրայ :

Առատաձեռն եթէ ունի շուտ մը կը չնորհէ, եթէ չունի դարձեալ շուտով կը հրաժարի, և այս երկուքն ևս երախտիք են, վասն զի տալով, յոյսը շխարեր, չտալով ալ յուսացողը շտանջեր :

Ըգահին քով որովհետեւ առատաձեռնութիւնը բունական է, ուստի այնչափ կ'աշխատացնէ պարզեառուն, որ զրեթէ այն պարզեը իւր աշխատութեան գին կամ վարձ կը լինի : Որ շուտով տայ, կրկին կու տայ : Կտտամահն կրկին մահ է : Շուտով շնորհուած պարզե մը, ընդունողին կրկին երախտիք է :

Տիպերոսը երկուքի մէջն ալ Տիպերոս էր, դատապարտած ժամանակը, գահիձներուն պատուէր կու տար որ կտտամահ ընեն :

Պարզենելու խոստման մէջն ալ խիստ գանդաղ էր :

Շատերը տարակուսութեան մէջ կը մնային թէ լինչպէո կրնան յաջողիլ ոսկին ձեռք բերելու, ուրիշները մեծ հոգ կը տանէին զայն ապահով պահելու, ոմանք մեծապէս կը տրտմին զայն կորսնցոցած ժամանակը : Իսկ առատաձեռնի սիրտը և միտքը քնառ շվարանիր վերոյիշեալ պատճառներէն :

Վասն զի ունեցածը կը պարզեէ, և պարզելու համար ալ կ'ստանայ, և պարզեածը՝ առկոսով տուած և անկորուստ կը համարի :

Դիսպանները երբ կի բոսին հարցուցին թէ քու գանձդ մէր կը պահէս, նա իւր ասպետաները ցոյց տալով ըստաւ . Ասոնք են իմ դանձապահներս : Հասկըցընել ուզեց թէ որչափ որ պարզեած է այնչափ պատրաստ և ապահով ունեցած կը համարի :

Արթատոտել կ'ըսէ , ուրիշ առաքինութիւն մը այնչափ հածելի  
և գովելի չէ ժողովրդեան աչքին որչափ որ առատաձեռնութիւնը .  
և մարդկաներէն և ոչ մէկը այնչափ յարդի և գովելի ու շքիղ  
շերեիր հասարակութեան , ինչպէս որ կ'երեի առատաձեռն . զամն  
զի նա երախտեաց կենդանի աղքիր մ'է , անոր բարերարութեանց  
երախտապարտէ : ժողովուրդը . բարերարեալ ժողովուրդէն (երկրաւոր  
այսպէս) երկրպաղութիւն կ'ընդունին . նա աղբատաց շտեմարանն է ,  
մեծատանց ինամակալուն , առաքինիներու վարձահատոյց , և հայր  
է հայրեննեաց :

Ծերերը անոր նայելով կը զարմանան , տղայք անկէ կ'ուսանին ,  
շափահամնարը անոր օրինակէն ուսանելով , անոր կը նմանին :

Հռայները և ազահները անկէ օրինակ առնելով կ'ուղղոին և  
կը շափաւորուին :

Խսկ ուղլութեան չեկուներն ալ ամօնապարտ կը մնան :

Առատաձեռն նախանձորդներէն , շարանիւթներէն , և թշնամինե-  
րէն զերծ է :

Երբ նա , միաւկ կը պարզեէ և բան մը շսանար , ով կը նա-  
խանձի անոր :

Երբ նա լամենք կը սիրէ , ով է որ զնա կ'ատէ :

Երբ նա հայրեննեաց օդախն , հասարակայ բարս ոյն . և իւր իսկ  
անձին լընամի չէ , ով է որ անոր թշնամի կը լինի :

Այս բարեմանութեանց համար՝ նորա մեռած ժամանակը հա-  
սարակութիւնը կը տիրի և կու լայ , ամեն գէմք սուզ կ'զգենու ,  
ժողովուրդը կու լայ , արհեստաւորը կու լայ , որբ և անտէրունջ  
մնացուները կու լան :

Դառն կը համարին նորա մահուան մանկաղը , որ շատերուն կեն-  
դանութիւն տուողի կեանք հնձեց , և անարդար կը դատան զբնու-  
թիւնը , որ այնպիսի երկնաւոր ոզիէ մը հողեղէն մարմնիք տուաւ :

## ԴԱՍ ԼՀ

### ՄԹԱՅԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ

Ծռայլութիւնը և աղահութիւնը երկու թշնամիներ են առափանչանութեան, և առաւել ես թշնամի են միմեանց. մին՝ սաստիկ կը սիրէ, անոր համար կը պահէ. միւսն՝ սաստիկ կ'առէ, անոր համար կը վատնէ :

Ճեշտութեան համար եղած առաւելազանց ծախող՝ շռայլութիւն չէ, ճեշտութիւն է :

Այն որ փառասիրութեան համար կը վատնէ, շռայլ չէ, փառամող է :

Այն որ զանձ կը պահէ առուտուրի համար՝ աղահ չէ, վաճառական է :

Այն որ խաղերու համար կը պահէ, աղահ չէ, խաղամոլ է :

Այն միայն է շռայլ, որ մինակ պարզնելու ըլքիւ կը պարզնէ : Ինչպէս որ ագահն ալ լոկ պահելու փափաքով կը պահէ : Երկուքն ևս ուղիղ սահմաննեն գուրս են :

Մոլութիւններն ալ իրենց զօվաբաններն ունին . շռայլութիւնը երբեմն առատաձեռնութեան դյոյն կ'առնու, և աղահութիւնն ալ խնայողութեան պատկերը կ'զգենու :

Երիտասարդները՝ շռայլութիւնը կը գովեն, իսկ ծերերը՝ աղահութիւնը . (բացառութեան օրէնք յարդելով) շռայլութիւնը երիտարդաց մոլութիւնն է, աղահութիւնը ծերոց :

Ծռայլն իւր գանձը վատնելէն զկնի, կ'սկսի ուրիշներունն ալ յափշուակել, որպէս զի շռայլ :

Աղահն՝ որպէս զի ուրիշները իւր գանձը շվայելեն, և ինքն աղափշելը սյն մո ջնառիւծներու պէս, որք Արիմասպեայ լեռներու

ոսկոյ հանքերը կը պահպանէին . չէ թէ իրենք ոսկոյ պէտք ունէին , այլ թէ ուրիշները այն սոկիները չվայելլին , անոր համար կը պահպանէին :

Ճռայլն ըստ ինքեան մոլի չէ , այլ ըստ պատահման մոլի կը լինի , զի առատաձեռնոտ թեան սահմանէն դուրս ոսկի ցանելն աման մոլութեանց սերմն ցանել է :

Իսկ աղահն ըստ ինքեան ամեն մոլութեանց ենթակայ է , թէ երբեմն ըստ պատահման առաքինի կ'երեի . զի շատ ծախս չընկլու համար կերակուրներգ մէջ զգուշաւոր կը մնայ :

Զկորսնցնելու համար խաղպմութենէն հեռի կը մնայ . հարուստ չերենալու համար փառամոլութենէն կը փախչի . տուժ կրելէ վախնալուն համար յանցանք չգործեր :

Սակայն միմիայն ապահութեան մոլութիւնը բապական է վերոյիշեալները ամենքն ալ չնջել :

Ճռայլն կը միալի վատահութեամբ , աղահն կը սիալի երկիւղով :

Երկուքն ես անպիտան են , զի մին՝ իւր կեանքէն առաջ իւր դանձը կ'սպառէ . թշուառութեան մէջ զիշակի մէջ մնալով :

Միւսն՝ թշուառութեան մէջ զիշակի մէջ կեանք կը կորսնցնէ , գանձն անժխտ պահելով :

Մին՝ կը մոռնի աղքատ , միւսն՝ կ'ապրի աղքատօրէն , որպէս զի ճռին մեռնի :

Մին՝ ժառանգ կը ձգէ բարեկամները , բայց ո՛չ զանձերը և դրամները :

Միւսն՝ ժառանգ կը ձգէ դրամը և զանձը , բայց բարեկամ չձգեր :

Իսկ առատաձեռն՝ թէ դրամ կը ձգէ և թէ բարեկամ :

## 1.թ.

## ՄԵԾԱԳՈՐԾԱՅԹԻՒՆԸ ԵՒ ԻՒՐ ԵՐԿԱՌ ԾԱՅՐԵՐԸ

ՄԵԾԱԳՈՐԾԱՅԹԻՒՆԸ մեր հոգւոյ այն առաքինութիւնն է՝ որ մեծամծ ծախուց միջակէտին կը զիտէ, զայն համեստ պատճառի բարի վախճանի մը հասցընելու համար :

ՄԵԾԱԳՈՐԾԱՅԹԻՒՆԸ ան տեսակէտն է զործոյն մեծութիւնը, զործողի մեծութիւնը և վախճանի մեծութիւնը . թէ ով է զործողը, ինչ կը զործէ, և ինչ վախճանի համար կը զործէ :

Գործոյն մեծութիւնը՝ իւր քանակէն, զործողի մեծութիւն՝ իւր առափանի դիրքէն, վախճանի մեծութիւնը՝ հասարակաց շահէն կը չափուի :

Եւ այս երեք չափը մէկ անուան տակ վայելչութիւն կը համարուի :

Առ այս՝ Արիստոտէլ խորհրդով ըստ, ՄԵԾԱԳՈՐԾԱՅԹԻՒՆ և մեծավայելչութիւն՝ Գործոյն նիւթական մեծութեան նայելով, մեծաղործութիւն ըստ, իսկ նորա վախճանին, զործողի անձին և վայելչութեան քանակէն նայելով՝ մեծավայելչութիւն ըստ :

Ինչպէս որ փոքր փիղը մծ զաւէն մծ է, այսպէս ալ մեծացործութիւնը առատաճեռնութենէն մծ է :

Քաջն Մարսիմոս իւր ունեցած մէկ փոքրիկ կալուածն ծախելով նոյն դրամն Աննիպալին տուաւ, իւր մարդիկը բանտէն ազատեց և ինքը մնաց աղքատ :

Զօրապետն իւր աղքատութիւնը հասարակափետութեան համար փոքր ամօթ համարեց, քան թէ իւր զօրաց գերութիւնը :

Այն որ այս աշխարհիս մէջ ամեն ունեցածն կը պարզեէ, բռնոր աշխարհ կը պարզեէ :

Հռոմէական ժողովուրդն , Փոքր Ասիոյ թագաւորութիւնն առնելով Նրաաղոս թագաւորին պարզ և ժողովուրդն , թագաւորութիւնը ժառանդելին աւելի թագաւորին պարզ և լն պատիւ համարեց Հռոմէական վեհափառութեան :

Գործին և ըղձին նայելով Մաքսիմոս շատ պարզեց , վասն զի ինչ որ ուներ տուաւ :

Իսկ Հռոմէական ժողովուրդն քիչ տուաւ , վասն զի ունեցածին մէկ մասը տուաւ :

Բայց ուղղութեան գծի մէջ , Մաքսիմոսի ըրածը առատաձեռնութիւն էր , և ոչ թէ մծագործութիւն , այսպէս ալ հռոմայեցւոց ըրածը , մծագործութիւն էր և ոչ առատաձեռնութիւն :

Որովհետև մծագործութիւնը , կարողութեան և ըղձի հետ չշափուիր , ապա արդեանց և գործայն մծաւթեան հետ կը շափաի .



## ԴԱԱՍ Խ

### ԱԲՌԵՔ ԵՆ ՄԵԾԱԳՈՒՅ ՄԵՐԴԻԿԸ

Ինչպէս որ գործը այսպէս ալ գործողը մծ լինելու է , որպէս զի վայելու լինի գործոյն և դործողի համմատութիւնը :

Ոչխարէն առիւծ ծնելը այլտնդակ է , անարդ մարդու մը մծ զործ գործելը զարձեալ նոյնն է :

Այն որ չկրնար մծ գործին վրայ մծ անօւն գրել՝ արժանի չէ մծագործ համարուելու , վասն զի անօւնն է որ զգործ կը մծցընէ , և ոչ թէ գործը զանուն կը մծցնէ , արհեստաւոր և սոսկական մարդկանց մծագործութիւնը նախատանաց է արժանի և չէ յարդանայ :

Վասն զի մեծաղործութիւնը հզօր և ինքնակալ կայսերաց և անպարտելի զօրապետաց է վերապահելի :

Ժողովրդական կարգէն, թէ և հարուստ ու մեծառուն անձինք լինին, և այսպէս չվայելեր նոցա մեծագործութիւնը, նոցա արժանիքը՝ առատաձեռնութեան մէջ կրնայ օրինաւոր փայլիլ, որուն վախճանը յաճախ պատահած է, որ մեծագործութիւնէն աւելի գերազանց հանդիսացած է :

Վասն զի առատաձեռնութեամբ՝ հոգին և անունը՝ի միասին կը փառաւորի, իսկ մեծագործութեամբ մինակ անունը կը փառաւորի :

Առատպելեալ զորոշ որ ուուելով եղան հաւասարիլ կ'ուզէր, իւր բաշխացած սահմանին չհասած պայմեցաւ :

Մեծահարուստ Բակտրակ և Ավլրա Ճարտարապետները իրենց ծախսով յանձն առին հայակապ թատրոն մը շինել, իբրև մեծագործ, մինակ թէ թոյլտութիւն լինի իրենց, որ իրենց անունները այն մեծ շէնքին Ճակատը զրեն. սակայն թոյլտուութիւն չըրին, անոր՝ համար՝ որպէս զի ռամիկ մարդկանց սակով զործոյն մեծութիւնը շխանգարուի :

Հռովրէ զերի աղջիկը իւր զեղեցկութեամբն շատ թագաւորներ և իշխաններ յաղթեց, և այն ամօթալի գանձով մեծ ամբարտակ մը կանգնեցոյց իբրև մեծագործութիւն :

Սակայն այն զործը անդոսնելի եղաւ քան թէ գովելի, վասն զի այն զործով աւելի բացայատ ցոյց տուաւ աշխարհին և երկնից, իւր և իւր մեղսակցաց նախատելի ամօթը, քան թէ մեծագործութիւնը :

Համեստութիւնը նախանձեցաւ այս լրբենի յաղթանակին վրայ, վասն զի հրատարակուած խայտառակութիւնը հրապարակաւ զարդեղաւ, այն ամբարտակն Եղիպտոսի միւս ամբարտակներու զարմանագործութիւնը ցննեց :

Եւ աշխարհ թող չզարմանայ թէ Կղէ ուզայ թագաւորի ամբարտակի շինութեան այնշափ հաղար զերիները կ'աշխատէին, ինչպէս չկրցան մէկ զերի աղջկան մը ամբարտակին հասցընել :

Այս թագաւորի ամբարտակին տակը հաւաքուած էին աշխատե-

լու անթիւ գերիները, սակայն գերի աղջկան ամբարտակի տակն ալ հաւաքուած էին շատ մը թաղաւորաց և իշխանաց զանձերը։ Այս գործը սկսուեցաւ մեծազործութեան դիտաւորութեամբ, բայց պսակուեցաւ նախատական ամօթալի վախճանաւ մը։

Արդ՝ անոնք որ մեծ հարստութիւն ունին և վիճակնին փոքր է, լաւ է որ իրենց հարստութիւնը առատաձեռնութեան բաշխն, քան թէ մեծազործութեան մէջ կորսնցընեն։

Վասն զի կարելի է անոնց, պարզեաւուի մը արդիւնքը վայել, բայց անկարելի է մեծազործութեան անոնը ժառանգել։

Մեծազործութիւնը անոր համար մեծամեծաց, իշխանաց և ինքնակալաց է, որ նոցա եկամուտները միշտ անպակաս կու դայ, քանի որ ժողովուրդ կայ և կը մայ։

Նաև քանի որ իշխան և թագաւոր, ժողովրդեան ամեն գործոց գեկավարն է, անոր սկէտք է ընծայուիլ մեծազործութիւնը, որպէս զի համապատասխանէ ժողովրդեան անոր տուած մեծ տիտղոսին։

Իշխանը միշտ իրեւ մեծազործ կարող չէ գործել, ինչպէս որ իրեւ իշխան ալ միշտ չկրնար գործել։

Իշխանն իւր ժողովրդեան լուսատու արեգակ մ'է, և արեգակն ալ իշխան է ամեն լուսաւորաց։ Արեւ էական յատկութիւնն է ձառաղայթել, իշխանի էական յատկութիւնն օգնել, եթէ արեւը լոյս շտայ՝ արեւ չհամարուիր, եթէ իշխանը չօգնէ՝ իշխան չէ։ Եթէ արեգակն օր մը անլոյս անցընէ՝ այն օրը արեւ չհամարուիր, այլ մթին զիշեր, եթէ իշխանը առանց օգնելու օրը երեկոյ ընէ, այն օրը իրեն համար կորսուած կը համարուի, վասն զի անօր մէջ չկրցաւ իրեւ իշխան գործել։

Իշխանը, եթէ ըստ մասնեայ երախտեօք հասարակաց ոմանց օգնէ՝ առատաձեռն կը համարուի, իսկ եթէ հրապարակին վրայ մեծ գործ մը գործէ, հանրութեան օգտին և զուարձութեան համար, այն ժամանակը առատաձեռնութենէն մեծազործութեան բարձր ասպարէզին մէջ կը մտնէ։



## ԴԱՍ ԽԱ.

## ՄԵԾԱԳՈՒՇԵՒԹԵԱՆ ՀԻմքեանեբի

Ամեն մծամեծ ծախսերը կարող չեն մծագործութիւն ծնաւնիլ . քիչերն են որ նորա վայելչութեան համեմատ զործելով այն փառաւոր յաղթանակը կ'առնուն :

Տեսակ մը ընչուներ կան, որք զեփիւոի շնչմանէն կը յշանան, բայց նոցա հաւկիթները հողմով կը լեցուին :

Կան նաև մծամեծ փոռքերով ուռեցեալ կարգ մը մարդիկներ, որք փառամոլութեամբ բազմած ախս վասնողութիւններ կ'ընեն, բայց խոհականութենէ և վայելչութենէ զուրկ լինելով՝ գործ շարադրծ կը դատուին քան թէ մծագործ :

Կարելի էր մծամործութիւն համարել Եփեսոսի մէջ Արտեմայ մեհեանը՝ (որ Ասիոյ հարիւր թագաւորներէն շնչուեցաւ հարիւր սիւներու վրայ), եթէ կրակի կայծ մը անոր յիշատակը չը ջնջէր :

Մեծագործութիւն էր Բարելոնի պարիսպը, որուն բարձրութիւնը՝ թռչնաց թռչելու սահմանը եղաւ, և լայնութեան ասպարէցին վրայ կառքերը կ'արշաւէին. այս մծագործութիւնը չէ թէ հարիւր թաղաւորներէ, այլ միայն Շամփրամթագուհիէն ծնաւ, և այն քիչ ժամանակի մէջ, յայտնելով թէ մծագործութիւնը չէ թէ ժամանակի երկարութենէն այլ սրաի մեծութենէն կը ծնանի, և այնչափ թագաւորներու սիրտը, մէկ կնօջ մը մծագործութեան մէջ ամփոփուեցաւ :

Եփիպտոսի բուրգերն, բուրգէն աւելի պատւական քարերէ շինուած լիւներ էին, այն նպատակաւ, որ իրենց խագաւորաց մարմինը հոն թաղէին, սակայն իրենք իրենց թաղաւորներէն առաջ իրենց գանձերը և հարստութիւնները հոն լաղեցին :

Այն , մեծագործը պէտք է որ լինի մեծ , մեծածախս , զարմանալի և հասարակաց աշքին յարգի , բայց և այնպէս անկատար կը համարուին , եթէ օգտակար և մշանջենաւոր չլինին :

Օգտակար , որպէս զի այնչափ ոսկին վայրապար ամուլ քարերու վրայ չցանուի . մշանջենաւոր , որպէս զի ժամանակէ մը վերջ մեծ դորձն իւր գործողի հետ չմեռնի :

Մեծ քանակութիւն չունեցող աղամանդը , թէե անդին լինի , շարժուն լինելուն համար՝ մեծագործութիւն չհամարուիր , զի շարժուն գանձը կրնայ դողցուիլ կամ կորսուիլ , այսպէս աշանողուտ է , վասն զի արկդի մէջ պահուած է , և ճշմարիտ արժէք մը չունի , զի իւր զինը ամբոխի կարծիքէն կախումն ունի :

Կարուսի մարդարիխն՝ կարուսի քով անդին էր , բայց երբ զերմանացի սայլավարին ձեռքն անցաւ այն՝ իւր արժէք կորսնցոց . վասն զի զայն մինակ մէկ սափոր զինւոյ վաճառեց . և կարելի է որ սայլավարը ամեն ակնավաճառներէն աւելի ճիշտ գինը դտաւ . վասն զի ինքը քարէն աւելի զինիի պէտք ունէր :

Ինչպէս որ Եղովրուի ազաղաղը աղբիւսի մէջ աղամանդ գտած ժամանակն ըստաւ . Երանի թէ զարիի մը հատ գտնէի , քան թէ այս քարը :

Այն անձը նր իւր գանձը կը վասնէ այն դործին , որ այնչափ արժէք չունի , նու նախատինք կը դնէ իւր զանձին :

Խսկական մեծագործութիւն կը համարուէր Կղոդիայ կայսեր՝ ի շում բերած ջուրի Ճանապարհը և Սուէշի կիրճի բացումն , որք թէ զործը և թէ զործողները մեծ են , և թէ մեծամեծ և օգտակար բռուիքներ կը բերեն և միշտ մեայուն են :

Կ'ըսէ Ըրիստոտէլ թէ ճշմարիտ մեծակործութիւն կը համարուի կենդանւոյն Աստուծոյ տաճար կանգնելը , ուր սքանչելիք կը փայլին և զործը Հրաւիրակ կը լինի հասարակաց աստուած պաշտութեան , և աստուած պաշտութիւնը Հրաւիրակ կը լինի մահկանացուներին խօսակից լինիլ բնդ անմահ բնութեան :

Հոռմայեցիք տաճարին կ'սկսէին պատերազմական շահատակութիւնը , և պատերազմի աւարներու կապուտ կողպապուտ տաճարին կը

բերէին . տաճարէն կ'առնեին մեծամեծ խորհուրդները և բարի վախճանի շնորհակալութիւնները տաճարին կը դարձրէին :

Ուրեմ մեծագործութեան գերակատար առարկան է , չշմարտին Աստուծոյ տաճար կանգնելլ , զի մեծ է գեղոյ և արուեստի ընդունարանը , վախճան բարի՝ գործ հասարակած երախտաւորութեան արժանի է :

-ՅՅ-

### ԴԱԱ ԽԲ

## ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ԿԸ ԳՈՐԾԵ ՄԵՇԱԳՈՒՅՆ

Մեծագործութիւնը երկու տեսակ է , այսինքն նիւթապէս և դեռչափապէս :

Նիւթապէս անոնք են որ աշքով կը տեսնուին , ինչպէս տաճար , թատրոն , բուրգեր , արձաններ , սքանչելի շենքեր . յաղթական կամարներ , մեծամեծ շիրիմներ ևայլն :

Իսկ տեսականն՝ գործողի դիտաւորութեան մէջ թագուն պահուած է , որ կրնայ կեանք առաջինի և կամ մոլի գործերու :

Կարդ մը մարդիկ երբ մեծագործներու գործերը կը տեսնեն , անոնց նմաններու համար՝ մեծագործութիւն մը առաջ կը բերեն , շկշուելով իրենց անյարմարութիւնը . սրբա մեծագործներ չեն , այլ մեծագործութեան ընդօրինակող կապիկներ են :

Փառամոլները՝ չէ թէ մեծագործութիւն կ'ընեն , անոր համար իրենց անունները կը դրոշմն այն մեծ գործերուն վրայ , այլ թէ իրենց անունները մեծագործութեան վրայ դրոշմլու համար մեծագործութիւն կ'ընեն :

Այսպիսիներու վախճանը չէ թէ գործ մեծունելն է , այլ իրենց անձը մեծցընել :

Ինչպէս որ նկարիչները ամն չնշեն նկարներու վրայ իրենց առուները կ'ստորագրեն, այսպէս ալ փառամոլները, ամն չնշին գործերու վրայ, (այսինքն զերեզմանի, կամուրջի, սեղանի) կը դրոշմն իրենց անոնները, նման այն բարիղին որ ամն որմրու հետ կուռելով նոցա երեղը կը ծածկէ :

Մեծագործն չղիջանիր պատիւ մուրալու, իրեն համար գործոյն վայելու թիւնը շատ է :

Ղուկուղղոս՝ մեծագործութեան մեծ պարգևներով Սպարդացւոց գեսպանները մեծարեց, որնք զարմացած սկսեցին իրենց երկրի սեփհական եղած համուռուս ոճով շնորհակալ լինել :

Ի վոխարէն պատասխանեց Ղուկուղղոսն թէ, Մասնաւորապէս ՚ի շնորհս ձեր ըրի, իսկ ընդհանուր կերպով ՚ի շնորհս Ղուկուղղոսին ըրի :

Ղուկուղղոսը հուոմէական մեծագործութեան վայելու ոճով պատասխանեց. քանզի եթէ այն մեծագործութեամբ ուզէր օտարները չուոմէան հասարակապետութեան երախտապարտ կացուցանել, իւր ըրածը կը լինէր քաղաքական խոհեմութիւն. եթէ իւր սէրը յայտնէր, կը լինէր բարեկամութիւն. եթէ մինակ իւր ճոխութիւնը ցոյց տալու մտօր ընծայէր՝ կը լինէր ունայնութիւն :

Մեծագործի զիտաւորութիւնն այն էր որ զործը իւր անձին արժանաւոր լինէր, թէև գործոյն նիւթական վախճանը հիւրասիրութիւն լինէր, բայց նորա աեսական վախճանը համեստութիւնն էր :

Մէկը կարող է հիւրասիրութիւն ընել առանց մեծագործութեան և մեծագործութիւն ընել առանց հիւրասիրութեան :

Մեծագործն իւր ըրած զործերու վրայ ո՛չ կը պարծի և ո՛չ ալ կը հպարտանայ, վասն զի պատոյ համար չգործեր, այլ համեստութեան համար կը գործէ :

Նորա սիրութ մշշ իւր գործէն մեծ է, հետամուտ շլինիր որ ժողովուրդն իւր գործերը գովէ, գոհ կը լինի որ ինքը կը ճանչէ իւր գործոյն յարգը:

Զբաղձար իւր անունը գրոշմել այն գործերու վրայ, վասն զի կը խորհի թէ զործը փոքր է, իւր անունը հոն արձանագրելը իւրեն պատիւ չըերեր, և զործը իւր անուան արժանի չէ :

Իոկ եթէ գործը մմծաղործ է, կը մասած փոխանակ իմ անռնդ իւր տեսողները վնառելու, զործ աեսողները թող հետաժնուալ լին ախն իմ անունս վնտոելու:

Իւր ժամանակի թագաւորաց մէջ մօճն Սոլյամն, մօճին Շառաւուց մմծաղործ տաճարը կանգնեց, և իւր անունը նորա վրայ դրոշմու:

Բայց չէ թէ իւր անունը պայծառացընելու համար ըրաւ, այէ թէ իւր իմաստուն անուամբն, գործը աւելի պանծալի ցուցունելու համար:

Դմաստուն թագաւորի անունը, գործը կը վսեմացընէր, և այն սքանչելի գործը թագաւորի անունը կը փառաւարէր:

— 48 —

### Դ.Ա.Ս ԽԳ.

#### ՄԵԾՎԳԱՐԺՆ ԻՆՉՊԽԱ ԿԸ ԳԱՐԺԷ

Մեծաղործն գործոյն ամեն պարագ աները ուշադրութեան առած պատշաճ և վայելուշ եղանակու մը կրզործէ, վախճանին պատշաճութեան, անձին զօրութեան, գործոյն յարմարութեան, հասարաց կաց օգտակարութեան, ուշադրութիւն ընելով:

Զափազանցն գործոյն պատշաճ վայելչութեան շնայիր, այլ գործոյն մեծութեան կը նայի:

Փոքր և վայելուն ալ գործոյն վայելչութեան շնայիր, ծախուց նուազութեան կը նայի:

Մեծաղործն իւր ըղձալի գործն չպիտի կարողանայ 'ի գլուխ հանել, եթէ նախ շմթածէ և նորա ամեն պարագաները նկառողութեան շառնու:

Եւ այս մտածունքն է որ գործը վախճանին, և վախճանը զործոյն կը համակերպէ :

Աղէքսանդր անուն մէ կի մը մեծագործութիւնը ծաղրելի եղաւ, զի իւր ցլազլրիս երիվարի մեռած ժամանակը, նորա անուանը քառագ մը նուիրեց, և այն քաղաքի մէջ նոյն կենդանւոյն արքայավայել դամբարան մը շինեց, և կենդանւոյն անունը գրումն տուաւ այն կենդանւոյն պատկեր շինուած արձանին վրայ, հաւատալով թէ իւր թագաւոր հօր հոդին այն երիվարին փոխուած է,

Այս գործը մեծագործութիւն չէ, այլ յիմար հոգեփոխութեան յայտարարութիւնն էր :

Ապերախտ որդին կենդանւոյն պատուով իւր հայրն անպատուց, զի այնչափ պատիւ ըրած չէր հօրը որ ըրաւ իւր անբան և անատուն երիվարին :

Հոս ամեն մարդիկ տարակուասութեան մէջ մնացին, սայոյն կիւնալը համար թէ երիվարն էր անմիտ, թէ զայն աշոտնակող հեծեալն :

Ասոր անմասութեան դասէն էր Աթենացի Կիմանը, որ Ողիմպիսական խաղիքու մէջ յաղթանակ առնող երկու ջորիներուն, իւր շիրմին մօտ մէկ մէկ շիրմիներ կանգնեցոյց, որուն համար հասարակութիւնը վերջէն իրաւամբ ըստ «Այս տեղը թաղուած են, երեք անբան, այսինքն երիս նըրէ և էրիս ուրբը» :

Անարժան է, անաստոնները մարդկանց և մարդիկ Աստուծոյ հետ համապատուելը, ինչպէս որ ըրաւ երբեմն Հռոմի մարդահաճ ծերտակոյան, զի Տիպերոսի յաղթութեան ժամանակը փոխանակ յաղթական կամարներ շինելու մեծակառուց տաճար մը շինելով՝ Տիպերիսոին նուիրեց և կ'ուզէր որ այն տաճարի մէջ՝ Տիպերոսի անունը երկրպագութիւն ընդունի իբրև շանտուած :

Այս գործը այնչափ նախատելի էր, որ Տիպերոսը իւր անջուսպ ժամանութեամբ հանդերձ չմոլեգնեցաւ զայն ընդունելուն, և քաղաքական ակնածութեամբ մը ըստ «Չեք սկոտն գորս որդիշ տաճար շեմ ընդունիր իմ անուանս նուիրել»: Եւ մեր յիշատակէն ՚ի ըստ ուրիշ պատկեր չեմ հանաշեր»:

Խորհրդով մերժեց Տիպերիոսը այս գործը, վասն զի այն ծերակոյան և մողովուրդը, որք իրեն աստուածական պատիւ կու առյին ժամանակէ մը վերջ սկսեցին զինք նախառել և հալածել ըսելով։ «Ցիպերոսն՝ ՚ի Տիպերիս»։

Միւնոյն մեծագործութիւնը ամեն տեղ պենայն նշանակութիւնը չունի. զի մեծագործն ժողովրեան հաճյաքին ալ դիտելու է։

Եղիպատոսի համար բուրզերը համայական էին, Յունատանի համար իմաստասիրաց համալսարանը, Սպարդացոց համար վեներով զարդարուած հաստատութիւնները, Կրէտէին համար ջրմաղները և թատրոնները. վասն զի Կրէտացիք փափկակեց էին, Յոյնք դիտուն։

Երբ Հռոմայ ժողովուրդը սովուն կը ջարդուէր, այն նեղ ժամանակի մէջ Օդոսատօնի տուած խրախնձանական մեծագործութիւնը անդում զեղծագործութեան պատկերն զցեցաւ ՚ի նախառնս իմաստուն ինքնակալին։

Մեծագործն զործոյն վախճանին նայելու է, որ իւր ետեւն պաշաւ չըերէ։

Ագրիանոս կայսրն կեսոնիսո տղայ մը իրեն որդեգիր ըրած ժամանակը մեծամեծ հանդէմներ կատարեց և շափազանց զանձեր վատնեց, հանգէմներէն անմիջապէս եաք որդեգիրը մեռաւ, և կայսրն սկսու լալ ու ըսել «Վայ ինձ, ո՛քան սովի կորսնցուցի ՚ի զուր, և շահեցայ ոչին»։

Կայսրը որդեգրի կորուսաէն աւելի մեծ ցաւ իմացաւ զանձի կորստեան համար։

Վարն զի կարելի էր ուրիշ շաա մը որդեգիրներ առնել, սակայն անկարելի էր այնքան յումպէտա վատնեալ դրամները կրկին մեռք բերել։

Մեծագործը կը նելու է, որ մի զացէ փառասիրութեամբ սպառած զանձը, վերջէն ձեռնարկէ անիրաւութեամբ հաւաքելու։

Այնպէս սկսելու է, որ ոչ զործը թերի մայ, որով զործողը նշաւակ լինի, և ոչ զործը աւարտելէն վերջ զըսպաղութեամբ սկսի հաւաքել նոյն տեղէն, ուրիէ որ արժան չէ առնել։

Արիստոտէլ կ'ըսէ, մեծագործութեան վախճանը պէտք է բնի

համեստ . բայց Եղիպատոսի թագաւոր Կղովսկէն . իւր դատեր համեստութիւնն առնէն շարասաքսելէն առաջ , չկարողացաւ իւր մեծազործութիւնը՝ ՚ի զլուխ հանել :

Մոյն այս թագաւորը Եղիպատոսի բռւրբերէն միոյն շինութեան ձեռնարկեց իբր մեծազործութիւն , և այնչափ հիանալի և սքանչելի եղաւ , որ նորա բարձրութիւնը միտքերէն անհասանելի մաց :

Բայց մեծազործի զանձը սպառելով՝ չկրցաւ դործն ՚ի զլուխ հանել :

Եւ դործը թերակատար շթողելու համար՝ իւր աղջկան սպառիւը վաճառի հանելով՝ դործը կատարելագործեց :

Կարողութիւն չչափելով մեծազործութեան ձեռնարկող յիմարն մեծազործէ մը աւելի համեստաթեան դէմ վարուող ուժրազործ մը հանդիսացաւ :

Մեծազործն ինքն կ'ոկսի և ինքն կ'աւարաէ իւր դործը . այն որ ինքը կ'սկսի և ծախոց անբաւականութեանն համար թերի կը թողու , նա նախատանաց է արժանի , վամն զի կ'ըսէ հասարակութիւնը «Այրա այս սկսաւ շինել , և ոչ կարաց աւարա բերել » : Եւ ուրիշը որ իւր նախորդէն մեացած մեծազործութիւնը կը կատարելագործէ , մեծ տաղակութիւն կ'զգայ :

Վասն զի չկրնար ախորժանօք նայիլ ուրիշի մտաց ծնունդի վրայ և իւր զանձը վասնել ուրիշի խորհուրդները կատարելու :

Եւ այնպիսին կը նմանի այն հաւան , որ թուխս կը նստի այն ձագուց վրայ , որոնք որ իւրը չեն :

Գեղեցիկ մեծազործ համարեցաւ Պուս Խմբիոսն , որ թէ խաղերը և թէ շինուածները իրք մեծազործ կը ներկայացընէր . և իւր գործոց վրայ զարմացող Յունաց ըսաւ «Միենոյն բանն է , քաջ պատրազմ կարգել զթշնամին ահաբեկ ընելու համար , և գեղեցիկ սեղան պատրատել քաղաքացւոց սէրը անոր ձգելու համար : »

Ուրեմն մեծազործ պէտք է որ նկատողութեան առնու տեղը , ժամանակը , տեղւոյն ժողովրդեան հաճոյըք , իւր կարողութիւնը , իւր անուան մեծութիւնը , գործոյն մեծութիւնը , նորա օգտակարութիւնը և համեստա վախճանը :

Այս մաժնական դիտողութենէն կը բազկանայ այն ընդհանուր մեծ խորհուրդն որ կը ծնանի զվայելու մեծագործութիւնն :



### ԴԱՍ ԽԴ

#### ԶԱՓԱՇԱՆՑ ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓՈՔՔ ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆԸ

**Զափաղանց վայելչութիւնը և փոքք վայելչութիւնը, որք մեծագործութեան երկու ծայրերն են, զմեծագործութիւնն կը խանգառ րեն . մին աշխատութեան ծախտց խնայելով, միւսն անպէտ և անօգուտ գործերը մեծագործութեան վրայ յաւելցընելով :**

Ասոնց երկուքն ևս համամատութեան և վայելչութեան սահմանէն գուրս կ'ենէն, որով մեծագործութեան վրայ քող կը ձգեն:

**Վայելչութեան մէջ շափաղանցն թէպէտ կամաւ կը գործէ, բայց անմուարար կը դործէ :**

Փոքրավայելուն խառն կը գործէ, այսինքն կամաւ և ակամայ : Մէկ կողմէն փառափրութիւնը զինք յառաջ կը մղէ, միւս կողմէն ագահութիւնը յետս կը կասեցնէ :

**Մին՝ սաստիկ շրտափութութեամբ գործը կը խանդարէ, միւսն համբ դանդաղանօք կը ֆնասէ :**

Մին՝ ընձառիծու կը նմանի, որ եթէ իւր որսը շուտով ձեռք չձգէ, ձեռնթափ կը լինի և այլ ևս այն որսի ետևէն չերթար :

Միւսն կը նմանի այն լեռան, որ ծնած ժամանակը մեծ դղրդիւններով և շառայիւններով ամենքը զարհուրեցոյց, բայց չնշն մուկ մը հաղին ծնաւ :

**Զափաղանցներու գործոց մէջ արիական սրտի մեծ արարքները**

կը աեսնալին, բայց միշտ անմոռ թեան հանդամանքները կը նշմարախն անոնց վրայ :

Փոքրավայելուշի գործոց մէջ այս, մեծաղործութեան ձիգերը կը տեսնուին, բայց զձութեան բծաւոր արատն ալ անոր երեսէն պահառ չէ :

Ներոնի շափաղանց վայելչութիւնն անխորհուրդ էր, որ Հռոմ քաղաքն այրեց, անոր համար, որպէս զի զայն իւր անունով (Ներոնեայ) շքեղ և փառաւոր շինէ :

Անողորմ եղաւ անոր յիմարութիւնը, զի երբ հասարակութիւնը գառն տրտմաւթեան մէջ աղողորմ կը տառապէր՝ ինքն Ներոն խնդալով Հռոմեասի զկեսան հազած ջութակ ՚ի ձեռին Հռոմայ Տրկիզեալ աւերակաց մէջ Յրովացոց Տրկիզութեան ողբը կ'երպէր :

Բայց Հոսը Հանգուրժելով՝ վրէ ժինդիր եղաւ. վասն զի երդ զի փոխարէն լաց տուաւ անոր վարձը :

Նաև ծալու արժանի էր Կաղիկողեայ փոքր վայելչութիւնը, որ մէկ յաղթութեան աւետիրը լսած մամանակը, ամրարտաւանած գրեց Հռոմայ ծերակուտին թէ «Պատրառուեց» մեծամեծ յաղթանակ փոքր ծախսով». այս համառօտ խոռի մէջ գեր ՚ի վերոյ մեծաղործութիւն մը և նուասա կծծիութիւն մը կը տեսնուի, որ խառնածին հրէ շի մը սահմանէն անդին չեն անցնիր :

Աւերը զրուածներէն բացայաց կը տեմնուի թէ մեծաղործութիւնը՝ հազուազիւտ է աշխարհին մէջ. վասն զի անոնք որ իբրև մեծագործ պարծիլ կ'ուղէին, անոնց շատերը, թերութիւններ ունեցան և եօթն Տրաշալիքները ինկ չկրցան թերութեանէն ազատ մնալ :

Մեծ էր Արտեմիոյ տաճարը, սակայն մեծագործ Համարուեցաւ. վասն զի այն մեծ շէնքը բահաստեղծեալ շաստուծոյ մը նուիրելը, յաջս իմաստոց աղայամատ թիւն դասուեցաւ. և ան անհամար որ փոքր լուցկիով մը զայն ջնջեց՝ իմաստան համարեցաւ. քան զայն եօթն մեծագործ Մագաւորները, որք ունայնութեան վրայ այն մեծ շէնք կանգնեցնեցն և սնթիւ գաւ-ձեր ՚ի կորուստ մատնեցին :

Եւ եթէ մեծագործութիւն ալ համարուէք որի՞ տալու էր այն մեծ անոնը, անո՞ր, որ հիմն ձգեց և չկատարեց թէ անո՞ր որ կատարեց, և հիմն ինք չձգեց :

Երկուքն ալ թերի են, մէկն՝ չսկսելով, միւսն՝ չլատարելով :

Այս զործը մէծ էր, ըստ նիւթին և ըստ արհեստին և ըստ բարձրութեան . բայց վախճանը հասարակաց բարին չէր . ուստի չափազանց վայելչութիւն համարուեցաւ :

Այսպէս ևս Եղիպատական-բրդունքը, անպիտան վախճանի համար այնքան թագաւորները աղքատութեան մատնեցին :

Ուրեմն շատ գգուշութեասք և հեռատեսութեամբ ամեն պարագաները՝ ինկատի առնելով մկսելու և մեծագործութեան, որպէս զի այս երկու չափազանց ծայրերէն զերծ մնայ և մեծապրածութիւնը իւր սահմանի մէջ պահուի :

### ԽԵՎ

## ՄԵԺԵՆՉԱՆԱՒԹԻՒՆՆ ԵՒ ԻՒՐ ԵՐԿՈՒ ԾԱՅՐԵՐԸ

Մեծանանութիւնն այնչափ յլսեմ է և նորա յատկութիւնները զեղեցիկ, որ շատերը զայն՝ արիութեան, այլք՝ մեծագործութեան, ամանը՝ արդարութեան, ուրիշները իմաստութեան հետ չփոխեցին:

Եւ իրաւացի էր . վասն զի արիի պէս ծանր դժուարութեանց դէմ կը առկայ, մեծագործի ուկս մեծամեծ և սրանցելի կը գործէ . արդարութեան պէս՝ ուղղութենէն չշեղիր, իմաստութեան պէս՝ իրքեւ անսխալ հրամանատար կ'իշխէ ամեն դիպուածներուն :

Բայց որպէս զի մեծանանութիւնը, իւր իսկական պատկերաւ մեզ ներկայանայ . Արիստոտէլ՝ առաքինութիւնները իրենց առարկա-

Ներէն զատելով կ'ըսէ . «Մեծանձնութիւնն է հոգւոյն այն առաքինութիւնը՝ որ մեծամեծ պատիւներու մէ ջտեղը հաստատուած է համեստ վախճանի մը համար :

Մեծանձնութիւնը զգուշանալու է իւր երկու վտանգաւոր ծայրերէն , այսինքն Քուրութուննէն և Քուցումնէն :

Փոքրոզութիւնը՝ թէ և մեծամեծ առաքինութիւններ ունենայ , բայց և այնպէս կարելի չէ որ մեծ պատուայ արժանանայ :

Փքացեալ՝ թէպէտե մեծամեծ առաքինութիւններ չունենայ , բայց և այնպէս մեծ պատուայ կը ցանկայ :

Մեծանձն՝ երբ այս երկու ծայրերէն ազատ մնայ , իւր իսկական պատկերաւ հրապարակ կու դայ :

Եյն է մեծանձն , որ մեծամեծ առաքինութիւնները իւր անձին վրայ ցոյց տալով՝ մեծամեծ պատիւներու արժանի կը լինի :

## ԴԱՍ ԽԶ

### Բ'Վ Է ՄԵԾԱՆՁՆ

Մեծանձնութիւնը ոչ տիրապէս արիութիւն է , ոչ մեծագործութիւն , ոչ արդարութիւն և ոչ իմաստութիւն , բայց և այնպէս մեծանձն մարդը՝ կը լինի արի , արդար , մեծադործ և իմաստուն :

Վասն զի կրից և կամաց ու մտաց բարեկարգող ամեն առաքինութիւնները իւր վրայ կեղրոնացուցած է :

Մեծանձնի սիրտը՝ համեստութեան սեղան է , նորա ախորժակը ամեն ցած և ստորին զեղծ ախորժակներէն տարբեր է և անոնցմէ ազատ :

Կորա խօսքերն , բանաւորութեան չափով կ'արտասանուին :

Անոր խոհեմութիւնը, Ճշմարտութեան ջահ և երկրայութեան մանղաղ է : Նորա վսեմ միտք, առաքինութեան սանդող և օդակար զործնական գիտութեանց դպրոց մ'է :

Նա լեզուաւ Ճառելէն աւելի մաօր լրիկ աւելի կ'իմաստասիրէ :

Նորա մէկ ակնարկը ընդարձակ Ճառերէն աւելի աղդու կը ներդրուծ է :

Վերջապէս մեծանձնութիւնը բոլոր առաքինութեանց ամփոփումն է . նորա վրայ կեղրանացեալ այս ամին առ ապինական յատկութիւնները, վսեմ, բարձր, և վեհ բարեհմանութիւնները հասարակաց յօժարութիւն և կամք դրաւեցին, առ ՚ի տալ մեծանձին մեծանձնութեան ՚ի փոխարէն մեծ պատիւ և յարգանք : Եւ նորա մեծամեծ և օգասակար բարերարութեանց երախտապարտ ճանաչել իրենք զիրենք : Եւ այն վսեմ հանձարաւորն, իրենց վրայ տե՛ր և իշխան կարգել, իրենց ընթացից կանոնաւոր ուղղութիւն մը տալու համար :

Հողւոյ առաքինութեամբ զարդարեալ մեծանձն ներքին կատարելութեան հետ, անձի մեծութիւնը ևս կ'ունենայ, ըստ ներհուն Ճարտարապետի բնութեան վայելչակերպ կազմակերպութեան :

Նա մեծամարմին, մեծազլուխ, մեծակն, ծանրաքայլ, բարձրաձայն է, և գոյնը անփափիս է :

Մեծանձն իւր վեհ շարժմունքներով, անծանօթ բազմութեան մէջէն շուտով կը ճանաչուի զինք զիտողներէն, ինչպէս որ թուուցեալ մեղուներու թագաւորը իւր գնդի մէջէն իւր մեծութեամբն և վեհանձնութեամբն կը ճանաչուի :

Մեծանձն առաքինեաց մէջէն շուտով կը ճանաչուի, վամ զի տեսողը կրնայ կուշակել թէ այս մեծ տաճարի մէջ անշուշտ վերին մեծ զօրութիւն մը կայ պահուած :

Հոմերոս կ'ըսէ մեծանձի համար թէ, անոր երեսին շառաւիղները ուրիշներու վրայ կը փայլէ, ինչպէս սիրտը այնպէս ալ մարմնը մեծ և վայելուչ կը լինի և բարեձե :

Արիստոտէլ կ'ըսէ «Փոքրողին կը լինի փոքրադէմ», մանրակնեայ, նուալպաձայն, կարձահասակ, և տեսնողը շուտով կրնայ վերահան-

սու լինիլ թէ այն փոքր տաղաւարի մէջ մծ հոգի մը կարելի չէ սր բնակի :

Փոքրողի Լիկատիս Կորնթացին թէ պէտ մծ զօրութիւն աւնէր, բայց սիրար ակար էր :

### Դ.Ս.Ս Խէ

#### ՄՆԺԱՆՉԵՑԻԹԵԼՆ ԱԲԷՐԿԱՆԵՐԻ

Աւագինութիւնն է համստութիւն, առարինութեան է ականյատութիւնն է պատուաւոր լինելն :

Ուրեմն պէտք է որ մննք մեծ անձն առ աքինւոյն նոյն պատիւն տամբ զի անկէ մծ բան մը չունիմք :

ՄԵնք գերազան արարչապետին պատիւ կու տամբ . և որովհետեւ առաքինութիւնները զմարդն աստուածանման կ'ընեն, ուստի նոյն պատիւն նաև առաքինեաց կու տամբ :

Պատուաւոր բարիք, մարմնաւոր և օգտակար բարիքներէն աւելի տուաելութիւն մը ունի, ուստի զայն իրեւ ամենէն աւելի թանկապին՝ Աստուծոյ կը նուիրեմք, հետեարար առաքինիներու կու դամբ :

Ուրեմն անոնք որ առաքինութեան Ճանապարհէն շանցան, կարելի չէ որ կարողանան սլատուոյ տաճարին մէջ մոտնել. վասն զի պատիւը մինակ առաքինիներուն կը տրոի, և ոչ ուրիշի :

Մողոսացոց Այդոնէս թագաւորը իւր չքնաղ աղջիկը և իւր թագաւորութեան յաջորդութիւնը կ'ուզէր տալ այն կտրիճ անձին որ կարող լինէր երեք զլուխ ունեցող Ներբեր շունը սպաննել, որ ըստ առասպելաց՝ նստած էր դժոխոց դրան վրայ, և ներս մանող՝

ներուն կը թոյլատէր, և դուրս ելնուները կ'արգիլէր կը խածաւաէր, թող չէր տար :

Թագաւորութեան յաջորդութիւնը և շքնազ աղջիկը մեծ բախտ էր, բայց Կերքեր շան սպանութեան ալ մեծ վլաննէ էր և դժուարաւթիւն :

Թագաւորութիւնը և շքնազ աղջիկը, այն մեծ պատիւն է, զորս անոնք միայն կրնան առնուլ որբ երեք զիխեայ զաղանը, այսինքն բաղմագլխեայ մոլութիւնները կը յաղթահարեն և յաղթական փառք առաքինութեանց տաճարը կը մնան . իրենց ձեռքավ կը ստանան առաքինական պատիւնները :

Այն որ իւր նախնիքներու առաքինութեամբն պատուել կ'ուզէ, կը նմանի այն անձանց ողք օտար փոխառուներու փոխը կը պահանջն էն, և իրենց մոլութեամբն, իրենց առաքինի նախնեաց առաւնը կ'արատաւորեն :

Այն մարդն որ ինչ արժանաւորութիւն չունի և ուրիշներուն արժանաւորութեամբ իշխանութեան հասնելով պատիւ կը պահանջն է՝ կը նմանի այն կրատախն, որ երբ Խսիդեայ պատկերը իւր վրայ բարձած կը տանէին և մոլեռանդ մողոլուրդն այն պատկերին երկրպագութիւն ըրած ժամանակը խնձալի զրաստ կը կարծէր թէ իրեն կը մատացանէին այն երկրպագութիւնը և ոչ թէ իւր վրայ բարձած պատկերին :

Մարդկային առաքինութեանց մէջ ամենէն աւելի մեծագոյն, գերագոյն, պանծագոյն և դիւցազնագոյնը, մեծանճն է . անոր համար մարդկիներուն ընծայուած պատիւներէն զերագոյնն ալ անոր կը նաւիրուի :

Սիսալ ըստ Սենեկան թէ՛ Մեծանձն փոքր պատուավ կը բաւականանայ :

Մոլութիւն կը համարուի, երբ մէկը իւր արժանաւորութիւնը առաքինութեան հետ կը շափէ :

Հերակլէսի մէհնիքն մէջ Ճանձերը մատք չէին կրնար առնել, այսպէս ալ մեծանձին սրաի մէջ չնշին պատառյ հետամտութիւն աեղի շանձնար :

Ապիւծները ծաղիկներով պսակուած թատերական խաղերու մէջ տարած ժամանակը , երբ կենդանին նոյն պսակի ստոերը կը տեսնէր՝ բարկոթեաբն զայն կը պատառէր , զի իրեն սրտի մեծութեան անարժան կը համարէր :

Խսկ անզէն և անզօր զառները , երբ նոյն պսակները և ուրիշ ծաղկեայ զարգերը իրենց վրայ կը տեսնէին , ուրախոթեամբ և խայտալով կը դիմէին դէպ ՚ի զոհարանը :

Միենայն պսակը զոր առիւծը կը մերժէր ոչխարը սիրով կ'ընդունէր , վասն զի ոչխարին համար շատէր , բայց առիւծին համար քիւ :

Այսպէս են մեծանձն և փոքրողին , փոքրոցին փոքր փաղաքանակներէն կը խայտայ , և մեծ ուրախոթեան կ'զգայ , իսկ մեծանձն զայն կ'արհամարհէ և կը մերժէ և չզիջնանիր զայն ընդունելու :

Անձանձնութեան ձշմարիտ առարկան պատաին է , սրովհետեւ առաքինութեան ձշմարիտ վարձը այն է :

Անձանձին մծ իշխանութիւն պէտք է , որպէս զի կարողանայ գործել :

Այն որ բաղդին կ'իշխէ կարող է բաղդի բարիքն առ բարին ՚ի գործ գնել , այն որ իւր անձնն կը հրամայէ կրնայ նաև ուրիշներուն հրամայել :

Առանց իշխանութեան շատ անդամանդործ կը մնայ մեծ խոչեմութիւնը :

Առանց հարստութեան անգործ կը մնայ մեծագործութիւնը , վասն զի այն մծ սիրտը որ կրնար մծ գործ առաջ բերել , հարստութիւն չունենալով չկարողացաւ առնել այն գործը որ իւր սրտի մէջ կերպաւորուած էր :

Անձանձին աշքին ամենէն աւելի մծ բանը առաքինութիւնն է , որովհետեւ առաքինութիւնը աշխարհի ինչերէն և բարիկներէն նախապատիւ է , վասն զի առաքինութիւնը մնայուն է և անմահ , իսկ միւսները անցաւոր են և մեր կենաց հեա կը վերջանան :

Անձանձն զիսէ թէ արտաքին պատճն , օտարի կարծեաց արագին նշանն է , զիտէ լիէ բաղդի բարիքները բաղդի անիւէն աւելի շուտով կը հոլովուին և հաստատուն չեն . նաև զիտէ որ իշխանա-

կան գահերու գագաթը որչափ որ բարձր է , այնչափ ալ նորա կործանում խոր է :

Նա դիմէ թէ մարմոյ բարիքները մարմինէն աւելի առաւելութիւն ուշ չունին , մարմինը ուրիշ բան չէ , եթէ ոչ մարդուս հոգւոյն ծածկոյթը , և եթէ զայն պատուվ չծածկես և շղարմանես , ինըն յինքինէ կը փափ :

Ասոր համար մեծանձն թէ և արժանաւոր այս բարեաց , սակայն կ'արհամարհէ զանոնք , վասն զի դիմէ որ անոնք թէպէտ վարձք են , բայց իւր արժանաւորութեան համեմատ վարձ չեն :

Իրաւունք կը համարի զանոնք ունենալ , զի արժանի է անոնց և կը մրմէ զայն , զի իրեն արժանիքէն փոքր է :

Չունենալը անվայել կը համարի , բայց ունենալն ալ մեծ բան մը չհամարիր :

Ըռափինութիւնը մինակ իրեն վայելական վարձ կը համարի . վասն զի անկէ աւելի մեծ արժանիք ունեցող բան մը չկայ իրեն համար :

## ԴԱՍ ԽԸ

### ՄԵԺԱՆՁԻՆ ՎԱԽԱՇԵՆԻ

Մեծանձն իբրե փառամոլ , չբաղձար մեծ պատոյ և ոչ ալ երրե փոքրողի զայն կը մրմէ : Փառամոլ չէ , անոր համար վայելուչէն աւելի պատույ չփափազիր , և փոքրողի չէ , վասն զի թէ մեծ սիրտ ունի , և թէ իւր վայելուչ պատիւն անսխալ կը ճանաչէ :

Ասոր համար մինակ պատշաճ համստութեամբն է , որ երբեմ

կընդունի զպատիւը և երբեմ կը մերժէ, առանց ուրիշներու յորս գորի :

Համեստն՝ միայն համեստ լինելու համար է որ կը սիրուի, և հասարակութիւնը անոնք օգտակարութիւնը բերկրանք և փառաւորութիւնը տեսնելով և վայելելով զայն կը սիրէ : Համեստութիւն սիրելու անձը սիրել է :

Մեծանձն չէ թէ անոր համար կը փափաքի մեծ ոլատուոյ, որս պէս զի ուրիշներէն պատուուի, ապա իւր առաքինութիւնն այնպէս կը պահանջէ, և եթէ չփափաքէր դսրովելի կը համարտէր : Պատիւ ձեռք բերելու համար ուրիշներու հետ չկոռիր, պատիւ ունեցող մարդկանց վրայէն, նոցա պատիւն մերկացրնել չուզեր, ինքը նոցա պատուով պատուելու . համար, և իւր բուռն ըղման սահմանին համելու չափ ալ չփափաքիր :

Մեծութիւն մերժած ժամանակը, չէ թէ փրբողիի սիէս առ երկինի կը մերժէ, այլ թէ վայելութիւնը մերժել կը պահանջէ, անոր համար կը մերժէ :

Եւ մեծութիւն ընդունած ժամանակ՝ փրայելոյն պէս ետևէն չիյշնար զմնոնք մինտունու, ապա անոնք հետամուտ կը լինին զայն փնտոելու, կամելու և գտնելէն վերջ զինք փնտուուներէն պատիւ ստանալէն աւելի զանոնք պատուելու կը յօժարի ազնուական վիչ սիրով . ըստ կենծեաց՝ դատաւորաց ներդութիւնը երբ քայլն Առքիլլէսի վահանը արժանաւոր և զեհանձնն Այսաէն զլանալով անարժան և նենդամիտ Ռդիսեսին տալ հրամայեցին . անզդայ վահան որ դատաւորներէն աւելի զդաց իւր անպատճութիւնը . Ռդիսեսի ձեռքէն սահելով՝ ծովն ինկաւ, և բազմածուփ ալեսց հետ մրցելով զնաց իւր արժանաւոր աւելը՝ այսինքն Այտու՝ դտաւ :

Մինչ անարժանը՝ զվահանն կը փնտուէր, վահան ինքն՝ անարժանէն հեռանալով՝ իրին արժանաւոր աւելը փնտոելու ետևէն զնաց մինչեւ գտաւ . բայց ախաւու որ մեռած դուաւ :

### ԳԱԱ ԽԹ

#### ՄԵՇԱՆՉՆ ԻՆՉ ՕՐԻՆԱԿԱՒ ԿԸ ԳՈՐԾԵ

Բարոյական առաքինութեանց մէջ ամենէն մեծն է մեծանձն, բայց զինք չճանաչողներուն խիստ-ատելի է . անոր համար որ բարձր լեռան զլուխ նոսած կը դիտէ և ստորին կողմի տեսած մարդիկը իրեւ զմրջիւն կը տեսնէ, նշանակութիւն շտար առանձնաւոր մարդկանց . թէկ հարուստ, մեծատուն, ազնուական և հզօր լինին :

Իւր անձը աստիճանաւ այնշափ վեր կը գասէ մարդիկներէն առաքինական գործոց մասին, որշափ որ իւր գանուած տեղւոյն դիրք, տարբերութիւն կը դնէ իրեն և ստորին կողմն գանուող մարդկանց մէջ տեղը :

Նա ինքն իւր մէջ զբաղած է, իւխա գոհ է իւր զերազանց վիճակէն, բնաւ փոյթ չէ իրեն իմանալ թէ ուրիշները ինչ կ'ընեն և ոչ ալ կը փափարի որ ուրիշները իմանան թէ ինըը ինչ կը գործէ, շատ է իրեն որ ինքը զիտէ թէ ինչ կը գործէ :

Նորա աշքին մեծամեծ առաքինութիւններէն աւելի սրիշ որ և իցէ իր մը մեծ շհամարուիր, և այն առաքինութիւնները իւր անձին վրայ անսխալ կը ճանաչէ, ասոր համար շզրմանար իւր առաքինութեանց վրայ . որոց որ այլք ապշութեամբ կը զարմանան :

Նա՝ ոչ որ չգովիր և ոչ կը պարսաւէ . վաճա զի եթէ պարսաւէ՝ օտարաց գործերուն զննիչ պիտի համարուի, եթէ զովէ՝ զանոնք բան մը համարած կը լինի, մարդահամութեան շղիջանիր, աւելի կ'ընտրէ չշմարտութեամբ յանդիմանել, քան թէ ստութեամբ հաճոյանալ :

Իրեն փոյթ չէ որ ինքը մարդիկներէն գովութիւն ընդունի, և լամ պարսաւ, վասն զի նշանակութիւն շտար այն գովետաներուն,

որոց տէրե՞րը ինք կ'արհամարհէ . և անոնք որ չեն կրնար զինք պատուել , վիթէ կրնա՞ն զայն արհամարհէլ : Արհամարհու լինելն՝ մեծանձին յատուկ է :

Ասոր համար անուղիղ դատողները փոքրողիին՝ սլարկեշտ և մեծանձին՝ զոռող անուն կու տան . և թէե փոքրողին աւելի կը սիրեն բայց մեծանձէն ալ կ'ակնառին :

Ըսինք վերը թէ մեծանձն՝ անձնիւր անհատները առանձին առանձին կ'արհամարհէ , բայց բազմութիւնը չարհամարհեր , խորհելով՝ թէ իւրաքանչիւր անհատի առաքինութիւնները իրեն ունեցած առաքինութիւններէն փոքր լինելով , այո՛ , արհամարհէ լի է , բայց նոցա հաւաքական առաքինութիւնները իրենին հաւասար և թերեւ աւելի և գերազանց դանելով՝ թէ կ'երկնչի և թէ կը պատկառի անոնցմէ :

Ենձրեներու կաթիլները առանձին առ անձին նշանակութիւն չունին , բայց անոնց միահաղոյն հաւաքական հոսումն , հեղեղները կը կազմէ , պատերը և շինութիւնները կը տապալէ , լեռները կը քանդէ , քաղաքները կ'ողողէ , և ամեն բան իւր հոսանքին կը զոհէ :

Ասոր համար ըստ եօթն իմաստասէրներէն մէկը թէ «Զգոյշը լեր՝ ի բաղմաց :»

Փոքրոգին մասնաւորները ևս մեծ կը համարի , իսկ փբացեալն , մասնաւորները և բազմութիւնն՝ ի միասին առհասարակ կ'արհամարհէ :

Սակայն մեծանձն՝ մասնաւորները կ'արհամարհէ , վասն զի իր ունեցած առաքինութիւնը չունին . և բազմութիւնը կը յարգէ , վասն զի իրեն հաւասար և իրմէն աւելի առաքինութիւն ունին :

Մեծանձն՝ զժողովուրդը կը սիրէ , անոր ատենակալները և կանոնադրեանքը կը պատուէ իրենց օրինաւորութեանց համար :

Ժողովրդեան ուժով զօրացեալ իշխանները , և իմաստութեամբ պերճացեալ զատաւորները առաւելապէս կը յարգէ և կը պատուէ :

Մեծանձն՝ եթէ դանէ իրեն պէս մեծանձն , իրեն զուգահաւասար անձինք , շատ կը սիրէ , զի ինչպէս որ նմանութիւնը կը ծնա-

նի զսէրը , այսպէս ալ զուգահաւասարութիւնն կը ծնանի վնախանաւաւորութիւնը . այն նախանձաւորութիւնը երբեմն վասներու հետ լորդուած նախանձ կը բերէ , և նախանձն ալ մահու չափ առեւթուն :

Միհրդաա՛ իւր շքեղ առատաձեռնութեամբ , մեծագործութեամբ և մեծանձնութեամբ արեւելեան ազցաց մէջ մեծ հանդիսացաւ , այսպէս ալ Միհրդատին հաւասար նոյն ձիրքերով պերճացեալ էր նաթան . այս երկու համազօր և համաձիր իշխանները Ասիս փրկարներն էին , և ամենուն սիրելի և պատսւելի :

Բայց նաթան խորհեյաւ թէ՝ «Քանի որ ինծի համահաւասար մէկը կայ . իմ պատիւս փոքր կը համարուի , » և խմգժաբար ուզեց որ իւր նմանն բառնայ աշխարհէս ; որպէս զի ինքը միայն մայ :

Տեսէք թէ նախանձը մեծանձնութեան վեհ բարձրութենէն երաբեմն նուաստ փոքրիկութեան վերջի աստիճանին կ'իջեցունէ զնարդն :

Միհրդաաը երբ նաթանայ շար խորհուրդն իմացաւ , իւր թըշնամին զոհացընելու համար ինքնակամ յօժարութեամբ յանձն առաւ իւր զլուիլը տալ :

Միհրդատի այս մեծանձնութիւնը մարդկային ամեն մեծանձնութենէն զեր ՚ի վերոյ դատուեցաւ :

Այնպէս որ նոյն իսկ նաթանը ապշեցաւ և զարմացաւ , այնշափ որ նաթան Միհրդաա՛ ոտքին խոնարհելով՝ միշտ նորա հլաւ հաւասար իւր հաստամանալու :

Փքացեալն՝ ոխերիմ թշնամի է մեծանձնին , սուա մեծանձն լինելու համար՝ պաղապահ իւր պատկեր ՚ի հայելով տեսած ժամանակը բարկանալով՝ սկսու թևով կառւցով կռուիլ իւր թարմատար կ'եղծ պատկերի հետ :

Նւ որովհետեւ փքութիւնը մեծանձնաթեան սուտ պատկերն է , մեծանձն կը խորշի անկէ , և միշտ զայն կը հալածէ :

Կատովի շշմարիա մեծանձն էր . վասն զի իւր հայրենեաց մէջ նորա առաքինութիւններէն և մեծ սրտեն , ոչ մեծ առաքինութիւն չար և ոչ մեծ սիրա :

Ինքնակալութեան արժանի կատովի՝ զէմ կեցաւ նվասարուի ինքու

նակալը ւթեան հասնելուն : բայց չէ թէ ինքն կատովն ինքնակալ լինելու նպատակաւ , այլ թէ անոր համար օր կեսարուն անարծան էր ինքնակալութեան . և կ'ուզէր կատովն որ հայրենեաց բաղդը անարծան փայտեալ ինքնակալի մը ձեռք շմանուի :

Կատովն հասարակաց ազատութիւնը վտանգի հասած ժամանակը բոլոր ուժով զայն պաշտպանեց , բայց ազատութիւնը ինքն իւր ձեռքովն ընտրեց իւր գերութիւնը և ազատակերն կատովն գերութեան ջհասած աղատ մոռաւ , և ազատութեան գերուիլը շտեսաւ :

Մեծանձի առաջի պայմանն է ազատ լինել . կարելի է որ բոց և սուր իրարու հեա ըջորդուին , բայց անկարելի է մեծանձնութիւնը և ծառայութիւնը իրարու հետ առնչութիւն ունենան :

Այն որ ծառայական կապերով կը կապուի , նա մեծանձն չէ :

Եյն որ ուրիշներուն հրամանի ներքե է , նա մեծ պատույ արածանի չէ , մեծանձն բատ որում աղատ կամ իշխան է : և կամաց անի է իշխան լինելու :

Քնութիւնը զմարդն աղատ ըրաւ , բաղդի բերում զայն ժառայ բրաւ , իսկ բռնութիւն զայն գերի ըրաւ , բայց մեծանձն , իւր բանաւոր աղատութիւնն չլորսնցուց , որովհետեւ բռնութեամբ բան մը չկործեց , և ոչ ալ բաղդէն կը յաղթուի :

Ինչ է աղատութիւնը , բայց եթէ մէ կը կարող լինի իւր կամաց աղատութեամբն զործել :

Եւ ով կրնայ իւր կամաց աղատութեամբ զործել , եթէ ոչ այն որ իւր կամբը ուղիղ բանի հետ կը միացընէ :

Որ և է օրէնքներ կարող չեն մեծանձնի աղատութիւնը բառնակ , վասն զի այն օրէնքները ուղիղ բանին վրայ հիմուած են . և մեծանձն ալ ուղիղ բանի կամցածը կը սիրէ :

Նա օրինաց բռնազատութեամբ շգործեր , ապա իւր կամաց ուղելովը կը գործէ և իւր կամբը իրեն մէջ թէ օրէնք է և թէ օրէնտիր , այսպէս է նաև քաղաքային և մարդկային օրինաց մասին եթէ օրէնքն արդար է և ըստ արժանաւոյն ուղիղ բանին համաձայն . մեծանձնի կամբ չբռնադատուիր , վասն զի արդէն ուղիղ բանի կամցածն է մեծանձնի սիրածը :

Իսկ եթէ օրէնքն անիրտ է, և անարժան առաքինութեանց համար, առաքիններէն և ոչ ժկը կ'ընդունի զայն, մանաւանդ մեծանն որ ամենէն առաքինադոյնն է, իսպառ կը մործէ զայն։

Եւ եթէ դէմ ելլէ մեծանձին աբսոր, օդառնաշլիք, բանտարկութիւն, համոզում, մահաբեր տանջանք և մահ իսկ չեն կրնարնորա կամք յեղաշրջել անարդար բան դործել տալու։

Կարելի է և շատ իսկ կը պատահի որ բազդ և մեծամեծ և բարերար մեծանձինք բոխայալթ թշնամիներու մեռք կը ձգէ, ինչպէս որ ձգեց Հռեցուղոս մեծ յաղթական Վաղերիանոս ինքնական։

Սակայն մեծանձն այս թշուառութեան մէջն անգամ բաղդին կը յաղթանակէ և բարձր կ'երեի։

Վասն զի նորա յաղթուած շղթայակապ մարմնոյ մէջն նորա մեծ ժիրտը անյաղթելի և աղատ կը մնայ։

Իմիլիոսի մեռք մատնու ող Պէտսէ ոսն իւր մեծութիւնը կորանցուց երբ տղայի սկս իւր յաղթողին ոտքն ինկած, ծունկը կրկնեց համբուրելով և լալով իրբե. ողորմութիւն ինդրեց իւր կեանքը։

Առ որ պատասխանեց յաղթողն թէ Կ'ամաշեմ՝ որ քեզ պէս չնշին մարդու մը յաղթած եմ։

Պէտսէսի սիրտը փոքրողի եղաւ յաղթուած ժամանակը, անոր համար իիստա արժանի էր այն շղթային որ գործիք եղաւ փաքրողւյն նուաստ մահուան։

Ծեծանձն չուզեր հրամայել, անոր համար ալ չսիրեր ծառայել։

Սենեկան կ'ըսէ «Ծեծ իշխանութիւնը մեծ ծառայութիւն է, տաղտկալի է իուժանին հրամայել ինչպէս որ տաղտկալի է նաև անոնց ծառայել»։

Բժշկութիւնը երբ ընդհանուր սկզբունքներուն կը նայի՝ իմաստութիւն է, իսկ երբ մասնաւոր գործողութեանց կը մտնէ արհետի կը փոխուի։

Այսպէս ալ երբ քաղաքականութիւնը հանրական ծառայութեանց մէջ կեցած է, զիտութեանց թագուհին է, իսկ երբ քաղաքական կառավարութեան մասնաւոր գործերու կը բաժնուի բազմազբաղ ծառայութիւն մը կը դառնայ։

Վասն զի մեծամեծ բեռները բառնալու դժուարութեանց հետ, հասարակաց մեծամեծ տրտոնջները ևս կը լսէ.

Ինքն անհանգիստ կը լինի, որպէս զի հասարակութիւնն հանգիստ մայ, ականջը կը ձանձրանայ անախործ և զզուելի խօսքերը լսելէ, աչք չուզեր տեսնել այն խաժամումը որ ոչ խօսիլ զիաէ, և ոչ լուել, ոչ համոզել զիաէ և ոչ համոզուիլ, ոչ պարտք կը ձանաշէ և ոչ ուղիղ իրաւոնք, այս խառնաշշոթք վլիճակի մէ ջ երբեմ կեղծ շաեւող կը ձեւանայ, մերթ երկիւղներով սաստելու կը ձգնի, երբեմ թշնամին յաղթելու համար իւր կամաց հակառակ բւնութիւն կը ձեռնարկէ, երբեմ իրենները զսպելու համար շարագործները կը պատժապարտէ, երբ զիտոթիւնը խստութենէն աւելի վնասակար կը տեսնէ, կ'սահպուի իւր իսկ սիրելիներու արիւնը թափել, այս տաճանելի վարուսութիւնը երբեմ այնպէս կը ներգոծէ իշխանաց և ինքնակալաց, որք կ'ստիպուին անիծանել այն օրը, յուրում իրենք այն իշխանական պաշտօնն ստանձնեցին :

Մինչ զայն՝ ի ձեռու բերելու համար հաղարաւոր միջոցներ ՚ի գործ դրած էին և սրտի յօժարութեամբ իրեկ փառք ընդունած էին :

Այս ամնը լաւ կը ձանաշէ մեծանձն, ուստի չուզեր հրամայել, և ոչ ալ հրամայուիլ և հնազանդիլ :

Միայն կը հրամայէ իւր անձին, որ սիրով կը հնազանդի, և կը հնազանդի անոր, որ զիսէ արժանապէս հրամայիլ, ինքը իւր մէ ջ կը հրամայէ և կը հրամայուի առանց բռնադատութեան, զի իւր կամաւն է թէ հրամայելը և թէ հրամայուիլը, որոց երկու քի մէջն ալ ինքն ազատ է :

Մեծանձին ամնէն երեելի բաղձանքը՝ ազատութիւնն է :

Նա ճոխութիւն չսիրեր, և ոչ ալ անթիւ կալուածները բան մը կը համարի. ընդարձակ գաշտերը; նորա աչքին նշանակութիւն չունին :

Գեղեցկաշէն պալատները, փառաւոր զահերը, գեղեցիկ նկարները և քանդակները բնաւ նորա աչքի առաջ նշանակութիւն չունին, վասն զի զիաէ թէ անոնք բաղդի բարեկներ են և հասաւառուն չեն:

Առ առաւելն մինչև՝ ի գերեզման կ'երթան . նա դիտէ որ սոցա կորուստը մեծ ցաւ կը բերէ , ասոր համար նշանակութիւն չտար : Մեծանձն կրնայ այս ամեն բարիքները բանաւոր ճանապարհաւ մը առանալ , իրբե պիտանի Փջոց մը իւր առաքինութեան :

Զանոնք կ'ստանայ բայց անոնցմէ շատացուիր , վասն զի ուրիշ ներուն կարեւոր զատուածը , իրեն համար անկարեւոր է և ամելորդ :

Եւս բարեաց կորուստը որ ուրիշներուն մեծ հօգ է , մեծանձն ննաւ հոգ չէ :

Մեծանձն իւր մարմարին չծառայեր , չզիսէ որ նա հոգւյին ծառան է :

Այլոց քով , պարզեատուութեան և կուռնքներու մէջ պերձ , իսկ ինքն իւր քովը միջակ է , և ոչ պճնասէր : Խոշորասէր է , քան թէ փափիասէր . անտեսութեամբ կը վարուի իւր մարմարին հետ նորա պէտքերը չկտրեր որ շտկարանայ . պէտքէն առելի չմատահարարեր որ չըրբանայ :

Իւր կեանքին չծառայեր , դիտնալով թէ ինը ծնած է չէ թէ կեանք մշանջենաւոր պահելու համար , այլ թէ զայն պատուաւոր վախճանի մը հասցնելու համար :

Նա կենաց երկարութեան չնայիր , այլ նորա մեծութեան կը նայի :

Նա առաքինութեամբ լի իրբե անկարօտ ոչ կը զիջանի իւր կեանքը դնել և ոչ կը խոնարհի զայն վաճառել :

Մեծանձն համբաւոյ չծառայեր , վասն զի օտարի կարծեաց չը հետեիր , մի միայն ստուգութեան Ճշմարտութիւն մը անհամար կարծիքներէն նախապատիւ է իրեն համար :

Մեծանձն իւր առաքինական զործոց փորձովը ուղիղ վերահասութիւն ունի Ճշմարտութեան , անոր համար իւր սեփհական դիտառթիւնը ուրիշ մարդկանց ամեն կարծիքներէն վեր կը դասէ :

Անդէս զոհ սահմանեց միտ չգնելով պարւաւողներուն . ասով յ թէ՝ մեծանձն մինակ կը նայի որ բարի զործէ , փայթին թէ այլք բարի չխօսին իրեն :

Մեծանձն՝ այլք իւր դատաստանին արժանի չդատելու համար ,

զանոնք չդատեր և այլոց չծառայելու համար նոցա դատաստանէն երկիւղ չունի . անոնց բրած դատաստանի վրայ ծաղը կ'լնէ , վասն զի անոնց ուղիղ կարծեցն ալ դատաստանները մեծանձանց ուղղութեան բոլը մուած , իրենց ֆասակար կողմն ցոյց տուած և մերժուած են իբրև սիսալ և անպէտ :

Մեծանձին առաջնորդը ուղիղ բանասորութիւնն է , անոր համար կրից չծառայեր . յաջողութեան մէջ՝ պարկեշտ է , ձախորդութեան մէջ՝ արի է , անապարերութեան մէջ՝ միօրինակ և աներկիւղ է , զի բանն անոր մէջ զօրաւոր է . եթէ մէկը պատուհասն՝ առաջ ցասման կը պատուհասէ , զի բանին որոշմամբն է :

Խնչպէս որ երկինք երբեմ պարզ է , և կը փայլատուակէ , այսպէս ալ մեծանձն սուր կը շողացնէ , բայց իւր սիրտը խաղաղութեան մէջ է :

Նա՝ այն բաղդին չծառայեր , որ չզիտեր թէ , նա զինք որ կողմն պիտի ձգէ , դիտնալով թէ բաղդը ոչ կրնայ իրեն առաքինութիւն տալ և ոչ կրնայ բառնալ . և նորա առուտուրը միայն արտաքին բարեաց սահմանի մէջն է :

Ուստի միշտ միօրինակ է ինքն բաղդի թէ տարբյն և թէ առանելոյն մէջ , և բնաւ չալայիր , յաջողութեան մէջ չվստահիր . ձախորդութեան մէջ չխոռովիր :

Մեծանձն զեռ վտանգ շտեսած՝ ինքնինք կը պատրաստէ դիմակալելու :

Սոկրատայ դասախոսութեան ժամանակը իւր Սոփրոնիսկոս որդւոյն մահուան լուրը հաղորդեցին իրեն . նա փոխանակ զոյն փոխելու , սիրտը խոռովելու , խօսքերը այլայլելու , ամենայն հանդարտութեամբ և անխռով սկսեալ դան շարունակեց և աւարտեց , և ապա ըստ «ՕՇ» , երթիցուք տալ զպատիւ յուղարկաւորութեան Սոփրոնիսկոսի աստ կը յաղթանակէ այն առածը թէ՝ «Դմաստունն է միայն ազատ , և ուրիշ ամենը ծառայ են :

Մեծանձին և միանգամայն իմաստնոյն այս մեծ առաքինական սկզբունքները՝ ի դործ դրած ժամանակը գուհիկ մարդիկ զանոնք մոլութիւն կը համարին , զի Սոկրատայ տոկուն վեհսրաւթիւնը ռամկաց աչքին անգթութիւն համարուեցաւ :

Եւ այս է Սոկրատայ և ռամիաց մէջտեղը եղած տարբերութիւնը, որ Սոփրինիսկոսն ծնած ժամանակը Սոկրատ գիտէր որ իւր որդին որեւէ օր մը պիտի մխնէր . ռուսի իւր որդւոյն մահը նորա ծնած օրը հոգաց :

Խոկ ռամիկն Սոփրոնիսկոսի մեռնելէն վերջն զգաց անոր մահը և այն օրը սկսաւ նորա մահուան վրայ մտածել, մինչ Սոկրատն ծնած օրը մտածած էր այս անդիմադրելի հրաժեշար :

Փոքրոդին ամեն մարդկանց կը հաւտայ և անոնց ետեւն կ'երթայ, Փքացեալն ոչ ոքի չհաւտար և մարդու ետեւն չերթար, թէև իսպառ անիրաւութեան մէջ գանուի . իսկ մեծանձն՝ ըստ որում բռնի կը գործէ, հաստատուն կը մայ իւր գործերու մէջ, այնշափ մինչև որ իւր խորհուրդէն աւելի զօրաւոր խորհուրդ մը իւր սրաի մէջ աեղի ռանենայ և իւր խորհրդեանը յաղթէ :

Մեծանձն ինչպէս որ ուրիշներէն աւելի իմաստուն է, այսպէս ալ շախործիր այլոց խօսքերը իրեն խօսքերէն վերադաս համարել :

Եւ եթէ սխալ ալ գործէ մէկը չհամարձակիր անոր ազդարարել, ինչպէս որ հանդիպեցաւ Օզուստոս կայուեր :

Օգոստոս կայսրն շնացեալները պատճելու օրէնք մը հրատարակեց, և իւր դուստրը այս յանցանքի մէջ զտնուելով անխոտիր կերպով օրէնք 'ի գործ զրաւ . իւր դուստրն աքսորելով բոլոր աշխարհին յայսնեց իւր տանը պակասութիւնը, մինչ կարելի էր իւր մէկ անկիւնը պատսպարելով ծածկել զայն, վասն զի յանցանքը հրապարակ ելած չէր :

Յանցաւորն իւր հօրմէն աքսորուելով ամօթն ալ իւր երեսէն աքսորեց . այն յանցանք որ զաղտազողի կը գործէր առ երկիւղի սկսեց յայսնի և հրապարակաւ գործել :

'Ծածուկ շնացեալն հրապարակական պոռնիկ դարձաւ :

Եթէ Օգոստոսն առաջէն զգար որ աւանց ինքինք յայտնի խայտառակելու չպիտի կարողանար իւր յանցաւոր դուստրն պատւհասել, խոհեմութիւն պիտի համարէր զայն իւր տան մէկ անկիւնը ծածկել քան թէ աշխարհի յայտնել :

Երբ զգաց իւր անպատուռթիւնը՝ սաստիկ բարկացաւ, առելի իւր սխալման վրայ, քան թէ յանցաւորի յանցանացը :

Եւ յուսահատութեամբ աղաղակեց, հիմա կը ձանաշեմ թէ իմ բարի խորհրդականներս Ազրիպպասն և Մեկենասը կորսնցընելով՝ շատ մեծ կորուստ եմ ունեցեր :

Մեծանձն այլոց երախտիկ կ'ընէ, բայց անոնցմէ երախտաւորութիւր չփրեր. անոր համար որ երախտիքը, շատ անգամ երախտապարտին ազատութիւնը կը կապեն, և եթէ երախտիք ընդունի ալ կը ցանկայ որ շուտով մը տոկոսով վճարէ, որպէս զի իւր երախտապարտութեան կապէն արձակուի, և իւր երախտաւորութեան կապովը կապէ այն անձը, ուրկէ քիչ մ'առաջ կապուած էր ինք :

Մեծանձն իւր արժանաւոր ընկերը կը կիսուէ որ մրցի հետը : Փիլիպպոս իւր Աղեքսանդր որդւոյն Հարցուց թէ Ոլիմպիական հանգիսի խաղերու մէջ արշաւահանդիսին պիտի ընթանան . պատասխանեց Աղեքսանդր թէ, Այո՛, պիտի ընթանամ, եթէ ինձ ընկերակից թագաւորներ գտնեմ . որ կարողանան ինձ ընթացակից լինիլ :

Մեծանձն ամեն մարդուն չդիմակալեր, եթէ դիմակալէ ամենայն սրտէ կը դիմակալէ . իւր հանդստութիւնը չկորսնցըներ, և ոչ ալ թշնամոյն հանգստութիւն կու տայ : Մեծանձն կամ իշխանէ, կամ իշխանաց վրայ աշընկէց :

Նա զժողովուրդ կը սիրէ և իւր մեծամեծ առաքինութիւնները զինք ժողովրդին հաճելի կը ներկայացընեն :

Նա՝ ժողովրդական կառավարութեանց մէջ խորհրդարանական պատգամատու է, նա՝ հայրենեաց զարդ և զօրաց զինարան է, օտարներուն այնշափ անսգիւտ է, որ անկէ մեծ բան մը չեն կրնար ցոյց տալ :

Հատերը ծովային դժուար ձամբորդութիւնք յանձն կ'առնուին 'ի կորնթոս գնալ, որպէս զի Տիմոլէսն մեծանձն տեսնէին, որ ծերացած և աչքի տեսութիւն խանգարուած, իւր տան մէջ կը նստէր իբրև իւր քաջութեան մացորդ յիշատակ :

Ըատ անգամ զայն իրենց թևերուն վրայ բարձած թատրոն կը տանէին , և անկէ խորհուրդ կը հարցլնէին :

Այս անձը իւր խորհրդառութեան մէջ յայտնի ցոյց կու տար թէ իւր կոյր երկու աչքերը՝ քաղաքական և պատերազմական իրողութիւնները իւր քաղաքացոց բոլոր առողջն սրատես աշքերէն առելի հզօրեղապէս կը տեսնէր .

— ապա —

## ԴԱՍ Ծ

### ՓՈՔՐՈԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԷԱՑՈՒՄՆ

Իշխանութեան և հրապարակական պատույ տենջը երկու հակառակ ներդորժութիւններ կ'ընեն մարդկանց վրայ :

Ոմանք թիթեաւան պէս այնշափ կը մօտենան կրակին , որ թևերնին կ'այրեն և իրենք կը ֆլասուին , ասոնք են հսկարանները և փքացեալները , ոմանք ալ իբրև զշղի՝ այսինքն իւնէ էռոշու՝ այնշափ կը վախնան լուսոյ փայլառակմանէն , որք խաւարշտին ստուերներու մէջ պահուած կը մնան , և ասոնք են փոքրողինները :

Փքացեալն թէպէտ չունի մնամեծ առաքինութիւններ , բայց իւր անձը մնձ պատույ արժանի կը համարի , փոքրուկին թէկ ունենայ մնձ առաքինութիւն , բայց իւր անձը մնձ պատույ ընդունակ չհամարիր :

Փքացելոյն սէրը առաքինութենէն թափուր է , մինալ մնափառ ուութեան հողմերով կը մնանի :

Փոքրողին առաքինութեամբ լեցուած բիրտ մը ունի , բայց չըրտառ անդիր զայն հասարակաց դէպերու մէջ պայծառ կերպով երեան բերել . եթէ հարցուի թէ ինչպէս աառաքինութեամբ լիէ այն սիրար

որ այն առաքինութիւնները՝ ի գործ գնելու շափ քաջութիւն չունի : Եւ կամ թէ ինչպէս ժափուր է միւս առաքինութիւններէն , ուրուն սիրաց փաքրոգոյն սրտէն շատ մեծ է . կը պատասխանեմ թէ «Փոքրոգոյն թեան մոլութիւնը , բարոյականէն աւելի բնական պահպութիւններէն կը ծնանի , որովհետեւնորա խառնուածքը մեծանձին խառնուծքէն տարբեր է , անոր համար որքան մեծանձնի սիրաց ջերմէ , այնքան ալ փոքրոգոյնը ցուրտ է :

Եւ որովհետեւ հոդին կատարելութեան մասին մարմայ ետևէն կ'երթայ , այդ բանաւոր ցրտութիւնը անոր շատ մը գծուարութիւնները ցոյց կու տայ նորա վեհ իշխանութեան մէջ , անոր համար կը հրաժարի մեծամեծ պատիւններէն և փոքրով միայն կը բաւականանայ :

Փքացեալին ալ անոր հակառակն՝ թէպէտ իւր անձին վրայ շատ առաքինութիւն չունի , և ոչ ալ մտաց մէջ շատ իմաստ , բայց ուրովհետեւ որտի մէջ մեծանձնէն աւելի շատ մը ջերմութիւն ունի անոր համար խրոխտ վստահութեամբ վեհ իշխանութեան և մեծ պատույլ հետամուտ կը լինի , որուն որ ընդունակ չէ , ինչպէս որ մեծանձն ընդունակ է :

Փոքրողին կինաց վտանգէ շվախնար , բայց մարմայ պատույն վտանգէն սասատիկ կը վախնայ :

Կեանք տալու համար ամեն քաջորականները երենք զիրենք պատրաստ ցոյց կու տան , իսկ հասարակութեան կառավարութիւնը պատճնելէ մինչեւ անդամ զգօնամիաներն և քաջապիրունները հրաժարելով խոյս կու տան այն մեծամեծ փառքերէն և պատիւններէն :

Լաւ կ'ընտրեն առանձին երկարիքութեամբ կեանք վարեկ , քան թէ քաղաքական իրողութեանց մէջ հրապարակային գեկն ձեռք առն նուլ . ըստ իմաստնոյն թէ «Սիրեաց լինել անծանօթ :

Փքացեալն ասոր հակառակ ամեն ջանք ՚ի գործ կը գնէ , սոյն փառաց և պատույլն համելու հանձարը շունենալով՝ շվախ առաջիկայ , կործանման վտանգները երեակայել :

Փքացեալն ըստ երեւութիւն նման է մեծանձին , իսկ ըստ էութեան , անսման է . փոքրոգութիւնն ևս ըստ էութեան նմանագոյն է , իսկ ըստ երևոյթին աննմանագոյն է :

Փքացելըն համարձակութիւնը, իւր արժանաւորութենէն աւելի է . փոքրոգւոյն արժանաւորութիւնն ալ իւր համարձակութենէն աւելի է :

Ինչպէս որ շռայլն առատաձեռնի կապիկն է , և յանդուցն ալ արիին կապիկն է , այսպէս ևս փքացեալին մեծանձին կապիկն է , զի մնափառութեամբ մեծանձն երեխլ կ'ուզէ , անոր համար մեծ պատույ արժանի կը համարի զինքը :

Փքացեալն՝ իւր նպատակին հասնելու համար կը բարկանայ , կ'սպառնայ , փոքրոգին իւր նպատակին հասնելու համար , կ'աղաշէ և կը խոնարհի :

Նա՝ փոքր ֆասոյն համար մեծ վրէժինդրութեան կը պատրաստոի . սա ինքը իւր մէջ կ'այրի և կը տոչոռի , կը առապի առանց ուրիշի բան մը յայսնելու :

Փքացեալն այլոց մեծ գործերը կ'արհամարհէ . փոքրոգին՝ այլոց փաքր գործերը կը գովլաբանէ և մեծ կը համարի :

Նա կ'ուզէ մեծանձնէն աւելի մեծ գործ գործել . առ՝ մեծանձնի գործոյն հասնելու և հաւասարելու շվստահիր :

Ինչ բանէ որ խորշիլ պէտք է՝ փքացեալն անոր կը ձեռնարկէ , ինչ բանի որ ձեռնարկել պէտք է՝ փոքրոգին կը խորշի անկէ :

Փոքրոգին լաւ է քան զիքացեալն , զի կարելի է որ փոքրոգին . մեծանձն լինի , իսկ փքացեալն՝ չէ կարելի , վասն զի փքացելոյն է ութիւնը կը պակասի , իսկ փոքրոգւոյն միայն սրտի ջերմութիւնը կը պակասի :

Կարելի է ըսել՝ փոքրոգին է առաքինի ոմն երկշու , փքացեալն է մոլի ոմն խրոխա :

Կարելի է փոքրոգւոյն սրտի ցրտութիւնը հայրենեաց սիրով շեռուցանել , և կամ բուռն կիրքէն զայն առաջ մղել , այսպէս ալ բարեկամաց յորդորներէն զայն սթափեցընել , նաև կարելի է զայն շարժել իւր սիրելեաց աղաւանքներէն կամ բոնազրուիչ հարսկերէն և զինք քաջալերող իմաստուն խորհրդականներէն , ասոնց մէ շարժեալ կրնայ հասու լինիլ իւր մէջ թագուն պահուած զօրութեան , և յետ այնորիկ կ'սկսի ամն դժուարութիւնները իւր

աշքին դիւրին երենալ, որով աստիճանաբար մեծանանութեան բարձրութեան կը հասնի :

Իսկ փքացեալն՝ առանց առաքինութեան հանձարոյ կը բարձրանայ այն մեծ պատիւներուն, ուր ուգի հաստատութեան տեղ չզբանելով՝ այնպէս կը զահալիմի որ հասարակութիւնն ալ իւր հետ կը կործանէ :



## ԴԱՍ ԾԱ.

### ՊԼՈԿԵՑՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՆԱԲՀԱՏՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ մեծամեծ ծախուց չափաւորութիւնը, մեծադորձութիւն կը համարուի, և միջակային ծախուց չափաւորութիւնն առատաձեռնութիւն կը համարոի, այսպէս ալ մեծամեծ պատիւներու չափաւորութիւնն մեծանանութիւն է, միջակային պատիւներու չափաւորութիւնն ալ պարկեցաւութիւն է :

Այն որ միջակ առաքինութիւն մը ունի, իւր անձը միջին պատույ արժանի կը համարի, նա պարկեցաւ է :

Այն որ փոքր առաքինութիւն ունի, և իւր անձը կ'ուզէ միջին պատույ արժանի դատել, նա փառամոլ է :

Եւ այն որ միջակային առաքինութիւն ունի և իւր անձը միջին պատույ անզամ արժանի շդատեր, նա անհոգ է :

Պարկեցութիւնը մեծանանութեան փոքր տեսակն է . փառամույութիւնն ալ փքացման փոքր տեսակն է, ինչպէս որ անհոգութիւնն ևս փոքրողութեան փոքր տեսակն է :

Ամեն մեծանան կրնայ պարկեցաւ լինիլ, սակայն ամեն պարկեցաւ կրնար մեծանան լինիլ :

Այն որ առաւելին ձեռնհաս է, նուազին ալ ձեռնհաս է, բայց այն որ նուազին ձեռնհաս է, չկրնար հետեւ թէ առաւելին ալ ձեռնհաս է:

Ուրեմն այն մեծանձն մարդիկ որք մեծ պատույ արժանաւորութենէն կը զիջանին միջակային իշխանութիւն մը վարելու հայրենեաց սիրոյն համար, նոքա մեծանձն լինելէ հրաժարած պարկեշտառթեան սահմանի մէջ մտած կը համարուին :

Սակայն այն կարգի մարդիկ, որոնք որ մեծամծ պատույ արժանաւոր էին, և իրենց արժանաւորութիւն չնանաչելով, միջակային պատուով գոհ կը լինին՝ նոքա ոչ մեծանձն և ոչ պարկեշտեն, այլ փոքրողի, թէև ռամկաց գիտութիւնը, զանոնք պարկեշտ կը համարի :

Չատ մոլութիւններ կան այսպէս, որոյ ներքին կողմն տղեղ են բայց արտաքին կողմն զեղեցիկ, այս պատրուակը հասարակաց դատաստանը կը սխալեցընէ, զի ինչպէս որ տեսնէ ռամբկն՝ այն պէս կը դատէ :

Անոնք որ կարող չեն հասանել մեծ պատույ թող ջանան հասանել միջակային պատույ. անոնք որ կարող չեն հասանել՝ ի պատիւ ինքնակալութեան, թող ջանան հասանել միջին պատույ խորհրդականութեան :

Անոնք որ մեծ կը գործեն՝ մեծ պատույ կը հասնին, անոնք որ. միջին՝ միջին պատույ կը հասնին. այն որ կարող չեղաւ լինիլ մեծանձն՝ թող յանձն առնու լինիլ պարկեշտ, և արժանանայ միջակային պատույ :

Պարկեշտն իւր սահմանի մէջ վայելու կերպով կը թայ, և իւր թեերը իւր սահմանէն աւելի չտարածեր և ոչ ալ շափէն աւելի զայն կը կծկէ, գոհ կը յինի միջակային պատուով. և ոչ թէ փոքրուույն պէս կործանմանէն վախնալով այլ համեստ վայել շական ընելու համար. պատիւն իւր արժանաւորութեան կը համեմատէ, և արժանաւորութիւնն ալ առաքինութեան :

Դու՝ պարկեշտին արքունի խոյր և իշխանութեան գաւազան ներկայացուր, նա համարձակ կ'ըսէ, Այդ իմ չե, վասն զի իմկաս

բողոքաթեանս շափէն առելի է, և ընարեցէք ինձմէ առելի արժաւանփառն :

Իւր անձի կարողութեան Շանաշմամբ առաջ եկած այս հրաժեշտ պը իբրև դիւցազնական առաքինութիւն կը գովարանուի :

Ի՞նչ օգուտ է մնծ փառքէն շլանալ, կարողութեան սահմանէն գուրս բարձր դորձի ձեռնարկել, և վերջէն ամօթապարտ յանդունդս զլորիլ:

Ծատերը միջակային իշխամութեան մէջ, կարող և ձեռնհաս են, բայց երբ մնծ իշխամութեան կը ձգտին բաղձանօք մնծամծ պատուոյ համնելու համար, իրենց անձեռնհասութեամբ առաջիններն ալ կը կորսնցընեն :

Աթէնքի մէջ Աթենասի արձանի զլուխը կայծակէն խորտակուած ժամանակ՝ նորա նորոգումն երկու անուանի քանդակագործներու այսինքն Փէտիոյ և Աղիստենեոյ յանձնուեցաւ :

Այս երկու վարպետները մէկ մէկ գլուխ շինեցին և հրապարակ հանեցին. Փիգիայի շինած զլուխը անհեղեթ խորտուբուրդ կունտի մը կը նմանէր, տձեւ և անզարդ, իսկ միւսը՝ շքեղ, զարդարուն և վայելուչ էր, որ ամեն տեսնողներու ուշը իրեն կը զրաւէր :

Եւ սկսան գովասանք տալ վայելչին, և այսպանել զտձեն և առնոր շինողն, սակայն նա ծանրութեամբ մը ըսաւ «Մի դատէք ոչ մին և ոչ զմիւն, մինչև որ իրենց տեղը դրուխն». Երբ վայելուշ ձեռք շինուած արձանի զլուխը իւր տեղը դրին, վարէն զայն տեսնողները անկերպարան և տձեւ գունտ մը կը կարծէին որ բնաւ զիսու. նմանութիւն չունէր .

Երբ զայն վար առին և միւս անկերպարան զլուխը հանեցին արձանի զլուխը՝ այնպէս կատարեալ համեմատութեամբ մը յարմարեցաւ արձանին, որ ամենք զարմացան նորա բարեձեւ վայելչութեան վրայ. այն ժողովուրդը՝ որ քիչ մը առաջ, նոյն զլուխը առ ոչինչ կը համարէր և շինողը իբրև անհմուտ կը նախատէր, զետնի վրայ անոր տձեռութիւնները տեսնելով՝ նոյն ժողովուրդը, երբ զայն գլուխը բարձր արձանին վրայ բարեձեւ աեսաւ, իւր դատաստանը փոխեց և իւր արհամարհածը սկսաւ գովարանել :

Խոկ ուղիղ աեսութիւնն երկու զլուխն ալ միապէս վայելու չեղատէ , վասն զի մին՝ իւր վայելչութիւնը խոնարհէն ցոյց տուառ , միւսն՝ իւր բարեձև վայելչութիւնը բարձրէն ցոյց տուառ :

Այսպէս ևս այն անձինք որբ իրենց մեծանձնութիւնը բարձրէն ցոյց տալու շափ կարողութիւն չունին , թող լանան գոնե անկէ խոնարհ պարկեշտութեան մէջ ցոյց տալ իրենց վայելչութիւնը :

—ՅՅ—

### ԴԱՍ ԾԲ

#### ՔԻՄՏԱՆԷԱԿԱՆ ԽՌՆԵԲՀԱՒԹԻՒՆ

Քրիստոնէական խոնարհութիւն է , աւետարանական առաքինութիւնը որ սերտ կապ ունի բարոյական մեծանձնութեան և պարկեշտութեան հետ :

Մեծանձն և պարկեշտն իրենց առաքինութեանց հետ պէտք է որ համեստ խոնարհութիւն մը ևս ունենան , թէե մեծանձնի արժանաւորութիւնը չներեր իրեն որ խոնարհի , բայց պարկեշտն չուտով կը մօտենայ , վասն զի պարկեշտն մեծ պատիւէն կը փախչի :

Խոնարհութիւնը արտաքին իմաստամիրաց գատառտանի առաջը պարկեշտութեան առաքինութենէն աւելի , անհոգութեան մոլութիւն դատուած է :

Վասն զի նոքա կ'ըսէին , խոնարհն արժանաւորութիւն տնի , բայց պատիւ պահանջելու փոյթ չունի , ինչպէս որ փոյթ չունին փոքրողին և անհողն :

Սակայն մեծ տարբերութիւն կայ խոնարհի և փոքրողւցին մէջ տեղը :

Փոքրադին պատիւէն կը հրաժարի , վասն զի իւր առաքինութիւն-

Ները չհանաշեր , իսկ խոնարհն իւր առաքինութիւնները կը ճանաչէ . բայց և այնպէս պատիւէն կը հրաժարի . և իւր անձի վրայ իիստ լաւ տեղեկութիւն ունի , գիտէ թէ որոնք են իրենց և անոնք՝ որոնք չեն :

Խոնարհն՝ աեսակի մը վերաբերեալ խլուրդներուն չնմանիր , որք աչք չունենալով իրենց անձը չեն ճանաչեր :

Նա կը նմանի այն երկային թռչնոց՝ որոնք Արդոսի պէս իրենց փետուրներու աակ ծածկուած հարիւրաւոր աչք ունին , որոց եթէ յիսունը դոց լինի , յիսունը բաց կը մայ , որոցմով իրենց վրայ գարձած , իրենք զերենք կը քննեն և կը զննեն :

Ուրեմն խոնարհն՝ թէ իւր կատարելութիւնները կը ճանաչէ և թէ իւր թերութիւնները :

Նա գիտէ թէ իւր վրայ գանուած ամեն կատարելութիւնները արաշագետին շնորհքն է , անոր համար չպարծիր , նա կը ճանաչէ թէ ինքն է պատճառ իւր վրայ գանուած ամեն անկատարութեանց , անոր համար կ'ամաչէ և կը խոնարհի :

Գիտէ թէ առաքինութեանց ուսուցիչն Աստուծոյ որդին է , և նոյն իսկ աստուածորդին խոնարհութեան այս օրէնք կը պահէր , վասն զի իւր աստուածային անձին վրայ բովանդակեալ մարդկայնութիւն , կը խոնարհէր հօր Աստուծոյ , ինչպէս որ առանց մարդկայնոյն իւր անձը հօր անձին հաւասար ցոյց կու տար :

Խոնարհն իւր դորձնական գասը ՅԻՍՈՒԽԵՆ առաւ այն ժամանակ՝ երբ տերը ծառային , վարդապետը աշակերտին ոտքին խոնարհեցաւ :

Ուրեմն աւետարանական խոնարհութիւնը բարոյական մեծանձնութենէն աւելի զերազանցութիւն մը ունի :

Վասն զի բարոյական մեծանձնութիւնը զմեծանձն մարդիկներէն զերադաս կը դատէ , իսկ աւետարանական խոնարհութիւնն զմարդն բարոյական մեծանձէն գերազանցելով՝ Յիսուսին կը նմանեցընէ :

Մեծանձն փոքր պատիւ կ'արհամարհէ , մեծ պատիւ ստանալու

Ետեւն կ'երթայ . բայց խոնարհն ամեն երկրաւոր պատիւները կ'արհամարհէ և երկնայինն ստանալու կը ցանկայ . այս է մծանձնեայ խոնարհութիւնը :

Խոնարհն՝ եթէ ստիպուի մծութեան պաշտօնը ստանձնել , որուն որ արժանի էր , բայց առ խոնարհութեան խոյս կու տայ , զան շքով և արիաբար կը կատարէ , թէպէաւ այս միջոցին անգամ իւր անձը մեծ չչամարիր , բայց կը կամ որ իւր դիրք մեծ երեկի :

Եւ ամեն մեծերէն աւելի նախանձախնդիր է իւր արժանաւոր պատիւն ստանալու :

Եթէ Երիստոտէլ հասած լինէր քրիստոնէական խոնարհութեան պիտի ստիպուէր ըսել թէ «թէպէտ բարոյական մծանձնութիւնը ամեն առաքինութիւններէն վեր է , բայց առետարանտկան խոնարհութիւնը բարոյական մծանձնութենէն զերագաս է :»

## ԴԱՍ ԾԳ

### ՀԵԶՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՒԹ ԵՔԿՈՒ ԾԱՑՔԵՐԸ

Երբ անիրաւ մվաս մը համի մեզ , մենք այն անիրաւութենէն գրգռեալ կը բարկանամք , և վրէժինդրութեան կը պատրաստուիմք , բայց հեզութիւնը վրայ հասնելով , միր բարկութիւնը կը մղմացընէ , և վրէժինդրութիւնը կը թուլացընէ , մինչև որ վերահա լինի այն ամեն պարագաներուն , որք միր բարկութեան և վրէժինդրութեան տեղի տուած են :

Հեզ չէ այն որ իբրև քարէ արձան անիրաւութիւնը չզդար , և չզայրանար . և ոչ այն անձինք հեզ կը համարուին , որք վայրենի դաշտանի պէս , անիրաւութիւնը զգացած ժամանակ՝ չափէն աւելի կը բարկանան :

Այս երկուքն ալ մոլեկան ծայրեր են, մին՝ բարկութիւն, միւսն  
անզգայութիւն, մին՝ դէպ 'ի նոռազն կը տանէ, միւսն դէպ 'ի ա-  
ռաւելն :

**Մին՝ ջուր է,** միւսն կրակ :

Ուրեմն այս երկու չափաղանցութեանց մէջ սեղը հեղութիւն մը  
ադէռք է, որ ոչ չուրի մէջն ընկղղի և ոչ կրակէն այրի, այլ ուղ-  
ղութեան օրէնքներով վարուելով անփառ մնայ :

Հեղն կ'զգայ անիրաւութիւնը որշափ որ արժան է, կը զայրանայ  
և վրէժինդիր կը լինի այնշափ, որշափ որ կը զայելէ :

## ԴԱՍ ԾՐ

### ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Բարկութիւնը երկու տեսակ է, մին բարոյական, միւսն ֆիզի-  
քական՝ այսինքն բնական :

Բարոյական բարկութիւն է, այն մոլութիւնը որ ցասման և ըլ-  
ձի վրայ ներգործելով վրէժինդրութեան կը շարժի այն անձանց  
դէմ, որոնցմէ անիրաւութիւն կը ծնանի :

Ցասման բնական կիրք է, և բարկութիւնն անոր մալեկան ունա-  
կութիւնն է, ցասումն շատ անգամ ոչմիայն կիրք, այլ և նոյն իւկ  
զայրացումն ալ կ'անուանի, և ինչպէս որ ամեն մարդ բնապէս զինք  
և իւրքն կը սիրէ, նոյնպէս ևս այն՝ որ կը ֆնաէտ մը մարմարոյն,  
ինչպէս հարուած և խոցուած, և այն որ կը ֆնաէտ մը համբաւոյն՝  
ինչպէս անէծք և արհամարհանք և այն ամենքը որք կը ֆնասն մը  
ընչից, ինչպէս դողութիւն և յափշտակութիւն, և անոնք որ խոչ-

իցելը որ չխէ և այլն հաճոյականները, զորս երևակայութիւնը իբրև անիրառ առաջ կը քերէ, առանք են որ մեր ցատումն կարթըն։ ցընեն վրէժինդիր լինելու համար։

Իսկ ֆիզիքականը այսինքն բահան ցատումն՝ է այնպիսի բաց մը երևակայեալ առարկայէն առաջեկած՝ որ յանկարծակի սրափ բոլոր տիրը կը վառի և արինն կ'եռացընէ զդալի ցնցումով մը սիրալ ֆասակարի դէմ կը յարացանէ և արտաքին կարողութիւնները վրէժինդրութիւն կը շարժէ։

Այս բնական գործը ամեն կատարեալ կենդաննաց քոն ալ կայ, որբ երբ իրենց ֆասար կ'զգան, բացով վառած, աչք կրակ կը կարի, մազերը կը ցցուին, խօսքերը ընդվզած, իւր բնական գէնքերով կը պատրաստուի ֆասակարին վրայ յարձակելու։

Այս բնական յարձակմանց մէջ մարդու անասուններէն տարբեր չէ, վասն զի այն բոցը որ զայրացեալ անասնոց սիրտը կը վառէ, նոյն բոցը միւնոյն եղանակու զայրացեալ մարդկանց սիրտն ալ կը բորբոքէ։

Այս սաստիկ բարկութիւնը երկաթի շանթի բորբոքումն կ'անուանի վլասն զի նա դիմամարտութեամբ ջերմութիւնն 'ի մի ժողովելով՝ իւր բոլորտիք գանուածները կը ցրուցընէ, ասոր համար ցատցեալին վրայ տեսակ տեսակ մրցումներ, հակառակ շարժումներ կը տեսնուին, մէկ կողմէն վառիլ միւս կողմէն սառիլ։

Կորա սիրտը ներքին բոցերէն կը վառի, և մորթի պաղելէն մաշերը կը զիղանան և կը ցցուին, նորա գէմք մրթ կը շառագնի, մերթ կը գալկանայ, կատաղութենէն աչքերը փայլատակելով հուր և ջուր կը հովին, սաստիկ ցաւերէն կ'արտասուի, նորա ոնդունք պարհագն չինչ՝ ծուխ կ'արձակեն, շրթունքները կը դողան և կը դող դոշեն, նորա կուրծք բոցերով կը վառի, խօսքերը կը կապկապուին, իւր անձին վրայ ցաւազին ուրախութիւն մը և ուրախագին ցաւ մը կ'զգայ, քինոտ ֆասոմն՝ յուսայ վրէժինդրութեան հետ կը մրցի, և կը մաքառի։

Այս վիճակը մեզ կը ներկայացընեն այնպիսի մարդ մը, որ ամեն դազաններէ խառնուրդ չփառը մ'է. վասն զի ցոլի պէս կը

բառացէ, առիւծի պէս կը մռնչէ, զիշապի պէս կը շչէ, շան պէս կը խաճանէ, արջի պէս ձիրան կ'արձակէ, ոտքը գետին կը զարնէ և երիմից դէմ սպառնալիք կ'որոտայ . իւր թշնամին շգտնելցն առաջ ինքզինք կը խոշտանգէ և կը կոշկաձէ :

Այս զարծողութենէն կրնաս հետեցընել թէ՝ որշափ ազեղացած է նորա հոգին, որ իւր մարդինը այսափ շարաշար կ'այլանդամիւ :

Ասոր համար Պղտառն՝ բարկացող մարդուն խրատ կու տայ, որ հայելիի մէջ նայի իւր դէմք տեսնէ իւր վիճակը հասկընալու և անկէ աթափելու համար .

Առասպելապատումները կ'ըսեն թէ՝ «Աթենաս աղբիւրի զլուխ նստած հովուական սրինգ հնչած ժամանակ՝ ջուրի մէջ նայելով իւր ծնօսներու ուռիլը և իւր դէմքի այլայիլը տեսնելով ինքն իրմէ զարհուրած որինքը ձեռքէն վար դրաւ :

Այսպէս ևս բարկացողն իւր պատկիրին նայելով իւր ցատութեն զզուելով կը սարսափի, ֆճնիրմէն դժգահելով կ'ակսի հանդարտիլ :

Բարկութեան բոցը աւելի շուտով կը բռնկի ջերմադոյն խառնուած ունեցներու վրայ . վասն զի շատ է կայծ մը կրակ քժանը վառելու համար, և քիչ է հրդեհ մը երկայնաքարի համար :

Դան ուրիշ հայեցուածով մը հան աւելի կը ներգործէ ուր որ զօրութիւնը քիչ է վասն զի ուժը պակսած տեղը, յօժարութիւնը կը սաստկանայ :

Անկատար և անզօր կենդանիները՝ ինչպէս են իմը, կարիճը, պիծակը, եալին, միւս կատարելութիւն ունեցող կենդանիներէն աւելի պատրաստական են թունաւոր զնք կրելու՝ ի վրեժինդրութիւն :

Այսպէս ևս բարկութիւնը աւելի հզօր կ'ազդէ ակարներու վրայ :

Բարկութիւնը ծերերուն աշխոյժ կ'ազդէ, կանանց առնացի կորով . ճանձն անդամ իւր մատզն անմ:

Ահա այս է բարկութիւնը, որու վրայ այսափ խօսեցանք, և փոքր մոլեկան կը համարուի, անոր համար որ թէպէտ շուտ կը բորբոքի և սաստիկ կը զայրանայ, բայց շուտով ալ կը զիշանի :

Դմաստասէ ըները ըսած են այս բարկութեան համար «Աւղ ան-

մառթիւն, հարեւանցեալ սրտմառթիւն, հոգւոյ արբեցովթիւն, առօրեայ բռնութիւն, > ասոր համար կարձատե է :

Իսկ ցասման միւս աստիճանը, որ աւելի մոլեկան, դաշնական և անդթական է, Արիստոտել զայն «Ցասում դժուարին և ուեամաղձային» կ'անտառնէ : Որովհետեւ առաջինը արեան մէջ հաստատուած լինելով, շուտով կը բորբաքի և կ'եռայ և շուտով կը շիջանի, իսկ երկրորդն, որ ցրտազին և մածուցիկ հիւթ մ'է և ուեամաղձներու մէջ կը բնակի, շատ դժուարա կը լուծոի, որչափ որ անյայտ է և չերեկիր, այնչափ ալ զօրաւոր կը ֆնասէ :

Խնչպէս որ երկուքի պատճառները այլ և այլ են այսպէս ևս նոցա հանգամանքները այլ և այլ են և տիսուր գործերը այլ և այլ կը ներգարծեն :

Նա կրակ կը ծառալէ երեսին վրայ, իսկ սա ծուխ կը ծառալէ . նա եռանդուն արիւն է, ոս մօխրի մէջ ծածկուած այրող կրակ է . ասոր համար անսնք որ բարկութեան մէջ ունակացած են, նոքա արիւնը ուշտ կը լինին, իրենց դոյները յայտնի ցոյց կու տան նոցա բարքերը և վիճակները :

Մին՝ կ'աճապարէ խորհուրդներու մէջ և բուռն բերմամբ առաջ կը գործէ յետոյ կը խորհի, իսկ միւսն հանդարա սրտով և առանց աճապարանաց իւր մօքի մէջ կը խորհի և խմգժական հնարքներ կ'ընտրէ և կամաց ֆաստութեան վրայ արհեստները կ'աւելցընէ :

Մին՝ թէ բանիւ և թէ զործով իւր միրտը կը յայտնէ և շանթէն առաջ սպառնալիքներ կ'որոտայ և շատ անդամ մնութի փայտականերու մէջ լուծուելով կ'անհետանայ առանց ֆնասէլու :

Իսկ միւսն նենգամիտ, առանց վրերվման մրրիկներ կը պատրաստէ, կեղծ լուս թեամբ միջոց կը պատրաստէ, և յանկարծակի դաւագրութեամբ մը իւր անզդոյշ սսոխի վրայ կը յարձակի :

Մին՝ բարեկամներու յորդորմամբն իւր թոյնը կը մեղմէ, իսկ միւսն իծի ոդէս ականջ կը խցէ, որ բարեկամաց փրկաւէտ ձայնը շլսէ :

Մին՝ գործելէն վերջ կ'առրջանայ, և արտասուօք վիրաւորեւլոյն վերքերը կը լուսնայ, իսկ միւսն կասաղի վազրի պէս կը դիշատէ, և անոր բեկորներու վրայ իւր ցաման թոյնը կը թափէ :

Մին՝ մինակ զինք բարկացընողէն կ'առնու իւր վրէմը, իսկ միւսն նորա բոլոր զարմն կը հալածէ :

Մին՝ անժուժկալ վրէմինդրութեան բաղձանքով, միւսն՝ վրէմինդրութեան մեքենաները մտածելով երկուքն ևս քունը կը խարանեն, և հանգիստն կը խռովին, շատ անզամմին՝ի միւսն փոխարկելով առաւել շար կը լինի :

Որովհետեւ հնացեալ բարկութիւնը յամառ ատելութեան կը փոխուի, ատելութիւնը բարբոքելով կատաղութեան կը դառնայ :



## ԴԱՍ ԾԵ

### ԲԱՐԿԱՑԱԳՆ Ի՞ՆՉ ՕՐԻՆԱԿՈՒ ԿԸ ԳՈՐԾԷ

Մինչև ցարդ գրուածներէն կարողացանք ըմբռնել թէ որոնք՛են բարկութեան խառնուածները, առարկաները, և տարբերութիւնները. այժմ կը մայ մեզ յայտնել թէ ի՞նչ օրինակաւ բարկացողն չափէն աւելի առաջ երթալով տահմանը կ'եղծէ և միւս կողմն անցնելով իւր թղյնը կը թափէ :

Յայտնի բան է որ բարկութեան չափազնցութիւնը հասատուածէ բարկութեան առիթ տուող այն պատճառներու վրայ, որը բարկացնելու չափ պատճառ չեն :

Բարկութեան ձշմարիտ և բուն պտտճառը արհամարհութիւնն է, բայց մեր խօսքը մարդկանց բարկութեան համար է, չէ թէ անսանոց բուռն բերման բարկութեան համար:

Ամեն մարդ, թէկ փոքր աստիճանի վերաբերի, իրեն դէմ եղած նախատինքը կ'զգայ, և այս նախատինքը իրաւամբ բարկանալու առիթ է :

Ամեն միասները ցաւ կը սկատճառեն, բայց ամեն ցաւերը բարկութիւն չեն պատճառեր :

Եթէ վեաս կրողը , վեաս հասցընողի սիրտը չար չդատէ , թէպէտ մասն մնաս է և մասուողն ալ մասուող , բայց վեասողը մասուողն նախատաղիր չէ :

Չար սիրտերու վրայ արհամարհութիւնը վեասէն աւելի աղղեցութիւն կ'ընէ :

Աքիլլէս երբ տեսաւ որ Ադամնմնն թաղաւորը իւր սիրելի բրիս ույան յափշտակեց , սաստիկ զայրացաւ , և այս զայրանալը չէ թէ իւր սիրելիէն զրկուելուն համար էր , այլ թէ ինքն Աքիլլէս՝ թագաւորէն անարդուելուն համար էր :

Ուստի ըստ «Զիս մարդիկներու մէջ ամենէն չնչինը համարեց , և անարդ ու զերի զիւղացիի մը տեղ դնելով՝ առաւ ինձմէ այն , որ իմն էր» :

Գաղանները որք ցաւերու ընդունակ են և կ'զգան վեասները , բայց պատիւ չեն զգար և նախատինք չեն ճանաչեր , նոքա ցասմամբ կը բորբքին և ոչ թէ Ճշմարիտ բարկութեամբ :

Ասոր համար մարդկանց սեռի մէջ ցաւերու դէմ տոկալը առիութիւն համարուած է , բայց արհամարհանաց դէմ համբերելը անարդութիւն է :

Նախատանաց բժշկիս գեղը նախատողի խոնարհիլն է , վասն զի միայն իւր յարդանքներով կրնայ իւր նախատանաց ծանրութիւնը բաւանալ :

Պէտք է այնչափ մնծարանք փոխարինուի նախատողին , որչափ որ արհամարհանքը բարձաւ անկէ վարկ և պատիւ :

Վնաս կրելը կարելի է , բայց նախատանաց տանիլը դրեթէ անկարելի է :

Այո , կարելի է նախատանաց տանիլ միայն այն ժամանակ երբ նախատինքը հրապարակական չէ ծածուկ է :

Երեսակայութիւնը կրից ետևէն կ'երթայ , և կիրքերն իրենց տեսութիւնը մանր առարկաներու վրայ այնչափ կ'ընդարձակեն՝ որ չքոտի լուն , փղի մեծութեան կը վերածեն :

Բարկացողն սաստիկ երեակայութիւն տնենալով՝ սիսալմոնքը կը մէծցընէ , վասն զի այնովէ ո կ'երնակայէ . ամենափոքր վեասը բար-

կացողի աչքին մեծ նախատինք կը համարուի . ծաղու առարկան կույ առարկայ կը համարի :

Թաղէս մեծ փիլիսոփան , որ սաստիկ բարկացող էր , երբ ասողադիտակ գործիքն 'ի ձեռին աստղերը կը զննէր , յանկարծ խոր խորատի մը մէջ անկատ . զօւարձաբարոյ և ծաղրասէր աղախինը երբ այն խորխորատէն զինքը աղատելու համար օգնութեան ձեռնարկեց , ժպտելով ըստ . «Կը դիտես ինչ որ երկինքն է , ինչո՞ւ շես դիտեր ինչ որ ուաքիդ տակն է » :

Թաղէս իրեւ մեծ իմաստատէր կրնար աղախնոյն պատասխանել թէ , Աչքս 'ի զլուխս է և ոչ ոտքիս տակը :

Այսպէս շըսաւ , այլ ըստ որում բարկացող էր՝ թէն փիլիսոփայ , խորխորատէն աղատածին պէս , սկսաւ աքացի և բոնցի և ուռի փայտով զաղախինը ծեծել և հարուածել , և կիսամեռ վիշակին հասցնելով՝ իւր աղատիչն ձեց . այն խորխորատի մէջ , ուրակէ ինքն աղատեցաւ աղախնոյն օգնութեամբն :

Տիպերոս բռնաւորն , երբ հարցուց Ձենոնին թէ «Ի՞նչ լեզուաւ զրած ես այս ինչ ճառը .» Ձենոն պատասխանեց թէ՝ Հռոդոսցւոց լեզուաւ :

Հռոդոս բառը յիշել տուաւ Տիպերոսին իւր Ռատոս կղզին աքսորուիլը . առ այս , Ձենոնի միամիտ պատասխանը չարամտութեամբ մեկնելով՝ զայն սպաննեց , որպէս թէ այդ բառը յիշելով Տիպերոսի հոն աքսորուիլը ակնարկած լինէր :

Բարկացողի մէկ չափաղանցութիւնն ալ այն է որ իւր անզուսպ կիրքերը 'ի գործ կը դնէ անընց դէմ , ուր որ պէտք չէ . վասն զի մեծաւորներու վրայ բարկանալը յանդնութիւն է , որովհետեւ աւելի խոնարհութեամբ կրնաս զայն համոզել քան թէ յանդնութեամբ , օրով աւելի կը զրուիս . եթէ մինչև ցայն վայր փոքր նախատինք մը ըրած էր , յետայնորիկ այն նախատանաց աստիճանները կրնայ բաղմապատկիլ :

Ստորին աստիճանի մարդկանց վրայ բարկանալն անմտութիւն է , տրովհետեւ բարկութիւնը անոր համար տրուած է որ անովակարը զբանալով՝ կարողանայ իրմէն աւելի զօրաւորին հետ հաւասարա կը լու միջոցները ունենալ :

Եւ ուր որ զօրութիւն բարձր է՝ հոն բարկութիւն առելորդ է : Բարեկամայ վրայ բարկանալ ապերախտութիւն է, այն որ քեզ բարի կը կամի, գու ի՞նչպէս անոր շար կը փոխարինես :

Այս չարդ գու քեզ կը հասցընես առելի . վասն զի բարերարիդ վրայ բարկանալով անկէ քեզ եկած բարիներէն կը զրկաւիս :

Անմեղներու վրայ բարկանալը անիրաւութիւն է, երբ նա անմղ է, բարկութեան արժանի չէ, զի բարկութիւնը պատիժ մ'է յանցաւորին և ոչ անմղին, այն որ անմղ է ի՞նչ իրաւամբ կը պատժես զի՞նք իրու յանցաւոր :

Բարկայովներու մասց աչք կիրքերէն կուրցած լինելով բարձրն խոնարհէն, խոնարհն՝ իւր հաւասարէն, բարեկամն՝ թշնամիէն, պարաւաւորն՝ անպարտէն չկրնար որոշել . ուստի յունական կրակի պէս ջուրերու մէջ անգամ կը վառուի նորա երեւ ակայութիւնը կիրքերէն խանգարուելով, անբան անսատները բանաւոր մարդիկ համարելով, նոցա վրայ կը զայրանայ :

Տեսիփոնոն՝ Ոլոմմիշական խաղերու մէջ հինգ յաղթութիւն առնելով՝ քաջայալթ անուաննեցաւ, երբ ջորին իրեն կից արձակեց ինքն ևս կատալլի բարկա թեամբ կոնակը ջորիին կոնակին գարնելով, ինքն ալ կենդանուոյն կից արձակեց :

Առ այս՝ հանդիսականք նորանշան մրցումը տեսան, զի մարդն ընդ անասնոյն կը մարտնչէր. կը մտածէին թէ ո՞րն աւելի անբան է, անասննը թէ մարդն, որ անասնոյ հետ կը կոուէր :

Տեսիփոնոն իւր բարկութեան մէջ անսատնը բանաւոր կարծած ժամանակը՝ ինքն անբան անսատն հրատորակուեցաւ, և իւր հին յաղթութեան ոլցանակները ջորին ստացաւ, վասն զի ինքը ջորիէն յաղթուեցաւ :

Ներոն ընթրեաց սեղան բաղմած ձաշ ըրած ժամանակը լուր տուին թէ Գաղղիա ասկստամքեցաւ :

Ներոն բարկանալով իւր սիրելի սեղանը կործանեց, և սպասները խորտակեց, այնպէս կարծեց Ներոն թէ, իւր առաջ կեցած սեղանը Գաղղիան է, ուրկէ ասկստամքութեան վրէժ կը լուծէ :

Ասոր հակառակ թրակացւոց Կոտիս թաղաւորն, երբ նուէր

ընդունեց սեղանի հազրագիւտ սպասները, և նուիրսղին թագառուրի մը վայելուչ հատուցամն ընելէն յետոյ, հրամայեց որ ամնքն ալ խորտակեն, որպէս զի զուցէ ուրիշ ժամանակ զանոնք իւր սպասարուաց ձեռքով դիպուածավ խորտակուած տեսնելով բարկանայ:

Սպասամիաց վրայ բարկացած Ներոնը սպասուց վրայ ՚ի գործ գրաւ իւր բարկութիւնը:

Կոտիւան սպասները կորանցուց, որպէս զի իւր ընտանեաց վրայ բարկանալու առիթ շունենայ:

Առաջնոյն գործը խոդժական էր, վերջնոյնը զթութիւն. առաջնոյն՝ մոլեգնութիւն էր, երկրորդին՝ յառաջատեսութիւն:

Սակայն ուղիղ տեսութեամբ երկուքն ալ անկատար են, զի փոխանակ իրենց բարկութեան կիրքերը պատժելով շափաւորելու, անօթիները պատժեցին:

Բաց ասոնցմէ աւելի մեծ յիմարութիւն է, երբ ոմանք իրենց անձին վրայ կը բարկանան:

Վիրաւորեալ արջը իւր ցաւերուն չդիմանալով՝ մացառախիտ անառաներու, փուշերու և աւելի խոցոտիչ տեղերը կը մանէ, սպեղանիք կը կարծէ այն բաները՝ որ իրեն վէրքերու վրայ աւելի զառն վէրքեր կը յաւելուն:

Այս ընթացքով իրենց բժշկելի վէրքերը անբուժելի կ'ընեն:

Այս կարգի կենդանեաց կը վերաբերի Եղելինոսն, որ սաստիկ վէրքեր ընդունած էր. երբ զգուշութեամբ և խնամօք սպեղանիւները զնելով պատասեցին ևյոյս կար առողջանալու: Նոյն միջոցին իւր զօրաց յաղթուիլ լսեց, և որովհետեւ ձեռնչաս չէր թշնամնոյն վրայ բարկանալ և վրէժ լուծել. իւր անձին վրայ բարկացած, ակռաներով և ըղունկներով իւր վիրաց կապիչները լուծեց և պատառուց ու վէրքերը ճեղքելով իւր կենաք կորսնցուց, կարծեց թե իւր կենաց կորստեամբն թշնամնոյն քինու վրէժը կրցաւ լուծել:

Բարկացողը եղանակներու մէջ ևս կը չափազնցէ, առաջ կայ որ պէտք է բարկանալ, վասն զի բարկանալու պատճառ կայ, բայց չափէն աւելի բարկանալու պատճառ չկայ:

Ըմն բնական արարող կը զործէ՝ այնչափ՝ որչափ որ կարսդէ։ Բայց անձնիշխան արարողը այսինքն նորդն երթեմն իւր կարգղութենէն առելի կ'ուզէ զործել, և պատճառն այն է որ, (թէաէտ և բնական ազդեցութիւնն սահմանաւոր է, ) իսկ ցանկութիւնն անսահման է։

Եւ այս անսահման ցանկութիւնն, շատ ժամանակ թշուառութեան սահմանի մէջ կը գլորէ զմզ։

Ասոր օրինակ կրնայ համարուիլ մեղ Ղուկիոս Սիղղայ։

Գրանիկոսը Ղուկիոսին խոսառո՞մ առւալ թէ այս ինչ ժամանակին իմ զաւառէս, քեզ այսչափ դրամ կը զրկեմ։ պայմանաժամն անցաւ և դրամն չեկաւ, հետևաբար Սիղղայ իրաւամբ բարկացաւ, թէն յանցանքը Գրանիկոսինը չէր որ դրամը շղրկեց, այլ զաւառինն էր որ շվճարեց, բայց և այնպէս Գրանիկոսն կամ իրաւանալու չէր, և եթէ խոստացաւ, ժամանակին վճարման փոյթ ընելու էր, ժանաւանդ Սիղղայի պէս մարդու մը։

Առ այս զանցառութիւն, Սիղղայ զԳրանիկոսն իրեն կանցելով այնպէս բարկացաւ, որ Գրանիկոսի սրտի երակը կարելով անկամ առաւ։

Բոնաւորն իւր բարկութեան մէջ ասկէ առելի յարմար պատռհաս չէր կրնար որոշել ինչ որ առւալ։

Եթէ բարկութիւնն արեան եռանդն է, այն արեան եռանդն շին ջուցաննելու համար ուրիշ բան պէտք չէր, քանի որ հօն պատրաստ էր Գրանիկոսի արիւնը, որ շուտով մեղմացոց և շիջոց այն գաղանական բարկութեան կիրքը։

Եթէ այսչափ դժնդակ է բարկութեան ամն մէկ մասերը քանի առաւել է նոյն ինքն բարկութիւնը. կարող ես զայն աեսանել աշխավ և դիսել մաքով Յուլիոս Կեսարի վրայ, վասն զի բարկութեան վերաբերեալ ամն հանդամանքները նորա վրայ կատարեալ կը աեսնուէր, և եթէ բարկութեան անունը փոխել պէտք լինէր Կեսարոս կոչելու էր, Կեսարոս սուր ՚ի ձեռին կ'ըսուէր թէ մօր արգանդ շվիրաւորելէն առաջ չկրցաւ ծնիլ, և հայրենիք շվիրաւորելէն առաջ չկրցաւ թագաւորել, մինչև իւր մարմինը շվիրաւո-

բեցաւ չկրցաւ մեռնիլ . այն կեսարը որ շաստուածներու դէմ կ'ուրոտար և չէր հանդուրժեր , անհանդուրժելի եղաւ շատերուն , սրով ծնառ՝ յաշխարհ եկաւ . որով մեռաւ յաշխարհէն դնաց :

## Դ.Ա.Ա ԾԶ

### ԱՆՁԳԱՅՈՒԹԻՒՆԻ

Անզգայութիւնը ուսումնականի մոլութիւնն է և վրէժիննիր բարկութիւնն ալ պակասութիւնն է , այս մոլութիւնը բնական մմրութենէն կը ծնանի և անիրաւութեան ծառայող մադղայութենէն , սա ոչ կը բարկանայ , և ոչ վրէժիննիր կը լինի . այս մոլութիւնը սնափառութեան ազդակից է և բաժանօրդ անոր ըստ պատահման , սակայն ըստ էութեան տարրորչ է . սնափառն շցանկար այն պատույն որ անոր արժանի է , անզգան ալ անարդանքներուն կը տանի . նաթերի է ցանկութեան մէջ ու թերի բարկութեան մէջ :

Այս անսառունները որոնք որ լեղի շնունին , թէև զէնք ունենան բայց վրէժինգրութեան շնունցանկար , անզգան՝ թէև ոյժ ունի , բայց բարկութեան խթան չունենալու համար իւր զէնքերը 'ի գործ դնելու փոյթ չտանիր :

Դէմք անզգային միշտ անփոփոխ են , ոչ բարկութենէ կը բորբոքի և ոչ երկիւղէն կը թալկանայ , երկուքն ալ անոր վրայ ուրիշ տպաւորութիւն մը շեն ազգեր , վասն զի անիրաւութիւնը շըմրոնած զայն . կը մոռանայ , երկիւղը չզգացած՝ նորա վնասը կ'զգայ , առաջին տմարդութեան վրէժը չլուծած՝ երկրորդն կ'ընդունի , կ'ատէ զանոնք որ զինք վրէժիննիր լինել կը յորդորեն . ինքն կը պղտիկ ցընէ իւր կըած ինասները , զինք մնասողները յանցաւոր չղատեր ,

մանաւանդ ինք նախ հաշտուիլ կ'ուզէ իրեն վեաս հասցընողին հետ՝ իմաստասիրական առակներով իւր յաղթափիլը կը պատրաստէ՛, «թշնամին յաղթելէն առելի՛ բարկութեան յաղթելը մեծ յաղթութիւն է, կ'ըսէ, նախատինք արհամարհելը նախատանաց մեծ վրէժ-ինդրութիւն է, վեհ սիրտը ամեն վեամներուն կը ներէ՛»:

Նաև օրինակ կը բերէ՛, ըսելով թէ «Մենք զԱստուած բարկացուցած ժամանակ նա միշտ պատուհաս չձգեր մեր վրայ,» վերջապէս իւր ապիկարութիւնը հեղութեան կարդ կ'ուզէ դասել. բայց այս ալ ճշմարիտ է որ ինչպէս որ երկչոտն կրնայ արիանալ և փոքրողին ալ սթափելով մեծանձն լինել, այսպէս ալ անզգան նախատանաց անակնկալ պատճառներէն սթափելով կրնայ իւր բնութիւնը փոխնել:

—  
—

## ԴԱՍ ԾԼ

### ԱՆԶԳԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐԿՈՒԹԻՒՆՆ ՄԻՋԱՑԱՄԱՆՈՒԹԻՒՆՆ

Բարկութեան միջասահմանութիւնն է հեղութիւնը, վասն զի հեղութիւնն է առ արինութիւնը, բարկութիւնը ըստ ինքեան չար չէ, այլ ընութենէն պարզեւուած կիրք մ'է որ արիութեան յեսան, երկիրդի խթան, հանճարներու հրահանդ, և դժուարին իրողութեանց յոյժ պիտանի դործիք մ'է. վասն զի ճարտարախօսն բարկանաւով պերճ կ'ատենաբանէ :

Բանաստեղծը բարկանաւով վսեմ և մոտաւորադրոյն կը դրէ՛, պատերազմողն բարկանաւով արիադրոյն կը կուռի. սակայն այս ամեն բարկութիւնները չափաւորութեան պէտք ունին, որպէս զի փոխանակ՝ օդտակարին վեասակարը չդործեն :

Հեղութիւնը ոչ սաստիկ ջերմութիւն է և ոչ սառնաստուց թմրութիւն է, այլ ցանմականին չափաւորութիւնն է ...որ ընդունած նախատանաց համար ոչ կը ջերմանայ և ոչ կը ցրտանայ, այս պատճենը մասնաւոր է, այս գգացումները կ'ունենայ, այն ժամանակը երբ պատճառը բանաւոր է, պէտքն կը պահանջէ, և թէ որուն դէմ պէտք է, և կամ որով օրինակաւ պէտք է, և այսչափ բարկութիւն պէտք է ամեն այն մարդկանց որոնք որ բանին ընդունակ են, վասն զի մտաց խիղճ հոգւոյն մէջէն կ'աղաղակէ և քաջ ունկնդրին կը սորվեցընէ, առաւել և նուազ ահմաններու միջասահման եղրն :

Նա մեղանչող շհամարուիր որ շճանաշէր թէ մեղանչեց և չար ըրաւ. այն որ չարը կը ճանաշէ նաև բարին կը ճանաշէ :

Հեղն՝ ոչ կը բարկանայ և ոչ կը զիջանի, եթէ համստ պատճառ. մը ջունենայ իւր գատաստանի առջեր. մարդկային կենցաղավարաթեան մէջ պէտք է, այն որ կը ֆնասէ և անպատճութիւն կը հասցնէ, պէտք է որ տուժէ այն ֆնասը և անպատճութիւնը, այս փոխարինութեամբ կրնայ հասարակութեան հաւասարութիւնն պահուիլ :

Երբեմն մամսառաց նախատինքը, հասարակաց դատ կը լինի. Հեղն իրեն եղած ֆնասին համար, (թմրեալի պէս) անզգայ չէ, և փոխադարձի ալ շցանկար, բայց կը շարժի, չէ թէ բարկութեան թափէն, և ոչ ալ բարկացողներու պէտ ուրիշներու ֆնասին վրայ ուրախանալէն), այլ ֆնասակարին պատիմ կը վայելէ, անոր համար կը շարժի :

Հեղն, զիջողութիւն ըրած ժամանակ, չէ թէ սրտի տկարութենէն կը զիջանի, այլ թէ մարդու մը համար տմարդի լինիլը անվայել է, մանաւանդ թէ. մաշկանացու սրտի մը անմեռ բարկութեամբ վառուիլ պատշաճ չէ :

Հեղն՝ որոց որ պիտի բարկանայ կամ զիջանի, նոցա անձին ալ կը նայի. շունը երբ դո.ան զարնուիլը կը լսէ, կը զայրանայ և կը հաշէ, երբ կ'իմանայ թէ իւր տէրն է, կ'ակսի քծնիլ, այսպէս ալ հեղը նախատինք կրած ժամանակը կ'զգայ, և նախատողին դէմ մէկէն կը զայրանայ եթէ պնծանօթ է, բայց երբ կը ճանաշէ թէ

նա իւր տէրն է , կամ իւր սիրելի բարեկամն է , կամ անմղ մէկն է , և կամ անմիտ ոմն և զռեհիկ գեղջուկ մը , այն ժամանակ այլ օրինակաւ կը վարուի , եթէ իւր տէրն է՝ շխոժուիր , բաց իւր խրառունքը կ'զգացընէ անոր , եթէ բարեկամն է՝ կը զանդափի բայց շուտով կը հաշտուի , եթէ անմղ է՝ վրէժինդիր չլինիր և փոխարինելու կամք ցոյց կու տայ , եթէ անմիտ է՝ կ'ախտակցի , եթէ անարգ մէկն է՝ շուտով կը ճերէ , վասն զի անկէ վրէժ առնելն առելի հեշտ բան չեա :

Ըստ եղանակին հեղն՝ իւր բարկութիւնն անդր քան զահմանն շթողուր որ անցնի , երկուց ծայրից միջասահմանն կ'ընարէ , և եթէ սահմանի որ մէկը կախել հարկ լինի , աւելի նուազն կ'ընարէ քան թէ առանելն :

Որովհետեւ բարկութիւնը շտառվ շափաղանցութեան կողմը կըրնայ անցնիլ , ասոր համար հեղն բարկութիւնը սահնձել կ'ուզէ , քան թէ զրզուել , և այսպէս վայելուչ է մարդու մը , այն որ նուազ բորբքմամբ կը գործէ , աւելի խոհականութեամբ կը զործէ :

Գիւռօս կը սարվեցընէր իւր ըմբշամարտ աշտկերտաց որ իրենց բարկութիւնը սահնձեն , վասն զի խուզեալ սիրալ իւր անձն պաշտպանելին աւելի ուրիշին ժառանգու կ'աշխատի , անոր համար շուտով կը յաղթուի :

Ճեղն զիհանալով թե բարկութիւնը իրեն անհաւատարիմ խորհուրդականն է , շաճապարեր . հանդարտութեամբ զայն կը բերէ վրէժինդրութեան , որպէս զի բարկութեան զիջանելու ժամանակ գտնէ :

Աթենադորոս փիլիսոփայն Օդոստոսին այս խրատը առւաւ թէ , Քարկացած ժամանակիդ ոչ բան մը ըստ և ոչ բան մը զործէ , մէնչև որ բոլոր այրուքենն ամբողջապէս ցվերջ քաղեած , բայց ինձ կը թուի թէ իւր դուստրը պատժած ժամանակ մոռցաւ իմաստասէրի խրատը :

Աքրիտաս Տաքենտացին օր մը մէկին ստահակութեանը վրայ խոժոռելով ըստ և եթէ բարկացած չլինէի , զգեղ կը պատժէի :

Հեղն՝ յամբ կը շարժի և շուտ կը զիջանի, երբ բանառը փոխարինութիւն մը հատուցուի իրեն, բայց չէ թէ որշափ որ ինք կը դատէ՝ այլ թէ որշափ որ իւր բարեկամները կը գատեն. արժան համարածէն տեղի քիչով կը բաւականանայ, իւր ֆասողին միաբ շդատեր :

Ինչպէս որ կիրճ ջրով կը վտոփ և իւղով կը մարի, այսպէս ալ բարկութիւնը հեղութեան. դիմաղարձութեամբ կը վառի և խոնարհութեամբ ու ֆասոպարտի քաղցր խօսքերով կը մարի. հեղութիւնը մծանձնեայ և, վասն զի ըմբռատին գէմ կը դնէ և խռոտովանադին յանցանացը շուտով կը ներէ :

Ինչպէս որ դարձանային որոտութերը շաա անգամ. շանթ չեն ունենար, այսպէս ալ հեղ մարդուն սպառնալիքները առանց վրէժինդրութեան կը թողու, նորա բարկութիւնը լուսծ ժամանակ ֆասուն յիշատակն ալ կը լրէ :

## ԴԱՍ ԾԲ.

### ՀԵԶՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԵՆ ՆՄԷՆԵԱԾ ՄԷԶՏԵՂ ԵՎԼԸ ՏԱՐԲԵՐԱՒԹԻՒՆԵՐ

Հեղութիւնը շորս պարագաներու կը նայի, «Նախատանաց ըմբռնումը, ըմբռնանէն դրուեալ բարկութիւնը, վրէժինդրական բաղադամք, և շտփառը թիւն բարկութեան և վրէժինդրութեան»:

Հեղութիւնը երկու ծայրերու, այսինքն՝ բարկութեան և անզգայութեան միջառահմանն է, անոր համար շատ անգամ մեր դատասանը զայն այս կամ այն ծայր մոլութեանց մէջ կը տեսնէ, քանի թէ հեղութեան առաքինական սահմանի մէջ. երբ հեղն՝ կը դայ-

բանայ, մենք զայն բարկացած կը նկատեմք, և երբ չզայրանայ, անզգայ կը դատեմք:

Ասոր հակառակ՝ եթէ բարկացողն վրէմ ինդրէ, նախանձախընդդիր կ'երեի, և եթէ անզգայն վրէմ շինդրէ՛ հեզ կ'երեի:

Ասոր համար մարդիկ այնշափ դժուարաւ կրնան որոշել մոլութիւնները առաքինութիւններէն որշափ որ անփորձ ակնառվաճառները դժուարաւ կ'որոշեն կեղծ քարերը անկեղծ գոհարներէն: Ասոր համար Սոկրատոյ ըստածին պէտք մեր սրափին վրայ պատուհան մը պէտք էր որ անկէ կարողանային մտաց իրղծ տեսնել և անոնց միտքն ու խորհուրդը կշռել որպէս զի յանդգնաբար դատաստան շընէինք մեր շտեսած և շնանաշած բաներու վրայ: Բայց այս կը շուադատութեան դատաստանը մնաց պիտի ընեմք նայելով այն երեք պարագաներուն, այսինքն՝ նախատանաց որպիսութեան, անձի պիտակին, վրէմինդրաւթեան համեմատութեան:

### Դ.Ա.Ս ՄԹ

#### ՀԵԶՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԷԶՏԵՂԼ ԵԳԱԾ ՏԵՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Հեզութիւնը՝ անձնական կեաներու ըմբռնումը կը գոյացընէ, և այն ըմբռնումն բնականաբար մեր բարկութիւնը կը գրգու անհատին վրէմինդրի ըլլալու:

Գթութիւնն ալ օրինաց կեառոյն և հասարակաց արդարութեան ըմբռնումը կը կազմէ, որ մարդոյն նախանձախնդրութիւնը կը շարժէ զկեասոյն պատժելու:

Համար այս կեառոյն արժուան է՝ որ շատ անգամ բանին կը հրանցէ, և առաջարկութիւնն ալ բանին մէկ շարժամն է, որ

փոխադարձ համախոհութեամբ շատ անգամ՝ կիրքերը կը շարժէ . և կարելի է ըսել թէ՝ բարկութիւնն ակամայ է , իսկ նախանձախնդրութիւնը կամաւոր , վասն զի մտքէն լուսաւորուած Ակամքի շարժուան է , և եթէ նախանձախնդրութիւնը վրիպակա մը մագքէն հեռանայ , անընտրողական կը համարուի :

Խնչպէս որ հեղութիւնը՝ բարկութեան և անզգայութեան միջաւահմանն է , այսպէս ևս գթութիւնը՝ սաստկապահման ջութեան և շափազանց ներողութեան միջասահմանն է , ասոր համար զթութիւնը բարձր ատենակաղներուն և իշխաններուն կը վերաբերի . և որ հեղութիւնն ալ մանառոր անձանց կը վերաբերի :

Հեղութիւնը գթութեան հետ կը խառնուի , այն ժամանակը երբ իշխափ մը անձնական ֆասը հասարակաց ֆասոյն հետ կը չորդուի :

Տիգրան զՄիհրդատ պաշտպանելով՝ Հռոմայ հասարակութեան թշնամի համարուեցաւ . և Պոմպէոսի անձը նախառելու համար , Պոմպէոսին ալ առանձին թշնամի եղաւ : Բայց երբ բաղդի ձախորդութեամբ յազդուեցաւ Պոմպէոսին , Պոմպէոս ասօր փօխանակ իւր և հասարակաց վրէմը լուծելու , հեղութեամբ իւր գէմ եղած թշնամանաց ներեց , գթութեամբ՝ հասարակաց թշնամանաց ներեց :

— ՅՅ —

## ԴԱՍ Կ

ՀԵԶՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՂՋՄԱԳՈՒԹԵԱՆ ՄԷՇ ԵՂԱՌ ՏԱՐԵՔՈՒԹԻՒՆԸ

Առամկաց քով՝ սղորմութիւնը հեղութեան նման է , բայց իմաստասէրները՝ ողորմութիւնը առաքինութեանց դասը չեն դասեր , ինձպէս որ հեղութիւնը կը դասեն :

Վասն զի հեղութիւնը բանիւ կիրքերը կը չափառորէ, իսկ ողորմութիւնը կիրքերու մէկ տեսակ տիարութիւնն է, որ խորհրդաւոր համակրութեամբ մը ուրիշն թշրւառութիւնը իրեն համարելավ կ'ողորմի և նորա չարչարանաց կարեկից լինելով կ'արտասուէ:

Ասիկա աւելի կը ներգործէ երկշուներու, ակարաց, կանանց աղջին և զառամաշներուն, որք իրենց սրտի գործներէն փղձկեալ լացողին հետ կու լան, և շարադործներու արժանաւոր պատիմ կրած ժամանակին մագամ կը զթան, կը կարեկցին և կ'ողբան։

Այս կարդի անձինք պիտի Ճշմարիս իրաց վրայ չէ որ կ'ողբան, ապա նաև կեղծ ձեւին կրպաւութեանց վրայ ալ կու լան և կ'ողբան, գիտնալով հանդերձ թէ իրենց տեսածը իրական բան մը չէ, այլ կեղծեք մ'է։

Այս համակրական ակարութիւնը՝ արիութեան և արդարութեան թշնամի է, անոր համար Ամենացւոց ծերակայաի մէջ արդիշուած եր ատենաքաններուն ողորչի հօսքերով գատաւորները ողօրմութեան և ախտակցութեան շարժելու։

Սակայն և այնպէս կարելի է որ այս՝ մոլութեան ալ վերածուի առաքինութեան ալ. օրինակի համար երբ մէկը հակառակ ուզիղ բանի կը կարեկցի և կ'ախտակցի այն տնանանց, արճնք Ճշմարտապէս ֆաստար են և իրենց վեաոյն պատիմը իրաւամի պիտի կրեն, այս ախտակցութիւնը և կարեկցութիւնը մոլութիւն է, և ոչ թէ առաքինութիւններէ և բռնութիւններէ ֆաստած է, նորա թշրւառութեան կարեկցիլը և ախտակցիլը առաքինութիւն է և ոչ մոլութիւն, զի նա արժանի չէ ախտակցութեան, իսկ սա արժանի է։

Նա ինքն կամաւ ընտրեց իւր պատիմը, սա ակամայ հանդիպեցաւ այն պատժոյն, ուրկէ կը վտինար և կը փախչէր, ըայց իւր կամքէն դուրս պարագան զինք այն որոգայթին մէջ ձգեց։

## ԴԱՍ ԿԱ.

**ԱԻԵՑԱՐԱԿԻ ՀԵԶԱՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐՁԱԿԱԿԻ ՀԵԶԱՒԹԵԱՆ  
ՏԱՐՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Բարյական հեզութիւնը բնութեան վիճակը կը կազմէ որ թոյլ-  
տուութիւն կ'ընէ, որպէս զի ուղղութեան ձանապարհաւ ֆասողի  
վրէժը պահանջուի նոյն իսկ ֆասուողի ձեռքով. որ կը լինի փո-  
խարէն հատուցման, կամ՝ զոր ինչ առնէ ոք, զնոյնն և կրեցէ. իսկ  
աւետարանական հեզութիւնը՝ շնորհաց վիճակը կը կազմէ, որոն  
մէջ խորհուրդն յաւիտենականութեան բանին նայելով, (այսինքն  
Յիսուսի հաւատացելոց, իրեն նմանիլ պէտք է), վրէժինդրու-  
թիւնը կ'արգիլէ. և զայն Աստուածային աեւշութեան կը յանձնէ  
այն սկզբան համաձայն թէ «Իմ է վրէժինդրութիւնը և ես հա-  
տոցից»:

Փիխովայական հեզութիւնը՝ իւր բարկութիւնը բարոյական ա-  
ռիթներով կը չափաւորէ, իսկ աւետարանական հեզութիւնը, իւր  
բարկութիւնը գերբնակտն առիթներով կը չափաւորէ:

Մէկին վախճանն է, ժամանակաւոր երանութիւնը, միւսին վախ-  
ճանն է յաւիտենական երանութիւնը. ինչպէս որ ֆաս մը անգա-  
տապարտ ծացցած ժամանակը աւետարանը վրէժինդիր չլինիր անի-  
րաւութեան թէ ինչո՞ւ շդատապարտեցիր, այնպէս ալ երբ արդա-  
րութիւնը յանցաւորը կը պատժէ այս երկրի վրայ, անոր ալ չար-  
զիւր, մինակ թէ կը կամի որ պատիճը բորբոքած բարկութենէ  
մը առաջ եկած չլինի, հապա արդար նախանձախնդրութենէ մը  
առաջ եկած լինի:

Կը թոյլատրէ աւետարան այս պատիճ տալու, չէ թէ վրէժինդրու-  
թիւնը կը սիրէ, այլ յանցաւորի ուղղութիւնը կը սիրէ, չէ թէ

յանցաւորի ֆասուիլը կը սիրէ , ապա հասարակաց օգուաշ կը սիրէ ։ մինակի թէ դատաւորն արդար լինելու է , վասն զի աւետարանի հեղինակն արդար է , և արդարութիւն կը կամի . թէ բարոյական հեղութիւնը և թէ աւետարանական հեղութիւնը . երկուքն ես ուղղութեան ձանապարհէն գուրս չեն :

Սակայն երբ բարկա թիւնը սասարիկ կը շարժի , բարոյական հեղութիւնը բնութեան բերմամբ շատ գժուարաւ կրնայ բարկութեան առաջն առնել , իսկ աւետարանական հեղութիւնը զերբնական շնորհագ շատ շուտ կ'առնու ղայդ յաղթութիւնը :

### ԴԱՍ ԿԲ

**ՖԼՈՅՔՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐԵՆԾ**

**ԵՐԿՈՒ ԾԱՅՐԵՐԸ**

Կենդանիներէն ամանք ընկեր շունին առանձին են , ինչպէս են յափշտակող թռչունները . ոմանք ընկերական և ընտանեկան են , ինչպէս մեղսուները . առաջինները անհատապէս մինակ իրենց համար կը հողան և . մինակ իրենք զիրենք կը սիրեն իսկ . երկորդները հաւարակութեան մէջ ապրելով իրենք զիրենք և իրենց ախտակը կը սիրեն :

Մարդիկ , ամեն շնչաւորներէն աւելի ընկերական են , վասն զի սոքա իրարմէ կ'ուսանին , իրարու պէտք ունին , անօր համար հարի է որ ընկերական կեանք սիրեն , այսպէս ալ իրենց տեսակի շարունակութեան պահպանութիւնը :

Վերին տեսչութիւնը մարգկանց խօսք , գիտութիւն և արհետ

տուաւ, վասն զի մօտէն, բերան առ բերան խօսին, իսկ իրենց ձայն չհասած տեղն ալ արհեստական պրով հասկը ցընեն և հասկընան իրարու միոք և պէտք :

Ուրեմն քաղաքական ընկերութեան կենցաղավարութիւնը սիրել պէտք է, ամեն անհաս ընկերութեան հաւաքական մրութեան մէկ անդամն է, իսկ անմնք որ ընկերութենէն բաժնուած առանձին կը մնան, ըստ Արիստոտէլի կամ ասուուած են, և կամ զաղան, որովհետեւ ամենազօր Աստուածն միայնակ է ինքն յինքենէ և յինքեան, յափշտակող զաղաններն ալ ընկերութիւնը չեն սիրեր :

Երեք բան կայ, որ քաղաքական կենցաղավարութիւնը ուրախական կ'ընեն, որոց երկուքը ստոյգ և ձշմարիտ են, իսկ մին խաղի և կատակի կերպարանն ունի :

Ստոյգներու մէջ ուրիշներու ըստածներուն և իմաստներուն դովեստ, հաւանութիւն տուած ժամանակը բերկրութիւն մը կու տամբ անոնց. և երբ մենք մեր իմացածները ուրիշն կը հաղորդեմք, առնոնցմէ բերկրութիւն կ'ըստանամք :

Իսկ խաղ և կատակ ծաղու եղանակաւ տալու և առնելու ժամանակ երկուստէք փոխադարձաբար խնդամութիւն և ծիծաղական հաճոյքներ կ'զդամք և կը յայտնեմք. այս ալ պէտք է, վասն զի բնաւ չինդալով մարդիկ կը ատաղտկանան :

Արիստոտէլ՝ այս երեք պարագաներէն քաղաքական կենցաղավառութեան մէջ երեք ազնու ական առաքինութիւն կ'որոշէ :

Որոյ առաջինն է, ուրիշին իմաստը գովել, այս քաղցրախօսութիւն կամ հաճոյականութիւն, կամ սիրողութիւն կը կոչուի : Երկրորդ՝ մեր իմաստը ուրիշին հաղորդել, այս ալ ձշմարտախօսութիւն կը կոչուի : Երրորդ՝ զուարմարար խօսքերով, խաղով, կատակով դրօսցընել, այս ալ զուարձախօսութիւն կը կոչուի :

Ահա այս երեք առաջինութեանց վրայ պիտի խօսիմք առ անձին առանձին :

— 35 —

## ԴԱՍ ԿԳ.

**ՀԱՂՑՔՆԻՉԱՌԻԹԻՒՆ ԿԵՐ ՀԱՇԽԱՎԱՆՈՒԹԻՒՆ**

Քաղցրախօսութիւնը և հաճոյականութիւնը . ուրիշի մը հաճոյանալու և հակոռակելու մէջ տեղ գտնուած առաքինութիւնն է :

Մէկը ուրիշին հաճոյանալու ժամանակը երբ սահմանը կ'անցրնէ նա մարդահաճոյ կը համարուի , այն որ հակոռակած ժամանակը գարձեալ սահմանն կ'անցընէ , նա ալ հակոռակախօս կը համրուի :

Այն որ հաճոյանալու և հակոռակելու միջասահմանն կը պահէ՝ այն քաղցրախօս կը համարուի . սակայն այս առաքինութիւնը (հեղութեանպէս) իւր անունէն լաւ չճանաչուիր , վասն զի նա երկու այլ և այլ պաշտօն ունի , այսինքն հաճոյանալու և հակոռակելու , անոր համար հաճոյական անունը համացափ անուն մը չէ իրեն համար , որովհետեւ իւր սահմանին մէկ մասը միայն կը տեսնուի :

Եւ այնչափ շփոթ է իւր երկու ծայրերու հետ որ հաճոյացած ժամանակը մարդահաճոյ կ'երեայ , հակոռակած ժամանակը , իրեկ կոռուզ կ'երեայ , ասոր հակոռակ՝ երբեմն մարդահաճոյն , հաճոյական կ'երեաի , հակոռակասերն՝ հակոռակող . ասոնք այնչափ մօտ են իրարու և շփոթ որ իրենց իսկ սահմանէն անզամ կարելի չէ ճանաչել թէ այս առաքինութիւնը հաճոյական է , թէ անհաճոյական , կը խայթէ՞ թէ կը փայփայէ , կը խածնէ՞ թէ կը համբորէ :

Ուրեմն նախ նորա երկու ծայրերը ճանաչել պէտք է և ասպա նորա միջասահմանը՝ որ շատ դժուար է և շփոթ :

## ԴԱՄ ԿԴ

## ՄԱՐԴԱՀԱՅԱԹԻՒՆ

Մեր քաղաքական կենցաղավարութեան մէջ, երբ Ռուբիշներու գործերուն և իմաստներուն հաճութիւն կռ. տամք և զանանք կը սիրեմք : այս հաճոյականութեան և սիրոյն չափազանցութիւնը մարդահաճութեան մոլութիւնն է :

Այս մոլութեան վրայ երեք բան կը մտածուի . նախ դիտնալ պէտք է թէ մարդահաճութիւնը ընդունողները որպնք են , երկրորդ թէ մարդահաճութիւնը ընողը Բնչ վախճանի համար կ'ընէ , երրորդ թէ մարդահաճութիւնը ըրած ժամանակը Բնչ եղանակաւ կը վարուի :

Ըստ առաջնոյն , յայտնի է թէ ամեն մարդ գովութիւնը ընդունելու բաղձանք մը ունի . և այս իդմը ըստ ինքեան մոլեկան չէ , մանաւանդ թէ մեծանանութեան գովելի մէկ յատկութիւնն է :

Բնութիւնը առաջինութեան խթան ըլլալու համար գովութիւնը ստանալու սէրը տուաւ մարդկանց . մոլութիւնը սանձաւարելու համար ալ , պարսաւանց երկիւղը տուաւ . այն որ գովեստ շինքեր , նա պարսաւանքէն ալ չվախնար , այն որ պարսաւէն չվախնար , նա ամօթ ալ չզգար , և այն որ ամօթ չզգար , արամադիր է շարեք գործելու :

Թէ Փիստոկղէս երբ երգեցողներու խոմբի մէջ նստած կը լսէր , հարցուցին իրեն թէ՝ Ո՞ր երգիւ լաւ երգեց . պատասխանեց թէ՝ Այն երգիւը որ իմ գովեստիս երգը երգեց . Թէ Փիստոկղէս իրաւի գովութեան արժանի էր , բայց կան այնպիսի անձինք՝ որք առանց արժանաւորութեան՝ գովութիւնը կը սիրեն , և ասոնք են մարդահաճութեան առարկաները :

Գրախոտահաւն և զեսնառիւծն երկուքն ևս օդով կը մնանին, բայց մին՝ զետնի խորշերու մէջ ապականեալ օդով, միւսն՝ օդի մէջ բարձրացած մաքուր և յատակ ղեփիւներով. այսպէս ալ առաքնին և փառամոլը երկուքն ալ գովեստ կը սիրեն, բայց մէկն կը գովաբանուի առ ազնութեան ճշմարիտ զովեսաներով, և միւսն՝ սուտ և ապականեալ մարդահաճութեան գովեստներով:

Արժանաւորութեան աստիճանները այնչափ մօտ են իրարու, որ շատ անդամ ստորինը միջակայնոյն հետ կը խառնուի, միջակայինն ալ վերնագոյնին հետ, ասոր համար, գուրսի շափազանց կարծիքները մեր շափազանցութեան հետ խառնուելով՝ կարծել կու տան մեզ թէ մեր դանուած դիրքէն աւելի բարձր դիրքի մը կը վերաբերինք, ինչպէս որ Հռոմէական կայսերները շողոքորթ մարդահաճոյ ծերակոյաէն աստուածական պատիւ ընդունած ժամանակին, առաջ կ'ամազէին, յետոյ կը կասկածէին և ՚ի վերջոյ կը հաւատային, վասն զի փառամոլութիւնը հետզհետէ աստիճանաբար բարձրանալով կը հատացըներ իրենց թէ քանի որ այսչափ մարդիկ կը պնդէն. Կարելի է որ ստոյդ լինի իրենց ըլլալը:

Եյս տեսակ մարդահաճութիւնները փոխանակ յարգանքներ աւելցընելու, աւելի ճշմարիտ գովեստից պատշաճութիւնն ալ կը կորսնցընեն, զի ճշմարիտն՝ անթիւ սուտերու մէջ թագուն կը պահուի:

Ուրեմն լաւ է որ մէկը իւր իսկական արժանիքով ներկայանայ, և աւելորդները ու շափազանյները իրրե պատուող շողոքորթութեան մերդէ:

Ինչպէս որ Աղեքսանդրէն ըրաւ, երբ Արիստոբողոս՝ Աղեքսանդրի քաջարութութիւնները ներսոված էր, զայն շողոքորթելու համար շափազանցապէս պատմելով, որպէս թէ Աղեքսանդր պատերազմի մը մնջ նետով փիղ մը մես ցույցած լինի, և որովհետև Աղեքսանդր դիմուր թիւմէր թէ ինչպէս որ Ճանճը պողպատը չկրնար ծակել, այսպէս ալ որեւէ նետ այնչափ լորութիւն չունի որ փիղի կարծը կաշին ծակի. , ուստի վերահասու լինելով թէ այն մէկ մարդահաճութեան սխալը կը նայ իւր ամեն քաջազուծութիւնները կասկա-

ծելի համարել տաղ լսողներուն, ուստի այն ներբողը Հիգաստ զետը նետելէն զինի նաև հեղինակը ևս կ'ուզէր նոյն պատճով պատմել, իրեւ իւր անուան նախատադիր քան թէ ներբողոց :

Երանի թէ Աղեքսանդր՝ Զամոնիոս քուրմն ալ նոյն գետը նետէր, երբ իրեն մարդահաճութիւն ըրաւ թէ՝ «Դու Արամազդայ որդին ես» և ինքն ընդունեց այն առասպելեալ աղեղ անունը, և անոր առթիւ իւր ամենասիրելի բարեկամն կորսնցուց :

Ինչպէս որ հակառակարանի Ճշմարտութիւնը՝ ատելութիւն կը ծնի, այսպէս ալ զովարանի ստութիւնը սէր կը ծնի՝ ինչպէս որ մէկն ըսած է մարդահաճոյին թէ «Գիտեմ որ ըրածդ մարդահաճութիւն է», բայց և այնպէս սիրով կ'ընդունիմ զի ինձ հաճոյ է»:

Մարդահաճոյն զովարանէն որոշելը շատ գժուարին է, ասկէ առելի գժուարին է որոշել թէ՝ մարդահաճութիւնը սիրողն ով է և զայն մերժողն ով է. վասն զի կան այնպիսի մարդիկ որք հաւատացրնել կ'ուզեն թէ իրենք մարդահաճութիւնը չեն ընդունիր, բայց իրենց զործոց մէջ յայտնի ցոյց կու տան որ կ'ընդունին, մանաւանդ կը բարկանան իսկ երբ մարդահաճութիւն չընես իրենց :

Աքայար հարցուց Միքիայ մարդարէին թէ առանց զիս շողոքորթելու Ճշմարիտն ըսէ, եթէ պատերազմի ելլեմ կը յաղթէմ թէ կը յաղթուիմ. պատասխանեց թէ պիտի սպաննուխ եթէ պատերազմի ելլես: Թագաւորը զմարդարէն բանտ դրաւ թէ ինչո՞ւ իրեն նպաստաւոր չխօսեցաւ, մինչ մէկ կողմէն առանց շողոքորթութեան Ճշմարիտն ըսելու կ'ստիպէր, միւս կողմէն ալ շշողոքորթելուն համար բանաը գրաւ:

Բայց մարդարէի մարդարէութիւնը կատարուեցաւ, վասն զի Առքայարն սպաննուեցաւ:

— 8 —

## ԴԱՍ ԿԵ

## ՄԱՐԴԱՀԱՅԹԻ ՎԵԽԱՆԵՐ

Գովասանք և մարդահամութիւն, որոց մին՝ մոլութիւն և պատահականութիւն է, նմանութեամբ շատ մօտ են իրարու, բայց վախճանաւ տարրեր են։ Գովասանն կը գովէ պատսելու համար, իսկ շղոքորթն կը մարդահամէ մփայն իւր օգտի համար, առոր համար մարդահամները կեղա և վատ անունը կ'ստանան, սոցա համար կոստանդիանոսն ըստ «Մարդահամները պալատական մուկեր են։» Անքանչափ զասնք քսակի ցեց կ'անուանէ. Դիոզինէս, նոքա արգունի շաններ են կ'ըսէ, ուրիշ մը՝ իթովոլական կապիկ, այլք կ'ըսնեն, նոքա սեղաններու պատառաբոյծներ, պարգև որսացաղներ և սովեալ աղուէններ են։

Աղուէնն ազուաւու բերան միսը անտած ժամանակը, սկսեց զայն շղոքորթել թէ քու ձայնդ սոխակի ձայնէն աւելի գեղեցիկ և զուարճացոցիշ է, խեղճ ազուան հաւատաց և երգել ուզած ժամանակը միսը բերանէն վար ընկա, խորամանկ աղուէնն վրայ համնելով. մին յափշտակեց, խոյս առաւ, որովհեան աղուէսը միիրահարն էր, չէ ազուաւու ձայնին։ Մարդահամները ես այս պաշտօն կը կատարեն։

Այս մոլութիւնը առաւել կը թաղաւորէ ծոյլ և աշխատաթիւն չսիրող մարդկանց վրայ, որք գեղեցիկ աշխատաթիւնէն փախչելով կ'սկսին սուտ գովարանութեան արհեստն ուսմիլ և անարգաբար ալ ծախել։ Ալամառականութիւն մը՝ որ թէ ծախողը և թէ գնողը հաւատարապէս նախատելի և անտանարկ կ'ընէ առողջ մաքերու դաւաստանի առջե։

Ասոնք ամեն գձձութեան կը զիջանին, ամեն նախատանաց սիրով

կը աանին , անարգանբները իրենց փառք կը համարին , միայն թէ իրենց շահ ձեռք բերելու յաջողին .



## ԴԱՍ ԿԶ

### ԽՆՉ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԸ ՎԱՐՁԻ ՄԱՐԴԱՀԱՅՆ

**Մարդահաճոյի առաջին պէտքական պայմանն է ուրիշներուն բնաւորութիւնը ձանաչել , որպէս զի իւրաքանչիւր բնաւորութեան համեմատ իւր ստորին արհեստն 'ի գործ դնէ , թէ գործով և թէ բանիւ :**

Քաղցրն կ'ստիպէ զմարդահաճոյն քաջ մտավարժութիւն ունենալ , որպէս զի կարողանայ իւր կապկական կեղծիքը , բարեկամական ստոյգ զոյնով ներկայացընել : Այնչափ կը համակերպի մարդահաճոյն որ կարծես թէ մէկ հոգի միայն է որ նոյն երկու մարմոյն մէջ միասէն կը ներգործէ :

Մարդահաճոյն թէպէտ զքեզ չսիրեր , բայց ստուերի պէտ քեզմէ շբաժնուիր , որ երթաս ետևէդ կու զայ . այն ամեն բանը որ գոյ կ'ընես և կը սիրես , նա ալ կ'ընէ և կը սիրէ , թէկ իւր կամաց հակառակ լինի 'ի ներքուսա :

Պղասան կորաքամակ լինելուն համար իւր աշակերտները կոր կ'ընթանային , կ'ըսուի թէ Փակոնի Փիլիպպոսի մարդահաճոյն իւր մէկ աշք կամովին բրեց . Փիլիպպոսին նմանելու համար : Կրպատմափի թէ իշխանին մէկը երբ մարդահաճներով իւր բոլորակը շարուած սեղան նստած էր՝ ըսաւ , կերակուրներու մէջ ամենէն ֆասակարը ձուկն է , շողոքորթները ևս միարերան ստորասեղին թէ՝ այս , ձուկը ֆասակար կերակուր է : Ժամանակէ մը յետոյ երբ

իշխանը ուզեց գործնականապէս հաստատել նոցա շողոքորթու թիւնը կամ մարդահաճութիւնը և ըստ : Ստոյդ խօսելով ձկան կերակուրը ամենէն օգտակար կերակուրն է . դարձեալ մարդահաճները կրկնեցին , այս , օգտակար և շատ օգտակար է ձկան կերակուրները . առ այս իշխանը չանդուրժելով նոցա նմանողութիւնը յիշած ժամանակը պատափանեցին թէ մնաք «Կերակուրներուս օգտակար կտմ ֆասակար լինելուն դատաւոր չեմք , հապա քարեկամ ենք , ուստի նորա ֆասակարը մեզ ալ ֆասակար է , ինչպէս որ օգտակարն ալ մեզ օգտակար է :

Վերջապէս երբ լսա , քեզ հետ կու լայ մարդահաճը , խնդաս՝ կը խնդայ , ծիծաղիս՝ նա ալ կը ծիծաղի , այս ըսեմ՝ այս կ'ըսէ , քու գովածդ նա ալ կը գովէ և անարգածդ կ'անարգէ , արտմութեանդ ժամանակ քեզ հետ կը տրտմի և չուզեր զքեզ միիթարել , որպէս զի քու գէմքդ հակառակող չլինի , այլ տրտմութեանդ ժամանակը ցոյց կու տայ թէ ինքը ևս քու ցաւերուդ մէջ անմիթար է և ցաւակից քեզ . բայց կեղծ է :

Եթէ յանդուն եւ՝ արի կ'անուանէ զքեղ , եթէ երկուտ եւ՝ խոհական կ'անուանէ , եթէ փառասէր՝ մծանձն կը կոչէ զքեղ , ասանցմէ էր եւդէմնիկ , որ երբ ամսկերու որոտալը լսեց , Աղեքասանդրին գառնալով ըստ , «Դու էիր որոտացողը , թէ Ըրամազգ գայ որդին» :

Մարդահաճները ամեն հնարք 'ի գործ կը դնեն , որպէս զի իրենց կեղծ սէրը , անկեղծ սիրոյ կերպարան առնու և մարդահաճութիւն ընդունողը զզայ իրենց կեղծիք և շշառագնի , կամ իմանայ և չընդունի , փոխանակ վարձատրելոյ պատճապարտէ :

Մարդահաճները շատ անգամ իրենց եղած հրամանները մերժելով ևս աւելի աննշմարելի կ'ընեն իրենց կեղծ մարդահաճութիւնը , ինչպէս որ աղախնոյն մէկն ըրաւ իւր տիկնոջը երր ջուր ուզեց ձեռք լուանալու , պատասխանեց աղախնոյն թէ «Քու ձեռքդ ջուրէն մաքրուելու պէտք չունի , ջուրը քու ձեռքէդ մաքրուելու պէտք ունի :

Այս կարգէն էր Սինկղիտոսի անդամներէն մէկը , որ ծերակուտի

Ժողովին մէջ զԾիպերոսն մարդահաճելու համար ըստ , ժամանակն եղաւ որ համարձակ պիտի խօսիմ հասարակաց օղոքի համար առանց շոլոբորթութեան , յաւելցոյց թէ «Ռվ կայսր , զու մնծ անիրաւութիւնը կը գործես , և այն անիրաւութիւնը պահարակելի կը դատուի ծերակոյտի ժողովէս , բայց ոչ ոք չհամարձակիր քեզ յայտնելու : » Առ այս ծերակոյտ և կայսր վարանման մէջ մնացին թէ ի՞նչ է արդեօք , զի գուցէ նոր և անլսնլի գաւադրութիւն մը կայ , շարունակեց մարդահաճոյն թէ «Ծիպերէ , դու մեզ վայելել կու տաս , դու չես վայելեր , դու անքուն կը մնաս» որպէս զի մնկը հանգիստ քննանաւիք , դու շարունակ կ'աշխատիս մնք հանգիստ կը վայելեմք , ատիկա յայտնի անիրաւութիւն է , մանաւանդ մնծ վաս է թէ հասարակագիտութեան և թէ քու ինքնակալութեանդ , վասն զի մեր ամենուս կեանքքը քու կեանքէ դ կախումն ունի , և մենք չենք կրնար կեանք ունենալ երբ գու կեանքք արհամարհես» . այս մարդահաճութիւնը Ծիպերոսի կործանման առիթ եղաւ , վասն զի հաւտաց և անոնց փափկութիւն տուաւ , և զեղխութիւններու մէջ թաւղուեցաւ :

Այս մարդահաճը իւր օգտի նպատակին հասաւ , բայց Ծիպերոս և Հռոմ յետ այնորիկ իրարու ձեռք խաղալիկ դարձան , զի Ծիպերոս Հռոմայ իշխել սկսեց , Հռոմն ալ Ծիպերոսին :

### ԴԱՍ ԿԵ

#### ԿԱՅԻՑՑԵՐ ԿԱՐ ՀԱԿԱՌԵԿԱՍԻՔ

Մարդահաճութիւնն առաւելազանցութիւնն է , իսկ հակառակասիրութիւնն նորա հակառակն է , պահասութիւնը քաղաքական  
24

կենցաղավարութեան մէջ մարդահաճութիւն զովելով որքան հաշոյք կը բերէ , հակառակասիրութիւնն ալ այնչափ կը բառնայ հակառակելով :

Բնականարար ամեն մարդ ինքզինք և իւր ունեցածը ու կարծիքները կը պիրէ , բայց երբ հակառակասէրը հեգնութեամբ կը խծրծէ , այն ատեն հոգւով չափ կը վշանայ և կը գառնանայ :

Մարդահաճութիւնը՝ ըստ երևութիւն՝ հակառակասիրութեան հակառակն է , վասն զի մարդահաճն զուարթագոյն , քաղցրաբան , շնորհաշուք , շողոմող և քծնող է , իսկ կռուասէրն , ընդհակառակը , տիտոր , սևամաղձոտ , սոպոր , զիսախորի , անպահոյք , յանդուզն և արհամարհոտ է , միոյն պաշտօնն է հաճոյանալ , միւսոյնը անհաճոյ լինիլ : Ասոնց դործերը և ձայնի հնչումները այլ և այլ են , ինչպէս որ քծնող և խածանող շուներուն :

Մարդահաճն ցանկականէն կը շարժի , կռուասէրն՝ ցասմնականէն , ցանկականը և ցասմնականը , երկուքն ևս իրարու հակառակ կիրքեր են :

Մարդահաճոյի լեզուի վրայ մեզր կը տեսնուի , իսկ հակառակասէրն ատամներու մշաեղէն թոյն դուրս կու զայ :

Մարդահաճը եթէ խոցէ քաղցրութեամբ կը վիրաւորէ , իսկ հակառակասէրը դառնապէս կը խածնէ , կը վիրաւորէ և կը զիշատէ . ասոր համար երեւլի անուններ առուած են անոնց «Տաղտկալի» շուն , զզուելի ժահահոտութիւն , կենակ ցութեան ժանտախտն :

Ամեն մարդ կատէ զասնք , և ասոնցմէ կը խորշի , ասոնցմէ մէկ հատ մը , բաւական է ուրախութեան ամբաղջ ժողով մը ախրեցընել :

Նուադարանի մէկ թելի անհամաձայնութիւնը , ամբողջ թելերու կանոնաւոր ձայնից խանգարման համար բաւական է , երբ Դիսդիւնէսին հարցուցին թէ «Ո՞ր դաշնան աւելի կը խածատէ» , պատասխանեց . «Ընտանիներու մէջ՝ մարդահաճոյն , իսկ վայրենիներու մէջ՝ շարախօսն» :



## ԴԱՍ ՀԿԸ

## ՀԱԿԱՑՈՎԱԿԱԾԻՒԹԻ ԱԺԱՐԿԱՆԵՐԸ

Մարդկային խօսակցութիւնները՝ առաջարկութենէ և պատասխանատուութենէ կը կազմուի, որոց ոմանք աեսական և ոմանք գործնական են. ոմանք ընդհանուր և ոմանք մասնաւոր աեսական է, օրինակի համար, լուսինն երկրէն փոքր է. գործնական՝ իշխանը պէտք է որ աւելի դթած լինի. ընդհանուր զեղեցկութիւնը՝ հոգւոյն զարդն է. մասնաւոր՝ Ագիլիկով ամենէն կարիճ մարդն էր. Ամեն առաջարկութիւններ թէ սուտ լինին և թէ Ճշմարիտ մեր քաղաքական կենցաղավարութեան մէջ կրնան աեղի ունենալ և հակառակասէրներին առարկայ լինիլ, բայց նորա պաշտօնը միշտ հակառակիլն է, թէ սուտ լինի ըսածդ, թէ Ճշմարիտ, եթէ գովեսնա կը պարսաւէ, եթէ պարսաւես՝ նա կը գովէ, եթէ ստորասես նա կը բացասէ, եթէ բացասես՝ նա կ'ստորասէ. եթէ դռ խրատես մէկի մը այս ինչ գործը մի ըներ՝ նա կը խրատէ թէ ըրէ. եթէ ըսես ըրէ՝ նա կ'ըսէ մի ըներ. երբ դու ըսես հայրենեաց համար մեռնիլ պէտք է, նա անմիջապէս կը պատասխանէ թէ հայրենեաց համար ապրելը աւելի պէտք է. ևայլն :

2է թէ մինակ խօսքին՝ այլ և գործերուն մէջ ալ կը հակառակի, ըրածդ կ'արհամարհէ, շարժմունքներուդ վրայ կը ինդայ, եթէ հասարակ զգեստ հագնիս՝ զքեզ հնասէր կ'անուանէ, եթէ նոր և լաւ հագնիս՝ նորասէր կապիկ կ'անուանէ զքեզ. եթէ առատաձեռն ես՝ շուայլ և անսուակ կ'ըսէ, եթէ ինայողութեամբ ապրիս, ժատ և ազահ կ'անուանէ զքեզ :

Աւերջապէս նա ուրախ է և միանդամայն տխուր, յամը և արագ, երկշու և յանդուզն, շուայլ և ազահ, ինչպէս որ մարդահաճոյն բոլըրովիլն նմանիլ կ'ուզէ. հակառակախօսն ալ իսպառ հակառակիլ կ'ուզէ :

## ԴԱՍ ԿԹ

## ՀԱԿԱՌԱԿԱԾԻՐԻ ՆԳԱՏԱԿԸ

Հակառակասէրն փաստաբաներու պէս վարձ մը ստանալու համար շհակառակիր . և ոչ ալ ճշմարտութիւն մը յայտնելու մոտք հպարտին պէս համբաւներ ստանալու համար ալ շհակառակիր , հապալ միայն իւր ընդարդոյս հակառակութեան ողիէն շարժեալ կը հակառակի :

Եմբարտաւանութիւնն սոպոր ատելութեան հետ կապ ունի , հակառակասիրութիւնը իւր բաղձանքն է որ իւր կարծիքը միշտ ուրիշ ներու կարծեաց յաղթանակէ :

Զօյիլը , օրինակ է հակառակութեան և զիտունը կատաղի շուն անուանեցին զայն , երբ հարցուցին իրեն թէ ինչու կը հակառակիս Հոմերոսի և Պղատոնի այն սքանչելի դրուածոց պէմ , պատասխանեց թէ՝ Նրբ գրուածոց հեղինակաց շար չեմ կոնար հասցրնել գոնէ նոցա դրածները խծրծեմ :

## ԴԱՍ Հ

## Ի՞նչ օրինակաւ կը ԳԱՐԺԵ ՀԱԿԱՌԱԿԱԾԻՐԻՆ

Հակառակասէրն արեու ճշմարիտ լոյսն անդամ կը ճգնի ազօտ քոյց տալ իւր ստասպատիր հակառակասէրու թեամբ . ըստ ուղիղ բա-

նի, ամեն մարդուն մասաց առարկան ճշմարտութիւնն է, բայց հակառակաէրն կուսակից կը լինի ստութեան :

Ինչու որ ձեւնածուները (աչքակապ) ձեռքի արագութեամբ մեր աշխին տեսութիւնը կը խարեն՝ այսպէս ալ հակառակախօսները իմաստակ, ստապատիր և ճարպիկ պատճառաբանութեամբ անզգոյշ միտքերը կրնան յեղափոխել :

Տեսնդը՝ մարդուս մարմնոյն ամենէ աւելի թշուառացուցիչն է, այսպէս ալ խելացնորութիւնը հոգուոյն մահացոցիչ թոյն, սակայն և այնպէս Փասրունիսոս զտենզը, և Խրասմոս զինելացնորութիւնը ստապատիր տրամաբանութեամբ մը գովեցին. և երկուքն ալ իրենց ներբողածները վերջէն իրու վարձ ընունեցին իրենց իսկ անձին վրայ :

Նորա նպատակն է զքեզ զայրացընել, հոգ չըներ թէ ըսածները սուտ են և իրեն նախասինք կը բերեն. բանաւորութիւնը մեզ կ'ուսուցանէ շարերու մէջէն բարին ընտրել, իսկ հակառակախօսները բարիներու մէջէն շարերը կ'ընարեն. մենք զէշ զիրքերը կը կարդամք. անոնցմէ աղէկ և իմաստալի կտորները կ'ընտրեմք միտք պահելու. իսկ հակառակասիրները աղէկ զիրքերը կը կարդան, զէշ իմաստները և իմաստակ կտորները կ'ընտրեն իրենց միտք պահելու որպէս զի ճշմարտութեան դէմ հակառակած ժամանակ՝ պատրաստի փաստ ունենան ձեռքերնին, և հակառակութեան ժամանակ՝ շարանակ իրենց ձեւը փոփոխեն, խօսքն դորձի ձեռնարկեն, բանակուէն սրտաշարժութեան անցնին. եթէ մէկին մէջ չյաջողին, կը ձեռնարկեն միւսով յաղթել :

Վասնց աւելի թունալի և լուսաւոր վեասող ձեռնարկութիւնն այն է որ պարսաւանգք չեն սկսիր, հապա զովութեամբ կ'սկսին, կը դովեն մի քանի մարդոց յատկութիւնները կամ գործոյն մի քանի պարագաները, յանկարծակի (բայց) վրայ բերելով, այս անիծեալ բայցովամեն բան վերի վայր կը տապալեն, ասավ առաջին զովածնին բոլորը կ'աղարատեն. երկնայինն՝ երկրային, արքայութիւնն՝ գծուխային, բարինչարի մէջ կը դնեն, ասոնք կը նմանին այն մեղուներուն որք մեղքն իրենց բերանի մէջ և թոյնը իրենց պոշի ծայր կը սահմեն :

Երբեմն դու մէ կը զոված ժամանակ նա գործնական հեղնութեամբ մը կը նախատէ . կամ թէ դու այս ինչ մարդը լառ է ըսած ժամանակդ նա ուրիշ մը առաջ կը բեցէ , ամենալաւն այս է ըսելով :

Ասոնք ուրիշներուն տրամութեան վրայ կ'ուրախանան , ուրախութեան վրայ կը արտմին , կոչոնքներու մէջ զժառութեան ինձոր մը կը գլորեն սեղանի վրայ բազմականաց միաբանութիւնը խոռվիլու համար :

### Դ.Ս.Ս ՀԱ.

## ԵՐԿՐԻ ԵԱՅՑՔԵՐՈՒ ՄԷՋՏԵՎԸ ԵՎԼԵՇ ՄԻՉԱՍԱՀՄԱՆԻԹԻՒՆԸ

Երկու մոլեկան ծայրերու տղեղութենէն առաքինութեան միջա-սահման՝ քաղցրախօսութեան գեղեցկութիւնը յայտնապէս կը աեսնափի :

Քաղցրախօսութիւնը երկու ներհակբարեխառնեալ գործողութիւններ կը պարունակէ իւր մէջ , այն է հաճյականութիւնը և հա-կառակութիւնը . հաճյականութիւնը շմարդահաճիք , հակառակու-թիւնն ալ չդառնացըներ , ասոր համար մեր քաղաքական կինցա-ղավարութեան մէջ բարեկամութիւնը քանդելէն աւելի կը պահեն և կը հաստատեն . կը հաճյանայ որչափ որ պէտք է , նաև կը հակառակի երբ որ պէտք է , սակայն երկուքի մէջն ալ իւր չառ-փաւոր դիրքն ունի :

Քաղցրախօսն ոչ մարդահաճոյի պէս իւր օգուտէն , և ոչ հա-կառակասէրի պէս իւր ազեղընաւորութենէն կը շարժի , հապահ հա-մեստ և պատշաճ առարկաներէն կը շարժի , որ արդարութեան կա-րտղական մասն է , և կը գործէ այնպէս ինչպէս որ կը պահանջէ իւր քաղցրախօս առաքինութիւնը :

Քաղցրախօսը ամենուն հաճելի է, թէև այլ և այլօրինակաւ, ինչպէս քարեկամին հետ մտերիմ է, իրմէ փոքր աստվածնի մարդկանց հետ քաղցր է, իրմէ մեծերուն հլու է, ուղղութեան առաջադրութեամբ ծերերուն հետ ծանրակեաց է, երիտասարդաց հետ զուարթ է, տղայոց հետ զգուող է:

Աղեսեղայոս աղքայն ամօթ չեր համարեր իւր տղայոց հետ խաղալ, երբ իրեն զգացուցին թէ թաղաւորի մը շվայելէր տղայոց հետ խաղալ, պատասխանեց թէ «Ուրեմն հայր լինելը ինչ է, չէք զիտեր»: Քաղցրախօսը, իւր թշնամիներուն ալ հաճոյական կը լինի, վասն զի քաջութեան բռնութենէն աւելի սիրոյ քաղցրութեամբ կը ցրէ նոցա ատելութիւնը և կը յաղթէ ու կը զիջուցանէ նոցա խոռովեալ սիրտերը: Աչաւոր բանակները չէին կարող Սիփակի սիրտը մեղացընելու Հռոմայեցւոց հետ հաշտուելու համար, բայց Շիպինի քաղցրախօսութիւնը ամեն բռնութենէն զօրաւոր կրցաւ զայն զիջուցանել և հաշտութեան բերել:

Քաղցրախօսն կը սիրէ, և կ'ուզէ որ փոխարէն սիրուի, նոյնպէս վիճաբանութեան մէջ թէ կը հակառակի և թէ հակառակութիւնը կ'ընդունի, վայելչութեան սանձը ձեռքէն չթողուր:

Նա դովութիւնը կը սիրէ, հաճութիւնը բնաւ չփրեր, վասն զի վարձոր գովիշէ մը գովասանք ընդունիլը իւր արժանապատուութեան դէմ կը համարի, և ոճիր կը սեպէ իրեն համար, երբ ականջ զուարձանալու համար ձշմարտութիւն մը մոռած կը տեսնէ: Մարդուահաճութիւնը մերժելու համար բաւական է որ վարձ չվճարես:

Մարդահաճոյին մէ կը երբ չափէն աւելի գովասանքներով ներրող մը նուիրեց Էմմանուէլ դքսին, հրաման ըրաւ որ յիսուն զրշ. վարձ տան, և յայտնեց թէ այդ վարձը որ ընդունեցիր չէ թէ անոր համար կ'ընդունիս որ իմ ունեցածներս գովարանեցիր, (վասն զի ես ձեր ներրողած յատկութիւնները չունիմ) այլ թէ անոր համար ընդունեցիր որ ես այսօրունէ՝ կ'սկսիմ հետզետէ այդ յատկութիւնները ունենալ, որպէս զի դուք զիս շողոքորթողներէն մէ կը չհամարուիք:

Դիսնէ սկսի մարդահաճոյ փիլիսոփան որ մարդահաճութեամբ

փարթամացած էր, երբ տեսաւ որ Դիոդինէսն ջուրի մը եղերք նատած րանջարեղէն կը լուար իւր կերակուրը պատրաստելու համար, ըսաւ շողոքորթն Դիոդինէսն «Եթէ դու ևս մարդահաճոյ էիր Դիոնէսիոսին՝ ինձ պէս խորափիկներ պիտի ուտէիր և ոչ բան ջարեղէն» պատասխանեց Դիոդինէս «Եթէ դու աշ այսպիսի բան ջարեղէններ ուտէիր, չպիտի զիջանէիր մարդահաճել Դիոնէսիոսին»:

Սակայն աւելի աղէկ է այսպիսիներու հետ հաշուի շմանելորպէս զի կայծը մարելու ձեռնարկելով հրդեհը չըորդոքեմք՝ ի վնաս մեզ:

Զենոն երբ ինջոյքի մը մէջ հակառակախօսի մը հանդիսղեցաւ, հարցուց նա Զենոնին թէ «Առաքինութիւնը բարի՞ է» Զենոն զիտալով որ հակառակախօսն իրեն հետ վիճի բռնուիլ կ'ուզէ, խոռոու դէմքով մը պատասխան տուաւ թէ «Ոչ» և ետ դարձաւ:

Քալցրախօսին մէկը հակառակախօսին հանդիպած ժամանակը, հարցուց հակառակախօսը թէ մարդոյս աշը աչքը թէ ձախը աւելի հեռատես է, պատարախանեց ժպտելով զուարձաբանն թէ Այն աշքն աւելի հեռատես է որ քեզ հաճելի է:

Երիստոտէլ իրատ կու տայ որ հեռի մնամք անոնցմէ, վասն զի երբ մենք նոցա հետ վէճի բունուիմք, անոնց նմանող կը լինիմք:



### Դ.Ա.Ս ՀԲ

#### ԱՐՆ Է ԾԱՌԴԱՎԱՐԱՒԹԻՒՆԸ

Մարդավարութիւնը սահմանէն աւելի գործադրութեամբ կը յայտնուի, այս առաքինութիւնն է որ մեզ ազնուական և ազնուազն զի ցոյց կու տայ: Բարոյական առաքինութիւնները հասարակ օ-

րէնքներով կ'ստացուին 'ի ձեռն դաստիարակութեան, և յետոյ գործով և սովորութեամբ իրենց կատարելութեան կը համեմին . ինչ պէս որ միւս առաքինական ունակութիւնները այսպէս ևս այս հանրական անուամբ քաջ մարդավարութիւն և բարեբարոյութիւն առանեցաւ :

Բայց սրովշեակ ասիկայ ազնուական մասնաւոր սովորութիւն մէջ որ ուսմիկ ու գեղջուկ մարդկանց և գործաւոր գեղերու մէջ ոչ կ'ուսանին և ոչ 'ի գործ կը դնեն, այլ միայն ազնուական քաղաքաներու և քաղաքական կենցաղավարութեան մէջ զանուողներուն հետ դանուելու համար, քաղաքավարութիւն կամ քաղաքականութիւն կ'ըսուի. և առելի բարրաձնանալով յատակ անուամբ բարեձեա ազնուարարոյութեան և պալատականութեան իսկ անուն կ'առնու աշնուականայ մէջ :

Ըսոր հակառակն այս առաքինութիւններէն հեռացողներն ալթէկ ազնուական կամ պալատական լինին՝ հետեւեալ վատ անունները կը մառանգեն, ամարդի, անքաղաքավար, օռպո. և ումկարարոյ :

Մարդավարութիւն սիրողը պէտք է որ զզուի տմնն գեղջուկ և անքաղաքավար զործերէն յարդելի անձանց քովմազերը սանարել և յսակել, եղունդները կտրել, ատամները մաքրել, ասոնք ընելու է անոնց չներկայանալէն առաջ, և այն՝ առանձնութեան մէջ, նաև արհամարհելի է ատամնարաց և բարձրածայն ծիծաղիլը, և այլն, սոցա պէս անվայելուն ճանաչելով՝ 'ի գործ դնելու չէ :

Սիրաքի այն խօսքը լաւ ըմբռնելու է մեր շարժմանց մասին, որ կ'ըսէ «Մարմոյ զգեստ, ատամներու ծաղը և մարդուն դնացք իրեն համար կը պատմն թէ ինչ և ինչ տեսակ մարդ է :

Քաջ մարդավարութիւնը և քաղաքականութիւնը հաճոյականութեան, քաղցրախօսութեան և սիրողութեան մէջ կը կայանայ, վասն զի անոնց մով առելի կրնամբ մեզ հետ կենցաղավարողներուն համոյանալ :

Սիրելի է հաւանիլ և գովել քաղցրախօսութեամբ և հաճոյականութիւամբ, քան թէ գեղջկօրէն հակառակելով և անարդարար մարդահաճելով հակառակի և վատաշանել :

Քաջ մարդավարութիւնն և քաղցրախօսութիւնն է որ քաղաքական կենցաղավարութեան մէջ անկատակ , ձափաբերեալ , կիրթ և հրահանգ խօսքերով և ըստ պահանջման վայելուշ գործքերով ուրիշին հաճյանալու միջոցները 'ի դործ զնելն է : Ազնուարարույթեան պակասութիւնը յանցանք չամարտիր , անոր համար որ շարութենէն և տղիտութենէն չձնանիր , և որեմն չէ թէ պատռհասի , հապա զզուանաց և արհամարհանաց արժանի է : Եւ ուրովիշեակ այս ինչ երկրի և ազգի մէջ անքաղաքավարութիւն դատուած ձեերը և զործողաթիւնները , որիշ երկրի մը համար քաղաքավարութիւն համարուած է , ուստի քաղաքավարութիւնը յատուկ դաս մը չէ , հապա իւրաքանչիւր երկրի ժողովրդեան պատուոյ և սովորական արարողութեանց նայելով ըստ այնմ վարուելու է :

Բայց և այնպէս կան այնպիսի շարժումներ որ ամեն երկրի և անձի համար միւնցին տհաճութեան տեղի կու տան , ոմանց շարժումները աշքի զզուելի են . ոմանք արաքին զզոյութեանց անհաճոյ են , ոմանք զգայութեանց կրից և երեակայութեան . ոմանք մտաց բանին և կամաց : Զգուշմանը է տգեղ առարկաները ուրիշին աշքին շներկայացընելու , վասն զի այնպիսի առարկաներ են որ ազնուականի աշք չտեսնել կ'ուզէ քան թէ տեսնել . դնալու ժամանակ թեերու շարժում , զգեստուց տձեռութիւն , անպատշաճ միափողմանի նստուած , խօսած ժամանակը զլիսոյ շափազանց շարժում , ևայլն , ևայլն :

Առարկաներ ալ կան որ որիշին լսելեաց անհաճոյ են , ինչպէս սուլել , շշել , կարկաշալայն լինդալ , ատամներու կրծաել , ուրիշի խօսած կամ քնացած միջոցին բարձր ձայն հանել կամ բան մը դդրդեցընել , ևայլն :

Կան առարկաներ ալ որ հոտոսելեաց անհաճոյ են , ինչպէս նեխեալ և հոտած բան հոտեցընելը , փշելով ճրադ մարելը , երկու մարդոց խօսած ժամանակ նոցա քթի տակը մանել կամ բարեկամին սաստիկ մօտենալ , փորոտիքներէն շունչ 'ի վեր բերել սոխ կամ սխուր կերած ժամանակը , նաև աւելորդ է հոտաւէտ մուշկ և բուրեէն ևայլն 'ի ծոց կրել իմիշտ , նաև ճաշակելեաց անհաճոյ է

երբ կ'ստիպես զուրիշը թէ ուտելու և թէ ըմպելու չափազանցութեան և այս պահարակելի սովորութիւնը Հայաստանի մէջ յաճախ՝ ի գործ կը դնեն, այսպէս ալ աւելորդ է մէկը իւր պատառաքաղով կերակուր առնել իւր սեղանակցին տալը, զի այս բաները զդուելի են :

Նաև զնալու ժամանակ ուրիշին չզարնուելու զգուշութիւն պիտք է . կրից և երեակայութեանց շափազանց մնասակար են՝ անհաճոյ, ամօթալի և նողկալի պատմութիւնները և նկարագրութիւնները, մանաւանդ զգուշանալու է պատմութիւն մը ըրած ժամանակը, որպէս զի անքաղաքավարութեամբ դիմացի մարդուն սիրած չխոսվի, զի մարդ մը երբ մանաւոր պակասութեան մը կամ անարդութեան մը մէջ զտնուի, երբ դու ժամանակէ մը յետոյ նոյն անցք ուրիշի մը վրայ պատմես, նոյն անցք կրողը սասահիկ կը վշտանայ, թէ իւր կրածը յիշելով, և թէ կը կասկածի թէ դու իրեն պակասուոր ըլլալը կ'ուզես յայտնել, ինչպէս որ սաստիկ կը զայրանար Տիպերոս երբ Ռատոս կղզւոյն անունը յիշէին, ուր որ զինք աքսորածէին երբեմն : Զգայական մասին ուրիշի մը ուրախութիւնը յանկարծակի տիրեցնելը տմարդութիւն է, այսպէս ալ տմարդութիւն է, երբ մէկը ցաւոց մէջ է, դու փոխանակ նորա ցաւոց ցաւակից լինելու, զուարթութեամբ կը խօսիս նորա հետ իրը ցաւ չունեցողի մը հետ : Անքաղաքավարութիւն է և անհաճոյ մտաց և կամաց երբ խօսողին զրոյցը կը խափանես կամ նորա խօսած ժամանակը կը քնանաս, զի ասով համկը ցընել կ'ուզես թէ շես հաճիր նորա խօսքերը լսել, առանց օգտի՝ մինակ զեղկականութիւնը՝ ի գործ դնելով ուրիշին կամաց հակառակիլը անքաղաքավարութիւն է, ինչպէս որ Անայ առանց զիւղի աղայք ըստ նախնական սովորութեան՝ վարժութիւն ունին դէմ դնել կամաց քաղաքացւոց, որպէս զի իրենց զեղէն երկու, առառաւար հեռու գանուած ծովու եղերքէն ծով մննելով չլուացուին, որպէս թէ ծովն իրենց սեփհականութիւնը լինէր կամ լուացուելով՝ ծովու ջուրը պակասէր :

Ըստ արժանւոյն զայլս շմեարելը մնծ զեղչկականութիւն է, այսպէս ալ հրաւիրած տեղը իւր պատուոյ արժանիքէն վեր նստիլը :

Չափազմնց քաղաքավարութիւնը և դեղջուկ անքաղաքավարութիւնը, մոլեկան ծայրեր են, իսկ քաղաքավարութիւնը է մի ջասահմանութիւնը, որ կ'ուսուցանէ մեզ թէ ինչպէս և ինչ եղանակաւ վարուելու եմք մարդկանց հետ և թէ զցուշանալու եմք որ ոչ նորագութեամբ զեղջուկ համարուիմք, և ոչ առաելութեամբ տղէա և մի ջասահմանը չճանաչող, ոչ վնասեմք և ոչ վնասուիմք, ոչ արհամարեմք և ոչ արհամարհուիմք, ոչ տաղոկաշընեմք և ոչ զուեցընեմք, և ոչ չափազմնցութետմբ հրապարակէն խոյս տումք զեղջկական պակասութեամբ :

Թեսաւրոս երկար խօսած է ծխախոտի փորձածութեան անքաղաքավարութեանը և վնասակարութեանը վրայ, բայց մնք տեսնելովոր այդ հիւանդութիւնը համատարած ախա մը եղած է և բոլոր երկրագունդիս երեսը սփոռած թէ յարս թէ ՚ի կանայս և ցաւալի է ասել մինչև ցհինգամեայ տղայս, ուստի աւելորդ համարեցինք նսրա միասցյն և անքաղաքավարութեան վրայ խօսիլ, զի ամեն մարդ իւր անձին վրայ նորա վնասակարութեան փորձը տեսած է., բայց չկրնար ետ մնալ, ինչպէս որ սգելից ըմպելիներէ ալ, վասն զի բազմաժամանակեայ սովորութիւնը երկրորդական բնութիւն մը կը դառնայ, ուստի մնք ըստ կամս կը թողումք կամ իրենց փորձառական վնասներէն համոզուին ետ մնան, կամ իրենց ձեռքով իրենց գերեզմանը փորեն, մանաւանդ անոնք որ ոգելից ըմպելիները ջրոյ աեղ ՚ի գործ կ'ածեն, ամեն մարդ կ'աշխատի իւր բանաւորութեան ուղղութիւնը տալու, սոքա կ'արբենան իրենց բանաւորութեան ուղղութիւնը կորսնցունելու :

Ասոնք ստհմանուեցան իրու գեղ մարմնոյ բժշկութեան, մնք չափազմնցութեամբ փոխեցինք զանոնք դեղ ըղեղի հիւանդութեան :

## ԴԱՍ ՀՊ.

## ՃԵՄԱՔՏԱԿՈՅԱՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐԵՆ ԵՐԿՈՒ ՇԱՏՐԵՐԸ

Ասկէ առաջ յիշած առաքինութիւնը , աւելի ուրիշներուն մզ հաղորդած խորհուրդներուն կը վերաբերէր , իսկ Ճշմարտախօսութիւնը մը խորհուրդներուն կը վերաբերի զորս մնաք ուրիշներուն կը հաղորդեմք :

Ասոր համար այն հաճոյակամութիւն կը պահանջէր , իսկ այս Ճշմարտութիւն կը պահանջէ , ինչպէս որ մնաք ուրիշի Ճշմարիտ խօսքերն կը հաւնիմք և սուտերն չեմք հանիր , այսպէս ալ ուրիշները չպիտի հանին մը խօսքերն եթէ սուտ լինին , վասն զի մը սուտը նոցա տհաճութեան առիթ կու տայ , ուրեմն Ճշմարիտ խօսիլ պէտք է որ հաւնին և իրաւունք տան մը ասացուածոց , և զմզ յարդեն իբրև ուղղախօս :

Սակայն գիտնալ պէտք է որ մնաք այս տեղ կենցաղավարութեան Ճշմարտութեան վրայ պիտի խօսիմք , և չէ թէ դաշնադրութեան վերաբերեալ Ճշմարտութեանց վրայ , այն մը խոստումներու հետ կապ ունեցաղ գործոց համաձայնութիւնն է , իսկ սա մը խօսքերու , մը գործառնութեանց հետ ունեցած այն համաձայնութիւնն է , զորս կամաւ կը հաղորդեմք մզ հետ խօսովներուն :

Այն արդարութեան էական մասն է , որ իւրաքանչիւրին իրեն արդար բաժինը կու տայ , իսկ այս մը խօսակցութեանց մէջ բերելութիւն մը առաջ կամ ընդունելու բարեխառնութեան կարողական մէկ մասնիկն է :

Արդ մը խօսքին նիւթ եղած Ճշմարտախօսութիւնը հոգւոյ առաքինական մէկ ունակութիւնն է , որ հաստատուած է Ճշմարտութեանց միջասահմանին վրայ և զայն մը կենցաղավարութեան

մէջ կը հաղորդեմք ուրիշներուն, աւելի այն պարագաներու մէջ որ մօր գովեստները առաջ կը բերեն :

Ասոր առաւելազանցութիւնը, ձառատանք է, իսկ նուազութիւնն և կամ՝ պակասութիւններն ալ կեղծաւորութիւն է. որոց միջաւահմանն ալ չշմարտախօսութիւնն է :

### Դ.Ա.Ա ՀԴ.

#### ՃԵՄԼԻՔՏՈՒԹԵԱՆ ԱԹԱՐԿԱՆԵՐԸ

Ամեն ընկերական մարդ բնականապէս կ'ախորժի իւր խորհուրդները իւր ընկերոյթը հաղորդել, մանաւանդ խօսողի յարդանքները և լսողի հաճոյքները, ինչպէս գաղտնի վիշտերը և գաղտնի միթարութիւնները զմարդն կը նեղեն, եթէ որ ուրիշին չյայանէ իսկ, երբ բարեկամներուն կը յայանէ վիշտերը կը նուազին, և միթարութիւնները կ'աւելնան :

Ամեն մարդ կը ցանկայ իւր գիտութեան և իւր առաքինութեան, քայլութեան, ազգատոհմին, ընչից և ստացուածոց վրայ խօսիլ, նաև իւր զաւակաց և յարզի բարեկամաց ընդունած շնորհաց և պարզեած շնորհաց և իւր բնաւորութեան բարեմասնութեան և կրած անցքերուն վրայ խօսիլը հաճոյ է իրեն, այսպէս ալ ուրիշէն լսելու յօժարակամ է, վասն զի միապէս կը կամի, թէ իւրը պատմել և թէ ուրիշներունը լսել :

Հետաքրքրութիւնը կ'ստիպէ զմարդն որ իւր հաւատարիմ լրտեսները, այսինքն աշք և ականջը միշտ չորս կողմն դարձնէ և հաւաքէ տեսածնեցո և սածներո և այս և թէ մինակ և գաղտնակամնե-

րուն, այլ և օտարներուն, անծանօթներուն, և մեռելոց ու անշելոց իսկ ամենուն վերահասու լինելը կը ցանկայ, կը հաւքէ նա հին պատմութիւններէն, արձանադրութիւններէն, յիշատակարաններէն, օտար և մերձակայ ազգերէն, և ասոնց մէ ջէն կ'ուզէ ճանաչել ինչ որ Ճշմարիա է, վասն զի սուր դիտնալը զիտութիւն չէ, Ճշմարիա զիտնալն է դիտութիւնը. Եթէ այս Ճշմարտութիւնները գտնել մեզ հաճոյական է, ուրեմն քանի առաւել հաճոյական է երբ մեր բարեկամաց մէջ անկեղծ Ճշմարիա բարեկամն կարողանածք ճանաչել:

Մեր զործերը ուրիշին պատմել չկրնար հաճոյական համարուիլ, եթէ Ճշմարտութիւնը անոր ընթացակից չլինի, վասն զի պատմութեան ողին Ճշմարտութիւնն է :

Ճշմարտախօսութիւնը նաև մեր զործերով ալ պէտք է երեան բերեմք այսպէս ալ զրով, և այլն ամեն շարժումներով:

Կան ոմանք որ իբր թէ շարէք մը խափանելու, և կամ իբեն յառաջադրու խոստումն կատարելու համար չեն ոզեր Ճշմարիան խօսիլ, բայց զործով և շարժմամբ ցոյց կու տան իբեն Ճշմարտութիւնը :

Փիլոկաէտ Հերակլէսին մահու ան ժամանակը (ըստ խնդրանաց Հերակլէսի) ուխտեց որ նորա զերեզմանը ամենեին մէ կի մը չյայտնէ, բայց երբ յոյները զինքը սախակեցին որ յայտնէ նորա թաղուած տեղը, յայնժամ Փիլոկաէտ բարձր ձայնով մը աղաղակեց թէ Չեմ գիտեր ուր է, միւս կողմէն ալ ոտք նորա թաղուած տեղը զետիւնը զարնելով, ձայնով ստածը, ոտքով Ճշմարտեց։ Սակայն ասիկա աւելի մատնութիւն է քան Ճշմարտախօսութիւն։

## ԴԱՍ ՀԵ

### ՃԾՄԱՐՏԱԽՈՍԻ ՌԴԻԿԵ ԿԸ ՑՈՐԳԱՐԱԴԻ

Ոմանք փառամուլութեան համար ճշմարիսն կը խօսին , սակայն նոքա ճշմարտախօս չեն , այլ փառամոլ են , ոմանք շղղոքորթութեան համար , նոքա ողագահ են , ոմանք առ երկիւզի կը խօսին . անոնք ալ երկշու են . ոմանք իրենց խոսամանց պարտաւորութենէն ատիպեալ կը խօսին , նոքա ալ արդար են , և ոչ ճշմարտախօս :

Ուրեմն ճշմարտախօսի իսկական յորդորիշը նոյն իսկ ճշմարտախօսութիւնն է , այսինքն այս առաջնութեան ուժակութիւնն է , որ կը յօժարեցընէ մեր Փառք , որպէս զի մեր խօսքերը մեր սրտի հետ համաձայնեցընէ , և սիրան ալ ճշմարտութեան հետ համաձայնեցընէ , և այս աւելի իւր գործողութեանց մէջ . համեստութիւնը . և բանն զմեզ այսպէս ընել կը հարկադրեն , և ասոր հակառակն ալ զեղջիական տգեղութիւնն է . Անոնք որ ուրիշին յորդուներով ճշմարիտն կը խօսին . այնշափ կը աեւ նոցա ճշմարտախօսութիւնը որչափ որ առ իրենք եղած յորդորը կը աեւ , իսկ անոնք որ ճշմարտախօսութեան ունակութիւնն ունին , նոքա միշտ ճշմարտախօս են , վասն զի ունակութիւնը՝ հիմական կերպով հաստատած է հօգւոյն մէջ , և հողին պատշաճ եղած ժամանակը այն ունակութիւնը յօժարամառութեամբ 'ի գործ կը դնէ :

Ճշմարտախօսն անաշառ է քաղաքական կամ ծերակուտական խորհրդականաց ընտրութեան ժամանակ , առապ ութենէն աւելի ճշմարտութիւնը կը յարդէ , իւր հայրենեաց հզօր 'թշնամնոյն համարձակապէս կը պատասխանէ , դատաստանական իրողութեանց մէջ , իւր վկայութեան հաւատարմութիւնը ճիշդ կը սկահէ :

## ԴԱՍ ՀԶ

### ՃԵՄԱՐՏԱԿՈՅՆ ԻՆՉՊԻՇ ԿԸ ԳՈՐԾԵ

Ինչպէս օր միւս առաքինութիւնները, այսպէս ալ Ճշմարտախօսութիւնը, աեղայն, ժամանակին, որպէս, ուր և որբան արժանէն, ասոնց պատշաճողութիւնը կը պահէ: Խօսելու և լրելու ժամանակները աղէկ կը շափէ, թէպէտ իրեն պաշաճնէն դժուրս է սուտ խօսիլը, բայց և այնպէս ամեն պարագայի մէջն ալ Ճշմարտութիւնը չխօսիր: Նա ինչ որ խօսի, պէտք է որ Ճշմարիտ լինի, բայց չէ թէ ինչ որ Ճշմարիտ է միշտ պէտք է որ խօսի:

Վասն զի շատ բան կայ օր չգիտնալ ձեւցընելը գիտնալէն լաւ է և անոնց համար լոելը խօսելէն օգտակար է:

Ըստ առասպելաց, միւնյոյն մհենի մէջ երկու կուռք որոց մին՝ դարմանիք կը յայտնէր, միւնը՝ Ճշմարիտն կը խօսէր, երբ քաղաքայի մէկն գողութիւն ընելու կ'երթար, կուատուն մտնելով զաղտնիք յայտնողի թեր խորտակելով. յիշկիր կործանեց որ իւր դողութեան զաղտնիքը չյայտնէ և Ճշմարտախօսն այս գործողականը անընտես և լոեց: Միւս օրը իւր ապրանք գողցընել տուողն աճապարեց իւրատուն մտնել և զաղանիք յայտնող կուռքէն տեղեկանալ թէ իւր գողն ովկէ, զայն խորտակօւած տեսաւ. և գիմեց Ճշմարտախօսին հարցընելով թէ՝ Ճշմարիտն ըսէ, մեր գողն ովկէ. պատասխանեց Ճշմարտախօսն թէ՝ Գաղանիք յայտնող կուռքի վիճակն զիս կը բռնադատէ որ առ այժմ Ճշմարիտն չխօսիմ: Վասն զի միջոցը վտանգաւոր է:

Այս Ճշմարտութիւնը որ կրնամք միայն մեր բարեկամին յայտնել զայն մեր ամեն ընկերներուն յայտնելու հարկ չկայ, զի մեծ տարօքերութիւն կայ բարեկամի և ընկերոջ մէջաեղ. մանաւանդ դգու-

շանալու է թէ մեր և թէ ուրիշներուն ընտանեկան ամօթայի գործերը իրեն ճշմարտութիւն խօսիլ ուրիշներուն, որպէս զի ոչ ըսողն փոխանակ ճշմարիա երենալու վատանուն երևի և լսողն ալ դայթակղի : Թէպէտ ճշմարտախօսութիւնը կը պահանջէ որ ճշմարտախօսը անկեղծութեամբ յայտնէ թէ իւր պակասութիւնները և թէ առաւելութիւնները, բայց որովհետեւ կան մեր ընկերական վիճակի մէջ այնպիսի անձինք որ նախանձ են՝ քան թէ պարզ, ոսխացող՝ քան թէ հաճութիւն տուող, այսպիսի շարազգածներու մէջ, գովեսանները նոցա մտաց մէջ փառասիրութեան կասկածներ կ'արթնցընեն . և նոքա մեր պակասութիւնները, իրենց իսկական վիճակէն շատ աւելի կը համարին . և առոր համար ճշմարտախօսն իւր խոստովանութեամբն փոխանակ սիրոյ, արդահատանք կ'ընդունի անենցմէ :

Ճշմարտախօսն կեղծին հետ կեղծ, անկեղծին հետ անկեղծ, միջակայնոյն հետ միջակային վարուելով՝ ճշմարտախօս ըլլալէ շդագւրիք, վասն զի ճշմարտախօսութեան առաքինութիւնը՝ արդարութեան առաքինութիւնը չէ, և ոչ ալ դատաստանական եղելութեան խօստավանութիւնն է, հապա մեր կամքէն կախումն ունեցող մեր մտաց մէկ հաղորդութիւնն է, զոր միշտ ամեն պարագայի մէջ յայտնելու պէտք չկայ :

Ճշմարտախօսն զինք գովելու մտօք շխօսիր, և ոչ ալ ուրիշները զինք գովելու համար կը խօսի, հապա կը խօսի անոնք, որ գովութեան արժանաւոր են, երբ ուրիշները կը խօսին ճշմարտախօսին համար, այն գովեսանները որ ճշմարիտ չեն, իսկոյն ինքը կը լինի իրեն դատաւոր, վասն զի ճշմարտութիւնը գովեսաէն նախամծար է իւր քով :

Ճշմարտախօսի գէմքն ալ ճշմարտախօս է, վասն զի՞ ոչ մտախոչ նենդութեամբ այլ ընդ այլոյ կ'երեի, և ոչ արհամարհուստ ամբարտաւան կը հանդիսանայ, այլ զուարթ, հեղահամքոյր, անկեղծ, նորա վսեմ խորհուրդները պարզ ճակատին վրայ յայտնի կը տեսնուի, նաև նորա աշաց մէջ իւր սիրուը կը անմուեի .

Նա ճշմարտախօս է իւր անձի ինամատարութեան մէջ, թէ գե-

զեցիկ է՝ հայելի չպաշտեր, եթէ ագեղ է՝ ներկերէն կը խորշի, և կը ջանայ մարմայ տգեղութիւնը հոգւոյն գեղեցկութեամբ զարդարել:

Ճշմարտախօսը ուժի կողմէն կը համարձակի կատարել այն ամեն բանը ինչ որ կարող է՝ իրենց վայելու սահմանի մէջ պահելով կատարել: Ինչ բանի որ անձեռնհաս է՝ իւր անկարողութիւնն ճշմարտապէս խոստովանելով ետ կը մնայ:

Եթէ յաղթէ չպարծիր, եթէ յաղթուի շամաշեր, անայլայլեւ լի դիմօք գովեստ կ'ընդունի երբ կը յաղթէ, և գովեստ կու տայ յաղթողին՝ երբ յաղթուի:

Իւր տոհմի ծագման մատին ճշմարիտն կը խօսի, եթէ ազնուազարմ է՝ իւր նախնաց գեղեցիկ նկարագրութիւնները կ'ընէ, և եթէ փարո ընտանիքն է՝ դարձեալ չպատրուակելով նոցա կեանք և դորձերը կը նկարագրէ, և նոցա յիշատակները իւր աչքին առաջը պահել կ'ուզէ:

Ճշմարտախօս է իւր ախորժակի մէջ, նորա սերը և ատելութիւնը անպատրուակ են և յայտնի, մերժածին չըղձար, ըղձացացն ալ չմերժեր, ազատ դէմքով պատռւոյն ետևէն կ'երթայ, երբ զինք արժանի դատու այն պատռոյն, և կը հրաժարի այն պատիւներէն, որոց անարժան է:

Նա աննախանձ գովեստ կ'ուզէ, որովհեակ իւր արդիւնքն անփառասէր է: Նա իւր առաքինութիւնը յայտնած ժամանակ ինչ գովեթիւն որ կ'ընդունի, նոյն գովեթիւնը կ'ընդունի դարձեալ իւր պակասութիւնները յայտնած ժամանակը, վամն զի երկուքն ալ Փենոյն անկեղծ ճշմարտախօսութեան աղբիւրէն կ'առնուն իրենց ծնունդը: Այն օր գովելի է, նաև սիրելի է:

## ԴԱՍ ՀԵ

ՃԱՌԱՋԱՆՔ ԵՒ ԿԵՊԾԻՔ

Ճառատանք և կեղծիք որքան որ թշնամի են Ճշմարտախօսութեան, այնչափ ալ իրարու թշնամի են, մինչ Ճշմարտութեանէն շատ բարձր կը թռչի, միւսն՝ չափէն աւելի կը կծկի և կը նուաստանայ, երկոքն ալ ստափու են, մեծն յիմար է, փոքրն անքաղաքավար :

Ճառատանք միջասահմանն կորոնցընելով սիրամարդի պէս աւելի քան զչափն իւր թեւերը տարածելով օդի մէջ կը տառանի և հրաւեր կը կարգայ թէ ինձ նայեցեք : Իսկ կեղծիքն աւերակաց բուերու պէս լոյսէն խօսյ տալով խաւար տեղերը ծածկուած, ինք իրեն ատելի ձայն կու տայ թէ, ինձ մի նայիք :

Երբ զիտութեան վրայ կը խօսուի, ճառատաղը թէև բան մը չդիտեր, կը պարծի թէ ամեն բան դիտէ, իսկ կեղծիքն բաւական բան դիտէ, բայց կը կեղծաւորի թէ բան մը չդիտեր կամ խիստ պիչ պիտէ : Երբ հարսառութեան Ճոխութեան վրայ կը խօսուի ճառատաղըն՝ թէև աղքատ, բայց ամենէն հարուստ ձեանեալ կ'ուղէ, իսկ կեղծիքն՝ թէև մեծ հարուստ, բայց պատառատուն դժեստներ կ'ըզգենու, իրեւ չքաւոր, եւր քաջութեան վրայ կը խօսուի, ճառատաղըն՝ թէև անզօր դասալիք, բայց թշնամնայ բանակին յալ թութեան համար իւր անձը մինակ բաւական ցոյց կու տայ . իսկ կեղծողն՝ թէև զօրաւոր, բայց խօսառ անզօր կը կեղծէ ինքզինք :

Երբ քաղաքական կենցաղավարութեան վրայ կը խօսուի, եր կուքն ալ անչամաձայն են միմեանց, վասն զի ճառատաղըն աւելադրութեամբ Ճշմարտութիւնը կ'աղաւաղէ, կեղծողն ալ ցած թերութեամբ և կրճատմամբ չեղծամղձուկ կ'ընէ դայն :

Նրկուքն ալ միապէս փոխանակ իրենց ունկնդրաց հաճոյք մը տալու, (որք անոր համար կը լսէին) ընդհակառակն զգուանք կը պատճառեն, իրենց միայն չափանցութեամբն միւսին նուաստ և կեղծ թվատութեամբ : Այն որ աւելապանց կը խօսի, անոր չեն հաւատար, իսկ այն որ կը կեղծէ բան մը չըսեր. ունկնդիրը կը վարանի թէ նորա ինչի՞ն հաւատայ :

Ճառատողն՝ ծիծաղելի է, կեղծողն՝ կասկածելի, բայց և այնպէս Ճառատողն՝ կեղծողէն լաւ է, վասն զի Ճառատանք թէ և սուտ լինելուն համար Ճշմարտասիրին տաղտկալի է, բայց գոնէ խնդացողներու համար զուարձալի է : Խսկ կեղծիք Ճշմարտասէրներուն կասկածելի է և զուարժամասէրներուն ալ ատելի, վասն զի իւր խոր հուրդը չաղղրդեր :

Ճառատողն՝ ուրիշի հետ կենցաղավարութիւնը կը սիրէ, անոր համար որ իւր Ճառատանքները ծախէ, խսկ կեղծողը՝ չղիանալով թէ ո՛րի հետ կենակցիլ պէտք է, ինք միայնակ կը մնայ : Ճառատանք սաստիկ չկրմութենէն առաջ կու զայ, որ կը վասահացընէ խօսիլ չափէն աւելի, խսկ կեղծիք՝ չափազանց ցրտութենէն առաջ կու զայ և ուրիշի դատաստանէն վախնալով՝ չուզեր խօսիլ ինչ որ սիւաք է :

Ճառատաղ Խմլէկոկոկէս բժիշկն այնչափ առաջ դնաց, որ յայտնի կ'ըսէր՝ Խմլ բժշկութիւնս դերմարդկայինէ. ուրիշ բժիշկներ այս բժշկապետն իւր հիւանդանութենէն ազատելու համար ըօին թէ՝ Ասակութիւնը չաստուծոյն հոգին է, որ քու մարմնոյդ մէջ կը բնակի, ուրիշն անարգութիւն է այն դերմարդկայինն հոգւոյն, այս աշխարհ մէջ աղահել, զի զայն անմահից դասոյն մէջ վերածել պէտք է, առ այս խրատ համձակուելով դերահանձար բժշկապետն, հընկան երկինք բարձրանալու փորձ փորձելով անկաւ Ետնայ լեռան հրաբորքը անդունդ վիճին մէջ :

Ասոր հակառակ զիւռռնեան փիլիսոփիայք, այնքան առաջ դնաց իւն կեղծեաց մէջ, որ սկսեցին ըսել թէ կարելի չէ ստոյգ բան մը զիսնալ, և կ'ըսէին թէ՝ Աշխարհիս մէջանստուգութենէն 'ի զատ ամեննեին ստուգութիւն չկայ, բոլորն ալ անստոյդ և կասկածելի

Ակ : Եթէ դու արեգական ճառագայթներով նոցա աշքը խտալէիր , նպաս դարձեալ կը կասկածէին թէ գուցէ արեգակը լուսաւոր չէ :

Ճառատոռն իւր բնական անողիղ յօժարութենէն կը յորդորուի ճշմարակն աւելի մեծցնել և այս շափազանցութիւնը չէ թէ մնակ իւր զովեսաներու մէջ 'ի զործ կը գնէ , այլ և իւր ամն պատմութեան մէջ նոյն մթուառվ կը վարուի :

Սակ առոր հակառակ յօժարութենէն մղուելով կեղծողն կը փաքրացընէ ամն պատմաները . այս մոլեկան զործը երկուքին ալ հաճ և հաւան է , և կամառո և ոչ բռնի :

Մինչե ցորդ խօսածներէն յայտնի կը տեսնուի թէ այս երկու անակութիւնները թէպէտ մոլեկան են , (վաճն զի առաքինական գլասահմանութենէն կը խռարրին) ասկայն ըստ ինքեան շարաշար չեն համարուիր վասն զի շար վախճան մը չունին , թէպէտ հաճոյական չեն , բայց ֆասակար ալ չեն . Մանաւանդ որ իրենց ֆասանը իրենց կը պատկանին և ոչ ուրիշն :

Սակայն և այնպէս երբեմն ուրիշունակութեանց հետ լծորդուելով մեծամեծ շարիքներ և ֆասաներ առաջ կը բերեն , բնշպէս որ ճշմարտախօսութեան անակութիւնը ուրիշ առաքինական ունակութեանց հետ լծորդուած մեծամեծ բարիքներ կրնայ առաջ բերել :

Ցիպերոսը թագաւորութեան յաջորդ Ազրիպասը մոռցնելով . ինըը կայսր եղաւ , բայց Ազրիպասի ծառայներէն մէկը որ շատ նման եր իւր արրոջ կեղծեց թէ ինքն է կայսերաժառանդ Ազրիպասը և շատ կուսակիցներ գանելով կայսերաթեան վիճակը խռովեցոց , սակայն վերջէն բռնելով Ցիպերսին տարին և հարցուց Տիպերոս թէ՝ Դու ինչպէս եղար Ազրիպասա . պատասխանեց թէ՝ Դու ինչպէս եղար կայսր : Կեղծեալ Ազրիպասը կրցաւ կայսերական վիճակ մը ինուվել , ուստի զգուշութիւն պէտք է :

Անկէ մծ անարդութիւն չկայ մարդկային ընկերութեան՝ երբ կեղծիքն կը լծորդուի խոստման դրժողութեան հետ . Մարկոս Աստիղիոս ծերակուտի ատենին մէջ պարծեցաւ թէ՝ Ես յանկարծակի խաղաղութեան դաշինք խօստանալով . Յունաց յաղթեցի . երիտասարդ Սինկղիտոսները զայն զովեցին թէ յունաց խորամանկութիւնը

Հռոմայեցւոց խորամանկութենէն յաղթուեցառ և ամօթապարտ եւ դաւ . իսկ ծեր և փորձառու Սինկղիառուները զայն նախատելով առ նարգեցին, ըսելով թէ Հռոմայեցւոց նշանարանն էր քաջութեամբ յաղթել և ոչ նենց և խորամանկ խաբէութեամբ . մահաւանդ թէ թշնամոյն պատրաստ լինելու ազդարարութիւնը կ'ընէին :

Նաև վատանուն է կեղծիք երր կեղծաւորութեան հետ կը լծոր դուի, զի կեղծաւորն իւր դէմք կը փոփոխէ, այլ ոմն է և յան կարծակի այլ ոմն կ'երեի, խօսք և խորհուրդ միւնոյն չեն, բերանը բարի կը խօսի, սիրութիւն կը տածէ, զգեստն աչ խարի է, բայց զիշատութեան խորհուրդը զայլը է :

Նաև զգուշանալու է որ Ճշմարտախօսութեան հակառակ կեղծիք, խոհեմութեան հակառակ խորամանկութեան հետ չշփոթի, և ոչ ալ զուարձախօսութեան խաղերու վկրաբերող հեզնութեան հետ չփոթելու է :



## ԴԱՍ ՀԸ

### ԶՈՒԹՔ ՃՇԽՈՍՈՒԹԻՒՆԻ ԵՒ ԻԲԵՆ ՑԱԳՐԵՐԸ

Զուարձախօսութեան օդակարութիւնը մեծ է, մեր արամոււթեան և ցաւերու մէջ զուարձաբանը եթէ համեստ կերպով սկսի իւր պաշտօնը՝ մինչև իսկ մահուան վտանգներէն կ'աղատէ ցաւոց և արդմութեանց ենթակայները :

Զուարձախօսութիւնը նոր կեանք կու տայ այն թախծեալ սիրատերուն և մտքերուն, որ գիտութեանց և ուսմանց խորերու մէջ ընդ երկար թափառելով և իրենց նպատակին չհասնելով, կամվարանման մէջ թալով կեանքերնին կ'սկսի հիւծիլ, բայց զուարձախօս

տութիւնը վրայ զալով առարկաներու հետ սրտի և մտաց արտմութիւններն ալ քաղցրութեան, ուրախութեան և ինդութեան կը փոխէ :

Լը ջութեան հետեօրդ տրամութիւնը սիրաերը կը սեղմէ, կենական ոգին կը կաշկանդէ, երեսը կը կնճռոտէ, ձայնին չնշահանը կը դրցէ, առոր համար շատ հոգ ունեցողները սակաւախօս են, առոր հակառակ զուտքնախօսութեան հետեօրդ ծիծաղն ալ սիրտ կ'ընդպարձակէ, ճնշեալ հոգին ազատութեան կը բերէ, կործք կը ջեռուցանէ, ճակատը կը պարզէ, չնչոյ առորդեալ մարմար հանգիստն է, այսպէս ալ զուարձախօսութիւնը սրտի հանդիստն է :

Բայց զիսնալ պէտք է որ այս միջոցի մէջն ալ միաբը դարձեալ կը գործէ, վասն զի միաբը հոգույ կարողութիւնը և նորու մասն լինելով եթէ քնովկապուած չէ՝ իւր ազատ կամաւ կը գործէ: Լուրջ խօսակցութեանց մէջ հանդարտութիւնը և խոհականութիւնը կ'աւելնայ, իսկ զուարձախօսութեան մէջ սրամտութիւնը, վասն զի անոնք իրաց ճշմարտութենէն ծագումն կ'առնուն, իսկ ասոնք բեղմաս ուր միաբերէն, ինչպէս որ տրամութեան ախտը իբրև հիւանդատթիւն կը փոխադրուի մերձակայներուն, այսպէս ալ զուարձախօսութիւնը, ուրախութիւնը աեմնազի սիրաը ուրախ և զուարժ կ'ընէ, անոր համար զուարձախօսն, իւր խօսակցին սիրաը կը շահի :

Մեր քաղցրական կենցաղավարութեան մէջ զուարձախօսութիւնը մեծ հաճոյք կը բերէ մեզ ճեմլու, խաղի, խնջոյքներու, կոչունքներու և այլն պարագաներուն մէջ, միոյն խօսած ժամանակը, միւն կը լուէ: նա իւր քաղցրութեան նետը կը ձգէ, սա քաղցր դիմոք և ուրախ սրախ սիրով կ'ընդունի և ետ կը դարձընէ, միւն կ'ընրդունի. կը կուտին իրարու հետ և հաշու են, կը զրկախառնին և զերար կը խածատեն, սակայն բնաւ չեն վիրաւորեր զիրար :

Զուարձախօսին երկու բան պէտք է, այսինքն նիւթ և տեսակ:

## ԴԱՍ ՀՅ.

## ՏԵՍԱԿ ԶՅԻՒՔՆԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Տեսակք զուարձախօսութեան պյլ և այլ են, փոխաբերական, հեղնական, ծաղու փոխանակութեան ևայլն, շատ մը ձեռքու տակ կրնայ խօսուիլ, որոց վրայ ընդարձակ կը խօսի Թեսաւրոս, բայց մեր նպատակը համառօտքիւն պահէ լն ըլլալով զանց կ'ընեմք, առաջնորդելով հետաքրքիր ընթերցողները որ ընդարձակութեան դիմն իրենց հետաքրքրութիւնը զոհացընելու համար :

Մինակ մի քանի օրինակ հոս դնելը բաւական կը համարինք, Անախիթենէս յայտնել ուղելով թէ իւր ծառան մինչեւ որ չծեծուի, իւր ծառայական պաշտօնը չպիտի ըստ արժանուոյն վարէ, ըստ «Իմ» ծառաս խոնկէ, մինչեւ որ լաւ մը չծեծուի հոս դուրս շտար», Միափոս կը պարծէր թէ ինքը Ագռաւ անոն մեծ հոեստորի մը աշակերտէ, Կիկերոն պատախաննեց իրեն թէ, Այն Ագռաւը քեզ թաշիլ սորվեցուց, բայց խօսիլ չսորվեցուց :

Լասիմաքոսն չտաղանցութեամբ ըստ Պասիթէս դեսպանին պինծի կու զան բուզանդացիք, այն ժամանակ՝ երբ իմ քեղարդս յերկինս հասած է», Պասիդէս երեսը իրեններուն դարձելով ըստ, «Խոյս ագմբ ասկից քանի որ սորա քեղարդը երկինքը մեր վրայ փլուցած չէ, զմեզ ջախջախելու համար :

Սպարտացիք Փիլիպոսի երկար հրովարտակին լոկոնական ու ճով մը պատասխանեցին «Դիոնէսիոս ՚ի Կորնթոս» որով ըսել կ'ուզէին թէ Դիոնէսիոսն ալ քեզ պէս խիոխտաց, բոյց հալածուելով փախաւ ՚ի Կորնթոս :

Քիաս ներհակաւ համոզել կ'ողէր պատանի մը որ չամումնայ ըսելով «Եթէ ողեղ կին մը առնես քեզ հաճոյ չպիտի երկայ,

իսկ եթէ զեղեցիկ կին մը առնես ուրիշներուն հաճոյ պիտի երեւնայ» և պատանին անդրադարձընելով պատասխանեց «Եթէ զեղեցին առնեմ ինձ հաճոյ կը լինի, եթէ տղեղն առնեմ ուրիշներուն հաճոյ չպիտի երենայ»:



## ԴԱՍ 2

### ՎԻԼԻ ՍԻ ԵՆԹԱԿԱՑ ԶԱՒԱՐՑԱԽՈՍՏԱԿԲԵԿՆ

Զուարձախօսութիւնը երբեմն ծանր, երբեմն ծիծաղաշարժ կը լինի»:

Մանր զուարձախօսութիւն է ըսել թէ «Աստղերը Առառւծոյ եթերական տաճարի կանմեղներն են»: զեղեցիկ է երբ ըսես «Աստղերը աշխարհիս վրանի ականակապ ասղնագործութիւններն են»: Ուրախ կը լինի երբ ըսես թէ «Աստղերը երանաւէա դրախտի փթթեալ ծաղկունքն են»: դիանական կը լինին երբ ըսես «Աստղերը երինային Արդոսի աշքերն են որք գիշերը մարդկանց վրայ կը հսկեն»: Տիտոր կը լինի եթէ ըսես «Աստղերը արեւոյ յուղարկաւորութեան սգաւոր ջահերն են»:

Ծիծաղաշարժ կը լինի երբ ըսես «Աստղերը չսաստուածոց լապատերներն են երբ գիշերը կը շրջին նոքա» և կամ ըսես «Աստղերը առ կայծեալ պատրոյգներն են, որք արեւու մոմակալէն կը թափին»:

Ունաք իրենց զուարձախօսութեան նիւթ՝ անզթութիւնը կ'ընտրեն որ յոյժ տղեղէ, ինչպէս որ Աղեքսանդր Սևերոսն իրքե կատակ զուարձութեան իւր սիրելիներէն մէկն տանջանաց մատնելով և ծխով խղդեց զայն ըսելով «Որ ծուխ վաճառէ, ծխով կորնչի» որպէս թէ յիշեալն արքունի աւագութիւնները ուրիշներուն կը վա-

Նառէր : Մարտիաղէս հասկըցընելու համար թէ բաղանիքը ցուրտ էր , այլարանութեամբ մը ըստ , «Եթէ ձուկեր պահել կ'ուզես , ձգէ քու բաղանեացդ մէջ» :

Զուարձախօսութիւն կայ որ խօսքավ է , զուարձախօսութիւն կայ որ գործով կը կատարուի :

Զուարձախօսը իւր ընդունած կծու առաջարկութեանց զուարձա-  
բանութեամբ կծու պատասխան մը կու ասյ , ինչպէս որ այն նի-  
հար պատանին ըրտ իւր ընկերոջ , երբ ընկերութիւն մը 'ի մի  
հաւաքուած էին անոնցմէ մէկն որ շատ նիհար էր , վերջէն եկաւ ,  
նոյն ընկերութենէն մէկն նորա նիհարութիւննցոց տալու մտօք ըստ  
«Բարի եկար հոգի անմարմին» , նա պատասխանեց «Բարեաւ զտար  
զիս մարմին անհոգին» :

Ծերունի մը ճանապարհէն գնացած ժամանակ երեք երիտասարդի  
հանդիպելով , երիտասարդի մին ըստ՝ Բարեկ հայր Աբրահամ , երկ-  
րորդն կրինեց՝ Բարեկ Խաչակի նահապետ , անդէն երրորդն ըստ՝  
Բարետա Յակոբ նահապետ , ծերունին պատասխանեց խայթելով  
մը թէ՝ Ես ոչ Աբրահամ , ոչ Խաչակի և ոչ Յակոբ նահապետներն  
եմ . այլ թէ Յաւուղ Կիսեանն եմ որ հօրս տան երեք էշերը կձր-  
սուած լինելով զանոնք վնասելու ելած էի և զտայ :

Ննջեցեալ մը թաղելու տարած ժամանակը մնջկատակ մը նորա  
դագաղին մօանցած որպէս թէ ննջեցելոյն ականջին բան մը ըստ :  
Յիպերս որ հոն ներկայ էր , իրեն կանչեց զնջկատակը և հար-  
ցուց թէ ինչ ըրիր , պատասխանեց թէ՝ Ըսի իրեն որ երթայ անդին  
աշխարհ և ձեր նախորդին ըստ որ իւրյաջորդ Յիպերուոը իրեն կտակ-  
ները չկատարեր : Թէկ Տիպերոս առաջին անգամ խնդաց , բայց  
զայն մոռցընել առւաւ ըսելով , Փոխանակ ուրիշին յանձնարարելու ,  
դու անձամբ անկէ առաջ դնա խօսէ . ուրեմն մծ զգուշութիւն  
ողէտք է այսպիսի խաղերու մէջ :

## ԴԱՍ ԶԱ.

## ԱՇԽԱԿՈՒԹԻՒՆ ԶՅՈՒՑՔԻ ԾՈՅՏԻՐԵԱՆ

Ք. բարձրախոսութեան ունակութիւնը հոգւոյն մէկ առաքինական լատկութիւնն է, որպէս վայելչութեամբ կը խօսիմք և կը շտեմ զուարշանալու համար. և ասք մէկ ծացը զեղջականութիւնը կամ դուեհաւթիւնն է, միւս ծայրն ալ խեղկատակաթիւնը կամ ծաց բաժութիւնն է :

Կ'ըսէ Աքիստոտէլ «Մասցի և զուարձախոս զրայցները», մարդուս հանճարեն և վարժութենեն առաջ իս գանձ զուարձախոսութիւն մը առաքինական և վայելչական ընտղը բարոյական իմաստաթիւն թիւնն է, զրուարձախոսի խառնածք արինեն և ուամուշեն խառնածք, գենե ծունք և զուարթէն խառնածք է, աչքն ուրախ է, բայց ծիծաղկոտ չէ, վասն զի արինայինը զրուարթութեան կ'օգնէ, առաջնորդացինն ալ սրամնութեան կ'օգնէ. ասնք իրարու շափուարիչն ։ Այս յայտկաթիւնն ուներ Հռոմացից Կրասոս առնարանն որ իւր ծոնքը և հաճական բնաւարութեամբ այնպիսի դարձուածներ կը բերէց իւր խօսքերս մէջ, որ պահն ու կնդիրները կը խնդային, ուս կայն ինքը չէր խնդար .

## ԴԱՍ ԶԲ.

## ԶԱՒԵՐՃԱԽՈՍԻ ՎԱԽՃԱՆԵՐ

Զուարձախօսի նպատակը իւր զուարձախօսութեամբն համեստ ուրախութիւն մը առաջ բերելն է , ընկերական խումբերուն և մասնաւորաց մէջ , առկայն բնադրէս որ կու այս զուարձախօսը , այն այն ազ ընդունիլ պետք է , որ կը խայթէ և խայթուիլ շնչեր նաև գեղջուկ է . և ոչ զուարձախօս , վասն զի պիծակը և կարիչն են որ կը խայթեն , և շնն ուզեր խայթուիլ :

Կամ գեղջուկ է այն զուարձախօսութիւնը որ փոխանակ բերինք յքնելու . կը տրամբցնեն կամ կը բարկացնեն :

Զուարձախօսութիւնը երեւն առանց իրենց անսակը փախելու . միաւ ճաներ կը փախեն , և առելի առենարանները զայս իրենց օգնական կ'առնան , երբ յանցաւորը ամացեցրնել կ'առնեն , ինչպէս որ խո գով օծաւած սլաք ետքագցն կը ներդրուեն , այսպէս ազ նախատինը զուարձախօսութեամբ քաղցրանալով աղդու կը ներդրուեն :

Ակենքըն որինաց անիբառութեան պաշտպանները ձիմաղը սրտամագթեամբ առելի կը խոցէր քան թէ հաստատոն փառներով :

Պատեցազմի առաջնորդն ևս իրեն զինութիւնը քաջալերելու համար զուարձախօսութիւնը 'ի զորձ դնելով երբեմն մծապէս կը շատ հին , ինչպէս որ Լէոնիասան լրաւ երբ իւր զօրքերը թշնամեաց քաղցնութենէն զարհութած ըրին «Այնչափ շատ են թշնամաց զէնքերը որ արեգական երեսը ծածկելով զայն կը մթացընեն» ծիծաղեն լով պատասխանեց անոնց «Ուրեմն պւելի առջկ , զի շուքի առջ պիս պատերազմինք» այս զուարձախօսն խօսերով թէ զարդն ամաշեցոց . և թէ երկիրը անոնցմէ բարձաւ :



## ԴԱՍ 29

ԶՈՒՔՐՁԱԽՈՑՆ Ի՞նչ ՕՌԻՆԱԿԱՆ ԿՐ ԳՈՐԾԻ

Օրէնտիժները երբեմն կծ անող զուարձախօսութիւնները և անհամուա վարդունքները արդիւցին, անոր համար որ մին կը գտնացցինք և միւնքներ և միւնքներ : Բայց աեսան որ կարելի չեղու միջին ճանապարհ գտնելը, հարկ եղաւ կամ ազատ թողուլ և կամ խպառ բառնալ և որովհետեւ իսպառ բառնալն ալ արամալը և տիրելոյ մծ ֆասէ, ուստի զուարձախօսի դատաստանին յանձնուեցաւ ոչ առաւելութեան և ոչ նուազման յարգ անլ, հապալ միջին ճանապարհաւ իւր և իւր ընկերոջ արամութեան մէջ ըստ աեղայն և ժամանակին զայն զուարձացրելու գերը կատարէ :

Այլ է տիրուր ժամանակի զուարձախօսութիւնը, այլ է ուրախ ժամանակի, այլ է հարսանեաց, այլ խրախուսանաց, այլ յանդիմանութեան, այլ սիրսղութեան . երբեմն այս աւուր զուարձախօսութիւնը եթէ վարին ընես յուրի կամ խելադար կը համարուիս :

Թոմաս Մոռոս երբ մահուան դատապարտուեցաւ, կառափնանի սանդուխէն վեր ելած ժամանակը զուարձախօսութիւնը և ինդրալը ըստ սպասառորաց մէկին, կ'աղաշէմ որ վեր ելած ժամանակս ինձ օդնես, զի վար իշտծ ժամանակս ոչ պէտ օգնութիւն ինդրելու պէտք ունիմ : Ամենք կու լային զայն, բայց ինք ուրախութեամբ կը զուարձաբռնէր :

Ըստ առասպելաց՝ էշը աեսնելով որ Սկունդ (շունը) իւր աիրոջ քծնելով պարզեներ կ'ընդունի, ինքն ալ յօժարեցաւ նոյն խաղը կատարել և պարզ ընդունիլ . բայց երբ առաջի ութերը վերցընելով աիրոջ կուրծքին աալոգ՝ յերկիր կործանեց զայն իւր

աթոռութ, փոխանակ պարզե առնելու՝ մահու վճիռն առաւ։ Այս դասէն կրնան օգուա քաղել անփորձ զուարձախօսները։ Մետասաներորդ Լուդովիկոսն թագաւորելէն առաջ աքսորուեցաւ, և իւր աքսորանաց տեղը, աղքատիկ զուարձախօսի մը հետ սակայ կը տեսնուէր և իրբե պատիւ շողզամը կ'ընդունէր և կ'ուտէր, երբ Լուդովիկոսն վերադարձաւ և թագաւորեց զուարձախօսն տեստւթեան երթալով մեծ շողզամ մը ընծայ տարաւ թագաւորին, և սիրով ընդունեց ու պահեց և մեծամեծ պարզեներ առաւ ու արձակեց։ Զայս աեմնելիվ թագաւորի ասպետն ինքն ևս մեծ պարզե ընդունելու յուսով ձի մը ընծայեց թագաւորին, և փոխարէնը զիւղացայ շողզամն ընդունեց, պայս անպատուութեան վրայ, ասպետի աբաննջ թագաւորին ականնջ հասաւ, որուն պատասխանեց թագաւորն թէ՛ Այս շողզամն իմ քովս հաղար գահեկանի պրժեք ունէր, բայց իւր ընծայած ձին ալ մէկ շողզամի արժէք ունէր իմ քովս զոր փոխարինեցի իրեն։

Օգոստոս կայսրն կծանող կատակ մը զրեց իմաստասէր Պողոսնի ընդդէմ, որպէս զի նորա սրամէտ հանձարը զրգուէ բայց Պողոսնին շպատասխանեց, բայց թէ՛ «Ձեմ կրնար ընդդէմ զրել այն մարդուն որ կարող է զիս ասպալիլ»։

Սպանիացոց Հասմիրոս թագաւորն այնչափ պարզամատ էր՝ որ պարզամիտներն անզամ զայն պակասամուս կը դատէին, և շատերը նորա փառաց մեծաթիւնը կ'արհամարհէին, և խնդալով զայն կը հեգնէին։ բայց նա հետզիտէ սթափելով բաւա «Ոմանք պահապահ կը շատախօսեն որ նոցա ձայնը զանդակի հնչիւն կը համարուի»։ Առ այս հրասարակին վրայ զանդակ մը երեցաւ, և զինք ծաղրող շատ մը մեծամեծաց զլուխները նոյն զանդակի բոլորափրը շարած, նաև զրած էր այն զանդակին վրայ թէ՛ «Ոչ զիսէր աղիւսակին այն ընդ ում խաղայր»։ այս զանդակը ամեն զանդակներու ձայնը մարեց, ոմանք մահուամբ, ոմանք ահարկութեամբ այս զուարձագործութիւննը և ամեն զուարձախօսութիւնները լոեցայց։

## Դ.Ա.Ա ԶԴ.

## ԳԵՂՉԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԵՂՉԿՈՒԹԻՒՆՆ է պակասութիւն զուարձախօսութեան, իսկ ինը կատակութիւնն է առաւելազանցութիւն :

Հրեշ էր Մանդիոս՝ որ իւր որդին սպաննեց. սորա հակառակ՝  
հրեշ էր և ոչ մարդ Պաղոմէոս՝ որ իւր հայրն ապահննեց, սորա  
բնական օրէնքէն դուրս բացտիքի վիժմունքներ. են և մշ մարդ։  
Անստոյդ մաց այս երկուքի շարեաց մնձութիւնը. թէ ո՞րն արդեօք  
շատ մեղանչեց առ բնութիւնն, հայրասպանը որ երարձ այն կեանք  
յորմէ ինք կեանք առած էր, թէ որդեսպանը որ բարձու կեանքն  
անկէ որո՞ն որ ինք տռած էր այն կեանքը :

Հայրասպանն ապերախտ է, որդեսպանն անդասմ :

Բնութիւնը որդւոց պարտաւորութիւն առաւ, հարց սէր :

Հեթանոտական օրէնքը հայրասպան որդւոց խփառ պատիժ կու  
տար, իսկ որդեսպան հարց պատիժ շկար, բայց եղիպատցիք օրէնք  
սահմանեցին, որդեսպան հայրը երեք օր իրմէ սպաննեաւ առդրւոյն  
անթաղ մարմառոյն քով պիտի նստէր՝ ի անո ժողովրդեան պատիժ  
մըն որ մէկ կողմէն պատիժ չէ միւս կողմէն անոտանելի պատիժ է :

Ասկէ անտանելի պատիժ մը չիրնար լինիլ հրապարակական. ա-  
տեան մը ուր ուկնդիր է բոլոր ժողովուրդը, գիսյ են. ամեն պչքերը  
որք կը տեսնեն զործուած եղեռն, ամաստանտոյն է հօրմէն ապահնուող  
մռեալ դիակը, դատաւորն է մնաց խիղճը, երկու դահճճներն են  
սէրն և կոկիծ. ողորմիլի խայտառակութիւն, երբ նեխեալ մար-  
մինէն ժահահուաթիւն կը բռւրէր, հայրն աղէկառը կը մաշեր և  
կը թալկանար, զաղիր որդունք մռելլոյն մարմինը կը կըծէին, կեն-  
դանի հօր սիրար և ողին, անբարրառ զիակ որդւոյն լուելեան կը  
կշոտամբէր հօր անզմութիւնը, մեռէլը իւր անշարժ վիճակի մէջէն  
անտանելի տանջանաք իւր որդեսպան հայրը կը չարշարէր :



## Դ.Ա.Ս ՂԹ

## ՏԵՇԱՐՉԻ ՄԷՇ ՏԵՇԱՐՉԻ ՎՐԵՅ ԱՌՆԵՑՆԵՐ ԻՐԱՌՈՒՆՔ

Թերդեա բնութիւնը՝ մին ծառայ, միւսն աղաստ չըբաւ, ամենքն ալ հաւասար ըրաւ, բայց այլ և այլ շարժութեր, ածանցմունքներ, տեղերու դիրքեր եւայլն զօրս յառաջագոյն ալ յիշած եմք՝ մարդկանց մին քան զիկան ջրաւառ և հանձարել կ'ընէ, զի ոմանք ծնած են այնպէս զգանավիտ և կատարեալ, որոնց զիտես թէ հրամայելու համար, ծնած են, ունիւր ալ այնպէս ախմար և խելաթափ որք ծառացեցն արիշ բան չեն զիտեր. այն որ հանձար չունի պէտք է որ ուրիշներ հանձարավ առաջնորդուի :

Այս եղանակաւ թէ անհասաները և թէ ժողովուրդները որք յարաւարաթիւն չանին զայլս ծառայեցընելու, և իրենց պէտքերը հուգարու համար ծառայելու յօժարութիւն ցոյց կու տան՝ անոնք պետք է արիշին ծառայեն դաշինքով մը և անկէ հոգան իրենց պիտիքերը :

Ապամատացինեցը և Լիւրիկեցիները վայրենի գաղանաց հետ կը բնակեին և իրեւ զկայրենի զազան կ'ապրէին. Հռոմայեցիները առոնց զթալով թէւ բռնութեամբ ստրուկ ըրին, բայց հետզհետէ կըթելով այն վայրենիները մարդկանց շարքի մէջն առին :

Արժանի է աղատութեան այն որ բնաւ չգիտեր թէ ինչէ ծառայութիւնը, արժանի է զթութեան այն որ զայն շար պատահարի մը ձեռքով կորսնցուց. արժանի է ծառայելոյ այն որ զայն փողով վաճառեց. բայց գիտնալու է որ ծառայութիւնը շկրնար ընկերութեան շարքի մէջ մտնել, հետեաբար զուրկ է քալաքական իրաւունք :

Այն որ աղատութեան կը բաղձայ, շկրնար ծառայութիւնը սի-

բել, այն որ ծառայութիւնը կ'ատէ, կարելի չէ որ իւր տէրը սիրէ, ուրեմն վայ այն տէրերուն որ իրենց ծառաները կը շատ ցընեն :

Աւանդակի մէջ փակուած թուշունը՝ թէե շատ լու ինամուի և արքունի պաշտաներու և զարդարեալ պարտէզներու մէջ բնակի, առակայն միշտ հնարք կը փնտուէ, որ վանդակի ծակերու մէկէն կարողանայ գուրս ելնել և ինքզինքը ազատել :

Ծառան աւելի կ'ընտրէ ազատ մուրացող լինիլ քան թէ փարթամ ծառայ մազ : Ծառանիւր տէրը անսած ժամանակ զբու թէ իւր դահճճն է այն :

Սակայն այս ծառաներու և այն ծառաներու մէջտեղը մեծ տարրերութիւն կայ, որք պայմանի մը առկ չէ թէ իրենց պնդը, այլ իրենց աշխատաւթիւնը կը ծափեն ծառայելու ժամանակաւոր և վարձուց փօխարինութեամբ, այս կամաւոր ծառայութիւնը ազատութիւն կը համարուի, վասն զի իւր ընդունած թոշուկը չնշած ժամանակը, ծառայութիւնն ալ հետք կը ջնջէ և ազատ կը լինի: Այս շրջանի մէջ ոչ տէրերը առանց ծառայի կը ման, և ոչ ծառաներն առանց տիրոջ. և այս կարգի ծառաները քաղաքական իրաւունքներէն զրկուած չեն, ինչպէս որ պարտուց ալ բաժանորդ են, վասն զի իրենց անձը ազատ է և քաղաքացիութեան անդամ: Անակ աշխատութիւնը ծախած է, և այն մէկին կամ մասնաւորին, իսկ ընդհանրութեան մէջ ազատ է. ասոնք հաւատարիմ սպասուորներ են իրենց տէրերուն և ոչ թշնամիք, զի ազատ են իրենց զիրենք արձակել ուզած ժամանակին:

## Դ.Ա.Ա Ճ

## ԵՐԻՇԽԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՅԹ

Ընթերազան կենաց մէջ ամուսնութիւնն է փոխագարձ պարագաց և իրաւանց այն զաշմնքը՝ զորա ըստ ազդաց առվորութեանց այլ և այլ եղանակի առակ կը կապէն երկու ամուսնութեալները, և նկեղեցեաց վկայութիւնը զայն կը վառերացընէ օրհնութեան մը հուազերգութեամբ :

Եւ յետ այնորին կամառորյանձնառական պարագերնին և իրաւանքնին կը վհարեն միմանց երկու լծակիցները :

Սայդ է որ երկու լծակցաց միաբանութիւնն , և ամուսնութեան մայր , բայց այս աղ չշմարիտ է որ նոյն ամուսնութիւնն է անմասնութեան հայր :

Ժաման զի մէկ կողմէն մէրը՝ ամուսնութեան ջահը կը վառէ , միւս կողմէն առելութիւնն զբայ հասնելով զայն կը շնչացնէ : Նոր տեսնես որ միշ ժամանակի մէջ փափոխական հռատացնթեանց ետակէն կու դայ համբ ապաշաւ մը , և ուրախ հարանածութիւնն կը հետեւ տիտար կածը : Այս փարձը հետեւեալ խօսքն արզասաննել առառ մէկին թէ ակինչ երկու օր միայն երջանկութիւն ցցց կու այս խոր էրկան , այն է հարանեաց և թողմնն օրը :

Իսկ ազատաթեան մասին անկէ տելի մէծ ծառայութիւն շկայ երը երկու ազատ անձններ , իրենց ազատ կամառ անձնատոր կը լինին միմանց տէրութեան :

Անձնք որ կամառութեամբ խօնարհեցան այն լուծի առակ , կ'ոկոխն ակամայ կամք տանել զայն : Վայրկենական կամք կը լինի նոցաւ մշան ջննաւոր հարդի :

Ի՞նչ գտանադէտ է նոցաւ առաջատակ բաժանումը , որ այս յետ

այնորիկ ծառայ չե , բայց աղատ ալ չե . ոչ իւր ընկերոջն է և ոչ ալ ինքն իւրն է , աղատ չե ուրիշի մը երթալ . յետ այնորիկ ծառայութիւնը ստրկութեան շղթայ դառնալով՝ պիտի քաշե զքեզ մինչեւ զերեզմանի դուռը :

Բնութիւնը անասնոց ևս զաւակի սէր տուաւ , բայց չկապեց զաւնոնք մէկ անհատի հետ :

Նաև կանանց մէջ այնչափ տարրեր յոռութիւններ կան որ համստութեան շքնաղ գէմքի տակ պահուած են , ինչպէս որ թուառոր օձերը զեղեցիկ ծաղիկներու . տակի կը պահուին . տուաջին անդամն չեն մնանացուքր , վերջեն ճանաչչն ալ այլ ևս օգուտ չըսնի . երկու բառ պիտի կը մնայ ընել : կամ յուսահատ համբերութեամբ տամնել , կամ ձեւը դադիչի :

Անհատական մոլութիւններէն զատ , ուրիշ բնական սեռի յառանիք պահպատթիւններ եա կան : Կի՞ մի եթէ անորրեցչան է , որչափ ամօթ և նախապինք է . Եթէ պարկեցչան՝ որքան զրուազ ժղագուտթիւն : Եթէ պարագան է՝ քանի վայրարար ծախսեր կը պիրէ : Եթէ Հարուստ՝ որքան կը խրախանա . Եթէ ամուշ է՝ որչափ վէճ և կորի . Եթէ բազմածին է՝ որքան թշնամիններ և թշնամանդուններ . Եթէ մամնկամարդ է՝ որքան պէճասկրութիւններ կ'ապչ . Եթէ հանակառորդ՝ որքան նախանձախնդիր է . Եթէ ագեղ է՝ անհամաց չիւր լնինքին . Եթէ զեղեցիկ է՝ նաև հանոյ և ուրիշ տեսնոնց , որոց որ չե իսկ :

Այս որ շատերուն համեյ է , նորա պահելը շատ դժուար է :

Պիուազդորաս մէջ գիլխոփան , իւր ամենամեծ թշնամին ամ շարիք մը հասցունելու համար՝ իւր աղջիկը անոր կիութեան տուաւ :

Այս տեսութեամբ ամուսնական իրաւունք որքան որ հետի ըլլայ ամեն օրէնքներէն , սակայն ուրիշ անսութեամբ մը շատ մնա է . Աստուածային օրինաց և իրաւանց . վամն զի Աստուած կը պարտաւորի զմարդիկ իւր հիմնմանտը որ ամին , զորանա ու երկիրը լեցնեն ; Ամստուծոյ իմանք՝ յայստիլու համար . և մէկ օնորդու մէկ կին միայն տուաւ , և այն նորա կողէն առնելով՝ նոյա սէրը միշտ կլատ՝ պահելու համար , թէ իրենց ընկերին և թէ իրենց զաւակաց

իրենց մարդուն և արիանը. կինը մարդոյն կողէն առնելով յարանց Աստուած. թէ ո՞չ զլիոյն պէս բարձր. է. և ոչ ուղին պէս ասորին. այլ միջատահման կողէն որ կը նշանափէ հաւասարութիւն և հաւասար օդնուինութիւն. թէ ի շարիւ և թէ ի բարիւ.

Դաեւ ամուսնութեան իրաւունքը քաղաքական դաշինքով կը նուկրագ սրծուի. որով իրաւունքը ոնենան միմեանց ընչից և աստցուածոց վրայ. մին. մասին տիկարութեան ազնելով; զիրար. պաշտպանելով. և փառաւով այն տատուած ամբամոն յաջորդական շարունակութեան. կապը չխնչը. համար զդու Ապօմնականը մը շարունակեն պատմեց շղթայի ոզը կտրելու մինչև յանհմանն Աստուծոյ հրամանին.

Սպարտացիները մասուրնի մէջ ամուրի մարդկանց աեղ չեին տար. առաջ քերելավ; թէ՝ այն որ քաղաքացիներու թիւր չկրնար աւելցընել, ինչպէս կրնայ ի շարս քաղաքացւոց դասուիլ: Աստուածային, բնական, քայլագատկան, ապացուին գրէներները և իրաւունքերը. կը պարտաւորին պմն անհօսա ամունանալու, աստօւածային հրամանը. բնութեան օրէնքը. ազգաց իրաւունքը լեցունելու համար, եթէ չինէր ամուսնութեան սերը բնամթեան հրաշալի կերտուափները մարդոյն համար անձեւամբ պիտի մնային, ինչպէս որ Աստուծոց անձեւորութիւնը մեզմէ մնապոն պիտի մնար: Այլ ինդիր է որ բնութեան օրէնք անզի տղաւա շնորհական օրինաց առ Ձեւն, և ծննդականութիւնը կուտրենենք:

Քաղցր է ամուսնական ընկերութիւն երր համաձայնութիւն և դաշնաց հաւասարմութիւն. կայ, վասն. պի մին զէն ի ձեռին հայրենիք կը պաշտպանէ. միւսն ի տան զաւակները կը խնամէ. և հայրենեաց պաշտպանին յաջորդ կը հարցանէ:

Մին կ'աշխատի. և տպաւապեշտով կը քերէ. կ'ըշտեմարանէ ամեն պէտքերը, միւսն խնայողական տնտեսագիտութեամբ ի կշիռ դնելով. վաստակաւորի աշխատութեան ծանրաւթիւնը և իւրեանց և իւրենց զաւակաց ապագայի պէտքերը, այնպէս խնայողութեամբ և շափով կը անտեսէ որ բնութեան հեղինակն իսկ կ'ուրախանայ իւր

պարզեած բարեաց յարդանք պահուելուն և արժանառութեամբ անանելըյն վրայ : Մին՝ կերակոր կը բերէ այստք և անպատճառ, միւս կը յարդարէ և կը պատրաստէ . ի՞նչ վայելուշ ե երբ այրը՝ իւր արագին վաստակարեկաթենքն, կինը՝ ներքին ընտանեկան զրադաւուքներէն, զաւակները իրենց գաստիրակութեան վայրերէն պայմանեալ ժամանակին՝ ի հանդիսա 'ի աղջան կը հրաւիրուին և երանովին կը վայելին ' Նախախնամութեան պարզ իւրենց աշխատաթեան արդինք փառք առաջը ' Կախախնամութեան :

Ովկ կինոյ կնոշմէն առելի իւր էրկան ցաներուն ցանելից և ուրախութեամբ ուրախանից լինիլ, որ վիճակակից է նօրս վիճակին; ովկ քան զայն առելի երկայնական է իւր ընկերոջ հիւանդանութեան ժամանակին, կիոշմէն առելի ովկ կինոյ անձնառուք լինիլ երկանը վերահաս վասնգիներու մէջ, ովկ անկէ առելի պահմարիչ և էրկան վիշտերու մէջ, մվ անկէ առելի հաւատարիմ և իւրհարդներու մէջ :

Աւրեան խորհրդով ամենինեց բնութեան հեղինակ անառնական կապ, որպէս զի մի գուցէ արած պահառավիճաններէն փոխ առնառն կանուք իրենց թերութիւնը. կինն որիշ բան մը չէ եթէ ոչ անկառար մարդ, ուրեան իրական կառարելութիւնն է որ զայն ուղղութեան մէջ պիտի պահէ :

Բնութիւնը ունեց կենզանեաց թոյն տուստ . կանոնց ալ չարահ թիւն, զիրենք պաշապաննելու համար . արանց պէտք է հետզհետէ զանոնք իրենց պէս կառարելազործել :

Կանոնց մնալութիւնը արանց առաքինաթեան հնասելու չափ ոյժ չունի :

Քաղցր է ամուսնութիւնը, կ'ըսէ Ասկերերան, վասն զի նառա հանդիսա է, բայց եթէ անհամաձայնութիւնը առելի ունենաց՝ ովկ կիանոսի խո ովեալ ալեկոծութենէն առելի զառն և անառնելի է :

Աւրեմն ոչ խոյս տալու է և ոչ կոյր զկուրայն ընտրելու է իւր այն ընկերը, որուն հետ մինչև՝ ի գերեզման անբաժանելի կը կապուի: Մտաւոր մարդու մը համար կարելի է առանց փուշի վարդ մը ձեռք բերել, քան թէ դեղեցիկ, աղնուական, հալուստ, պարկեշտ, իմաստուն և հանդարտ կին մը ընտրել, ամենէն դժուարին աշ այն է՝ գիտնալ որ այսպիսի կին մը ուր կը դանուի, որ թէ երջանիկ լինի ինքը և թէ երջանիկ ընէ իւր ընկերը:

Բնութիւնը վարսով և օրէնք քողով կը ծածկեն կնոջ զլուխը, վասն զի իւր երկան կամեն՝ ի զատ ուրիշ զլուխ չունի:

Թագաւորութիւն մը մշտնջենաւոր մեալու համար՝ թագաւորին թագուհի պէտք է, տուն մը տեսականութիւնը պահէլու համար հայր և մայր պէտք է, հայր միայն բաւական չէ առանց մօր, մայրը ոչ աղախին է, և ոչ իւր երկան տէրը, այլ բնիկը, ամուսնական մատանին գերութեան շլթայ չէ, այլ ընկերութեան կապ է:

Խրբ տիկինը տունէն դուրս կ'ելնէ, անկարգութիւնները ներս կը մնան: Այր մը եթէ կը կամի որ իւր կինը պարկեշտ լինի, նախ ինքն թող պարկեշտ մեայ:

Կինը իւր երկան պատիւը պահելով իւր ողատիւը կը պահէ, զի մի են. և իւր պատիւը պահած ժամանակը երկան պատիւը պահած կը լինի որ իրմէ անմիկնելի է:

Անջ զգեստ վայելուչ պէտք է, և ոչ աճնադարդ, զի այն որ աղաւնոցը կը զարդարէ, օտար աղաւնիներ կը հրաւիրէ:

Կինը ոչ միամիտ պէտք է լինել և ոչ խորապէտ, զի միամիտն ծառաներու շարութիւնը չի մանար, խորագէտն կ'ուղէ մարդկանց խոհեմութեան սահմանէն միւս կողմն անցնիլ:

Այս երկու ծայրն աշ վտանգաւոր են, բայց լաւ է միամիտն քան զխորապէտն, զի միամիտն կրնայ լինիլ աշալուրջ, իսկ խորագէտն կը լինի ժպիրչ. Զարդիլի և ճոռում լինիլ առելի պատշաճ է սիրուհւոյ քան թէ տիրուհւոյ:

Պաշանի զրոյը յայտնի կառկած կը ծնանի, և եթէ այրն չկաս-կածի իւր կնք ջմէն, աշխարհ ոլիտի կառկածի դառնեն:

## ԴԱՍ ՃԱ.

ՄԱՐԴՈՒ ՄԸ ԻՒՐ ԵՆՉԻՆ ՎՐԱՅ ՈՒՆԵՏԱՄ ԻՐԱԿՈՒՆՔԻ

Քանի մը պարագաներու մէջ մարդս աղատ է և իրաւոնք անի իւր անձին վրայ , վասն զի աղատ է զործել արդարութեամբ կամ անիրաւութեամբ , թէե այս ալ փոփոխութեամբ է , զի արաւարին ձեին նայելով մէկը իրաւունք կ'ունենայ իւր անձին վրայ մինչեւ խի զայն սպաննել , բայց ուրիշ ներքին ուղղութեան օրէնք մը վրայ համելով զայն կ'արդիլէ , և եթէ շանսայ , յանցաւոր կը դատուի Աստուծոյ և քաղաքական ուղիղ օրինաց առ չեւ . վասն զի ինչ որ իւր չէ , ինչպէս կրնայ զայն բառնալ : Մարդուն հոգին յԱստուծոյ և մարմինը իւր ծնողաց արինեն առած է , այսպիսիները կ'անիրաւեն առ հայրենիս , վասն զի նոյս անձը հայրենեայն է և ոչ իրենց :

Նըրբեմն մարդ բարի նպատակի մը համար զործ մը կ'սկսի , բայց ձախորդ գեպը մը վրայ դալով կը վնասի , սրբանութեամբ ուրդաք է , իսկ վերահաս միջոցը չար , և որովհետեւ միջանկեալ պարագան նախատես չեղած ինքնիրեն վրայ հասած է , մարդս շատ յանցաւոր չեղաւուիր , զի յոչ կամաց է վնասն :

Երծիւը Եպքիոսին թէւսկատ չար ըրտ բայց անիրաւութիւն չըրաւ , արծիւը կրեայն առած բարձրէն տարած ժամանակը Եպքիոսին իւր հաղատ դլուխը բացած , և դաշտի մը մէջ նստած կը բանաստեղծէր , երբ արծիւը նորա դլուխ տեսաւ բարձրէն , զայն հաստատուն քար կարծելով կը նոյն նորա դլուխ վրայ ձեզ , որպէս զի ջախջախուի , և ինքն իջնէ իւր որոն ուտէ . բայց արծիւն քար կարծուածը բանաստեղծին դլուխն էր , և իւր միտքն բանաստեղծը մերջնահետ չէր , այլ իւր որոն ջախջախուի էր այն հաստատուն քարի և ոչ թէ բանաստեղծի դլուխն վրայ :

Այսպէս ալ մարդ մը դիսկուածով կարելի է իւր անձին վթահասցընէ , և անիրաւ չամարուի , բայց երբ կամաւ և յօժարութեամք զինքը կը մեռցընէ , թէ չար կը գործէ , և թէ կ'անիրաւէ իւր անձին :

Հերակլէս իւրցաւերուն շղիմանալով ինքզինք կը ակի մեջ ձղեց : Կատովն իւր թշնամոյն ձեռքին չխնարհելու . համար ինքզինք մեռցուց :

Խրկուքն ալ վթասակար մահն ընտրեցին իբրեւ իրենց վթասակար ցաւերուն աղատութեան գարման , մին սուրը , միւն հուրը . երկուքն ալ վերահաս չարկբներուն կ'օխային , և ոչ թէ իրենց անձանց :

Սաւուղ վիրաւորուած կը տառապէր , բայց չէր մեռներ , այս տառապանփէն աղատելու համար հրամայեց իւր զօրական Ամաղէս կացւոյն որ զինք մեռցնէ , զօրականն զթալով և հնազանգութեան պարտք մը կատարելու մոոք իւր տիրով խնդիրը կատարեց . այո՞ւ Ամաղէս կացին իբրեւ հրամանակատար իրեն հրամայածը կատարեց , բայց պէտք էր որ իբրեւ օբէնսղէտ մտածէր թէ ինքն իրաւունք ունէր իւր տէրը մեռցնելու , կամ թէ Սաւուղ իրաւունք ունէր պիսախի հրաման մը տալու քանի որ ինքը չէր իւր անձի տէրը , ուստի այս բարեգործ հրամանակատարութիւնը , Աստուծոյ հրամանին հակառակ չարադրծութիւնն համարուեցաւ :

Ամաղէս կացին ըրաւ ինչ որ կը պահանջէր Սաւուղի կամք , բայց չը բաւ , ինչ որ կը ողահանջէր Աստուծոյ կամք :

## Գ.Ա.Ս ՃԲ

Ա.ԲԴԱՐԱՒԹԵԱՆ ԱՅՀՄԱՆՔ ԵՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆՔ  
Ա.ԲԴԱՐԱՒԹԵԱՆ ՀԵՏ

Ասպուածաբանները կը սահմանեն թէ «Արդարութիւն է չաշրէն հեռանալ և բարի գործել»։ իմաստասէցներէն ոմանք ըսին «Արդարութիւն է, շցանկալ այլոց ընչից և ասացուածոց»։

Խակ Արիստոտէլ օրինական արդարութիւնը մասնաւոր արդարութենէն որոշելով ուղիղ սահմանեց թէ «Արդարութիւնն է այն առաքինութիւնը որով կամքը կը յօժարի ուղիղ դատաստանաւ և արդարապէս բաշխել թէ իրեն անձին և թէ այլոց, և այն՝ համեմատական հաւասարութեամբ, ինչպէս որ պէտք է, թէ բաշխելու և թէ փոխարինելու մէջ»։

Խակ արդարութեան մոլեկան ծայրն է՝ անարդարութիւնը կամ անհաւասարութիւնը, և այս այն մոլեկան ունակութիւնն է, որով մարդ կը յօժարի կամաւ անարդար գործել, չպահելով համեմատական համեստ միջասահմանը ու փոխարինելու և ու բաշխելու մէջ։

Արդարն առաքինական ունակութենէն առաջնորդուած կը գործէ ամեն բանի մէջ արդարապէս և ուղղապէս, իսկ սորա հակառակ՝ անարդարն մոլեկան ունակութենէն թելադրեալ ամեն բանի մէջ անուղիղ, անարդար և անիրաւ կը գործէ, կ'ուրախանայ իւր անհաւասար գործերուն վրայ, վասն զի տղեղ ունակութիւնն իրեն երկրորդական բնութիւն եղած է։

Արդարն կ'ատէ ամեն անիրաւութիւնները և անարդարութիւնները, իսկ անարդարն կ'ատէ ամեն արդարութիւնները, և կը սիրէ իւր գործերը։

Արդարն բաշխելու ժամանակ անձանց արժանութեան համեմատ

կը բաշխէ . իսկ անարդարի արժանաւորութեան չափը իւր նպաստն է . ասոր համար արդարն՝ առաքինիները հզօրներէն վերադաս կը համարի , իսկ անարդարը մոլիները վերադաս կը համարի քան զառաքինիս . և այս շատ ստոյգ է , վասն զի երբ մոլին զմոլին կը վարձատրէ ; հարկաւ իւր մոլի անձին ալ վարձահատոյց կը լինի :

Արդարն իրաւացին օգուտէն վերադաս կը համարի , թէ զնէ և թէ վաճառէ արժանէն աւելի բան մը չըներ :

Իսկ անարդարն՝ օգուտն իրաւունքին աւելի նախապատիւ կը համարի , եթէ վաճառէ՝ կը խարէ , եթէ զնէ՝ կը գողանայ . և շահասիրի հետ ունեցած սակարկութիւնը վէճով կ'աւարտի :

Արդարոյն ձեռաց աւանդ յանձնէ , ամնէ թանկազին և հազուադիւտ ապրանքներդ անվտանդ ու անֆաս կ'առնես ուղած ժամանակդ :

Իսկ անարդարին յանձնածդ ովկիանոսի խորերուն տակը կ'ընկղմի , հնարք մտածէ որ կարողանաս դուրս հանել :

Ցանձնէ նոցա երկուքի ալ արքունի իշխանութեան կշիռը , արդարոյն կշիռի մէջ աղքատի և հարուստի յանցանքը հաւասար է , իսկ անարդարույն կշուոց մէջ աղքատի յանցանք մեծ է միշտ , մեծատանց յանցանք փոքր է , և այս կարի իրաւամբ է , վասն զի հարուստէն ընդունածը . . . աղքատի յանցանաց վրայ բարդելով ընականարար պիտի ծանրանայ աղքատի յանցանք :

Օրէնք արդարույն ձեռք հաւասար արդարութեան կշիռ է , իսկ անարդարի ձեռք իւր սիրելիներու համար սարդի ուռկան է , ուռկէ շուտով կրնայ միւս կողմն ձողոպարիլ : Իսկ իւր ատելիներու և թշնամիներու համար Հեփեստեայ աղամանդէ հիւսած ցանցն է , որու մէջ բռնուողը կարելի չէ որ ազատուի , թէե աստուածներու շափ զօրաւոր լինի :

Անարդարն տնտեսական իրաւանց մէջ ուղղութիւն չպահեր , իւր լծակցի հետ անհամ և անախորժ կը վարուի , իւր զաւակաց հետ իրեւ ծառայի հետ կը վարուի , և ծառաները անամնոց տեղ կը դնէ . իսկ արդարն ծառաներու հետ գթութեամբ կը վարուի ,

որդւաց հետ սիրով, ամուսնուցյն հետ հաւատարմութեամբ, բոլոր մարդկանց հետ մարդասիրութեամբ։

Արդարն՝ զինք սիրողի փոխարէն կը սիրէ, անարդարն մրայն իւր անձ կը սիրէ։

Արդարն՝ իրեւ մասպետ, իւր կիրքերը կամաց կը հնազանդեցընէ, և կամին ալ բանին կը հպատակեցընէ, իսկ անարդարն իւր անձի և հաւատարմութեան առաջնորդութիւնն վեր՝ ի վայր կը շրջէ, բանը կիրքերուն և կիրքերը արտաքին զգայութեանց կը հնազանդեցընէ։

Արդարն՝ առւած ժամանակը, փոքրերուն քաղցրութիւն կու տայ, հաւատարներուն՝ հաւատարմութիւն, մեծամեծներուն՝ յարգութիւն, իշխաններուն՝ հնազանդութիւն, և Աստուծոյ՝ երկիւղածութիւն։

Ֆոկ անարդարը՝ ոչ քաղցրութիւն, ոչ հաւատարմութիւն, ոչ մեծարանք, ոչ երկիւղածութիւն կու տայ, վասն զի մտքն անուղիղ է և ամեն իրաւոնքներ խոռվելով կը շփոթէ, թէ աստածածային, թէ բնական, թէ քաղաքային, թէ ազգային և թէ մարդկային։

## ԴԱՍ ՃԳ

### ԽԱՀԵՄԱՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՒԲ ԵՒԿՈՒ ՃԱՅԹԵՐԸ

Ուղիղ բանը՝ որ մինչ ցարդ առէալ յիշեցինք, սորա վրայ հաստատած է առաքինութեանց միջասահմանները, և ասկէ կախումն ունին ամեն իմաստուն ընտրութիւնները, և մինակ ասով որ մարդն կ'որոշուի միւս անաստւններէն։

Եւ ուղիղ բանն ալ խոհեմաւթիւն ըսել է, որ կարկինով դիւաւորութիւնը ուղղութեան հետ, և միջոցը նպատակի հետ վայել շապէս կը շափէ, անոր համար առաքինութեանց մէջ խոհեմու-

թիւն ամենուն մայրն է, վասն զի նորա ձանաշում՝ ողղագործութիւնը առաջ կը բերէ:

Խնչմէս որ միտք հոգւոյ ամեն կարողութենէն աղնիւ է, այսպէս ալ խոհեմութիւնը ամեն առաջինութիւններէն աղնիւ և վեմ է, վասն զի խոհեմութեան ունակութիւնը իմացական կարողութեան մէջ կը բնակի. կարդադրել, խորհուրդ առաջ, ուղղել և պատճառներ առաջ բերել, յառաջատես մտաց զործն է և չէ թէ կոյր կամաց, կամ անբան կրկց և խարերայ բաղնանաց.

Առաքինական այս ունակութիւնները՝ որոնք որ իմացական կարողութիւնները կը կատարելագործեն, ասոնք իմացական առաքինութիւններն կը կոչուին, իսկ անոնք որ բաղնողական կարողութիւնները կը կատարելագործեն, անոնք ալ բարոյական առաքինութիւն կը կոչուին:

Մենք արդէն բարոյական առաքինութեան վրայ խօսեցանք փաքր՚ի շատե՛, մեզ կը մայ այժմ՝ խօսիլ իմացական առաքինութեան վրայ, որք մեր հայեցողական և ընդհանուր կամ զործնական և մասնաւոր միտքերը կը կատարելազործեն:

Հայեցողական առաքինութիւնները երբ մեր միտքերը կը կատարելագործեն հանրական սկզբունքները ձանաշելու, այն ժամանակ ունակութիւն մտաց և կամ հանձար կը կոչուի. բայց եթէ մեր միտքը կը կատարելագործեն հայեցողական եղրակացութիւնները ձանաշելու, այն ժամանակ զիտութեան առաքինութիւն կը կոչուի:

Գործնական ունակութիւնները երբ մեր զործնական միտք կը պատրաստեն արտադին դործերուն, անկէ կը ծնանի արհետ:

Իսկ եթէ զայն կատարելագործեն մարգկային ներդործութիւնները կարգադրելու համար, կը ծնանի խոհեմութիւն, որու վրայ պիտի խօսիմք:

## ԴԱՍ ՃԴ

## ԳԻԾԱՒԹԻՒՆ

Այս վեհմ առարկայ մը՝ որուն ետևէն զնալ կ'ուզեն կայսր և թագաւոր, իշխան և դատաւոր, զօրապետ և զօրական, հարուստ և սոսկական, վասն զի այս է որ ամենք կը փառազարդէ, կը գեղեցկացընէ և կը վսեմացընէ հողին, այնպէս որ ալ չփափր և չզջնշանար և մարդուս հետ մինչեւ գերեզմանի գուռը կ'երթայ, և անկէ վերջն, ալ հողիէն չբաժնուիր. զիտութիւնը որպան որ փափաքելի և պէտք է, այնչափ ալ դժուճի և անպէտ է, կիրքերով վարակուած և տղէտ իշխանաց համար. անոր համար Լիլիանոս կայսրը՝ չզիտութիւնը իշխանաց թղյն և մանտախտ կ'անուանէր. և զարմանք չէր, վասն զի թէեւ ինքն կայսր՝ սակայն հրովարտակներու ներքեւ իւր անունն անզամ ստորապերէլ չէր զիտեր :

Նա կ'աղարտէր զրագիտութիւնը, որպէս զի իւր անդրազիտութեան վաս անունը չլսէր. կ'արհամարհէր այն զիտութիւնը, որ կրնար գեղթափ լինել իւր անդիտութեան :

Վէսպիանոս չկրցաւ լինել զիտուն, սակայն կը յարգէր զգիւտութիւնը և կը սիրէր զիտունները. գիտունները միշտ իւր քովը պահելով՝ չյայտնուեցաւ իւր տղիտութիւնը :

Այն երկիրը երջանիկ է որուն իշխանը և իշխեցեալը առհասարակ զիտուն են :

Պէրիկլէս՝ Յունաստանի մէջ, Պաղոմէոս՝ յնշիստոս, Օղոստոս՝ ի Հռոմ երջանիկ էին, վասն զի կ'ուստուցանէին ինչ որ զիտէին, կ'ուստանէին՝ ինչ որ չէին զիտեր. սոքա իրենց զիտութիւնները առկոսով կ'աւելցունէին. Անկէ աւելի զուարձալի և շահնեկան առրեառութիւն չկայ, երբ մէկը իւր ունեցածը կու տայ առանց ան-

կէ բան մը պակսեցրնելու . ուրիշի ունեցածը նորա յօժարութեամբ կ'առնու . առանց նորա դին մը վճարելու :

Գիտութիւնները երկոք են , ոմակք գործնական և ոմանք հայեցողական :

Գործնական գիտութիւններէն ոմանք բաղձանաց վերաբերեալ ներքին ներգործութիւնները կը կանսնաւորեն , ասոնք կ'ըսուին բարոյական գիտութիւն . ոմանք ալ մտաց ներքին գործողութիւնները կը կանսնաւորեն խօսելու համար , ասոնք ալ կ'ըսուին զրուցականք , ուրիշ կը քդիի պատմութիւնը , ճարտարախօսութիւնը , արամարանութիւնը , բանաստեղծութիւնը , ուղղախօսութեան կանոնները եւ :

Խսկ հայեցողական գիտութիւնն է , որ ճշմարիտն ճանաչել կու տայ մեզ , նաև . ոմանք կը նպաստեն մեզ այլ ևայլ տեսական գիտութիւններ ուսանելու , այսինքն՝ բնական , բժուարանական , երկրաշափական , երածշտական , երկրագործական , աստեղադիտասահային . սակայն տեսականն միայն ուսուցանելու . կը նպաստեն և գործնականն նիւթին . և ոմանք ալ մեզ կը նպաստեն աստեղածային բնազանցական բարձր առարկաներու գիտութեան որբ Աստուծոյ յայսնութենէն մեզ կը համնին իբրև աստուածաբանական ինչիր :

Գիտանալու է թէ այլ է գիտութիւնը որ շատ վսեմ է , այլ է արհեստ որ գիտութենէն ստորին կը համարուի . գիտութիւնը մտաց ներքին գործողութիւնն է . խսկ արհեստան արտաքին նիւթերով կը բարդի , և զղալի ու տեսանինի գործերով ձեռք կը բերուի .

Քերթողութիւնը որ գիտութեանց մէջ յետինն է նախամծար կը համարուի արհեստաներու մէջ առաջին համարուած՝ պատկերահանութենէն . քերթեաւածն է՝ զրուցական , պատկերահանութիւնն է՝ գործողական , մին ներքին խօսք կը կանոնաւորէ , միւսն արտաքին գործը կը կանոնաւորէ :

Անաստները կ'զգան , բայց չեն գիտեր , գիտութիւնը իւր պատճառներէն կը ճանաչուի , և այս մտաց արդիւնքն է . փոփոխական առարկաներու մէջ ճշմարիտ գիտութիւնը չեմբ կրնար տեսնել , զի իրաց փոփոխութեանց հետ գիտութիւնն ալ պիտի փոխուի . և

եթէ շփոխեմք տուան ընդ Շշմարիան պիտի փոխեմք . անփոփոխ առ ռարկաներու վրայ միայն կրնամք Շշմարիան զիտութիւն ունենալ . Հակառակորդի տուութիւն յանդիմանն լը Շշմարիան զիտութիւն չէ . որիշի աղիտութիւնը ցոյց առև , Շշմարտութիւն ցոյց առև չէ . Շշմարիան զիտութիւնն է անզիւզ և յայանի ճանաշումն հայեցողական գործերուն , որը ընդհանուր և հարիտուր նախացասութիւններէն հաւաքարանութեամբ մը կ'ապացուցաք , և անընդմիջական պատճառն ալ մէջը կը բավանդակուի . օրինակի համար ապացուցաւ շեալ Շշմարտութիւնն է երբ ըսես «Ծնչաւորներու մէջ մարդն ուսման ընդունակ է , վասն զի բանին ընդունակ է մարդն» :

Գիտութեան մալեկան ծայրն է անդիտութիւնը , բայց անդիտութիւնը երկուք է , և մին՝ բացարձակ անզէտ որ հեշտ է բժշկել . իսկ միւսն թիւր արամարանութենէն , սուտ ուսմանքէն , ակարութենէն , շարութենէն տռաշկու դայ , ուստի դժուար է զայն բժշկել . վասն զի նախ նորա դիտցած սիխալները և սուտերը պիտի մռացընել տաս , յետոյ պիտի սկսիս Շշմարիան ասուցանել :

## ԴԱՍ ՃԵ

### ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Առաքինութեան մէջ իմաստութիւնն աւելի բարձր և վսեմ է , վասն զի մտաց այս առաքինութիւնը մեր կիրքերը կը կանոնաւորէ և անոնց վրայ իրեւ բացարձակ տեր կ'իշխէ :

Հոգին գոյացութիւնն է , իմաստութիւնը պատահումն է , սակայն իմաստութիւնը , հոգին աւելի զերազանց է և ազնուազոյն . վոտն զի հոգին առանց զիտութեան և իմաստութեան լոյս շունեցաղ մարդ-

մին մ'է , իմաստութիւնն է որ զՀոգին արեգական պէս պայծառ ցայց կու տայ :

Իմաստութիւնը զիտութենէն վեճմագոյն է իւր երկու գերազանցութեամբն , այսինքն մտաց սրատեսութեամբն , և առարկայի բարձրութեամբն . ամեն զիտութիւնները իմաստութենէն կը պաշտպանին , իսկ իմաստութիւնը ինքն է իւր պաշտպանը , զի երբ նա անյաղթելի ապացուցութեամբ կը զինուորի , մտաց տեսութիւնք ամեն բան որոշ և բացայայտ առաջ կը բերէ , ովէ որ յետ այնորիկ զայնյաղթելու փորձ փորձել կը, և անդգնի : Տիպերոս զիշեր ժամանակ կը տեսնէր այնչափ , որչափ որ աշքի մը զօրութիւնը կրնար ներգործել , և շատերը վախնալով ետ կը մային իրենց զիշերային ֆասակար գործերէն թէ մի դոցէ Տիպերոս տեսնէ . իսկ իմաստութիւնը՝ միաք մինչեւ յերկին յարեղակն ե 'ի լուսին , յասաեղս կը վերածէ և կը քննէ ու կ'իմանայ , նաև յական թօթագիել երկրագունափ մէկ ծայրէն միւս ծայրը եղածները կը տեսնէ և կը քննէ . Տիպերուէն քանի՛ առաւել ասկէ վախնալու են իմաստութեան հակառակորդները և պակասամիտները , որ երբեմն կը յանդգնին նորա դէմն ելնել և զայն յաղթելու աեղամօթաղարտ յաղըմսուիլ :



## Դ.Ա.Ս ՃԶ

### ԻՄԱՍՏՈՒԹԵՆՆ ԼԱԽԵԿԱՆԵՐԸ

Հռոմէական հրապարակի վրայ մեծ նշան մը երեցաւ , երբ մէջ վիհ մը բացուեցաւ , և որքան նիւթ լեցուցին կլլեց և չյագեցաւ . բայց ասկէ աւելի զարմանալի նշան մը բնութիւնը ըրտա ,

զի մարդկույթին միտք բացառ անյառանկ և անհոգ, այնշափ շատ է մարդոյն, դիտանուլու իղձը որ բնաւ բաւականութիւն չունի, և որքան ուսանի, այնքան աղքատ կը համարի զինքը:

Հարստութիւնը շատցած ժամանակը աշք կը կշռանց ոչինչ կը համարի, Միկաս սսկառվ յղփացած ժամանակ առղակացաւ իւր երջեն. փափկութեանց չափազանցն զղուանք կը բերեն. վերջապէս ամեն հեշտութիւն, ապաշաւ. կամ դառն հետեանք կը բերէ.

Պատահ և փառք օրշափ մեծ են այնշափ ալ տաղակալի և ծանր, վասն զի շատերը որք մեծ փափազը կը ցանկային իշխոնութեան, ցանկանալով ցանկացան արանձառոր կենաց մնակեցութեան. անոնք որ մահուանե փախչելու հետքը կը մտարերեին, անոնցմէ շատերը իրենց կեանքեն զղուելով կամովին մահուան զիմեցին:

Այս ամեն բարիքները, այս վիճեր են, բայց անյագ չեն, կը լինան. մինակ մարդուս միտքն է յատակ չունեցող անյագ վիճը, որ որշափ որ ճարակ լնդունի, այնշափ առաւել առված կը համարի զինք, որշափ որ շատ գիտայ՝ առաւել կը փափաքի ուսնելու. որովհետև ամեն բարիքները կառ գոն և կը գնոն, բայց զիտութիւնը և իմաստութիւնը մահուանէն վերջն. ալ չեն մոռացուքր, զզալի առարկաները սահմանաւոր են, իսկ իմանալի առարկաները անսահման ե:

Որքան որ միտքն անհոգ է զիտութեան և իմաստութեան, սակայն կան միտքեր ալ որք բոլորքին հակառակ՝ աղիտութեամբ կամ անսանական ցոփ կենցաղավարութեամբ կը բաւականանան բնաւ փոյթ շտանելով զիտութեան և իմաստութեան. ասոնց համար թեսաւրոս զանգատելով կ'ըսէ, «Ինչո՞ւ բնութիւնն ասոնց անսուններու ուղեղ չտուալ որ անասնոց պէս յերկիր նայեին միշտ. ասոնց արժան էր խոտ ճարակել քան թէ հաց ուաել»:

Ոմանք ալ իմաստութեան ուղիղ ճանապարհ թող տալով անյայտ առարկաներու քննութեան կը ձեւնարկեն վայրապար, ինչպէս որ ըրաւ. Դիսնէու, որ իւր հանձարը թէև իմաստութեանյեւսանով սրեց, բայց զայն անմեղ տրամաբանութեան ոճին համեմատ չկազմակերպեց, անոր համար օտարուտի առարկաներու հետամուտ

լինելով՝ Կավկասին միւս կողմ անցաւ. Հնդկաց գիշեսոփաներու դիւթական գուշակութիւնները հետազօտելու, արևելեան ծովագնացութեամբ Նթովպիոյ մերկ իմաստասէրներու կախարդական մնաւաշառութեանց վերահասու լինել կ'ողձայր. երկնից գաղանաց մէջ մանել ուղելով՝ կը բաղձայր թոշնոց լեզուն զիտնալ. սա անհնարին գիտութիւն և իմաստութիւն ձեռք ձգելու աշխատած ժամանեմկը իւր գիտացած Աշմարիտ զիտառթիւնը և իմաստութիւնը վրայ տառաւ:

Մարդկանց կեանք կարճ է, աւելորդաց ճանաչումն շատ երա, կայն է և ընդգարձակ. Ճանապարհ երկայն է սահայն ժամանակն սուլ, Անսնք որք իմաստութեան համնիլ կ'ողեն, նորա բնաւընդունայն զրօսանքի համար կորսնցընելու ժամանակ շունդն, զի այն ընդունայն զրօսանքն է զիտութեանց յետին. շատ բաներ կան որ լու և որ մեր աշքեր զայն շատեան քան թէ տեսնեն. այսպէս ալ շատ բաներ կան որ մեր մոռք շքիւնայ լու և քան թէ զիտնայ, ինչպէս են Տիպերոսի անքանաւութիւնը, Դիդիմոսի դժպատեհութիւնը, Դիօնէսոսի մատպաշտութիւնը:

Իմաստութիւնը կ'ուղղէ, կը սահմանէ, կ'որոշէ, և կը դատէ ամեն զիտութիւնները և արուեստները, նաև կը ցանկայ իմաստունն զիտել ամեն արհեստները թէ մեքենայական և թէ ոչ մեքենայական, իմաստունն սոյն զիտութիւններու վրայ կը պարծի երբ համաշարաններու մէջ իւր մտաց առարկայ են. իսկ երբ անկէ ենիւրով խանութիւններուն կը բաժնաւին իմաստունն պարծանքը հնա շմտներ զկոյ կ'առնու:

Իմաստունը քանդակել և նկարել շշիատ, բայց նկարչութեան և քանդակագործութեան մէջ տեղ եղած զէջը նա կ'որոշէ ըստ գործոյն Ճարտարութեան և օրինաւորութեան:

Իմաստութիւնը զիտութեանց թաղուհին է, շատ է որ իշխանը կարողանայ իմանալ թէ որու կը չցամայէ, իմաստութիւնն իրեն ուղղութեան դարման, յաջորդաբար ամեն զիտութեանց և արհեստէց մէջ իւր լոյսը կը փոյլեցընէ. և չէ թէ մնակ զիտութեանց անակութիւնն կը կատարել ազգործէ այլ և կը պաշտպանէ զնոսա. և այն մոտքերը որնք որ առարկաներու Աշմարատութիւնը չանաչած չեն, անոնց հիւանդութիւնները կը բժշկէ:

Սիալ էր Օգոստինսաի և Լակաանտիւսի կարծիքները , որք կ'ըսէին թէ երկիրս միայն կիսազունտ մ'է , անհնար գատեցին նոքաթէ մըր ոտքի տակ կախուած բնակիչներ կան որք կը շարժին և կը դործեն առանց անկանելոյ . սակայն վերջէն զտեսեցան քինէւացիք , որք Ճիշտ մըր ոտքի տակ գլխի վայր կախուած կը գործէին առանց վար իշխալու . և Բնչ , կարելի էր որ այն փիլիսոփաները կարողանային ճանաչել երկինքը մինչդեռ իրենց ոտքի տակ զտնուող երկիրը չէին կրնար ճանաչել :

Ուրեմն իմաստութեան ինքնարուն և զլիաւորագոյն առարկան , (է էակն) այսինքն իրաց սոսկ էւոթիւնները , մշանջնեաւոր , անայլայլակ և անզրէպ , ասոր համար այս գիտութիւնը բնութենէն վեր կը դասուի՝ իրը աստուածային , զի բնակմէն գեր 'ի վեր է :

Իմաստունն նուրբ հայեցողութեամբ աննիւթականն նիւթականէն , անզգալին՝ զգալիէն , զոյցութիւնը՝ պատահմունքէն , աեսակն՝ անհատէն , սեռը՝ տեսակէն , իրարու հետ խառնուած սեռերու սեռականադոյն սեռերը՝ լնդհանրական սկզբունքներ շինելով՝ ամեն գիտութեանց Ճշմարտութիւնները կը քննէ :

Դաեւ արտաքիններով չշատածալով՝ կը ճանաչէ զինքը և կը բաժմանէ միշտ կենդանի հողին՝ մահկանացու մարմինէն , և կ'սկսի զայն քննել թէ արգեօք հիւլից կուտակութիւն է թէ հուր կամ ոգ . ջուր թէ արիւն . նա կը քննէ թէ հողին է անմահական , բայց ինչպէս կ'իմանայ , ինչպէս կ'զզայ , որպէս կը զործէ , կամ անդամները ինչպէս կը կերպարանէ , և մարմինէն հրաժարած ժամանակը ինչ զօրութիւն կը ներգործէ . կը քննէ իմաստութիւնը և աշխարհիս սքանչելարուեսալինելն . և կը հետեցընէ թէ այս սքանչելարուեսա շենքն առանց ամենակարող Արուեստապետի չէ :

Իմաստութիւնը հանգիստ շառնուր , մինչև որ արարիչն գտնէ , իսկ տղէտն , արարիչը՝ արարածոց մէջ կը ֆնառէ , և անցաւոր բարեաց մէջ անանցանելի բարին կ'օրմնէ :

Վերը ըստածներէն յայտնի կը աեսնուի թէ Շիմաստութիւնն է ամեն գիտութեանց ուղղիլ . և այն գիտութեանց որբ նիւթէն վերցուած են և բարձր առարկաներ են , ինչպէս է էակը , հողելէն

և աստուածեղէն զոյացութիւնները . և իմաստութեան մոլի ծայրն է տղիտութիւնը , որ այս ամեն բարձր առարկաներու ճանաշումէն զուրկ իլլ դտնուի :

### ԴԱՍ ՃԵ

#### ԱԲՀԵՑ

Բնութիւնը զարմանալի կերպով ուսուց անասնոց բնական արհեսաներ իրենց պէտքերը հոգալու համար , ստկայն մարդկանց տուաւ այն հանձարը , որով կարողացան անասուններէն այն ամեն արհեստաներէն ուսանիլ և բնութեան իրենց տուածին վրայ յաւելու և զօրծածել յօդուա իրենց և ուրիշներուն . մարդիկ զարմանքէն և հարկէն ստիպեալ , շերամէն ուսան պատուական հիւսուածներ և թելեր մանել , ծիծեռնակէն ուսան՝ պաշտոնչելի պաշտաներու յօրինուամ , մեղուններէն ճարտարապետութիւն , սոխակէններէն՝ երաժշտութիւն , արջէն՝ բրտութիւն , կարապներէն՝ նաւարկութիւն , սղիիններէն՝ նետաձգութիւն , նապաստակներէն՝ ականահատութիւն , հիւանդ անասուններէն՝ բժշկակինութիւն :

Մարդիկ երբ զարմանքով տեսան անասնոց այս բնական արհեստաները իրենց զարմանալի հանձարով ուսան և ՚ի դործ դրին :

Երբեմ գէպք տելի զարմանալի կը ներգործէ արհեստառորին արհեստին , ինչպէս որ պատաշչեցաւ Նեակղէսին որ ամէհի ձիու մը փրփուրը նկարած ժամանակը շյաջողեցաւ , երբ սպունքով զայն նկարը սբրել ուզեց , սպունքն այնպէս սքանչելի փրփուր մը ձեակերպեց նոյն սբրելու միջոցին , որ ամեն արհեստառները զարմացան այն նկարի վրայ :

## ԴԱՍ ՃՐ.

### ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ

Խոհեմութիւնն է մտաց առաքինական ունակութիւնը որ մարդկան արարքները ուղիղ բանի առաջնորդութիւնը կը կարգադրէ, բարոյապէս բարի կամ բարոյապէս շար գործելու:

Ուրիշ բարոյական առաքինութիւններ մեր բաղձանքները կրկաննաւորեն, իսկ խոհեմութիւնը մեր միաք կը կանոնաւորէ:

Նաև խոհեմութիւնը պէտք չէ շփոթել ուրիշ իմացական առաքինութեանց հետ, որք ուղիղ չշմարտութիւնը ցոյց կու տան. վերջինը խոհեմութեան գործերը կը կանոնաւորէ, անոր համար այն առաքինութիւնները զմարդն զիտուն կ'ընեն, իսկ առաջինը բարի կ'ընէ:

Խոհեմութիւնը կարծիքէն և կասկածանքէն ազատ է, ոչ խարել կամ և ոչ խարուիլ զիտէ, արհեսաը մեր զործը բարի կ'ընէ, իսկ խոհեմութիւնը՝ գործողը բարի կ'ընէ. խոհեմութիւնը ունակականը ներգործականէն, ստացականը բնականէն, մարդկայինը անբականէն կ'որոշէ, խոհեմութեան վերաբերեալ օրէնքները զիտնալ բաւական չէ խոհեմ ընել տալու, այլ զայն ներգործապէս ՚ի գործ դնելն է որ կնիք կը դնէ խոհեմութեան:

Ցղայոց մէջ ժամանակ ժամանակ խոհեմ գործեր կը տեսնուի, բայց նա խակ կը համարուի, վասն զի ուղիղ բան չկայ. անոնց մէջ, հետևաբար իրենց խոհեմ կարծած զործերուն պատճառ չեն կրնար տալ. ուրեմն բնութիւնն է, որ այնպէս կը գործէ ՚ի նոսս:

Թէպէտ անասուններէն ումանք մարդկային ուսմանց ընդունակ են և կը գործեն, սակայն հարկն է որ նոցա գործել կու տայ, և

ոչ թէ մարդկանց պէս կամաւ և աղատութեամբ կը գործեն ; և նոքա միօրինակ կը գործեն առանց բնտրելու կարողութիւն ունենալու , իսկ մարդիկ կ'ընտրեն , կը քննեն , կը բաղդատեն , կը փոփոխեն . աեղը , ժամանակը . օդտակարը , կամ վասակարը կ'որոշեն , իսկ անսառունք զուրկ են այս մեծ բարիքեն , վասն զի բանի լնգուանակ չեն :

Բարոյապէս առաքինի չեղող մարդ մը , կրնայ հայեցողապէս խոռհեմ լինել . բայց խոհեմ չեղող մարդ մը չկրնար բարոյապէս առաքինի լինել :

Երբ թագաւոր մը կը հրամայէ և ժողովրդ չլսեր , այն թաղաւորը՝ թագաւոր չէ , այսպէս ալ խոհեմութիւնը չկրնար բարոյական առաքինութեանց դշնոյ համարտիլ եթէ բնական բաղանք բանին չլսէ . ի՞նչ օգուտ է խոհեմին լաւ խորհիլ . քաջ դատել և ազգու հրամայել , երբ իւր խուժան կիբքերը չէ կրցեր սահմահարել որ իրեն զէմ կ'ապստամբին :

Վեր 'ի վայր կը լինի ամեն բան երբ օրինաւոր ուղիղ հրամայողը ծառայի կարդ կ'իջնայ . և անփորձ ծառան հրամայելու աստիճանին կը բարձրանայ . խոհեմութիւնը երբ ինքինք հրամայելն աղատ է , բարոյական առաքինութեան ամեն ճիշերուն մէ չն ալ պաշտօն ունի հասարելու . մանաւանդ քաղաքական , տնտեսական և անհնական գործերու մէ ջ որոց օգուտն է հասարակաց բարիք :

Օրէնքները՝ ըստ որում մեզ հսաղանիլ կը հարկադրեն իշխանները , ըստ որում հրամանաց հպատակութեան կը դատապարատեն . մեզ անհանջ են և դաւն , բայց ժողովրդեան օգուտն այս դաւնութիւնները քաղաքան իր փոխ՛ , և իւրաքանչիւր անհատ երջանիկ կը համարի օրինաց հարկի և իշխանի հրամանի եղբ հրամայողի և հրամայուողի մէջ համաձայն ներդահակութիւն լինի :

Բնական է որ ամեն մարդ իւր ունեցածը կը սիրէ , նաև անորպ պահապան օրէնքն ալ կը սիրէ . այս ուերն է որ օրինաց և հրամանի հպատակութիւնը իրեն կամովը կ'ընէ :

Թէ և աղատութիւնը կը սիրէ , բայց կամաւ կը յանհնուի օրինաց և իշխանին՝ որ իւր ունեցածը լստաշողանեն և բոնաւորի ու անիրուր ձեռքէն առնեն :

Ուր հպարտութիւն կայ՝ հոն հարկ կայ, և հարկն զցաւ կը ծնանի, բայց ինչպէս որ հիւանդն իւր ծանր ցաւերէն աղատելու համար դեղերու փոքր ցաւերուն սիրով կը տանի . այսպէս ալ հարկն սիրով կը տարուի մծ շարիքներէ և խասներէ աղատ մնալու համար :

Օրէնք և իշխանութիւն՝ երբեմն զմարդիկ բռնի առաքելնի կ'ընեն . վասն զի այն որ երկնային սաստէն չվախնալով առաքինութեան սահմանին մէջ մտնել չուզեր, օրինաց սաստը և իշխանական հրամանը զայն շուտով կը խնարհէցընեն այն լուծը բառնալու , խօհեմութիւնը մինակ օրէնք դնելով սկտք չէ որ բաւականանայ , այլ և զայն դործադրել տալու ուժն է որ առաքինութիւնը կը պսակէ :

Արին կը նախառուի օրէնք, երբ իրքեւ անպէտ և անգործ քաղաքի պարասպէն կախուած կը նախառուի, ուր՝ օրինաց նախառչին արժան է կախուիլ . սակայն օրէնսդիրն ալ նախ պէտք է որ ինչը յարգէ և կատարէ իւր դրած օրէնքները , յետոյ ուրիշն կատարել հրամայէ :

Օրէնսդիրը պէտք է որ իւր վարուց անարատութիւնը, պատիւը, մեծափառութիւնը , ծանրախօսութիւնը պաշտէ . այնպէս որ իւր դրած օրէնքները իւր մարմնոյ պատկերին վրայ դրոշմուած տեսնէ և կարդայ հասարակութիւնը :

Օրէնսդիրը պէտք չէ որ շարունակ տեսնուի և յաճախ խօսի . արեգակն մոլորակաց մէջ ամենէն գերազանցն է , բայց ամեն օր երենալուն համար մեր մտադրութիւնը իրեն դարձընելու փոյթ չեմք տանիր , իսկ գիտաւոր աստղերը , որք սակաւ նշանակութիւն ունեցող վիճմունքներ են, բայց և այնպէս քիչ երենալուն համար մեր ուշադրութիւնը իրենց կը դրաւեն դիտելու համար :

Տեսափոխութեանց երեսոյթները հեռուէն մծ պալատ, թատրոն, տաճար, աշտարակ, ծով, անտառ և այլն կ'երեին , սակայն հետզհետէ մօտենալով կը տենես որ փայտի կոյտ մը , հնոտի կապերտներ , չնչին թուղթի կտորներ և այլն են . ըստ առասպելաց դորտերը իրենց թաղաւոր խնդրեցին , և Դիոս շաստուած գերան մը նետեց նոյա բնակած ձահիճնուրու մէջ , յառաջադոյն սոսկացին

նորա մծ ձայնէն , մարմոյ մնծութենէն , և նորատես ձեէն ապշելով յարգեցին զայն , բայց երբ ասկաւ տակաւ երկիւղները մէկ կողմն դնելով մօտեցան և չօշափեցին , և տեսան թէ անզգայ փայտ մ'է , ոկան նորա վրայ ելնելով իրենց խաղալիկ ընել :

Սակայն օրինաց գործադիրը և իշխանը պէտք է որ ունենայ , շնորհք , պսակ 'ի ձեռին , և վրէժինդրութիւն՝ սուր 'ի ձեռին , պէտք է երախտաւորութիւն և արդարութիւն , վարձ և պատիճ , վարձը պէտք է օրինապահները երախտաւորելու , և պատիճը օրինազանցները պատուհասելու . երախտաւորութիւնը սիրելի է , իսկ արդարութիւնը պիտանի է :

Երբեմն բարեգորով մայլեր շար զաւակաց ծնունդներ կ'ունենան , շատ անդամ արդարութիւնը զատելութիւն կը ծնանի , ինչպէս որ երախտագիտութիւնն ալ զնախանձ :

Արդարութիւնը ասելի է , երբ ազուաւը կը թողու , աղաւնին կը պատճէ , կամ կը բարկանայ անմեղին , և թոյլ կու տայ մեղապարատին :

Երախտաւորութիւնը նախանձելի կը լինի՝ երբ շնորհս 'ի վերայ շնորհաց կը լինի , իսկ երբ յորդ անձրեկի պէս ամենուն վրայ հաւասարապէս կը տեղայ , առաքինութեան պսակը կ'առնու :

Ուրիշի նախանձ յինքն չձգելու համար , իշխանը իւր սրտի մէջ այնպէս խորհրդոց սենեակ մը պէտք է շինել , որպէս թէ խորհրդարանի պէտք չունի , և այնպիսի խորհրդականներ ընտրել որպէս թէ ինքը խորհուրդ չունի :

Ասոր հակառակ խորհրդականները , այնչափ խոհեմ լինելու են որ կարող լինին նաև իշխան լինել . սակայն այնչափ հանդարտ , որ իշխանը իրենց վրայ շնախանձի , զիտնալով թէ եկամուտ են , և ոչ զլխաւոր , հպատակ են՝ և ոչ ընկեր , խորհրդական են՝ և ոչ ուսուցիչ դասատու :

Ըստ աեղլոյն պէտք է որ ծածուկ պահէ իւր միտք՝ սրտի մէջ , ինչպէս որ մնչիկ՝ քիմէականներու մէջ կ'ոչնչանայ , այսպէս ալ ամն բանի մէջ խորհօւրդ յայտնել լու չէ , կարեոր ժամանուին պահելու է դայն :

Վաստահելիք և ոչ վաստահելիք անձանց մէջ ընտրութիւն ընելու է, խօրհուրդ հարցուած ժամանակ :

## ԴԱՍ ՀՅ

### ՏԵՏԵՄԱԿԸՆ ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ

Են որ իւր տունը կառավարելու եղանակը չգիտելը, անկեյտավալի չէ որ կարող լինի թագաւորութիւն մը կառավարել, այլ ինդիր է որ իշխանաւորները երբեմն հասրակաց հոգերով դրադելով իրենց անական հոգերը զանց կը չնեն :

Օգոստոս կայսը շատ զգուշաւոր էր քաղաքական իրերու մէջ, բայց անփոյթ էր տնտեսականի կարգադրութեան մէջ. նա ինքնակալութեան զործերը բարւոք կը կարդադրէր, բայց իւր տունը անկարդութեան մէջ կը կործանէր, որչափ որ նորա բարի համբաւը կը տարածուէր, այնչափ այ նորա ընտանեաց անսլատւութիւնը զայն կը նսեմացնէր. ըստ այնմ թէ Շնչպէս որիտի կարողանամ իմիններուն միտ դնել, երբ օտարաց զործերու մէջ ընկլմալ կը մնամ: Եւ ուրիշները միտակ հայեցնողական ունակութիւնն օւսանելով՝ կը պաշտերի իրենցմէ զործանական փորձաւութիւնները, ուստի պակաս կը համարուի ին իրենց զործոց մէջ. այս կարգեն է, Փորմոն իմաստակը որ տակաւին մերկ սուր տեսած չունէր, բայց իբրև պատերազմի հմուտ զինուորական արհեստի վրայ կը խօսէր Անիբաղի առջե, ուր որ իրբնյիմար ճարտարախօս զովուեցաւ:

Արդիները ամուսնացողաց երջանկութեան սկիզբն են, վասն զի ամուսնական սիրոյ վախճանն է, եթէ պակասի սիրոյ շաղկապն, առելութիւն վրայ կռ գայ, տեսակը պաշտապանելու համար՝ ցանկա-

լի է որդին, աւելի ցանկալի են իրենց ծնողաց անձերը պահպառնելու համար :

Ինչ օրինօք որ ծնողք իրենց անշափահաս զաւակները կը կերակրեն և կը խնամեն, նոյն օրինօք չափահաս որդիք պէտք է որ իրենց զառամեալ ծնողները կերակրեն և խնամեն, որպէս զի իրեն կեանք տուողին անփոխարինելի երախտիք ճանաշած լինին :

Հայր արու զաւակը կը սիրէ, մայր էզը, իւրաքանչիւր իւր տեսակը, որ իխսա յարմար է, որպէս զի իւրաքանչիւրն իւր տեսակի ձեռքով դաստիարակուի իւրյատուկ եղածները չիշդ պահելու համար . Հայրն թող փոյթ տանի իւր որդին առաքինութեամբ ճոխացընել, քան թէ բաղդի բարիբներով, զի բաղդի բարին կարելի է առ չարն ևս 'ի գործ զնել, իսկ առաքինութիւնը միշտ բարի է . մանաւանդ թէ առաքինութեամբ ճոխութիւնը կ'ստացուի, բայց ճոխութեամբ առաքինութիւնը չկնուիր . եթէ զայն առաքինորէն 'ի գործ չկնես :

Իշխանին սպասաւոր, և անտեսին ծառայ պէտք է, մին՝ հոգաբարձութեան, միւսն աշխատութեան համար, մէ կէն հասատամտութիւն և աչալլըջութիւն կը պահանջուի, միւսէն զօրութիւն և հնազանդութիւն . վարձուոր ծառան արծաթազին դերիէն լաւէ :

Աղէկ է ամն բան զիտնալ, բայց յայտնելու չէ թէ զիտէ . Կատովն իւր ծառաները զժտութեան մէջ կը պահէր որպէս զի տեղի ունեցած պակասութիւնները իրեն յայտնէին, սակայն լաւչէ, վասն զի ծառայից մէջ նախանձ կը տիրէ և նախանձին կը յաջորդէ զբարառութիւն . կառավարիչի մը համար լրաես պէտք է . բայց անկէ աւելի վլունգաւոր բան չկայ, այն որ օտարի մոլութիւնը իւր տիրոջ կը բերէ, անշուշտ տիրոջ մոլութիւնն ալ օտարին կը աանէ . լրտեսութիւնը և զրպարտութիւնը իրարմէ անբաժանելի են, չարախօսութիւնը անտնցմէ ծնունդ կ'առնու :

Ապերախտ է այն տէր, որ իւր բազմաժամանակեայ ծերացեալ ծառայն չկերակրեր, նորա կերակուրը եթէ արդի ծառայութեան շատ է, թող լինի անցելոյն աշխատութեան փոխարէնը, եթէ կը

պակասի նորա ծառայելոյ ուժը . թող ուրիշ ծառաներու սրտի մէջ աւելցրնէ քաջ ծառայելու քաջալերութիւնը :

Հարկաւոր են աղախինները՝ բայց վասնգաւոր , զի եթէ պառաւ են՝ ծառայութիւնը ընդունելու պէտք ունին , եթէ գեռահասակ՝ պահպանութեան պէտք ունին , բերդ մը թշնամիներէն պաշտպանէն աւելի դժուարին է աղախնայն իւր ծառայակիցներէն պաշտպանելը . և ովկ կրնայ զայն պահել երբ ինք կը փափաքի իւր կորուսար . ընտանութեան դիւրութիւնը ցանկութեան փեսաւէրն է , երբ ցանկութիւնը աղքատութեան հետ կը խառնոի , ընտանի զողութեան միջնորդ կը լինի , զի վիճակի հաւասարութիւնը սիրոյ միացուցիչ կապն է . այս վիճակի պահպանութիւնը երկու կարգի անձինք աւելի կրնան կատարել , այն է հին և ծեր ծառայներ և փոքր մանուկներ , մին՝ փորձառութեամբ , միւն՝ պարզմտութեամբ :

Ծնտեսութիւնը կը պահանջէ բնական , սեփհական կալուածներ և արհեստական հանձարներ ունենալ , թշուառ է այն որ հասարակաց երկրի մէջ կը բնակի , և թիզ մը զետին չօւնի . այն որ սեփհական տուն չունի անթաղ մեռել մ'է , թէպէտ աշխարհի միջն է , բայց արտաքոյ է աշխարհի . որ չունի առւն , չունի առհմ , նա իւր հայրենեաց մէջ օտար է :

Այն որ վարձու առած է տունը միշտ աստանդական է , նա չընակիր՝ այլ կը պանդխտէ , կամ և կարասին կը վասնէ և օդ կը գնէ , անձնք որ սաէպ կը տեղափոխեն , նոցա տունկերը հաստ արմատ չեն ունենար :

Օրէն է երկրէն ազահութեամբ պահանջել ընդ միոյ հարիւր , նա իբրև մայր շոայլ և ժլատ մեծամեծ տոկոսով կու տայ իւր որդուց , զիտնալով թէ տուածը առ ինքն կը դառնայ , եթէ ըստ արծանույն մշակես յուսացածէդ աւելի կու տայ , եթէ առանց մշակելու յուսատ հնձել՝ տասասկն է բաժինդ :

Անիրաւութեամբ հաւաքուած ձոխութիւնը՝ աղքատութիւն է , զի ունեցածդ օտարին է և ոչ քոյդ , օտարը ետ կը պահանջէ , և դու ունեցածդ վրայ կու տաս թշնամութեանց վէճերու մէջ և միայն պակաշաւդ կը մնայ քեզ , մանաւանդ թէ այն ձոխութենէն

աւելի բարձրագինը և թանկագինը կը վերցընեն քեզմէ , այն է բարի անունդ և մծ համբաւդ :

Խնայողութիւնը մծ եկամուռ է , աւելորդութիւնը մծ շռայլութիւն է . այն առն բարեկարգ կը համարուի՝ որ ոչ աւելորդ և ոչ պակաս կայ :

Տանուաէն ամնէն վերջ մտնելու է յիւր անկողին և ամնէն կանուխ ելնելու է անկէ , մի գուցէ իւր քնացած ժամանակը սպասաւորները դարան գործեն :

Որ տանտէր աղահ լինի , նորա ծառան զող կը լինի . և ծառան գթութիւն կը համարի իւր զողութիւնը՝ երբ շարաշտր բանտարկեալ դանձը բանտէն կ'աղատէ :

Եթէ չես ուզեր տանդ մէջ զողութիւն լինի , ամուսնացեալ ծառայ մի պահեր , այն որ զաւակ ունի և չքաւոր է , բնութիւն անոր զողութիւն կը սորվեցնէ :

Կարօտեալը եթէ հաւատարիմ ալ լինի՝ տանդ անոր մի հաւատար , զի հարկն կ'ստիպէ զողանալ , այս պարագայիս մէջ յանցապարան այն չէ որ ստիպեալ զողացաւ ակամայ կամք , այլ այն է յանցաւոր որ թոյլտութիւն ըրաւ :



## ԴԱՍ ՃԺ

### ՀԱՅՆԵՒԹԻՆ ԽԱՀԵՄՈՒԹԻՒՆ

Քաղաքական խոհեմութիւնը հասարակապետութեան երջանակութեան կը նայի . տնտեսական խոհեմութիւնը տնական երջանկութեան կը նայի , իսկ անհատական խոհեմութիւնը՝ անհատի եր-

ջանկութեան կը նայի, անհամա՞ տեսակէն, և տեսակն սեռէն առաջ է. զի մինչ ընդհանուրէն նախապատիւ է:

Ի՞նչ օգուտ է զայլս կառավարել զիտնալ և զինք չկրնալ կառավարել. այն անձը իմաստուն չէ՝ որ իւր անձը շնանաշեր, այն անձը խոհեմ չէ՝ որ իւր անձին վրաց խոհեմութիւն չցործազրեր:

Անձնական խոհեմութիւնը այն մամնաւոր խոհեմութիւնն է որ զործելի իրաց մէջ օգտակար, արդար և համեստ իրերու ետևէն կ'երթայ, և կը խորչի հակառակներէն, այս եղանակաւ մահկանացուներու մէջ երջանիկ կեանիք կը վարէ:

Այն որ ըստ դիպուածց կը զործէ՝ լիէ յաջողի, պարագաւանաց արժանի է, վասն զի իւր ըրածին տէրը ինք չէ, դէպքն է, խոկ խոհեմ իւր ըրածին տէրն է, ինչպէս որ իւր անձին ևս, որովհետեւ կիրքերը կը հնազանդեցընէ կրամաց և կամք կանոնաւոր կը հնազանդի մտաց:

Խոհեմն իւր միտք կը պատրաստէ դիտութեամբ և սիրան առաքինութեամբ, անոր համար չարութիւն և տղիտութիւն՝ սիրար բանաւորէն չեն կրնար խոտորեցընել:

Արդարութիւնը նորա մէջ կենդանի է, չթոյլատրեր որ քաղաքական օրինաց և բանաւոր ուղղութեան դէմ զործէ. կենդանի է խոհեմի արիութիւնը, որ ոչ կը թոյլատրէ յանդու զն ձեռներէց լինել ամօթալի վտանգներուն, և ոչ կը ներէ վեհերոտին՝ պատուաւոր վտանգներէն խոյս տալ. այսպէս է նաև բարեխաւնութիւնը:

Ճշմարիտ խոհեմն զիտէ թէ, ամեն հաճոյքները օրինաւոր չեն և ոչալ ամեն օրինաւորները միօրինակ 'ի զործ զնեն. նա խոհեմութեամբ միջոցն կը կշռէ, շատերու մէջէն յաւն միայն կ'ընտրէ. պարագաներուն աղէկ կը զիտէ, զիանալով թէ բարին և շարը իրեն էութենէն աւելի պարագաներու վրաց հաստատած է:

Խոհեմն՝ ծանր կը խօսի, շատ կը խորհի, համբ կ'որոշէ, որոշելէն վերջ ալ ժամանակ շկորմացըներ իւր ձեռնարկն 'ի զլուխ տանելու:

Եյն զործը որ 'ի կատար հասցընելը անյտսալի է, անոր չձեռւ-

նարկեր՝ երբ գործի եղանակէն դործը ձախորդ վախճան մը կ'առնու, չվշտանար զի զիտէ թէ ինք չօխալեցաւ, այլ վերահաս պարագան. յաջողութեան պարծանքն իրեն է, իսկ ձախորդութիւնն բաղդին. զի ինքն բարի ձեռնարկեց :

Այնպէս ծաշակ ունի ապադային որ կը կարծուի թէ զուշակող մ'է, ներկայն կ'ակնարկէ, անցեալն կը վերծանէ :

Խոհեմ՝ կը նշմարէ ինչ որ ուրիշները չեն նշմարեր, նա յառաջազդյն կը գուշակէ ապազյ դիպուածները. ասոր համար գեղք պատահած միջոցին շխոռվիր, զի զուշակած էր և իրեն համար յանկարծաղեալ չէ :

### Դ.Ա.Ս ՃԺ.Ա.

### ԽԵՆԵՄԱՒԹԵԱՆ ԱՒՆԱԿԱՒԹԵԱՆ

Խոհեմ քաջ խորհրդածելու համար զործնական սկզբունքներու պետք անի, և այն դործելէն առաջ իւր ներսը շտեմարանած պահելու է՝ ի հարկին 'ի դործ դնելու, և այս սկզբունքները կը ստանայ խոհեմ լուսոյ բանէն. ծերերու և ուսուցիչներու բանիւ կամ զործովաւանդուած դասերէն, բնական և արհեստական իրերու վրայ 'ի գործ դրած խոր դիտողութենէն, օտարին և իրեն զիպուածոց փորձերէն :

Խոհեմ ընտրանօք և շատ խնամօք կը վարուի հետի և անհնարի, պատշաճի և անպատշաճի մէջ տեղը, վասն զի շատ բան կայ որ հնար է ընել, բայց պատշաճ չէ, շատ բաներ ալ կան որք պատշաճ են ընել սակայն հնար չեն :

Այն ժամանակ խոհեմ կը ձեռնարկէ դործին, երբ խորհրդա-

ծեալ կամբ և կարողութիւն՝ վստահութիւն կու տան, խոհեմ պատշաճողութեան կը նայի թէ՝ մարգկային կենաց օգտակար է, թէ վասակար, երբեմ նուազ անպատշաճն պատշաճ կը լինի ՚ի հարկէն ստիպեալ, պատշաճ է զործ մը երբ մնք և մը բարեկամները կ'ուրախանակը հոգ չէ որ անիրաւ թշնամին տրտմի:

Խոհեմի խրատներն են հետեւել իմաստափրական խօսքերը «Եղանակը պահէ», մի ինչաւելազանց, սանձեա զբարկութիւն, հայեաց ՚ի վախճան, բազումեն չարիք, մի լինիր երաշխաւոր, ծանիր դքեզ, ասոր պէս այ ուրիշ շատ խրատներ կան խոհեմաց իբրև օգտակար սկզբունք. օրինակի համար մէ կը կ'ըսէ՝ Ցիւմարի առաջին անմտութիւնն այն է, որ կ'ըսէ թէ իմաստոն եմ. ուրիշ մը կ'ըսէ, Մէկ յիմար՝ հազարաւորները կրնայ յիմարեցնել. այլ ոմն կ'ըսէ, Այն որ կարող չէ ձեռք բերել իւր կամեցածը թող կամի ձեռք բերել այն որ կարող է:

Վաղածին շունը՝ կոյր լակոտներ կը բերէ. դիպող առիթները ձեռքէ մի փախցըներ. երկաթը տաք եղած ժամանակը ծեծէ, զգուշացեալ նետը քիչ կը խոցէ. կամաց զնայ այն տեղերէն, ուրոց անցք որ դժուարին է:

Արէտացիներու հետ դրէտացի լինելու է. պատրանաց վերջը տուգանաց սկիզբն է, Ճշմարտութիւնը ընկղմիր:

Մեծ իմաստութիւն է վտանգէն փախչիլ, բնութիւնը՝ երկշուկենդանիներուն կոռուելու զէնք շտուտ, փախչելու սրունք (Ճիւ) տուաւ:

Կատարեալ կենդանիները ուշ կը ծնանին, շուտ ծնող կենդաները շուտ կը մեռնին, մեծ զործ զործելու համար երկար խորհուրդ պէտք է:

Էմառ ատեն փոշիներու վրայ քիչմը անձրե նետուած ժամանակ դորաեր կը զոյանան և կը ցատկեն, բայց շուտ մը դարձեալ փոշէ կը դառնան, իսկ փիղն տասն տարիէն կը ծնանի, բայց դարմը կ'ապրի. զործասէր մեղուներու փեթակի մէ ջն ալ իշամեղու կը ծնանի ուրիշներու շինած մեղն ուաելու համար, ողբալին այն է որ շատերը մեղրը թող տալով մեղը շինողը կը փետեն, մեծաւանց տուներու մէ ջ շատ կը դժուարին վստանող զաւակներ:

Բժշկութիւնը մեր հիւանդութիւնները կը դարմանէ , իսկ խոհեմութիւնը մեր հոգին կը դարմանէ :

Խոհեմութիւնը մարդուս չար զործել չտար և չար զործողները ևս յանդիմաննելով՝ ուղղութեան կը բերէ , երբ աեսնէ՝ որ յանդիմանութիւնը ոչ ինչ օգուտ չըներ և չարադորձն հասարակութեանց բարեաց մեծապէս կը վասէ , խոհեմութեան գէմ չհամարիր զայն սրով՝ զգաստացրնելու :

Խոհեմն շուտով կը դարմանէ յայանի ցոփութիւնը , բայց կը դժուարանայ դաշտնի շարութեանց դարմանը գտնելու . զի չհանաչեր հիւանդութիւնը , որպէս զի իւր գեղը տայ :

Մշակուած փոքր արտ մը անմշակ մեծ ագարակէ մը աւելի պըտղատու է , շատ ջանքեր՝ թէպէտ իմաստութիւնը կը պաշտպանեն . բայց ինքն ալ մաշեցընելու կ'սպասեն . ուստի չափաւոր ջանք կ'ընտրէ խոհեմն . դժուարին ձեռնարկութեան մէջ երկնից օգնութեան դիմըլու է , զի այն անհնարինն կը հրաշադործէ :

Խոհեմը քաջ նահապետի պէս միշտ աշխարհացոյց տախտակներուն կը նայի թէ որ քեռի , որ աստիճանին տակ է , և բնչ հողմով կը վարուին . եթէ ժայռը մօտ է , կամ մրրիկ հեռու է . եթէ ամբողջ հովմով չնաւեր՝ զոհ կը լինի կիսով , բայ է որ գեպի նպատակը առաջ երթայ . կ'զգուշանայ նա ժամանակէն , պարագաներէն , վերահաս չարիքներէն , անձերէն , թշնամանքներէն :

Շնորհընկանար երբ իրենց պակասութեամբն շնորհքներէն կը գրկուին , իսկոյն նոյա կեղծ բարեկամութիւնը իրական չարակամութեան կը փոխուին :

Այն վախճանը որ ուղիղ է , խոհեմութիւնն է , իսկ այն վախճանը որ անաւղիղ է , այն չարութիւնն է :

Խոհեմութեան վերջին աղբիւրն փորձն է , իւր անձի և ուրիշներու փորձառութիւնները մեծ դասեր են խոհեմին , վասն զի իւր կրած վասուց կսկիծը այնպէս կը տպաւորուի որմին վրայ և մտաց մէջ որ յետ այնորիկ , ոչ այն պատկերը կ'եղծուի սրտէն և ոչ կը մոռցուի մտքէն .

## ԴԱՌ ՃԺ-Ի

ԽԱՀԵՄԱՒԹԵԱՆ ՆԵՐԳԱԲԾԱՒԹԻՒՆՔ

Խոհեմի կամք մտաց շառաջնորդեր . այլ կը հետեի անոր խորհրդին և օրինաց , ձշմարիտ խոհեմութիւնն է՝ մտաց ուղղութիւնը բարեաց միջոցներու վրայ խորհելով բարի վախճանի մը հասցը նելու . նա ամեն բան կը քննէ լաւն և օգտակարն գտնելու համար , խոհեմ զործոյն վախճանին նայելով իւր ամեն խոկումները խորհուրդի կը հրաւիրէ , և կը հարցընէ իւր արթուն յիշողութեան թէ այսպիսի դէպք մը տեղի ունցած է թէ իրեն և թէ ուրիշն , կը քննէ անցեալը և ներկայն , ակնարկ կ'ուղղէ ապագային , միջոցները կը դիտէ , օրինակները աչքին առ ջե կը բերէ , զործոյն նիւթը , տեսակը , կարողութիւնը , միջնակեալ պարագաները , արդելիս միջոցները , զանոնք խափանելու զօրութիւնը , և վերջի վախճանը , ասոնք ամենը խորհրդածութեան առնելէն վերջ կը ձեռնարկէ զործոյն :

Խոհեմ իւր կարծիք չփոխեր , միայն պարագաները զործը կը փոխեն . այն ժամանակ սխալմունք չէ թէ խոհեմին է , այլ չակնկալած պարագային է , որ դէպք զայն մէջ նետեց . և այս միջոցի մէջ իւր կարծիք փոխել ամօթ չհամարիր , զի ժխալող իւր միաք չէր . խոհեմի կամք կարող չէ չհնաղանդիլ մտաց , ուստի նորագործերը միշտ ուղիղ , համատ , օգտակար և բարի են :

## ԴԱ.Ս ՃԺԴ.

## ԼՆԻՇԱՅԹԻԹԻՒՆ ԵՒ ԽՈՐԵՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Խորամանկին կամք խանգարուած է , իսկ միտքն առողջ է , անխոհեմին կարքն թերես առողջ լինի , սակայն միտքն անառողջ է . երկուքի կիրքերն ալ անքարեկարպ են , անխոհեմն պարզմառաթեամբ կը յայտնէ , իսկ խորամանկն կեղծիքներով զայն կը ծածկէ , որպէս թէ ոչ սէր ունի , ոչ բարկութիւն . սիրտը խռոված ժամանակ երեսը զուարթ և խաղաղ ցոյց կու տայ , երկուքն ևս մոլի են , վասն զի այն մծ խոհեմութենէն կը բաժնուին : Անս խոհեմութիւնը ամօթալի է , խորամանկութիւնը ֆասակար է . խորամանկութիւնը՝ անխոհեմութեան նկատմամբ՝ խոհեմութիւն կը համարուի , և անխոհեմութիւնն խորամանկութեան նկատմամբ անմղութիւն կ'երեկի :

Խորամանկին երեսը՝ Տիսկերոսի պէս՝ սուր է , խառնածն՝ շար և սեամաղձային , կերպարանը՝ ծեր աղուիսոյ կերպարանի կը նմանի , նոյնպէս և բարք , անխոհեմին խառնածն՝ զուարթաբարոյ է , դէմք՝ պարարտ . Հայեցուածք՝ եղան տխմարութեան կը նմանի :

Խորամանկն նենգաւորներու մէջ բնակելու քաջափորձ է , և առող ամեն շարութիւնները կ'ընդօրինակէ , և որտին մէջ կը զաւ Տէ առ շարն գործադրելու համար :

Անփորձ լինելէն առաջ կու զայ անխոհեմութիւն կամ բնական տխմարութիւն , որ առաջ կը բերէ այն տեսակ մը պարզմառաթիւնը՝ որ տղետները զայն առաքինի կը կարծեն . անխոհեմ մինակ իւր անձին կը ֆասէ , իսկ խորամանկն այլոց կը ֆասէ :

Խոհեմութիւնը բանին կը հետեկի , սոքա՝ բաղձանաց . անխոհեմ շարիքները շտեսներ որ կարողանայ հասկանալ թէ բրածն անիւ

բաւութիւն է, իրեն համար բաւ է որ բաղձանքն իրեն հաճոյ առարկայ մը ներկայացընէ : Խսկ խորամանկն , զար լինելն կը ճանաչէ, մինակ իրեն օգտակար լինելուն համար կը դործէ . իրեն փոյթ չէ որ ուրիշները կը վնասուին : Անխոհեմ շատ կը խօսի , և քիչ կը խորհի , ամենուն վրայ վստահութիւն կ'ունենայ և ամենուն խորհուրդ կը յայտնէ . ամենքն ալ իրեն պէս պարզապիտ կը կարծէ , բայց խորամանկն քիչ կը խօսի և շատ կը խորհի , ուրիշին շվատահիր և ամենքն ալ իրեն պէս խորամանկ , խարերայ և անվատահելի կը կարծէ , ասոր համար իւր դիտաւորութիւնը կը ծածկէ , նորա հակառակ կեղծաւորութեամբ ուրիշ բան մը կը յայտնէ . այս մարդուն կամք մինակ իւր դործերէն կրնայ ճանաչուիլ :

Անխոհեմի խորհրդածելու հանձար քիչ , բաղձանք շատ լինելով առաջին միջոց որ իւր դէմ կ'ելնէ , զայն բաւ և օգտակար կը համարի , անոր համար շատ կը խարուի . խսկ խորամանկն ամեն բան դիտէ , կը աեսնէ և կը ճանաչէ , բայց զարտուղին և ծածուկը կ'լնարէ . մինակ թէ իւր նպատակին ծառայէ . հոգ չէ որ իրաւացի կամ անիրաւ լինի : Անխոհեմ փոքր դժուարութեան հանդիպած ժամանակը կ'սոր ջանայ և ետ կը դառնայ , բայց խորամանկն՝ ամեն բանի մէջ յաւաջատես է , ամեն հնարք ՚ի դործ կը դնէ , զէշ միջոցներուն՝ դէշ միջոցներով կը յաղթէ և առաջ կ'երթայ :

Թէ խորամանկն և թէ անխոհեմն երկուքն ևս կը ձեռնարկեն շար միջոցներուն՝ բարի վախճանի համար . կամ բարի միջոցի՝ շար վախճանի համար , կամ շար միջոցի կը ձեռնարկեն՝ շար վախճանի համար , խորամանկն՝ վասն շարութեան , անխոհեմ վասն անմոռութեան :

Անոր համար անխոհեմ իւր նպատակին կարող չէ հանիլ , այլ խնդիր է որ երբեմ դէպք կամ բաղդ կը յաջողեն : Խսկ խորամանկն շատ անդամ կը հանի իւր բաղձանաց , զի շարութիւնը թէկ առաքինութեան հետ բաժին չունի , բայց և այնպէս իրեն հանձար շպակսիր : Անխոհեմի ձախորդ դործոց ամեն մարդ կ'ախ-

տակցի , իսկ խորամանկի ձախորդ դործոց վրայ ամեն մարդ կ'ուրախանայ . վասն զի խորամանկն ուրիշ միջոցաւ կարելի չէ ըլռնել և պատժել , միմիայն իւր դործ կրնայ զինք պատժել :

—~~առօր~~—

## ԴԱ.Ա ՃԳԴ

### ՀԵՇՅՈՒԹԻՒՆ

Այս այն է որ ամեն մարդ կը փնտուէ . բայց քիչերն են որ զայս կը ճանաշեն . հեշտութիւնը զինք գտնողները կը տրտմիցընէ քան թէ կ'ուրախացընէ . չիք ինչ բարի՝ առանց հակառակի և ոչ հակառակն առանց վէճի :

Հեշտութիւնը երկուք է , մին՝ աղնուական և տիրական , որ բնական լինելոյն համար մարդուս մինակ սեփհական է , իսկ մրւան է անարդ ծառայական՝ որ հասարակ է անրան անասուններուն . նա մեր հոգւոյն բարձր մասէ ծնած լինելով զմեղ դէպ ՚ի երջանկութեան կ'առաջնորդէ , աս՝ մեր զզայութիւններէն ծնունդ առնելով եթէ մեր հոգւոյ բարձր մասին շանսայ՝ զմեղ դէպ ՚ի թշուառութիւն կ'առաջնորդէ :

Մարդիկներէն անդուչները՝ ստապանիր հեշտութիւնները ձրշմարիտ կարծելով՝ աղտեղութեանց մէջ կ'իյնան . կարծուած երջանկութիւնը՝ յետին թշուառութիւն կը դառնայ իրենց : Ուրեմն բարոյական իմաստափրութիւնն այետք է որ ցոյց առյ թէ որն է ձշմարիտ և որն է սոււտ . զի ձշմարիտ հեշտութիւնն է այն որ բարոյական առաքինութեան զլիսաւոր վախճանն է : Երկելի իմաստ մը ցոյց կու տայ այս երկու տեսակ հեշտութիւնները . այն է առաքինի՝ որուն բերկըութիւնը և տիրութիւնը արժանաւորին վրայ

կայացած է . այն է մոլի՛ որուն բերկութիւնը և ախրութիւնը անարժանին վրայ կայացած է :

### ԴԱՍ ՃԺI:

#### Ի՞նչ է հեջափառութեանը

Հեշտութիւն դործողութեանց կատարելութիւնն է զոր իրարաբանչիւր օք պատշաճող անձին կը համարի , աչք՝ լշար և զդարձալի գոյները տեսած և դդացած ժամանակը հաճութիւն մը կ'զգայ , այսպէս ալ արտաքին զուարձալիները , զեղեցիկները , խոտաւէտները , բերկութիւն առժողները , ասոնք ամենքն հաճուք կը պատճառեն ՚ի միջ և մնաք զատոնք տեսնելով և վայելելով կը հեշտանալիք :

Քաղցր ձայները ականջին հաճոյք կու տան . անուշահոտ բուրութերմբ քիմբերուն հաճոյք կու տան , համեղաճաշակ կերակուրաները մեր հաշակելեաց հաճոյք կու տան :

Վահանչերը , պքանչելիները և զեղեցիկները մեր կամաց հաճոյք կու տան . իորհիլ , իմասասփրել , հրամայել , և այլն մեր մոտաց հաճոյք կու տան . այս հաճոյք պատճառող իրերը որք մեր իմացականին կամ զգայականին կը վերաբերին , գործողութեանց վերջին կատարելութիւնները կը համարուին , որ այն ալ հեշտութիւնն է :

Ամեն հեշտութիւններ՝ գործողութիւնները բերկութի կ'ըսին , բայց ամեն գործողութիւնները բերկրական չեն , անոնք միայն բերկրական են որոնք որ պատշաճ են , որք տրամադրութեան կարողութեան հետ տուարկայի համեմատաւթեան վրայ հաստատուած են :

Ինչպէս որ սովելսյն կերակուր , վաստակելոյն հանգիստ , կալառ

նաւորին ազատութիւնը , ասոնք զատ զատ բաղձանքներ են , բայց իւրաքանչիւրն երբ իւր բաղձանք կատարած լինի բերկրութիւն մի կ'զգայ . Պղատոնականները կ'ըսէին՝ Հեշտութիւնն է լրումն պահասորդի :

Հեշտութիւնը մարդկային գործողութեան վերջին կատարելութիւնն է , վասն զի հոգւոյ շարժմունքները կատաղութիւն կը բերեն , սիրոյ և ցանկութեան թեսերը կը կտրէ , յոյս և երկրող կը մուցընէ , բարկութիւնը ցաւը կը յաղթէ . առաջիկայ բարին ձեռք բերելով ամեն անհանգստութեանց հանդիստ և դադար կու տայ . Հեշտութիւն ձեռք բերելու համար չորս միջոց պէտք է , այսինքն կարողութիւն , առարկայ , հաճութիւն , գործողութիւն . առոնցմէ աւելի պէտք է պատշաճ ըմբռնումն , որովհեակ բաղձողական կարողութիւնը՝ ըմբռնողականին լուսով կը շարժի , առանց ասոր ցաւազիները՝ չեն ցաւցըներ , բերկրականներն ալ չեն բերկրեցընէր , շատերը թշուառ են . զի իրենց երջանիկութիւնը չեն ճանչեր , և ուրիշները՝ երջանիկ են , որ իրենց թշուառութիւնը չեն ճանաչեր :

Հեշտութիւններէ ոմանք մարմննը կ'ապահանեն և կը տիկարացրենն ինչպիս են ամօլյալի չափազանց վասագործերը , որկրամծութիւնները , զինեմոլութիւնները և այլն :

Ոմանք զշողին կը տկարացընեն , ինչպէս են չափազանց խմաստասիրել . միտք յոզնեցընել իմանալի առարկաններով . այն ամեն բանները որանց որ ստորին կամ՝ վերին բաղձանքները ուղիղ բանհն հակառակ պէտքէն աւելի կը փափաքին , անոնք ամենքն ալ մոլեկան հեշտութիւն են , իսկ այն բանները որ բերկրաւթիւն կու տան մեզ ուղիղ բանի առաջնորդութեամբ , նոքա առաբինական հեշտութիւններ են :

## ԴԱՄ ՀԺԶ

### ԺԱՌԻԺԿԱՑԼԱԽԻԹԻՒՆ

Բան և բաղձանք մեր դարձողութեան երկու սկզբունքներն են. բաղձանք բայլը ցանկութիւն ըսել է, որ ցանկականին և ցամացականին կիրքերն են, այսինքն հեշտութեան սերը ցաւերու փախուստ, թմրութիւնը և անզպայութիւնն ալ ասոր հակառակն է :

Բան ըսելը՝ բնական սկզբանց ունակութենէն լուսաւորած միտք ըսել է, այսինքն խիղճ մտաց որ կը համաձայնի աստուածային կանոնին, որոցմէ կը ծնանին օրէնքները. և ասոր կը հակառակի չարութիւնը կամ տղիտութիւնը :

Բանը՝ համեստութեան կը հետևի, և բաղձանք բերկութեան, բայց երբեմն կը համաձայնին և կը միաբանին, երբեմն ալ կը հեռանան իրարմէ :

Երբ բանն և բաղձանք կանոնաւոր են, բարիին համար երկուքը կը միանան. ուրիշ կը ծնանին կատարեալ առաջինութիւնները :

Երբ երկուքն ալ անկանոն են և կը միաբանին չար գործելու, անկէ կը ծնանին մոլութիւնները :

Երբ բանն կանոնաւոր է և բաղձանքն անկանոն, նոցա մէջ վէճ տեղի կ'ունենայ և զօրաւորն կը յաղթէ, եթէ բանն զօրանայ ժողովալութիւն կը ծնանի, իսկ եթէ բաղձանք զօրանայ կը ծնանի անժուժկալութիւն :

Ուրեմն ժուժկալութիւնը հոգւոյ մէկ առ աքինութիւնն է, ժուժկալութեամբ կանոնաւորեալ բանոր հեշտութեան անկանոն բաղձանք կը սանձէ :

Իսկ անժուժկալութիւնն հոգւոյ այն մոլութիւնն է, որ բանն

իւր ուղղութենէն զարտուղելով՝ անկանոն բաղձանքներէն կը յա-  
փշատիրի, հեշտութեան ետևէն կ'երթայ:

Ժումկալութիւնը բարեխառնութեան նկատմամբ փոքր առա-  
քինութիւն է, անժուժկալութիւնն ալ բաղդատմամբ ընդ անբարե-  
խառնութեան, անկէ փոքր մոլութիւն է. զի անժուժկալն կրից  
մղումէն կը գործէ, բայ է որ անբարեխառն բաղձանք կանոնաւո-  
րէ. իսկ անբարեխառնին թէ բաղձանքն ապականեալ է և թէ դա-  
տում, ուստի անբարեխառն դժուար կը բժշկուի:

### ԴԱՍ ՃԺԷ

#### ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՆ ԽԱՐԿԻՆԵՐԸ

Ժուժկալութեան առարկան է հեշտութիւնը, և հեշտութեանց  
ոմանք՝ ցանկութենէն, ոմանք՝ ցամանականէն, այլք՝ մարմաւոր  
բարիքներէն, ուրիշները՝ արտաքին բարիքներէն, ոմանք՝ իմմանալի  
բարիքներէն կը ծնանէն. անժուժկալութեան առարկաները ևս ա-  
սոնցմէ կը ծնանին. անժուժկալութիւնը մոլեկան ցանկութիւն է,  
և անառողջ չասում:

Այս հիւանդութիւնը քանի քաջ և իմաստուն մարդիկ իւր  
տարապայման հեշտալի մոլութեանց մէջ ընկղմեց և նոցա գոր-  
ծերը իրենց անուան հետ ծաղ ու ծանակ ըրաւ:

Իսկ անոնք որ կարողացան ժուժկալութիւնը ամուր բռնել նոքա  
խռոտակեցին այս ամեն վրանդները և զիրենք աղատեցին:



## ԴԱՍ ՃԱՐ.

### ԺՅԻԺԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԻ

Ժուժկալութեան դլիաւոր տեսակներն են, ամօթական հեշտութիւններէն անձնապահ լինել և պատուաւոր ցաւերուն համբերել :

Անձնապահութեան դէմ կը մեղանչեն անդարեխառն ձեռներեցութիւնը և տղարաւթիւնը, և համբերութեան դէմ ապաժուժութիւնը և մեղիւթիւնը :

Չեռներէց է այն անժուժկալ՝ որուն անպատշաճ հեշտալի առաջ մը ներկայացած ժամանակ նորա անսպաշաճութիւնը կը ճանաչէ, բայց ապաժոյժ ցանկութիւնը տուանց ժամանակ տալու կը վաղէ գէպ ՚ի իւր ըղձարին :

Իսկ տկարն ուշի ուշով առարկայի անվայելչութեան և զադրութեան նայելով՝ մտօք հրաժարիլ կը խորհի, բայց ցանկութենէն խարուելով և դրդուելով կը յաղթուի :

Չեռներէցն և ակարն ՚ի նիթն անտարբեր են, մինչ շուտով՝ մրւոն՝ քիչ մը ուշ. մազնոտները և սեամազնոտները աւելի ժուժկալ կը լինին, իսկ մազասոտները և արինայինները դիւրաւ կը խարուին բերկրական առարկաներէն. ապաժուժն է որ կը տոկայ փոքր նեղութեանց, բայց մեծ նեղութեանց չկընար տոկալ, մեղին այն է որ և ոչ իսկ փոքր նեղութեան կրնայ ժուժկալել և այս չէ թէ տկարութենէն կամ խառնուածներէն է որ չժուժկալիր. այլ թէ կնամսրդութենէն և չար ունակութենէն է :

Այն է աւելի անժուժկալ որ փոքր հեշտութենէն կը յաղթուի. բյու է ժուժկալող որ մեծ հեշտութեանց կը յաղթէ :

Ժուժկալն բացարձակապէս բարի չէ, վասն զի իւր բաղձանք:

ները ուղղութիւն չունին . այսպէս ալ անժամկալն բացարձակապէս չար չէ , վասն զի դատումն առողջ է :

### ԴԱՍ ՃԺՈՒՄ

#### ԳԻՒՑԱՅՆԱԿԱՆ ԱԲԱԳԻՆՈՒԹԻՒՆ

Գիւցայնական առաքինութիւնն է , դատման այն կատարեալ կանոնադրութիւնը և կրից վրայ իշխելու բացարձակ տէրութիւնը որ ոչ մէկ առարկայ մը կարող է զգեցազն ՚ի բանաւորէն խոսութեցնել «Անոր համար Հոմերոսն կ'ըսէ այնպիսիներուն :

Զերեի ծնունդ , մահական մարդկան .

Այլանմահ զարմէ , դիցն վերնական :

Մարդ մը այս առաքինութեան մէջ որքան առաջ երթայ այնքան Աստուծոյ կը մօտենայ , և որչափ որ մնայ այնչափ անասնոց կը մօտենայ . դիւցանական առաքինութեան նպատակը ուղղակի Աստուծոյ փառքերուն կը նայի . դիւցազն պէտք է որ ունենայ Շիպիոնի՝ բառեխառնութիւնը , Ագեսիղայոսի՝ արիութիւնը , Էնէացոց զդաստութիւնը , Կամիլլոսին՝ հաւատարմութիւնը , սոցա ամբողջութիւնն է . որ զմարդկն դիւցազն կը կացուցանէ :

Ասոր ներհակն է զաղանաբարոյութիւնը որ հետեւալ յատկութիւնները իւր վրայ կ'ամբողջացընէ , և Խորի՝ աղտեղութիւն և տղմասիրութիւն , զայլց՝ զիշատումն , վազրի՝ անդժութիւն , աղուսունգութիւն , վարազութիւն , շան կատաղութիւն» ահա ասոնք են որք զմարդն ամեն դազանիներէն աւելի շարագոյն կ'ընեն

և հրեշտակ կը գառնայ մարդ ընկերական աշխարհի մէջ ամենէն զղուելի և ատելի . ամենք կը խորշին իրմէ և թասակար չար գաղնի պէս կը հալածեն զինքը :



### ԴԱՍ ՃԻ

#### ԾՐԵԼԸՆԹԻՒՆ ԿԱԾ ԲԱՐԵԿԱԾՈՒԹԻՒՆ

Աէրն է այն սուրբ կապը որ խառնիխուռն վիհերու մէջ հակառակարաները իրարմէ որոշելով, նմանն՝ իրեն նմանի հետ լծորդելով անկերպարանէն՝ տիեզերաց գեղեցիկ կազմութիւնը կերպաւորեց :

Սա անշնչականներու մէջ էութիւնը կը պահէ, զգայականաց մէջ՝ ընկերութիւնը կը պահէ, բանականներու մէջ՝ առաքինութիւնը կը պահէ . աէրը անշնչականներու մէջ լոկ համակրութիւն է, զգայականներու մէջ բանաւոր ազգեցութիւն, խակ բանաւորաց մէջ կամաւոր սիրելութիւն է, որուն պատուղներուն բարեկամութիւն կ'ըստմք :

Մարդկային կիրքերու մէջ ամենէն ազնուադոյնը սէրն է, և սիրոյ պատուղներու մէջ ամենէն ազնուադոյնը բարեկամութիւնն է :

Բարեկամութիւնը թէև անկատար առաքինութիւն մ'է, սակայն յոց պիտոյ է մզ. մեր կենաց կենցաղավարութեան շրջանի մէջ մանաւանդ թէ մեր երջանկութեան առիթ կրնայ լինիլ :

Բարեկամութիւնը երկու տարրեր սիրտեր՝ ի մի կը միացընէ . այնպէս որ երկու անձինք միմնանց սրտով, և միմեանց հոգւով կապաւած իրարու փոխադարձարար բարիք կը կամենան :

## ՊԱՍ ՀԵԿԱ

ՊԱՏՃԱՔԻ ՍԻՐԵԼԸՆԹԵԱՆ ԵՒ ԲՆԻԵԿԱՄԱՒԹԵԱՆ

Նմանութենէն կը ծնանի սէրը , ներհակութենէն կը ծնանի ատելութիւնը . մաքնիսին սէրն է որ յինքն կը ձգէ երկաթը կամ երկաթն երբ հեռուէն կը տեսնէ իւր սիրելի մաքնիսն՝ յափշտակուելով կը միանայ անոր հետ , երկաթն կը մաքնիսանայ , մաքնիսն կ'երկաթանայ :

Ասոր հակառակ մաքնիսն երբ երկալին յօաեցընես , թիկունք կը դարձընէ և փոխանակ մօտենալու . հետս կը մշուի ՚ի փախուստ կը դառնայ :

Արմաւին ծառերը երբ իրարմէ հեռու են և անհաղորդ՝ անպտուղեն , իսկ երբ մերձենան իրար մէջ սիրոյ զօրութիւնը ստացած պտուղ կը բերեն . որթը կաղամրին քով անկես կը չորանայ անոր ցուրտ բնութենէն մնասուելով . եթէ անզգաներու մէջ զարմանտլի ներգործութիւնն կը կատարեն սէրը և ատելութիւնը , ապա զգայուն մարմնոյ քանի՛ առաւել կը ներդորձեն . ովէ որ այնքան մեղուները ՚ի մի հաւաքելով այն քաղցրաճաշակ մեղրն առաջ կը բերէ , ոչ ապաքէն միտութեան սէրը . անտեսագիտութեան սէր մըջուները կը համախմբէ , իրենց պէտքերը համբարելու , և կենազնեաց շատերը սիրով կը միանան իրենց տեսակի թշնամին հալածելու :

Վեր յիշուածներէն կինաս վերահասու լինել թէ սիրոյ արգասիք նրչափ աւելի կրնան ներգործել մարդկան յօդուտ և ՚ի պահպանութիւն նոցա տեսակին :

Երեք տէսակ սէր կը ներգործէ մարդկանց մէջ , այսինքն համակրական , լնկերական , և բնական , համակրական սիրով ծնան

Պողիստրատոսն և Հիպակղիստռէն, միւնոյն աշխարհի և միւնոյն կլիմայի տակ, միւնոյն համաստեղութեան տակ համանոն խառնուածներով, գէմքով, և հանձարով և խօսքով. սոքա առաջին անգամերը զմիփանս տեսան՝ զաղոնի կապանօք սիրտերնին իրարուհետ կապուելով՝ ի միասին ապրեցան, ՚ի միասին հիւանդացան և ՚ի միասին մոռան, որպէս թէ մէկ հոգի միայն բնակած լինէր այն երկու մարմնոց մէջ:

Ընկերական սէր միմեանց հետ գաշինքով կապեց թէսէոս և գէրիթոս, որք հասարակաց օգտին համար միատեղ էին թէ պատերազմի թէ ինքնակալութեան և թէ ամեն հասարակաց զործոց մէջ, այնպէս որ սոցա թշնամիները ասոնց համար կ'ըսէին, թէ երկդլիի և չորս բաղուկ ունեցող միութինն մ'են:

Այսպէս էին նաև հեթանոսութեան մէջ բարեկամական սիրով կապուած Պեղոպիտոս, և Խաղամինոնդաս, սոքա միմեանց վրայ տեսան մեծ խոհեմութիւն, սիրելի ծանրութիւն, պարկեշտ զգաստութիւն, անշաւու արդարութիւն, սրաի դից ցազնական արիութիւն, և սէր առ հայրենիս, բարեկամութեան նպատակը ու պատուոյ, ու ճախութեան և ու իրենց օգտին համար էր, այլ միայն առաքինութեան սիրոյ համար:

— 56 —

### ԴԱՍ ՃԻՔ

### ՑԱՆԿԱՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԱԷՐԸ

Նարկիս երբ զինք ականակիտ աղբիւրի մէջ տեսաւ, իրեն զեղեցկութեան սիրահարուեցաւ, և զարսմանք չէ թէ սիրոյ առարկան

դէմյանդիման տեսաւ և բորբոքեցաւ, նա իւր աշքեն շխարուեցաւ հապա իւր կարծիքէն խաբուեցաւ, զի այն որ իւրն էր, այլոց կարծեց :

Ասոր գեղեցկութեան հակառակ զարշատեսիլ Ավկա պառան, իւր մանկութեան ղեղեցկութիւնը յիշելով հայելին կը նայեր և ինքինք չնաշխարհիկ զեղեցիներէն մէկը կը կարծէր, և կ'սկսէր ինքինք սիրել, բայց իրմէն ի զատ զինք սիրող ուրիշմը չկար. այս աւելաղանց ինքնասիրութիւն էր, այո՛ թէպէտ ինքնասիրութիւն՝ բնութիւնը տուած է իւրաքանչիւր ոք իւր անձը սիրելու և պահպանելու համար, բայց եթէ շափաւորեալ չլինի, Պասակար կը լինի նոյն ինքն սիրողին և ծաղ ու ծանակ կը լինի աենողներուն, ինչպէս որ նարդիլը և Ավկան :

Ինքնասիրութիւնը իրական ցանկութիւնն է, որ մարդկանց ամեն բաղձանաց արմատն է, որ հետամուտ կը լինի բարիքներուն, կը խորշի իւր շարերէն, կ'սւպէ վայելվէլ իւր ունեցած բարիքները և կը ցափ իւր շունեցած բարեաց համար թէ ինչո՞ւ չունի :

Նաև բնութիւնը սահմանեց այն իղձը մարդկանց մէջ որք իրենց ունեցածները ուրիշներուն հաղորդել կ'ուզեն, ինչպէս ուսումնականը իւր ուսմունքը, սէրն մէկէ մը ծնելով շատերուն կը ասարածուի կամաց մի շնորգութեամբն :

Երբ մէկը իւր բարիք միայն կը սիրէ, սէր մնայուն յինքեան է. երբ զուրիշն կը սիրէ՝ բարի յօժարութիւն է, երբ կը սիրէ և փոխադարձ կը սիրուի՝ կը լինի սէր փոխսպարձ. թէպէտ սիրոյ առաջնորդ աշքն է, բայց ականջն ես նոյն սէաշտօն կը կասարէ, զի շատ անդամ առաքինութեան համբաւն ալ սէր կը ծնանի առ այլս որք զինք չտեսած բարի անունէն զինք կը սիրեն :

Մարդիկ երբ հոտաւէտ ծաղիկները կը սիրեն, այն բարի յօժարութիւն է, ելլէ փոխադարձ ծաղիկներն ալ սիրէին՝ կը լինէր բարեկամութիւն. բայց սրովհեան նոքա չին դզար, հնաւերաբ մարդկան առ նոսա ունեցած սէրը բարի յօժարութիւն է միայն :

Երբ մէկը կը սիրէ որսիս զի փոխարէն ո՛ք ընդունի, այս ո՛չ յիշ ցանկութիւն է և ոչ բարիկամութիւն, ա՛ս ո՛ք ո՛չ լրջութ, ո՛չ

Համար կը սիրէ , նա սիրելի բարեկամ չէ , այլ սիրոյ վաճառող է , վասն զի չէ թէ բարեկամն կը սիրէ այլ իւր անձը . ասոր համար ցանկութեան սէրը չկընար փոխադարձ սէր պահանջել , վասն զի այն սիրոյ փոխարէն իրբե վարձ , բերկրութիւն կամ շահ կ'ընդունի :

### ԴԱՍ ՃԻԳ.

### ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՀՆԵՐԸ

Բարեկամութեան տեսահները երեք են , այսինքն բաղդի բարիք՝ որք են օգտակարք , մարմնոյ բարիք՝ որք են բերկրականք և հոգւոյ բարիք , որք են համեստք :

Օգտակարները ըստ ինքեան սիրելի չեն , այլ միայն ըստ պատահման սիրելի են , այսինքն երբ բերկրական և համեստ բարիքները ձեռք բերելու կը ծառայեն :

Բերկրակամները ըստ ինքեան զգայական բնութեան սիրելի են , համեստները ըստ ինքեան բանաւոր և կատարեալ բնութեան սիրելի են .

Ըստածներէն կը հասկընամք որ երեք բարիքն ալ սիրելի և բարեկամ են երբ համեստ վախճանի կը ծառայեն :

Հեշտական բարեկամութիւնը ամենէն աւելի հաստատ բարեկամութիւնն է առաջնն անգամ և մարդկանց կրից մէջ շտու արագ է , որքան արագ այնքան անհաստատ է , վասն զի անբանական շարժմունքներ են , որք շուտով կը փոփոխուին . որչափ առաւել է նորա մղումը , այնչափ ալ կարճատէ , անոր համար հին ժա-

մանակը հեշտական սէրը նկատեցին իբրև տղայ թեաւոր, վասն զի աղայի պէս անբան է, և իւր փետուրէն առելի թեթե, և ցու դէ ճրագ՝ ի ձեռին ունենալով որ շուտ մը կը վառի և շուտ կը մարի :

Հեշտական սէրը այնքան կը առէ, որքան որ կը առէ հեշտութիւնը. եթէ տկարութիւնը կամ գէպը փոխէ օֆրելոյն գէմի՝ ահա սէրը կը փոխուի ատելութեան. այն որ առաջ հաճոյը կը պատճառէր՝ յետ այնորիկ զզուանք կը պատճառէ :

Յունաց իմաստասէր Պերանդրոս, երբ ուրիշ օտարի մը գեղեցկութենէն յափշտակուեցաւ, իւր զուգակիցը ձգեց նորա ետեէն գնաց. սակայն այն իմաստոյն սէրը իմաստութեան մէջ արմատացուցած չէր, այլ բերկրականին մէջն դրած էր իւր արմատը. շատ զիտէր՝ բայց զիտուն չէր, թող թէ իմաստուն, վասն զի Ճշմարտա իմաստուն՝ չէ թէ հեշտութեան այլ իմաստութեան համար կը սիրէ. այն իմաստունը ուսուցանել զիտէր՝ բայց ուսնիլ չէր գիտեր, առաքինին կիրքով չփրեր այլ ունակութեամբ, մոլինէ որ կիրքով կը սիրէ.

Աշխոյժ երիտասարդը կիրքերէն յուզուելով հեշտութեան համար կը սիրէ. տկար ծերը որ օգնութեան կը կարօտի իւր օգտին համար կը սիրէ. այն միջակայինները որոց կիրքերը մեղմացած են և զգութիւնին տկարացած չէ՝ նորա համստութեան համար կը սիրէն.

Բարեկամութեան առաջին պայմանն է, բարի կամել բարեկամին, փափաքել որ նա զուարթ և ուրախ լինի, ուրախակից լինիլ նորա բարեաց և կարեկցիլ նորա դժբաղդութեանց, ծաղրական է այն բարի յօժարութիւնը որ բարեկամութեան ձեռք չկառկառէր. ինչօգուտ է լոկ բարի կամիլը, երբ նոյն բարին անոր հասցընելու միջոցին ձեռնոտութիւն չընես. ՚օգնութիւն չընող բարեկամն այնչափ նշանակութիւն ունի, որչափ նշանակութիւն ունի շնասող թշնամին :

Բարեկամութիւնը կ'ամրապնդէ զբարեկամութիւնը, իսկ անիրաւութիւնը կը քանդէ զայն, բարիք ընդունելու համար սիրելը բարեկամութիւն չէ, իսկ բարերարուելէն վերջ սիրելը զեղեցիկ բարեկամութեան սիրիզն է :

Այս բարերարութիւնները որ համեստ չեն՝ բարերարութիւնն չեն համերուիր: Կան բարերարութիւններ որք երբեմ չարարութիւն են, վասն զի բարեկամին հաճոյանալով՝ բարեկամութեան ֆնաս կը բերին: Երկու բարեկամներու մին՝ իւր բարեկամն անիրաւ պաշանջմուրատ, և բարեկամն զլցած ժամանակը ըստ պահանջողք, ինչ նշանակութիւն ունի ինձ համար քու բարեկամութիւնը, երբ բարերարութիւն ըն չէրցայ ընդունիլ գեզմէ: Պատասխանեց միւս բարեկամն թէ, ինչ նշանակութիւն ունի քու բարեկամութիւնդ ինձ համար, եթէ ես քեզ չամար անիրաւութիւն ցործեմ:

Կատողիկ ըստւ Ճշմարիա բարեկամութեան կապն այն է, որ չէ անդուիր, մինչեւ որ չկարես, Ճշմարիա բարեկամութիւնը կը ծնանի միաւորաւթիւն կամ միարանութիւն, որպէս արդիւնք մած է:

Երբ երկու տարակայ Ճշմարիա բարեկամներ յանկարծակի պամանց հանրիպին, սիրտերը բարտիկելով զմիմեանս կը զրկախառնեն զորովք սիրով, իրեց փօփէի ախարժանաց թարգմանը ձայն կ'արձակնեն՝ ի շեզուն, զուարթ ծրեսով, աչայ քաղցր արտասուրեւերով, շրմաց անուշ մազիաներով, սիրս սրաի հետ միացուցած, խորհուրդ՝ խորհրդի, կանք՝ կամաց համաձայն, չե կարելի նոցալինել տարաձայն, վասն զի նոցա սիրս միաձայն է, ինչ քաղցր և զուարժակի. նոցա բաժանման ժամանակը դարձեալ այն քաղցր սիրոյ փոխարինութեանը նամակաց միջոցաւ խորհրդոյ և սրտից արտայալուաթիւն. այս ամենը ցոյց կու տան թէ նոքա թէ կ կամք, մէկ խորհուրդ, մէկ սիրտ են, և մէկ հոգի երկու մարմեյ մէջ բնակած, վասն զի կը տեմուուի որ մահը մէկը տարած ժամանակ միւսը իւր իւրաք նորա խարցիներուն կը ծափէ, մահն անդամ չընար զանանց բաժանել, յօժարութեամբ կ'ընտրէ մեռանիլ սիրուոյն և բարեկամն աեղ, քանի չէ ասլու առանց անոր:

Յառաջնան մէջ տղին երկու սիրելի բարեկամաց (Պիառալու և Ովքեսլէսի) սէրերը, որոց միս 'ի մահ դատապարտելու վհեալ ելած ժամանակը՝ եւ դ հայտոցին թէ Զեզմէ ովլ է Ովքիսս ու ու, երկուուն ևս շարունակ կը պնդէրն, մին կ'ընէր՝ ես եմ, ուուոն կ'ըսէր՝ Ես եմ: Բարեկամական անկեզծ սէրը մին 'ի միւսն

կինդանի կը պահէր, և այս սէրն էր որ մին՝ միւսոյն մահտանէն չեր կրնար բաժնել, վասն զի երկուքն ալ կը ջանային իրենց կեանքն փոխանակել իրենց սիրելոյն կենաց։ Մին սպաննած ժամանակ միւսն ալ սպաննած կը լինէին, եթէ երկուքն ալ սոլաննէին, մի միայն մէ կը սպաննած կը լինէին, սիրոյ այս սրանցելի համբաւը զանոնք անմահ ըրտ :

Առաքինութեան բարի յօժարութիւն չէ առաքինական բարեկամութիւն եթէ փոխագարձ չլինի, ինչպէս որ պատահեցաւ առաքինասէր զրագէտ Պրիմասսոսին՝ որ այնչափ վառուեցաւ Աղոփնեայ արրայի առաքինութեանց սիրով, որ մած Ճամբորդութիւն մը ըրտաւ, որպէս զի երթայ աբրան տեսնէ և նորա հետ բարեկամութեան սէր կապէ, և որովհետեւ իրարու անծանօթ էին, աբրան երբ զայն տեսաւ, զեղջուկ մը նկատելով մած համակրութիւն մը ունեցաւ իւր սրտի մէջ։ Երկուքն ևս առաքինի էին, բայց մին կը սիրէր սակայն փօխադարձ չէր սիրուեր, ինչպէս որ միւսն ալ կ'ատէր զինք սիրողը և կը սիրուեր անկէ։

Մին էր բաղեղն (սարմաշըք)՝ որ կը սիրէր զկնձնին (զարս աղած), և միւսն էր կնձնի որ կ'ատէր զրաղեղն։

— 255 —

### ԴԱՍԱ ՃԻԴ.

#### ՀԱՒԽԾՈՐ ԵՒ ԱՆՇԵԽԻԱՅՑՈՐ ԲԱՐԵԿԱՍՏՈՒԹԻՒՆ

Հաւասար բարեկամութիւնն է որ մէ կը որշափ որ կը սիրէ փոխարէնն այնչափ սիրուի։ Կատարեալ բարեկամութիւնն, առաքինութեան նմանութեան վրայ հիմնուած է, որովհետեւ հաւասար առաքինութիւնը արդիւնք կը հաւասարէ և արդիւնքն ալ հաւասար

սէր և հաւասար զործ կը համեմատէ , և այս տեսակ մը արդարութիւն է որ պէտք եղածը կու առյ իւրաքանչիւրին սէրը . անհաւասար կը լինի , երբ շահու ակնկալութիւն կայ . ինչպէս հիւանդն քժիշկը կը սիրէ իւր առողջութեանը համար , աղքատն զմեծատունն կը սիրէ նպաստ մը ընդունելու յուսով , հպատակն իւրիշխան կը սիրէ՝ պաշապանութեան ակնկալութեամբ , սակայն ասոնք ցանկութեան սէր են , չէ թէ բարեկամութեան :

Այս տեսակ սէրը միակողմանի է , միւս կողմէն փոխադարձ չունի , և կարելի չէ լինել զի մեծ տարբերութիւն կայ , հիւանդի և բժշիկ , աիրոջ և ծառայի , հարուստի և աղքատի մէջ տեղը : Զափազանց գեղեցկութիւնը ամբարտաւան է , զինք սիրողը կ'ապշցընէ և զայն կ'արհամարէէ , վասն զի կ'ուզէ որ պաշտուի ու չէ թէ սիրուի . այս ալ միակողմանի է , վասն զի ինք չսիրեր և զորիշը կը բռնադատէ իւր գեղով զինք սիրելու :

Փոխագարձ պէտք սէր սիրով և անքակտելի բարեկամութեամբ կապեց միմանց հետ զկաղն և զկոյրն , մին՝ կը տեսանէր բայց կարող չէր զնալ , միւսն կարող էր զնալ բայց չէր տեսներ , կոյրն զկաղն իւր շալակն առած , կադի աչքն ճանապարհ ցոյց տուաւ , կոյրի ոտք զայն շարունակեց քալելու և երկուքն ալ իրենց նպատակին հասան . զի կոյրն իւր ոտք փոխ առաւ կաղին , և կաղն իւր աշք փոխ տուաւ կոյրին , և երկու մարմին մէկ մարմին եղաւ կրկին սքանչելեաք , քանզի կոյր կը տեսանէր և կաղն կը զնար :

Կը պատմուի թէ աղաւնին տեսնելով որ մրջիւնը զեան ինկած կը խեղդուի , շիւղ մը ձգեց՝ որուն վրայ ելնելով մրջիւնն վտանգէն աղատեցաւ . փոխադարձ՝ մրջիւնն երբ տեսաւ որ հաւորն իւր սատղը պատրաստած է զաղաւնին որսալու , զնաց նորա թելը կարեց և աղաւնին այն վտանգէն աղատեց . ահա այս համակառկան փոխադարձ սիրոյ բարեկամութիւն մ'է . որով երկուքն ալ մէկ մէկ մաշուան վտանգ անցուցին :

Աւերջապէս կաարեալ բարեկամութիւնն է փոխադարձ և զործունեայ բարեյօժարութիւն երկու հաւասար անձանց մէջ , որ պատճառած է առաքինութեան նմանութենէն այսինքն 'ի սիրոյ , այս

բարեկամութեամբ , փոփոխ բարերարութեամբ և միաբանութեամբ միմեանց բարի կը կամին . իսկ անհաւասար բարեկամութիւնն է՝ փոխադարձ բարեյօժարութիւնը երկու անձանց , համեմատական հասարութեամբ իբրարու հետ ունեցած միաբանութեան և բարեկամութեան մէջ :

### ԴԱՍ ՃԻԵ

#### Ի ՎԵՐԱՅ ԲԵՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

Նախնի իմաստասէրներէն ոմանք կ'ըսէին թէ Լառ է բարեկամ չունենալ , զի բաւ է ինքնին բարեկամութիւն . առաջ բերելով թէ որովհետեւ բարեկամութիւնը աղատութեան կապ մ'է . ի՞նչ հարկ կայ մեր աղատութիւնը բարեկամութեան կապի տակ դնել :

Ըատ է որ մեր աչք՝ մեր չարիք լայ , ի՞նչ հարկ որիշին համար լալ :

Սակայն ուրիշները պատասխանեցին թէ՝ իրաւ բարեկամութիւնը կապ մ'է որ մեր աղատութիւնը կը կապէ , սակայն աղատ կապ է , կամաւ և ոչ բռնի , մանաւանդ թէ անհամաձայնութեան ժամանակը աղատ է այն կապը քանդել , ինչպէս որ քանդեց Հաստեղիս , երբ տեսաւ որ բարեկամութիւնը զարդարութիւնը ովհտի կորսնցընէր , նա բարեկամութիւնը խղեց , արդարութիւնը պահեց :

Նաև ո՛քան օդուաներ , հանգստութիւններ և զուարձալի ուրախութիւններ կը վայելեմք բարեկամութեամբ . և մեր ինչք , ստացուած , պատիւ և մեր կեանք իսկ մեր բարեկամներու ձեռքով

պաշտպանուած են շատ պարագաներու մէջ։ Խնդիր եղաւ երբեմն թէ ճշմարիտ բարեկամն պէտք է որ իւր կեանք իւր բարեկամի կենաց փոխառակէ։

Ասոր պատասխանը օրէնք տուաւ թէ Սիրեսցես զընկեր քո իր-ը զանձն և ոչ աւելի, միայն Աստուծոյ որդին էր որ իւր կեանք աշխարհի կենաց փրկանք տուաւ։

Այս ալ զիտնալու է որ երանական շնորհաց համար շատերը իրենց կեանք տուին ուրիշներու կենաց փոխարէն։

Տղայոց և սովորականի մեծութիւն ըղձալը բարեկամութենէն աւելի թշնամութիւն է, խոհական անձը ցանկու ինեան սիրոյն մէջ սիրելէն աւելի սիրուիլ կ'ուզէ, իսկ բարեկամութեան սիրոյն մէջ սիրուելէն աւելի սիրու կ'ուզէ։

Թէ բարեկամութեան և թէ փոխարինական դաշանց համար օրէնք, դատաւոր, վարձ, և պատիժ պէտք է, որ հաւասարութիւնը պահուի և անհաւասարութիւնն ալ հաւասարուի. բարեկամութեան վարձը՝ երջանկութիւնն է, պատիժը՝ նախատինքն է, ատեան՝ խիզն է, դատաւոր՝ բանն է, օրէնքն ալ արդար փոխարիթեան սկզբունքն է։

Բարեկամ լնարելու համար մտաց օրատեսութիւն պէտք է, մի գուցէ վերջն զանգատիս թէ իմ բարեկամն ապաշնորհ է, անհաւատարիմ է ևայլն, զի այս զանգաաը աւելի դքեզ ամօթառար կ'ընէ, որ կարողացած չես լաւ ընտրութիւն ընել. եթէ զայն չէիր ճանաչեր անմիտ էիր որ չճանաչած մարդդ քեզ բարեկամ ընտրեցիր կըր զկու րան, եթէ կը ճանաչէիր՝ ապա ուրեմն մոլի էիր, որ զմոլին ընտրեցիր։

Եթէ նա սօւտ բարեկամ էր՝ նա բարեկամ չէր, և չէ թէ իւր հատարմութիւնը կորսնցուց, այլ իւր կեղծիքը և քու պատիքը ընտրութիւնդ թող լինի քեզ՝ ի պատիժ և ի խրատ։

Հռոմայեցւոց ծերակոյտը Ասից Խմէնէս թագաւորն իրենց բարեկամ ընտրեցին, իսկ այն ծերակոյտի մէջն կաաովն զայն չընդունեց իբրև բարեկամ, ըսելով թէ նա զազան է, ես չեմհաճիր դորա դրացի բարեկամ լինել. վերջին փորձը մինակ զկատովն անխար հոչակեց, և միւս ծերակոյտն խաբուած։

Մարին իւր մոլութիւնը ուրիշին առաքինութենէն աւելի կը սիրէ, արծիւր երբ թաղաց մէ ջէն գեղեցիկ ձագ մը ուզեց իրեն ըստասաւորելու համար, բուն իւր ձագը ներկայացնոյց թէ ամենէն գեղեցիկ այս է, զի ինձ շատ կը նմանի:

Առաքինին իրեն բարեկամն ունեցածը իւր ունեցածի պէս կը սիրէ, գովելիները առ նախանձու շվատաբաններ, և ոչ ալ ՚ի չնորհուկս զորովելիները կը զովէ, անուղղներ ուղղութեան բերելու համար կը նրանաէ, եթէ չըսն ետ կը քաշուի. առաքինին համստ պայմաններով կը հաշուի իւր թշնամիներու հետո իւր բարեկամն պէտք է որ իրեն պէս առաքինի լինի, եթէ առաքինի չէ՝ բարեկամ ալ չէ, զի բարեկամութիւնը առաքինութեան վրայ հիմնաւած է:

Եթէ թշնամին մոլի է՝ զայն կ'ատէ թէև աւելի թշնամանայ: Պիւթագորոս բարեկամութեան սահմանն անցնելով ըստ՝ Նմնայն ինչ հասարակաց է, այս աեսակ բարեկամութիւնը խմբական կը լինէր եթէ այս արդարոց օրէնքն ընդունուէր. վասն զի այս դրութիւնը թէ մեծ համեստութիւն, և թէ քաղաքական մեծ յեղափոխութիւններ առաջ պիտի բերէր:

Սխալ է այն գրութիւնը թէ բարիքները հաղորդէ բարեկամիդ որ ուրախ լինի, իսկ չարիքները մի հաղորդեք որ չարամի, զի տրամութեան ախտ փոխադրական է:

Ճշմարիտ բարեկամն թէ բարեաց ուրախակից և թէ շարեաց կարեկից պէտք է որ լինի, զի այս կը պահանջէ բարեկամութեան իսկական օրէնք:

Բարեկամութեան մէկ սրացմանն ալ այն է որ իւր բարեկամն ինչպէս որ մօտ եղած ժամանակը կը սիրէ նցյանէս հետու եղած տեղն այնչափ սիրէ. եթէ սէրը կը ճառատէ, կը նշանակէ որ իւր բարեկամն մինակ աշքով կը սիրէր, չէ թէ սրտով. մարդուս խորհութագը մինչեւ ուր որ համի, սէրն ևս մինչեւ հոն կ'երկարածզի, զի սէրը սահման չունի, ոչ լեռը կրնայ նորա սահման լինել, ոչ ովկիանոսը կրնայ զայն սուզել, ոչ այրեցած զօտին կարտղէ նորաթերն այրել և զայն արդելու իւր նպատակին:

Անդթական գթութիւն էր Եղիպտացւոց ոմանց որք իրենց բարեկամ մռուլի շիրիմին մէջ կը թաղէին զիրենք ընդ մռուլոյն, ողջն կը նեխէր մռուլոյն հեա որ այլ ևս կեանք շվայելէ, ասիւ կա բարեկամն իւր անձին պէս սիրել չե այլ զնք և բարեկամն ատելէ, մռուելն՝ կենդանին կ'սպանէր, և կենդանին այն մռուլէն երկրորդ կեանք կը բառնայ. լաւ էր մաղ ըստ կենաց քան թէ բոլորովին մռունել:

Բոլորովին կը մռոնի այն որ և ոչ մէկ բարեկամ կը ձգէ այս աշխարհին վրայ. կատարեալ բարեկամութիւնը շվահանջեր որ մոլի կրակի պէս քիչ մը ժամանակ գերեզմանաց վրայ երենալէն վերջ չորածայ և անհետանայ, կը պահանջէ որ իբրև մշտնջենաւոր կրակ սրտի սեղանոյն վրայ մէկ անդամ վառուելով միշտ անշէջ ճառագայթեալ մնայ.

## ԴԱՍ ՃԻԶ

### ՄԱՐԳԱՐԵՅԻՆ ԵՐՉԱՆԿՈՒԹԻՒՆ

Երջանկութիւնն է, այն ժրաջան ստացիչ դիւցազնական առաքինութիւնը որ զմեզ մեր պանծալի աշխատութեամբն յաղթական մշտնջենաւոր հանգստեանն կը հասցընէ փառաւոր շքեղ. առեն մարդ առ այս կ'ընթանայ թէպէտե շգիտեր, սակայն շատերը որշափ որ ասոր ետևէն երթան այնշափ կը հեռանան. վասն զի սիրալ ճանապարհէն երթալով սուափին իբրև ճշմարափ կը հետեւին. շարաչար սկսելով երթալով կը յոռանան, և փոխանակ երջանն կութեան՝ ապերջանկութեան նպատակին կը հասնին:

Ծայրագոյն երջանկութիւնը մեր հոգւոյն ամնակատար չ'որ-

ծողութիւնն է, որ առաջ կու դայ մեր հռգւայ ներգործութիւններէն և իրեն օգնութեան կ'առնու մարմայ և արտաքին բարիք ները . երջանկութիւնը ունակութիւն չէ, բայց ունակութիւններէն կ'առնու իւր ծնունդը, նա առաքինորէն կը գործէ և ինքն առաքինութիւն չէ, ապա դուստրն է, եթէ երջանկութիւն լինէր ունակութիւնը, մարդ մը քոն եղած ժամանակն ալ երջանիկ պիտի լինէր, և թէպէս քոնը մեր զործերը կը խափանէ, ասկայն մեր ունակութեան շնասեր :

Մարդ քննած ժամանակ, անդայ առնեկի մը հաւտար է, առանց բանի խորհրդեան գործած ժամանակը անասնոց հաւտար է, իսկ բանի և խորհրդով զործած ժամանակը բանականութիւն առնեցող վեհ մարդ մ'է, և երջանկութիւնն ալ Փ մայն այս կարգի անձանց կը վերաբերի :

Մարդկային կարողութեանց մէջ միտքն ամենէն երիցարդոյնն է, արտաքին զգայութեան ամն գործողութեանց դատաւոր միտքն է, երկիւղի խթան, և բարկութեան անձ, կամքն մինչև հոն ուղիղ է, քանի որ մոռէն կ'առնու իւր օրէնքները. անցեալ անցքերու դրատունն է միտք, նա ապագայից պատգամախոնն է, արուեստներու զործարանն է, զիտութեան զանձարանն է, մտաւոր առաքինութեանց առձարն է, մեր գործողութեանց առաջին շարժառիթն է, նա հրեշտակաց պաշտօնակից և Աստուծոյ պատկերն է :

Մասց աղնուական գործողութեանց մէջ երկուքը զերազանց և կատարելադոյն են, մին՝ է խոհեմութեան գործողութիւնը որ կը կանոնաւորէ ամն զործելինները և բարոյական առաքինութիւնները, միւնն է իմաստութեան գործողութիւնը որ հայեցողական իրերը կը կանոնաւորէ, և կը նկատէ զաստուածայինս անմահական :

Սայն աղբիւրէն կը բղիքն երկու երջանկութիւնները որոց մին՝ գործնական կենաց և միւսն առեսական կենաց կը վերաբերի, այս երկուքն ալ անմնապիտանի են մարդուս, զի մէկով կը հետազոտէ, միւսով կը գործէ, և այս երկուքի մէջ դրած է մեր երջանկութեան աթոռը :

## ԴԱՍ ՃԵԿ

### ԵՐԱՌՆՎԻ ՆԿԵՐԸ ԳՐԱՒԹԻՒՆ

Են մարդեն աւելի երջանիկ չկոյ , որ երկար սովորութեամբ իրեն սիրտը բարոյական առաքինութեանց մէջ ունակացուցած է . վասն զի նա մոլութեանց ծառայական կապերէն ազատ է , անիկա եակ մ'է այնպէս հաստատ և անշարժ իւր ունակութեանց մէջ , որ եթէ բաղդն փոխուի ինքը չփոխուիր . եթէ աշխարհ կարծանի ինք չպարհուրիր : այն որ ահեղասատ սոսկումներէն շվախնար այլ ևս ինչէն պիաի երկնչի . ինչ օրինաւորութիւն և գեղեցկութիւն երբ անհատն իրմէ առաքինութիւններ բղխելով հաստրակութեան կ'օղնէ , որուն ընտրելագոյն անդամն է ինքն , կը վերցընէ և կը բարձրացընէ իւր հայրենիք խորհրդով և զործով . և աղլասի պէս երկնք կը բարձրացրնէ ձնուքով . նա իրեն տղաշղներ կ'ունենայ , անիմիւ ջնորհակալուննը , ռամբկներէն կը բարեհամրաւուի , մեծամեծաց աշքին յարջի է , իւր բարեկամաց սիրելի է , օտարաց քով մեծ համարուած է , ամենը անոր խորհուրդ կը հարցընեն , և պագամիսխօսի պէս անոր առջեր ծունը կը խոնդրէն :

Նորա երջանկութիւնը մինակ այս աշխարհիս մէջ փակուած չէ , զի նորա միաք համայն տարրական աշխարհ կը դիտէ , և բարձր բանաւոր գործերու ճշգրիտ պատճաւներուն վերահասու կը լինի . քննէ ինչ որ ՚ի ծովու , ՚ի ցամաքի , յօդս , յերկինս կը դասուին և կան , և զանոնը որ պարզամիտ ամբոխն անհաս սքանչելիք կը հաւատայ , նա կը ծիծաղի նորա տիմար զարմանաց վրոյ . իւ մաստնոց մոլութիւնները կը յանդիմանէ , կ'ուրախանայ իւր դիտցածներու , զորս այլք չ'ո դիտեր :

Դա այնչափ սկրահար է իւր գործոց առաջ տանելուն որ դիտէ

թէ ինք մինակ է . աշխարհ իբեն համար ստեղծուած է չէ թէ ուսրիշներու համար :

Նա յերկինս կը վերառլանայ , աստղերը , լուսինն և արեղակը , հրեշտակաց և Աստուծոյ եռ թիւնը և գոյութիւնը ու ննցա յատակութիւնները կը քննէ նոյն գործերէն , և միմայն Աստուծոյ ոքանչելարուեստ արպրչութեման , նախարինամութեան ու կարգադրութեան վրայ կ'պահանայ , կը հիանայ և կը հրձաւի , և կ'սկսի զայն պաշտել նորա վմեմութեման համար , և որշափ որ պահանանայ Աստուծոյ գործոց և տնօրէնութեանց վրաց այնշափ ալ իւր սէրը կը սատուկանայ առ Աստուծուած , և անոր գիմելու հանտպարհ կը վնասուե . և կը գանէ միմայն առաքինութիւնը , ուստի՝ ջան 'ի զործ կը զնէ յարաւելու և գարպանալ 'ի նոյնին :

Նա երկնից անմարմին հրեշտակները կը քննէ որք պարզ իմանալիք և ջինջ միաք են , և թե չունեցող երադաշտարմներ , ուստի շատած իմաստաններ . կը գանէ զանոնք . և կը մասածէ թէ ինչ է նոյն կեպնք , ով են . ի՞նչոյէս զիտեն . ի՞նչպէս կը տեսնեն . ի՞նչպէս կը շարժին և ի՞նչպէս միմանց հետ կը աեսնուին և կը խօսին :

Նա կարողութիւն ունի արարածներով հաստատել արարչապեպատ ամենակարողութիւնը և զօրութիւնը , արարածոց մէջ արարիւ կը տեսնէ , արտրչին մէջ արարածներ կը տեսնէ և կը հատկընայթէ յևստուծոյ է և յևստուած պիտի վերադառնայ , ուրիշն Աստուծոյ գործ զործել պէտք է և կը շարունակէ իւր աստուածահառն առաքինափական դործերը առաջ վարել :

## ԴԱՍ ՃԻԸ

### ԵՐՉԱՆԿԱՐԻԹԵՑՆ ԹԳՆԱԿԱՆՆԵՐԸ

Յառաջադոյն ըստնք ըստ մտաց Արիստոտէլի, թէ մարմարական և արտաքին բարիքները կ'օգնեն մեր երջանիկ լինելուն, եթէ մարդս սոսկ հօգի լիներ, մինակ հայեցողութեամբ կրնար երջանիկ լինել և միւս բարիքները իրեն համար աւելորդ պիտի համարուէին. բայց որովհետեւ մարմին ալ ունիմք, ուստի անհրաժեշտ պէտք է մարմար բարիքները. ոժը, առողջութիւնը, կերակուրը և այլն որք մը հողուց գործողութեանց կը նպաստեն, այսպէս և արտաքին բարիք, այսինքն Նեխութիւն, կալուած եայլն, որոնք որ բարիք գործելու դիրութիւն կու տան մեզ։ Մասամբ իւիք կոճաւեցին իրենց առաքինութեան նարակը, որոնք որ իրենց գանձերը աւելորդ համարելով ծովը. նետեցին, և անոնք որ իրենց մէկ աչք աւելորդ համարելով բրեցին, և անոնք որ մինակ կարասի մը մէջ բնակիլը բաւ համարեցին. մինչ աւելորդ համարածներով կրնային իրենց առաքինութիւնները բազմապատկելով երշանկութիւնն աւելցընել:

Անոնք որ աշխարհի պէտքերէն ապահով են, նոքա աւելի հանգարա սրբով և ասղոփի մազք կարազ են իմաստասիրել, Պաղօմեոս իւր երկու աշօք յերկինս 'ի զրեան, լայնածաւալ աշխարհի տախտակաց և երկնից աստեղաց աւելի զօրաւոր կընայէր, քան անմիտ Տիմակրիտոս որ իւր մէկ աչք բրեց, միւսով կոյր զկուրայն կը նայէր։

Կրակատանց մէջ բնակող Պղատոն և Զենոն կարասի մէջ բնակող Դիոդինէսէն աւելի կ'իմաստասիրէին իմաստասիրելու համար լաւ է մծատուն լինել, քան թէ մծատան ետևէն երթալ։

Անոնք որ հարստութիւնը արհամարելով ժամանակին մէկ մասը դռները մուրալու կրվաանէին, հարստաները նոյն ժամանակը իմաստափրութեան կը նուիրէին :

Մանաւանդ թէ խոհեմութիւն 'ի գործ զնելու համար իշխանութիւն և մեծ զերգաստան պէտք է, արդարութեան համար՝ ասեան պէտք է, մեծագործութեան համար՝ մեծ Նոխութիւն պէտք է, մեծանձնութեան համար՝ պատիւ պէտք է, բարեխառնութեան համար՝ զրգանք պէտք է, այնպէս որ հարստութիւնը իմաստանոյն ձեռք տեղի օգտակար է, քան թէ մոլիճին, վասն զի իմաստուն զայն պէտք եղած տեղը կը գործածէ, խնկ մոլիճն զայն յամպէտս կը վատնէ :

Ճախութիւնը չէ թէ իմաստութեան արգելք է: այլ նորա անվայել կիրառութիւնն է որ կը մնասէ. իմաստանէրները Ճոխութեան չէին ծառայեր այլ զայն 'ի գործ կը զնէին պատուաւոր, օգտակար և համեստ Փջցներով, որով իրենց առաքինութիւնը կ'աւել ցրնէին, նորա հոգւով չէին կապուեր հարստութեան հետ, մարթով զայն 'ի գործ կը դնէին. նենդութիւններ և անիրաւութիւններ չէին հնարեր զայն ստանալու համար, և ոչ ալ կը տառապէին, կը խոռվէին զայն կորսնցընելու ժամանակը. անոնցմով երջանիկ կը լինէին, և առանց անոնց ալ զիտէին երջանիկ լինել:

## ԴԱՄ ՃԻՔ

### ԵՐՋԱԿԱԽԹԵԱՆ ՑԱՏԿԱԽԹԷՒՆԵՐԸ

**Ըստ Արիստոտելի երջանկութեան յատկութիւնն է ծայրազոյն բերկրական կեանք մը տնենալ , սխալ էին անոնք՝ ողք չե թէ բերկրութիւն երջանկութեան մէջ , այլ երջանկութիւն բերկրութեան մէջ կը փնտռէին , որովհետև նոքա հեշտութիւն զգալը երջանկութիւն կը համարէին որ մարմոյ և բաղդի բարեաց արդիւնքներն են , առաջայն զիտնալու են թէ ճշմարիա երջանկութիւնը հոգւոյ բարիքներն են . որ միշտ մայուն և ոչ թէ այն հեշտութիւնները , որք զրեթէ ենթակայ են փոփոխութեան և պատահարներու ձեռք խալիք :**

Երջանկութիւն և թշուառութիւն միմանց հետ լծորդական չեն , առայս երջանկութիւնը ցաւերու հետ լծորդ է , առոնք մէկ ենթակայի մէջ երկու ներհական շարժումները չեն , զի երջանկութիւն հոգւոյն մէջն է և ցաւն մարմոյ անդամներու մէջն է , բայց հոգի և մարմին իրրե իրարու առ ինչ մէկին ցաւը միւսին , ինչպէս որ երջանիկն ալ վերահաս ցաւոց մէջ կը միխթարուի իւր անմղութեամբ , զիտէ որ ամեն վիշաքրուն փոխարէն պատիւը պիտի փոխարինուի իրեն , իմաստուններուն անարժան և անվայել խօսք չխօսիր , արիականին անիրաւութիւն : ըներ , երջանիկն լշուառ չլինիր , եթէ մոլիի շփոխուի . վերահաս վտանգները կարելի է որ նորագործերը ժամանակ մը դադրեցնեն , ինչպէս որ քոնը զմարդն կը դադրեցնէ , բայց վասնդն անցնելն վերջ դարձնեալ կը շարունակէ , նորա ունակութեան պէաք չունի , զի արդէն ունի , և աւելի զօրաւար կերպավ կրնայ գործել , վասն զի քնացած միջնցին բաւական հանդսացան :

Առ երեղիթ երջանկութեան պէտքերը շատ են, որդան ունենայ այնքան պէտքերը կը շատանայ, զի իդէն անսահման է, և արտաքին բարիք առհմանառոր:

Խսկ երջանկութիւնը գործնականէն առելի իմացտկան կատարելագոյն կեանք մ'է, մաօք կ'ապրի, անոր համար մարմայ հեշտութեան շատ պէտք չըւնի, նորա իդը մարմականէն առելի հոգեոր զեղեցիկ դաղափարները յինքն շտեմարանելն է, նորա դիտուն զէպ 'ի մշտն ջենաւոր երանութիւնն ուղղած է, նա պատոյ անունը, ոչ լերտնց բարձրութենէն, և ոչ երինից բնական լուսոյ պարզութենէն կը շափէ, այլ Փոփայն բարոյական առաքինութիւններէն կը շափէ, որուն մէկ ծայրը Աստուծոյ անսահման վական փառաց մէջ կայացած է, վեւն մարդկանց բնական հոգւոյ ուղիղ խորհրդին մէջ հաստատուած է:

## ԴԱՍ ՃԼ

## ԱՐԵՑԱՐԱՆԵԿԱՆ ԵՐՉԵՆԿՈՒԹԻՒՆ

Արիստոտէլ զմեզ կ'առաջնորդէ զէպ 'ի իմաստասիրական երանութիւնը և իմաստասիրական երանութիւնն ալ զմզ զէպ 'ի աւետարանական երանութիւնը կառաջնորդէ :

Իմաստանիրականը լովէ և հաստատուած է աստուածային իրաց նայելու, իսկ աւետարանականը հաստատուած է, (հաւատոյ յայտնութեանց սկզբունքներով) աստուածայիններուն նայելու, առանց բնական և իմաստասիրական լոյսն մերժելու. որովհետեւ բնական և իմաստասիրական լոյսերը՝ աստուածային լուսոյ նշոյներն են, որք գրիստոսի վրայ կը համաբնակէին իբրև անստեղծ և ստացական իմաստութիւն, որք զկմանս չէին մերժել :

Աստուածանկատ տուրբերը զիտուն ճառատողներու իմաստասիրական դիտողութիւնները ձգելով իրենց լսեցին քան թէ իրենցներուն, փիլիսոփաներէն աւելի աւետարանիչներուն լսեցին, մարդիներէն աւելի Աստուծոյ հետեւեցան. նոքա անապատի խորշերու մէջերկից ճանապարհ փնտուեցին :

Սակայն խոստովանելի է թէ այն հայրերը, որք իրենց իմաստասիրականն աստուածային դիտողութեանց և աւետարանի լուսոյն հետ կցորդեցին նոքա աւելի երջանիկ համարուեցան :

Այս երկու երջանկութեանց մէջ տեղ խորի կայ. զի իմաստասիրականի վախճանը հայեցողական առաքինութիւնն է, զի մռաց ներգործութիւնները բարոյական առաքինութեանց ներգործութիւններէն ազնիւ են, բայց աւետարանական առ արինութիւնը մռաց որևէ ներդործութենէն աղնիւ է, որովհետեւ աստուածային սիրոց

Հետ լծորդութիւն ունի . բարոյական առաքինութեամբ կիրքերը կը չափաւորուին , միտք կը խաղաղի , և ամեն բան պայծառ և յստակ կը տեսնէ և կը ճանաչէ :

Սահայն քրիստոնէ ական իմաստասիրութիւնը՝ այս ամենը Ճանաչելն զինի Աստուծոյ Ճանաշումն Աստուծոյ սիրոյն հետ կր հազարդակցէ որ աւետարանական գերազոյն առաջինութիւնն է . Աստուծոյ համար աւելի հաճելի է մահկանացուներէն սէր լնգունիլ քան թէ Տայեցողութեան Ճանաշումներ :

Աստուծոյ սիրտերու մէ ջ բնակի կ'ընտրէ քան թէ միտքերու մէ ջ , նա սիրու աթօռ՝ միրտը կ'ուզէ , չէ թէ իմաստութեան աթոռ , ուղղղը կ'աւզէ , զի իմաստութիւնը ինքը կը պարզէ մեզ իւր կողմէն , խակ սէր կը պահանջէ մեզմէ՝ մեր կողմէն . և այս սէրն է որ աւետարանական երանութիւնը կը կատարելազործէ ու և յաւիտենական երանութեան արժանի կ'ընէ :

Զի երանական տեսութիւնը դիմացութեան հատուցումն չէ , այլ սիրոյ հատուցումն է , աւետարանական բովանդակ իմաստութիւնը որ հաւատքն է , չկրնար արժանանալ երկնային երանութեան մինչև որ սիրով չարձարծուի :

Երբ սիրելին չես սիրեր ինչ օգուտ է զայն Ճանաչել , ուրեմն առանց Տեղական սիրոյ չէ թէ մինակ իմաստասիրական իմաստութիւնները , այլ և հրեշտակաց և մարդարէից զիտութիւնները անդամ Փաստակար են , վասն զի զԱստուծած Ճանաչել և զայն չիրել , չՃանաչելն աւելի Փաստակար է , զիւաց ապերախտութիւնն է այս տեսակ Ճանաչումն :

Ուրեմն սէրն է աւետարանական երջանկութեան լրումն , անևնը որ զիշեր և ցորեկ կ'աշխատին և կը տրնին թուղթեր չեցընելու , հատորներ կազմելու մինակ իմանալու համար , ոզորմելի են , զի զուր ժամանակ կը կորսնցընեն , և իրենց աշխատութիւնը հողմին կու տան , թող խոնարհին բարձրավիսները , վասն զի հեշտ է զԱստուծած սիրել քան թէ զայն ինդիրել և քննել :

Ցպէանները հաւատոյ սիրով զԱստուծած վայելեցին , իմաստասէրները դատաւոր աշխատութեամբ վերահասու չեզան թէ ինչ և լատաւած :

Աստուծոյ երանական փառաց հաղորդ լինելու համար մէջ ու զուտ մը կը մտաւցանէ մզ բարոյական իմաստափրութիւնը, Փայն թէ նորա դիտում Աստուծոյ սիրոյն ուղղած լինի, այս գիտում իրբե աստուծային ոչք մը սկիզբէն իրաց վախճանին կը նայի, մարդկանց գործերը յեղափոխելով մէկ ակնարկութեամբ ստորինը վերին կ'ընէ, անարգն՝ պատուականին կը վերածէ, նիւթականէն հոգեորն կը հանէ, երկրառուէն՝ երկնաւորն կը պատրաստէ, մարդկներէն՝ աստուծայինը կը կազմուիրագէ :

Այս գիտում որպէս հաւասարիմ ուղղեցոց, Աստուծոյ օգնութեամբ կ'առաջնորդէ մզ իմաստափրական երանութենէն՝ աւետարանական երանութեան, և աւետարանական երանութենէն՝ յափանական երանութեան, բայ է որ սկիզբէն նայիս վախճանին, զի բարոյական լիմեստաթիւնը՝ երանականին ուղղեցոցն է, այս ձանապարհ առաջ վարող՝ մը առ Աստուծ ունեցած սէրն է, և Աստուծ մը բռնանգակ բաղձանաց լրում է :

ՎԵՐՃ

